ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2010

ՀՏԴ 809 198 1(07)
ԳՄԴ 81 2 Հ ց7
Բ 145

Տպագրվում է Երևանի «Հրաչյա Աճառյան» Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը տպագրության է երաշխավորել «Հրաչյա Աճառյան» Համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնը

Խմբագիրներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Շողիկ Ստեփանյան** և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նվեր Սարգսյան**

Բ 145 Բաղիկյան Խաչիկ Գաբրիելի
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության տեսության և գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ: Եր., 2010, 264 էջ:

Բուհական ձեռնարկում «Ձևաբանության» **տեսության** հետ առաջին անգամ տրվում են նաև **գործնական աշխատանքներ.** յուրաքանչյուր թեմայից ու ենթաթեմայից հետո տրվում են ամփոփիչ հարցեր, առաջադրանքներ ու վարժություններ:

ԳՄԴ 81 2 Հ ց7

ISBN 978 99 39-53-113-7
© Բաղիկյան Խ. Գ., 2010 թ.

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

*Յանկացած լեզու ամբողջական համակարգ է, իսկ յուրաքանչյուր համակարգ կազմված է իրար հետ փոխկապակցված առանձին բաղադրիչ մասերից, որոնք լեզվաբանության մեջ կոչվում են **մակարդակներ**, որոնք իրենց հերթին ունեն իրենց **միավորները**։ Լեզվում սովորաբար նշվում է 6 մակարդակ, որոնց միավորները կապակցվում են իրար հետ և միտք են ձևավորում, որոնցով մարդիկ հաղորդակցվում են։ Այդ մակարդակներն են՝*

*1. ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ (**հնչյունաբանական**) – Սրա միավորները հնչույթներն են (հնչյուններ), որոնց գրավոր պատկերը **տառն** է։*

*2. ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ – Սրա միավորները **ձևույթներն** են, որոնք իմաստի ու ձևի միասնություն կազմող նվազագույն միավորներ են. դրանք լինում են **հիմնական** (արմատներ) և **երկրորդական** (ածանցներ, վերջավորություններ և հոդեր)։*

3. ԲԱՌԱՅԻՆ մակարդակի միավորները տվյալ լեզվի բոլոր բառերն են, որոնք ձևաբանական մակարդակում դիտարկվում են որպես խոսքի մասեր։

*4. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ մակարդակում քննվում են բառերը՝ իրենց կրած ձևափոխություններով՝ **քերականական կարգերով** (հոլովման, խոնարհման, հոգնակիացման և առկայացման ցուցիչներով)։*

*5. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ մակարդակում քննվում են **բառակապակցությունները** (դրանց թվում՝ նաև դարձվածային միավորները) և **նախադասությունները**։*

*6. ՈՃԱԿԱՆ մակարդակում քննվում է լեզվի **պատկերավորման** ու **արտահայտչական** միջոցների համակարգը։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ – *Լեզվաբանական գրականության մեջ խոսվում է նաև ամենաբարձր՝ **վերշարահյուսական** (տեքստային) մակարդակի մասին, որի միավորներն են՝ պարբերույթը, ասույթը և տեքստը։*

Ինչպես տեսնում ենք, **Ձևաբանության** ուսումնասիրության առարկան բառն է՝ իր քերականական իմաստներով ու կրած ձևաբանական փոփոխություններով, Հետևաբար՝ **ձևաբանությունը ուսմունք է բառի, նրա ձևերի և այդ ձևերի արտահայտած քերականական իմաստների մասին։**

Տվյալ լեզվում եղած ամբողջ բառապաշարը, ըստ բառերի քերականական իմաստների և դրանց մի մասի կրած ձևափոխությունների, տարարաժանվում են տարբեր խմբերի. այդ խմբերն էլ կոչվում են **խոսքի մասեր**, Հետևաբար՝ **ձևաբանությունը** ուսմունք է **խոսքի մասերի** և դրանց օրինաչափությունների մասին:

Այս առումով էլ ձևաբանությունը նեղ իմաստով Համընկնում է նաև **բառագիտության** Հետ, իսկ լայն իմաստով՝ նաև **շարահյուսության** Հետ:

Ահա թե ինչու ակադեմիկոս Էդուարդ Աղայանը գրում է. «Ձևաբանական մակարդակը բառային ու շարահյուսական մակարդակներն իրար կապող կամուրջն է: Բառը նախքան նախադասության անդամ դառնալը պետք է մտնի ձևաբանական մակարդակ...»[1]:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ ԵՎ ՁԵՎ – Ակնհայտ է, որ մարդիկ մտածում և խոսում են բառերի և դրանց զուգորդմամբ՝ նախադասությունների միջոցով: Եթե մարդը չգիտի բառի իմաստը, նա չի կարող մտածել դրա մասին ու այն օգտագործել նախադասության մեջ: Օրինակ, եթե ուսուցիչը երաժշտական կրթություն չունեցող աշակերտին ուղարկում է **պարտիտուրը** բերելու, երեխան չի Հասկանա, թե ինչի մասին է խոսքը, ինչը պիտի բերի, չի Հասկանում այդ բառի իմաստը, իսկ այն մյուս աշակերտը, որը գիտի այդ բառի իմաստը, գնում և բերում է **նոտաների տետրը։**

Ինչպես որ բառերն ունեն իրենց քերականական իմաստները, առանց իմաստի բառ չկա, այնպես էլ քերականական ցուցիչները՝ **ձևույթներն** ունեն իրենց իմաստները, որոնց շնորհիվ բառերը կապակցվում են իրար Հետ և կազմում են նախադասություններ:

Այսպիսով՝ քերականական իմաստներն արտահայտվում են Հատուկ մասնիկների միջոցով, որոնք ունեն իրենց դրսևորման

---

[1] **Էդ. Աղայան,** ժամանակակից Հայերենի Հոլովումը և խոնարհումը, ԳԱ Հրատ., 1967, էջ 152, 153:

*ձևերը և կոչվում են **ձևույթներ**. դրանք են հոգնակիացման, հոլովման, խոնարհման և առկայացման ձևույթները, որոնք տարբեր լեզուներում, բնականաբար, տարբեր են լինում, որոշ լեզուներում էլ դրանց որոշ տեսակներ կարող են և չլինել:*

*Հայերենում **գոյականների** հոգնակի թվի իմաստ են արտահայտում* **եր, ներ, ք** *(նաև ուրիշ մասնիկներ), բացառական հոլովի իմաստ են արտահայտում* **ից, ուց**, *գործիականի իմաստ՝* **ով** *կամ* **բ**, *ներգոյականի իմաստ՝* **ում**, *իսկ* **բայի** *խոնարհման դեպքում հանդես են գալիս այլ ձևույթներ (մասնիկներ):*

*Այստեղից էլ կարելի է սահմանել **քերականական իմաստ** և **քերականական ձև** հասկացությունները.*

«Քերականական իմաստները կամ կոնկրետացնում, մասնավորեցնում են բառի բառային իմաստը կամ արտահայտում են այդ կոնկրետացած իմաստների (բառիմաստների) փոխադարձ հարաբերությունը խոսքի մեջ»:

«Քերականական ձևերն այն միջոցներն են, որոնցով դրսևորվում, նշվում են քերականական իմաստները»[1]:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ *– Քերականական իմաստները, որոնք ունեն իրենց դրսևորման ձևերը, կոչվում են **քերականական կարգեր** (**կատեգորիաներ**):*

*Քերականական կարգեր են նաև բառերի խմբավորումները՝ **խոսքի մասերը**, որոնք բնութագրվում են համասեռ քերականական հատկանիշներով:*

*Քերականական կարգերը որոշվում են ձևերի **հակադրությամբ**, որոնք երկուսից պակաս լինել չեն կարող, օրինակ՝ հայերենում կան **թվի** և **հոլովի** քերականական կարգեր, որովհետև եզակի թիվը հակադրվում է հոգնակիին, ուղղական հոլովը՝ մյուս հոլովներին, իսկ ֆրանսերենում հոլովի կարգ չկա, որովհետև բառը միայն մի ձև ունի, վերջավորություններ չի ստանում:*

*Ռուսերենում գոյականն ունի **սեռի** քերականական կարգ, որովհետև կան բաղաձայնների և* **а(я), о(е)** *հակադրությունները (***институт, карандаш** *- արական,* **книга, земля** *- իգական,* **море, перо** *-*

---

[1] *Տե՛ս Հ. **Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարագյուլյան**, Լեզվաբանական բառարան, ԳԱ հրատ., 1975, էջ 309:*

չեզոք)։ Ռուսերենում և շատ լեզուներում էլ չկա ***առման*** *(առկայացման կարգ), որովհետև դրանցում չկան* ***հոդեր*** *(գիրքը, գիրքս, գիրքդ)։*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ *– Սա քերականական այն իրողությունն է, երբ քերականական նույն իմաստը կարող է տարբեր ձևերով արտահայտվել. օրինակ՝* ***սեռական*** *հոլովն արտահայտվում է* **ի, ու, ան, վա, ոջ, ց** *(գրքի, գինու, ծագման, տարվա, ընկերոջ, Կարոյենց) վերջավորություններով, բացառականը՝* **ից, ուց** *(ծառից, գինուց), գործիականը՝* **ով, բ** *(գործով, այրամբ)։*

Նույնը կարելի է ասել նաև սահմանափակ թվով բառերի՝ տարբեր ***հոլովումների*** *պատկանելու մասին. օրինակ՝* ***անկյուն*** *և* ***արյուն*** *բառերը կարող են հոլովվել և՛ ներքին* **ա** *(անկյան, արյան) և՛ արտաքին* **ի** *հոլովումներով (անկյունի, արյունի),* ***ամիս*** *գոյականը կարող է հոլովվել և՛* **վա** *(ամսվա) և՛* **ի** *(ամսի) ձևով, նույնն էլ* ***սկեսուր*** *բառը՝ և՛* **ոջ** *և՛* **ի** *(սկեսրոջ, սկեսուրի) հոլովումներով և այլն։*

Լրացուցիչ բաշխման հարաբերության ձևեր են նաև հետևյալ գոյականների ***հոգնակի*** *թվերի կազմությունը՝* ***տիկին*** *–* *տիկիններ* *–* *տիկնայք,* ***պարոն*** *–* *պարոններ* *–* *պարոնայք,* ***տղա*** *–* *տղաներ* *–* *տղայք (ճիշտ է,* **այք***-ով ձևերը հնացած են, բայց բարձր ոճերում գործածական են)։*

Այդպես էլ՝ քաղաքացիներ, գյուղացիներ, ճապոնացիներ և քաղաքացիք գյուղացիք, ճապոնացիք (ճիշտ է, **ք***-ով կազմվածներն ավելի հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին, բայց գործածական են ցածր ոճերում)։*

Տարի *գոյականի* ***տարիներ*** *և* ***տարիք*** *հոգնակիները հավասարապես գործածական են գրական լեզվում։*

Քերականական նույն երևույթը նկատելի է նաև ***բայական*** *համակարգում, օրինակ՝ հավասարապես գործածական են* ***բերի*** *և* ***բերեցի, վերցրի*** *և* ***վերցրեցի, հագի՛*** *և* ***հագի՛ր, լսի՛*** *և* ***լսի՛ր, նստի՛*** *և* ***նստի՛ր։*** *Ճիշտ է, բերված զույգերից առաջիններն ավելի հատուկ են խոսակցական լեզվին, բայց վերջին հաշվով դրանք էլ են հայերեն։*

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ – Սա էլ վերևում բերվածի հակառակ երևույթն է, երբ բառի նույն **ձևն** *ունեցող մասնիկը տարբեր իմաստներ է արտահայտում, հանդես է բերում քերականական տարբեր կարգեր: Համանունությունն առկա է լեզվի 3 մակարդակներում.*

բառային *– երբ գրությամբ ու արտասանությամբ բառերը նույնն են, իմաստով՝ տարբեր, օրինակ՝*

սեր *(կաթի սեր և զգացմունք),* **այր** *(մարդ և քարայր),*
հոտ *(ոչխարի խումբ և բույր),* **հարկ** *(տուրք և տան հարկ),*
բազուկ *(ձեռքի և բանջարեղեն),* **ակ** *(աչքի և աղբյուրի):*

Ձևաբանական *մակարդակում* **ում** *մասնիկը և՛* **ներգոյական** *հոլովի* **ձևույթ** *է (գրքում, ձորում) և՛ անկատար դերբայի (գրում, կարդում):*

Ու *ձևույթը և՛ անորոշ դերբայի սեռական հոլովի վերջավորությունն է (գրելու թուղթ, կարդալու գիրք) և՛ ապառնի դերբայի (գրելու եմ, կարդալու ես),* **ել** *-ը թե՛* **անորոշ** *(գրել, երգել) և թե՛ վաղակատար դերբայի* **ձևույթ** *է (գրել է, երգել է, կարդացել է, մոռացել է):*

Ա *ձևույթը ձևավորում է և՛ բայի հրամայական եղանակի երրորդ դեմքը (կարդա՛, խաղա՛) և՛ ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքը (խաղամ, խաղաս, խաղա):*

Նույն ձևույթը ձևավորվում է նաև որոշ անկանոն բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքը (եկա, տեսա, առա, կերա):

Ստուգիչ հարցեր.

1. *Ի՞նչ է ուսումնասիրում* **Ձևաբանություն** *առարկան:*
2. *Ի՞նչ է քերականական իմաստը, ի՞նչ է ձևը:*
3. *Ի՞նչ են քերականական կարգերը (բերել օրինակներ):*
4. *Ի՞նչ է լրացուցիչ բաշխման հարաբերությունը (օրինակներ):*
5. *Օրինակներով ցույց տվեք բառային և ձևաբանական քերականական համանունությունները:*

Առաջադրանք 1.

Բերված հատվածում ցույց տալ բառերի քերականական կարգերը և նշել դրանց տեսակները:

Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ,

Հովասուն առավոտ: Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով... օդի մեջ լողացող ջրային շիթերը արեգակի առաջին ճառագայթներից վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման... Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների նախշուն ծաղիկները սփռված էին գույնզգույն գոհարներով: Առուն խոխոջում էր իր ալիքներով: Աչքիդ տեսածը փառավորում էր հոգիդ:

Առաջադրանք 2.

Կազմեցեք լրացուցիչ բաշխման հարաբերությունները.

Սենյակում երգում եմ: Տիկնայք և պարոնայք լսում են ու մտքներում գովաբանում:

Մենք խիզախությունով հաղթեցինք ղարաբաղյան կռվում:

Ամսվա վերջին սաստիկ քամիից շատ չէինք սարսափում:

Գյուղացիք իրենց գործն են անում, քաղաքացիք՝ իրենցը:

Մեղրիի ու Գյումրիի հայերի մեջ բնավորության նման գծեր շատ կան:

Գիրքը բերի և հանձնի տիրոջը, վերցրի նոր գիրք, նստեցի բազմոցին և սկսեցի մտքում կարդալ: Տղայիս ասացի.

– Նստի՛ և լսի՛. գրքի մեջ մեզ վերաբերող բաներ շատ կան:

ԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*«**Բառ** է այն հնչույթը կամ հնչույթախումբը, որն ունի բառիմաստ, անկախ, ինքնուրույն գոյություն ու գործածություն» (**Էդ. Աղայան,** նշվ. աշխ., էջ 109): Այս սահմանմանը հավելում ենք նաև բառային շեշտը:*

Բառը կարելի է քննել լեզվի բոլոր մակարդակներում՝ տարբեր տեսանկյուններով.

*1. **Հնչյունաբանական** մակարդակում դիտարկվում է՝ բառը մեկ հնչույթ է (ու, է, ա, ճ), թե մի քանի հնչույթների միասնություն (ջուր, գարեջուր, ջրեր, ջրից, ջրերում, անջրդի, գարեջրատուն)...*

*2. **Բառակազմական** մակարդակում քննվում է բառի կազմությունը՝ պա՞րզ է, բա՞րդ է, ածանցավո՞ր է, ի՞նչ ձևույթներից է կազմված (տե՛ս բերված օրինակները, որոնք մեկական բառեր են՝ տարբեր կազմություններով):*

*3. **Ձևաբանական** մակարդակում քննվում են բառերի քերականական իմաստները, թե ինչ խոսքի մասի են պատկանում, ինչպես նաև՝ դրանց կրած քերականական կարգերը՝ թվի, հոլովի, խոնարհման, առկայացման և այլն:*

*4. **Շարահյուսական** մակարդակում քննվում է բառի՝ նախադասության և բառակապակցության անդամ լինելը կամ չլինելը:*

*5. **Ոճական** մակարդակում քննվում է բառի ոճական արժեքը:*

Այժմ կոնկրետ խոսենք բառի ձևաբանական մակարդակում ունեցած ձևերի ու դրանց կրած ձևափոխությունների մասին:

***Բառային** միավորները բաղկացած են լինում մեկ կամ մեկից ավելի իմաստակիր տարրերից, որոնք լեզվաբանության մեջ կոչվում են **ձևույթներ։** Սրանք **լեզվի ձևաիմաստային նվազագույն միավորներն են,** ունեն իրենց **ձևն** ու **բովանդակությունը,** որոնք անխզելիորեն կապված են իրար հետ:*

Ձևույթները բաժանվում են 2 խմբի՝

*1. **Հիմնական** կամ **նյութական** իմաստ արտահայտող ձևույթ-*

ներ. սրանք արտահայտում են նյութական աշխարհի օբյեկտիվ առարկաներն ու երևույթները, հատկանիշներն ու գործողությունները, ինչպես օրինակ՝ *ծառ, մարդ, կատու, ամպրոպ* (առարկա), *կանաչ, մեծ, փոքր, լավ* (հատկանիշ), *գրել, երգել, խաղալ* (գործողություն), *երկու, հինգ* (թվական) և այլն:

Ինքնուրույն գոյություն ունեցող հիմնական ձևույթները կոչվում են **արմատներ** կամ արմատական բառեր:

2. **Երկրորդական** կամ **քերականական** ձևույթներ. սրանք զուրկ են **նյութական իմաստից**, միանում են հիմնական ձևույթներին. մի դեպքում փոխում են բառի իմաստը և նոր բառեր են կազմում, կամ էլ ցույց են տալիս բառերի հարաբերությունները նախադասության մեջ՝ կազմելով բառաձևեր:

Ըստ այդմ էլ՝ **երկրորդական** ձևույթները բաժանվում են 2 խմբի՝

ա) **ձևույթներ**, որոնք, ավելանալով հիմնական ձևույթներին, փոխում են դրանց իմաստները և նոր բառեր են կազմում, ինչպես՝ **ծաղիկ + ան + ոց = ծաղկանոց, ամպրոպ + ային = ամպրոպային, լավ + ություն = լավություն, մեծ + ամենա = ամենամեծ, մեծ + պես = մեծապես** և այլն:

Ձևույթների այս խումբը կոչվում է **բառակազմական**. սրանք **ածանցներն** են.

բ) **ձևույթներ**, որոնք, ավելանալով արմատին, ոչ թե նոր բառեր են կազմում, այլ ցույց են տալիս այդ բառի հարաբերությունը ուրիշ բառի հետ, ինչպես՝ **ծառ + ը, ծառ + եր, ծառ + ից**, կամ **երգ + եց = երգեց + ի, + իր, + ինք + ին** և այլն:

Ձևույթների այս խումբն էլ կոչվում է **բառահարաբերական**: Սրանք էլ հոլովման, խոնարհման, հոգնակիացման և առկայացման **վերջավորություններն** են:

Երկրորդական ձևույթների այս խմբի մեջ են մտնում նաև **կապերն** ու **շաղկապները**, որոնք նույնպես տարբեր բառերի հարաբերություններ են ցույց տալիս (գնաց **դեպի այգի**, ջրեց **ծառ ու ծաղիկ**):

Երկրորդական բառահարաբերական ձևույթ է նաև **ա** հոդակապը, որը տարբեր բառերից նոր բառ է կազմում (*ծառաբուն, գրագետ, մարդասեր*):

ՀԻՄՔ ԵՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բառի ձևաբանական վերլուծության հետ կապված ամենահիմնական հասկացություններն են **հիմքը** և **վերջավորությունը**։ Բառի **հիմքը** նրա **հիմնական ձևույթն** է, որը կարող է լինել թե՛ պարզ (մեկ արմատից կազմված բառը՝ **դաս, ընկեր, անձրև, ջուր, հեռու, գիր, սյուն**) և թե՛ երկու և ավելի արմատներից կազմված բարդ բառերը՝ (**դասընկեր, անձրևաջուր, հեռագրասյուն**)։

Պետք է մեկընդմիշտ հիշել, որ բառի հիմքի մեջ մտնում են նաև ածանցները՝ **ընկերություն, անձրևային, անգիր, դժբախտ, անընկերություն**... Իսկ բառի **վերջավորությունները** քերականական իմաստներ արտահայտող, երկրորդական **բառահարաբերական ձևույթներն** են. օրինակ **ընկերներ, ընկերս, ընկերներից, դասընկերներով** բառերում վերջավորություններն են՝ **ներ, ից, ով, ս** ձևույթները։

Ինչպես երևում է բերված օրինակներից՝ միևնույն բառը (**հիմքը**) կարող է ստանալ տարբեր վերջավորություններ, այստեղից էլ հետևում է, որ հիմքերը լինում են երկու տեսակ՝ **բացարձակ** և **հարաբերական**։

Բացարձակը այն հիմքն է, որը չունի քերականական որևէ վերջավորություն՝ **ընկեր, դասընկեր, ընկերասիրություն, անգիր, դժբախտ**։

Հարաբերական հիմքը մինչև բառի վերջին վերջավորությունն ընկած մասն է. այսպես **դասընկերներիցս** բառի բացարձակ հիմքը **դասընկեր**-ն է, իսկ նույն բառի հարաբերական հիմքը **դասընկերներից** բառն է առանց **ս**-ի։

Նույնն էլ՝ **գրքերից** բառի բացարձակ հիմքն է **գրք** հնչյունափոխված արմատը, իսկ նրա հարաբերական հիմքն է՝ **գրքեր** բառը։

Բացասական կամ **զրո ձև** – Բառերի քերականական իմաստները կարող են արտահայտվել նաև առանց վերջավորությունների, դա առկա է թե՛ անվանական և թե՛ բայական համակարգում. դա բառի ուղիղ ձևն է՝ առանց քերականական վերջավորության. այսպես՝ **գետեր, գետերից, գետերում** բառերից եթե հեռացնում ենք հոգնակիության և հոլովական վերջավորությունները, մնում է **գետ** բառը՝ **զրո** վերջավորությամբ, այդպես էլ՝

գրեցի, գրեցիր, գրեցինք, գրեցիք, գրեցին ձևերից եթե դուրս ենք բերում դիմային և թվային վերջավորությունները, մնում է անցյալ կատարյալի **գրեց** ձևը:

Կցական ու թեքական ձևեր – Բառերի մեջ քերականական իմաստներն արտահայտվում են 2 ճանապարհով.

1) Բառին, արմատին առանձին ձևույթներ **կցելով**, այսինքն՝ քերականական կարգերն արտահայտվում են մասնիկներով, ըստ որում մասնիկներից յուրաքանչյուրն ունի մեկ իմաստ. օրինակ՝ **ընկերներիցս, խոսքերովդ** բառերում **ընկեր** և **խոսք** արմատներին կցվել են **ներ, եր** հոգնակիացման ձևույթները, սրանց էլ՝ **ից, ով** հոլովական ձևույթները, իսկ սրանց էլ կցվել են **ս** և **դ** առկայացման ձևույթները: Հիշեցնենք, որ յուրաքանչյուր քերականական կարգ արտահայտվում է առանձին մասնիկի (ձևույթի) միջոցով: Ժամանակակից հայերենը հիմնականում **կցական** լեզու է, սակայն ունի գրաբարից ժառանգած թեքականության որոշ ձևեր: Կցական լեզուներ են՝ թուրքերենը, ուգրո-ֆիննական, մոնղոլական, դրավիդյան, ճապոնական և այլ լեզուներ:

2) Բառերի քերականական իմաստների արտահայտման մյուս ձևը **թեքականությունն** է, այսինքն՝ երբ քերականական կարգերն առաջանում են ոչ թե մասնիկների (ձևույթների) կցումով, այլ նույն բառի մեջ կատարվող **ներքին թեքումով**, ինչպես **հայր> հոր, տուն>տան** (ուղղական – սեռական), անգլերենի՝ **foot** (ոտք) – **feet** (ոտքեր), ռուսերենի՝ **стекло** (ապակի) – **стекол** (ապակիների):

Թեքական լեզուներն ավելի չատ են՝ **սեմական** լեզուները, **լատիներենը, ռուսերենը, գերմաներենը, հին հունարենը, հին հայերենը** և այլ լեզուներ:

Համադրական և վերլուծական ձևեր – Լեզվում քերականական իմաստներն արտահայտվում են նաև **համադրական (սինթետիկ)** և **վերլուծական (անալիտիկ)** տիպերով:

Վերլուծական ամենատարածված լեզուներն են չինարենը, անգլերենը (He came to Rome – Նա եկավ Հռոմ), ֆրանսերենը (I l est venu à Rome – Նա եկավ Հռոմ):

Այս նույն նախադասությունը լատիներենում (որը համադրական լեզու է), կլինի՝ Venit Romam – Եկավ Հռոմ:

Համադրական տիպն այն միջոցն է, երբ քերականական իմաստներն արտահայտվում են բառերի ինչպես **արտաքին** ձևաբանական կազմի փոփոխությամբ, ինչպես՝ ծառ-ծառ**եր**, ծառ**ից**,

*ծառերով, երգ-եց-ի-ինք, խաղ-աց-իր-ին, այնպես էլ **ներքին**՝ այսինքն արմատի հնչյունափոխության միջոցով, ինչպես՝ հայր>հոր, տուն>տան, արյուն>արյան, գիր>գրել: Ածանցումը և բարդացումը նույնպես համադրական տիպեր են (դաս + գիրք + ային (դաս(ա)գրքային, քար + քար + ոտ (քարքարոտ), տ + մարդ+ ի (տմարդի) և այլն:*

*Կարճ ասած՝ լեզվական **համադրական** ձևերը միասին՝ մեկ բառով գրվող ձևերն են՝ ի տարբերություն **վերլուծական ձևերի**, որտեղ քերականական իմաստների արտահայտման համար հանդես են գալիս այլ բառեր. դրանք հիմնականում օժանդակ բայերն են՝ գրում + **եմ, ես, է, ենք, եք, են** (եզակի), **էի, էիր, էր, էինք, էիք, էին** (հոգնակի):*

*Ասենք, որ վերլուծական ձևերով են կազմված սահմանական եղանակի բոլոր ժամանակային ձևերը (բացի անցյալ կատարյալից), ինչպես նաև արգելական հրամայականը՝ (մի՛ կարդա) հարկադրականը՝ **պիտի** եղանակիչով (պիտի գրեմ):*

*Վերլուծական ձևերով են կազմվում նաև բայերի **երկրորդական բաղադրյալ** ժամանակները (գրելիս եմ լինում, գրած կլինեմ, գրած էի եղել, գրած պետք է լինեմ):*

*Տալ օժանդակ բառը նույնպես վերլուծական ձևեր է կազմում (**գրել տուր, գրել կտամ, գրել եմ տվել, գրել պետք է տայի** և պատճառականը՝ **գրել տվեցի**):*

Առաջադրանքներ.

1. Բերված բառերում ընդգծեք բառակազմական հիմնական և երկրորդական ձևույթները՝ նշելով երկրորդականների տեսակները (բառակազմական, թե՞ բառահարաբերական):

Երաժշտություն, անհյուրընկալ, գեղանկարիչ, կանայք, պարողներ, ուսանողներից, դժրախտություն, լիովին, թախծալի, իմաստուն, ենթագիտակցություն, հեռաստաններից, գովաբանությամբ, քաջությամբ, ընկերասիրաբար, տմարդի, ապակոդմնորոշում, լեռներում, ուսում, անհաջողություններից, քաղաքապետը, քաղաքապետերից, գոհացան, խոսի՛ր, հանգստացեք, ուսանողներիցդ, առաջադիմությունս, հուզմունք, զորեղ, կանաչեղեն, նախապատրաստվեցեք, կկարդամ:

2. Բերված հատվածից դուրս գրեք միայն գոյականները և նշեք դրանց ձևույթները:

Այդ գեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի հանդիսավոր առավոտներից մեկը, երբ Աստղիկը՝ Տարոնի դիցուհին, դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և, շրջապատված իր անթառամ նաժիշտներով, իջնում էր Քարքե լեռան բարձրությունից՝ Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու:

3. Նույն հատվածից դուրս գրեք բայերը՝ նշելով դրանց ձևույթները:

4. Բերված նախադասություններից դուրս գրել բաղադրյալ բառերը՝ նշելով հիմքերը և վերջավորությունները՝ բացարձակ հիմքերը նշելով երկու գծով:

Ուսանողներիցս շատերը այս տարվա ամռան ամիսներին գյուղ գնացին՝ գյուղատնտեսական աշխատանքներից հոգնած ծնողներին օգնելու: Նրանցից շատերը ժամանակներն անց էին կացնում հայրենի լեռներում ու ձորերում, հաճախ էլ զբաղվում էին ընթերցանությամբ, որը հաճելի ժամանց էր նրանց համար:

— Պատմավեպերիցդ մեկը դասընկերդ է տարել, կարդալուց հետո կվերադարձնի,— Տիգրանին ասաց մայրն ու նրան հանձնեց հինավուրց մի գրություն, որը մեծ պապից էր մնացել, և մայրը պահում էր խնամքով:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

*Ցանկացած լեզվի բառապաշարը, ըստ այդ բառերի ամենաընդհանուր իմաստների, դրանց կրած ձևաբանական փոփոխությունների և շարահյուսական կիրառությունների, բաժանվում է որոշակի խմբերի, որոնք կոչվում են **խոսքի մասեր**: Յուրաքանչյուր խոսքի մասի մեջ մտնող բառերին հատուկ է տվյալ խոսքի մասի ընդհանուր իմաստը. բառերի մի մասն անվանում են անձեր, առարկաներ ու երևույթներ (սրանք կոչվում են **գոյականներ**), մյուս մասն արտահայտում է առարկաների որակական հատկանիշներ (սրանք կոչվում են **ածականներ**), թվային և դասական հատկանիշներ ցույց տվողներն էլ կոչվում են **թվականներ**, բառերի մի զգալի մասն էլ նշում է գործողություն, սրանք **բայերն** են, բայերի՝ գործողության հատկանիշ նշող բառերը **մակբայներն** են: Կան բավականին թվով բառեր, որոնք առանց տարբերակման փոխարինման դեր են կատարում՝ դրվելով նշված խոսքի մասերի փոխարեն, դրանք էլ **դերանուններն** են: Նշված այս 6 խոսքի մասերը կոչվում են **նյութական իմաստ արտահայտող** խոսքի մասեր: Դրանք ունեն **անվանողական գործառույթ**, որովհետև անվանում են առարկաներ, հատկանիշներ կամ գործողություններ: Սրանք շարահյուսական մա-*

---

* *Խոսքի մասերի դասակարգման ու դրանց համակարգի վերաբերյալ միասնական տեսակետ չկա. տարբեր լեզվաբաններ տարբեր սկզբունքներով են դրանք դասակարգում:*

*Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, 1965: **Գ. Սևակ**, Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ, Գիտական աշխատություններ, 1939, հ. 1: **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, ԳԱ հրատ., 1974: **Ս. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԳԱ, 1965: **Հ. Բարսեղյան**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, 1980: **Էդ. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967: **Ռ. Իշխանյան**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, 1971: **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հարցեր, հատորներ Ա, Բ, Գ, 1970, 1973, 1977 և Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն) 1983:*

Մենք հետևել ենք Մ. Ասատրյանի տեսությանը:

կարդակում կատարում են նախադասության անդամների պաշտոններ: Նշվածներից 3-ը՝ գոյականը, դերանունը և բայը ձևաբանական մակարդակում ստանում են քերականական կարգեր՝ հոլովման, հոլովման, խոնարհման և առկայացման:

Ավելի սակավաթիվ բառեր էլ կան, որոնք զուտ քերականական իմաստներ են արտահայտում, այսինքն՝ կապակցում են բառեր ու նախադասություններ և կոչվում են ձևական կամ երկրորդական խոսքի մասեր. դրանք են կապերն ու շաղկապները:

Սակավաթիվ բառերի մի մասն էլ վերաբերմունքային իմաստ է արտահայտում. դրանք են վերաբերականներն ու ձայնարկությունները, որոնք նույնպես զուրկ են քերականական իմաստներից և արտահայտում են խոսողի զգացական ու կամային վերաբերմունք, ինչպես նաև բնաձայնություններ:

Այսպիսով, հայերենում գոյություն ունեցող ավելի քան երկու հարյուր հազար բառերը դասակարգվում են տասը խոսքի մասերի միջև՝ վեցը նյութական իմաստ ունեցողներ (հիմնական) և չորսը՝ նյութական իմաստից զուրկ (երկրորդական):

Արդ տեսնենք, թե ինչ սկզբունքներով է կատարվում տվյալ լեզվի խոսքի մասերի դասակարգումը. դրա համար պետք է նկատի ունենալ 3 հանգամանք՝ ա) բառի ընդհանուր քերականական իմաստը, բ) բառի ձևափոխություններն ու ձևաբանական առանձնահատկությունները և գ) բառի շարահյուսական կիրառությունները:

Քննարկենք այդ սկզբունքներն առանձին-առանձին.

1. Բառերի՝ տարբեր խոսքի մասերի պատկանելությունը որոշելիս ամենից առաջ պետք է որոշել բառի ընդհանուր քերականական իմաստը, այսինքն՝ ինչպես ասվեց վերևում, պետք է նկատի ունենալ, թե տվյալ բառը առարկա՞ է անվանում, առարկայի հատկանի՞շ, գործողությո՞ւն, դրա հատկանի՞շը, թե՞ խոսքեր ու նախադասություններ կապակցելու կամ վերաբերմունքային իմաստ:

Ճիշտ է, յուրաքանչյուր խոսքի մասի մեջ կարող են մտնել նաև արմատական տարբեր իմաստներ ունեցող բառեր, սակայն այս դեպքում պետք է նկատի ունենալ ամբողջական բառի խոսքիմասային իմաստը: Այսպես, օրինակ՝ գոյականի խոսքիմասային կարգի մեջ մտնում են ոչ միայն իրերի ու անձերի անուններ (գիրք, ծառ, երեխա, աշակերտ), այլև առարկայացված գործողություն-

ների անուններ (**վազք, զեկուցում, ընթերցանություն**), կամ ածականի խոսքիմասային կարգի մեջ մտնում են ոչ միայն հատկանիշների անուններ (**լավ, վատ, քաջ, ուրախ**), այլև այնպիսի բառեր, որոնք իրենց արմատային իմաստով ցույց են տալիս առարկա կամ գործողություն (**արևոտ, լեռնային, ոսկե** — հիմքը՝ գոյական, **հիացական, մտածական** — հիմքը՝ բայական), բայց ամբողջական բառերի իմաստներն այս բառերում ածականական են, իսկ վերևում բերված բառերում՝ գոյականական (**վազք, զեկուցում, ընթերցանություն**):

Հայերենում կան նաև սահմանափակ թվով պարզ բառեր, որոնք միաժամանակ և՛ ածական են, և՛ գոյական, ահա դրանցից մի քանիսը՝ **տաք, ցուրտ, մութ, խավար, հարուստ, աղքատ, խենթ, հիմար, որբ, ամուրի**:

2. Խոսքի մասերը դասակարգելիս միաժամանակ պետք է հաշվի առնել նաև բառերի ձևավորումը և նրանց ձևաբանական հատկանիշները:

Այս դեպքում էլ պետք է նկատի ունենալ, թե բառերն ինչպիսի ձևափոխությունների են ենթարկվում, քերականական ի՞նչ կարգեր են ստանում, եթե հոլովվում են, ուրեմն գոյականներ ու դերանուններ են, եթե խոնարհվում են, ուրեմն բայեր են: Ասենք, որ միայն բայերն են, որ մյուս խոսքի մասերից տարբերվում են **ել, ալ** վերջավորություններով (բայի ուղիղ ձևում՝ անորոշ դերբայներում), մյուս խոսքի մասերը վերջավորություններ չունեն, դրանց մի մասը տարբերվում է ածանցներով՝ գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ (նաև բայական):

Ածանցման դեպքում էլ պետք է նկատի ունենալ, որ նույն ածանցներով երբեմն էլ ձևավորվում են տարբեր խոսքի մասեր. օրինակ՝ **ական**-ը ածականակերտ ածանց է (ընկերական, բարեկամական, դպրոցական, կուսակցական) վերջին երկու բառերը հավասարապես և՛ ածականներ են, և՛ գոյականներ, ինչպես՝ **դպրոցական ծրագիր, կուսակցական ժողով** և **դպրոցականը** պետք է պարտաճանաչ լինի, **կուսակցականը** կատարեց խոստումը: Այդպես էլ՝ **վոր**-ածանցը՝ «**Աշխատավոր** մարդը սոված չի մնա»: «**Աշխատավորը** բարիքներ է ստեղծում» և այլն:

Այս դեպքում էլ մեզ օգնության է գալիս խոսքի մասերի դասակարգման երրորդ հատկանիշը՝ նրա շարահյուսական պաշտոնը:

3. **Ծառահյուսական մակարդակում գոյականը** հիմնականում ենթակայի, խնդիրների, պարագաների և ստորոգելիական վերադրի պաշտոններ է կատարում, **ածականը** և **թվականը** հիմնականում որոշչային, **բայը՝** ստորոգյալի, **մակբայը՝** պարագայական, **կապերն** ու **շաղկապները** նախադասության անդամներ չեն լինում և սոսկ կապակցական դեր են կատարում, իսկ մյուս երկու խոսքի մասերը՝ **վերաբերականներն** ու **ձայնարկություն-ները,** կոչվում են **վերաբերմունքային** խոսքի մասեր և արտահայտում են խոսողի դատողական և զգացական վերաբերմունքը:

Ինչպես նկատելի է, հայերենում խոսքի մասերը 10-ն են, որոնց հիմնական քննությամբ, իմաստներով, ձևաբանական հատկանիշներով էլ զբաղվում է քերականության այս բաժինը՝ **Ձևաբանությունը:**

Նշենք նաև, որ ոչ բոլոր լեզուներում են խոսքի մասերն այս 3 սկզբունքներով դասակարգվում, դրա համար էլ տարբեր լեզուներում խոսքի մասերի թիվը տարբեր է:

Վերևում բերված օրինակներում նկատելի է, որ միևնույն խոսքի մասի կազմի մեջ մտնում են նաև ուրիշ խոսքի մասեր և կատարում են այդ խոսքի մասի պաշտոնը. եթե ածականն է հանդես եկել գոյականի դերում, ուրեմն այն ձեռք է բերել գոյականին հատուկ քերականական կարգեր՝ հոդ է ստացել, հոլովվել է, հոգնակիակերտ մասնիկներ է ստացել և կատարել է գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ: Այս առումով քննենք հետևյալ նախադասությունները. «Լավը վատից պետք է կարողանալ տարբերել»: «Հիմարները խելոքներին չեն կարող խելք սովորեցնել»:

Այստեղ **լավ** ու **վատ** ածականներից առաջինը հոդ է ստացել, իսկ երկրորդը՝ հոլովական վերջավորություն: Առաջինը կատարել է ենթակայի պաշտոն, երկրորդը՝ անջատման խնդրի:

Երկրորդ նախադասության մեջ **հիմար** և **խելոք** ածականները ստացել են գոյականին հատուկ հոգնակի թվի (**ներ**) ցուցիչները, հոլովվել են գոյականների նման՝ առաջինը կատարել է **ենթակայի** դեր, երկրորդը՝ **ուղիղ խնդրի:**

Այդպես էլ դերբայները կարող են փոխանցվել ածականների և գոյականների, ինչպես նաև գոյականը՝ կապերի, գոյականն ու ածականը՝ **մակբայի** և այլն: Լեզվաբանության մեջ այս երևույթը կոչվում է **խոսքի մասերի փոխանցում: Քննենք** այն:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը մի խոսքի մասից կարող է անցնել մեկ ուրիշ խոսքի մասի ոլորտ, և դրա իմաստը **երկփեղկվում է** (պրոֆ. Սերգեյ Աբրահամյանի տերմինն է), այսինքն՝ նույն բառը ձեռք է բերում մի նոր իմաստ: Մի խոսքի մասից մյուսին անցնելով՝ փոխանցված բառը ձեռք է բերում տվյալ խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները: Հատուկ նշենք, որ բառերի փոխանցումները տեղի են ունենում փոխանցվող բառի **շարահյուսական** կիրառության հիմքի վրա, ըստ որում, ոչ բոլոր խոսքի մասերն են, որ փոխակերպման առանձնահատկություն ունեն: Այժմ տեսնենք, թե փոխանցումը ո՞ր խոսքի մասերին է հատուկ:

1. **Ածականի փոխանցումը գոյականի և հակառակը** – Վերը բերված երկու նախադասություններում տեսանք այդ երևույթը, երբ **լավ, վատ, հիմար** և **խելոք** ածականները խոսքի մեջ ստացել են գոյականին հատուկ քերականական կարգեր և իրենց հիմնական՝ հատկանշային իմաստների հետ ձեռք են բերել նաև գոյականների (անձերի) գաղափար: Ըստ որում թե՛ **պարզ**, (քաջ, կույր, որբ, ծանոթ, ծուռ), թե՛ **ածանցավոր** (զինվորական, դպրոցական, բանակային, երկաթուղային, բանվոր, զինվոր) և թե՛ **բարդ** կազմությամբ (շատախոս, քչակեր, պայծառամիտ) ածականները կարող են փոխանցվել գոյականների:

Այս նույն երևույթը հավասարապես գոյություն ունի նաև գոյականների համակարգում, երբ անձի, առարկայի անվանումները գործածվում են ուրիշ գոյականների հետ և նշում են նրա **որակական հատկանիշը**: Օրինակ, **քար** և **աղվես** գոյականները, դրվելով **սիրտ** և **մարդ** գոյականների վրա, նշում են սրտի **կարծր** լինելը և մարդու **խորամանկության** հատկանիշը:

Այս նույն երևույթը հատուկ է նաև ինչպես ածանցավոր, այնպես էլ բարդ կազմություն ունեցող գոյականներից մի քանիսին:

Օրինակներ նախ **ածանցավոր** կազմությամբ.

ծաղրա**ծու** դերասան է, հավաքա**ծու** աշխատանք է, գրչ**ակ** գրող է, մտավոր**ական** ղեկավար է, թնթևսո**լիկ** կեցվածք ունի, կառա**պան** պատգամավոր է, խիստ նացիոնալ**իստ** ղեկավար է:

Բարդությամբ՝ **արծվաքիթ** մարդ է, **առյուծասիրտ** զինվոր է, **ծնողասեր** երիտասարդ է, **ստախոս** սրիկայի մեկն է և այլն:

2. **Դերբայների փոխանցումը ածականների և գոյականների** – Գրաբարյան **իչ** ածանցով կազմված ենթակայական դերբայներն այժմ վերածվել են ինչպես **ածականների** (կիզիչ, բուժիչ, համոզիչ, չարժիչ, մատնիչ), այնպես էլ **գոյականների** (ուսուցիչ, երգիչ, արարիչ, բնակիչ):

Ժամանակակից հայերենում նույնպես նկատելի է նույն երևույթը, օրինակ՝ հարակատար դերբայի **ած**-ով կան ինչպես գոյականներ (**սիրած, նշանած, խորոված**), այնպես էլ ածականներ (**կրթված, հոգնած, կատաղած, մեքենագրված, թրծված**):

Նույնը կարելի է ասել նաև **ենթակայական** դերբայի վերաբերյալ, որոնց մի մասը գոյականներ են՝ **ուսանող, գրող, ծնող, ընթերցող** և այլն:

3. **Գոյականների փոխանցումը կապերի** – ժամանակակից հայերենի կապերի մի մասը առաջացել է գոյականների ուղիղ ձևերից (**տեղ, ժամանակ, տակ, դուրս, ներս...**) մի մասն էլ՝ թեքված ձևերից՝ (**նպատակով, պատճառով, հիմունքով, ձեռքից, երեսից, կողմից, միջոցին, պահին**):

Կապերի մի մասն էլ գրաբարյան քարացած հոլովաձևերից են մնացել (**չնորհիվ, առթիվ, նկատմամբ, դիմաց, հանձին, հանուն**):

Արդի հայերենում կան բառեր, որոնք հավասարաչափ թե՛ կապի դեր են կատարում և թե՛ **մակբայի** (նայած կիրառության), օրինակ «Ներս մտավ ինձանից **հետո**» (կապ), բայց՝ «Գնա՛, **հետո** կգաս» (մակբայ), այդպես էլ՝ «Դռան **առաջ** կանգնած էր մեքենան» (կապ), «**Առաջ** այս շենքը այստեղ չկար» (մակբայ):

Ե՛վ կապ և՛ շաղկապ – Վերևում ասվածի նման հաճախ **կապի** և **շաղկապի** խոսքիմասային պատկանելությունը նույնպես որոշվում էր շարահյուսական հիմունքով: Օրինակ, հետևյալ նախադասություններում **մինչև** բառը կապի դեր է կատարել՝ «Կատվի վազքը **մինչև մարագն** է», «Քայլեցինք **մինչև հրապարակ**» (տարածական իմաստ ունի), «Խոսեցինք **մինչև լուսաբաց**», «Սպասենք **մինչև գարուն**» (ժամանակային իմաստ): Մինչդեռ նույն **մինչև** բառը հետևյալ նախադասություններում շաղկապի դեր է կատարել՝ «**Մինչև** կպատրաստվեր ելույթ ունենալ, նիստը վերջացավ»: «**Մինչև** չդրդես, տեղից չի շարժվի»:

Նույնը կարելի է ասել **փոխանակ** բառի մասին. **կապի** իմաս-

տով՝ «**Փոխանակ** ինձ հավատալու՝ ուրիշին լսեց»: «**Փոխանակ** զղջալու՝ ավելի խորացավ մեղքերի մեջ»: **Փոխանակը** դրվել է անորոշ դերբայի տրական հոլովի հետ և հակառակ հիմունքի իմաստ է արտահայտել. նրա տեղը կայուն է՝ անորոշ դերբայի հետ: Մինչդեռ հետևյալ նախադասություններում շաղկապի դեր է կատարել. նրա տեղն ազատ է՝ «**Փոխանակ** զղջայիր արածիդ համար, նոր զանցանք կատարեցիր», կամ՝ «**Փոխանակ** դասերդ սովորես, անընդհատ հեռուստացույց ես նայում»:

Ե՛վ համադասական և՛ ստորադասական շաղկապներ — Կան սահմանափակ թվով շաղկապներ, որոնց տեսակները նույնպես շարահյուսական կիրառությամբ կարելի է որոշել: Օրինակ՝ **մինչ**-ը հիմնականում ստորադասական շաղկապ է. ունի ժամանակային իմաստ և ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը կապում է գերադասի հետ՝ «**Մինչ** նա պատրաստվում է ներկայացման տոմս վերցնել, ես արդեն վերցրել էի»: Նույն **մինչ**-ը նաև համադասականի դեր է կատարում՝ «Համբոն խրատում էր որդուն, **մինչ** Գիքորն արդեն քնել էր» (ՀԹ):

Ուրեմն շաղկապը հիմնականում ստորադասական է, ունի հետևանքի իմաստ՝ «Ղարաբաղյան շարժումը Հայաստանը ազատագրեց թուրքերից, **ուրեմն** պետք է մինչև վերջ հավատարիմ մնանք այդ շարժմանը»: Այս շաղկապը կապակցում է նաև համադաս նախադասություններ ու համազոր անդամներ. «Ավարտեցինք աշխատանքը, **ուրեմն** կարող ենք տուն գնալ» (կապակցել է նախադասություններ) և «Մանկավարժներն ու գիտնականները, **ուրեմն** մտավորականությունը դեմ է օտարալեզու դպրոցներին» (կապակցել է նախադասության անդամներ):

Եթե.. ապա (համադաս) - «**Եթե** գինին հնությունից թնդանում է, **ապա** պոեզիան հնությունից քաղցրանում է» (ՊՍ), (ստորադաս) - «**Եթե** խոստանաս գիրք տալ, **ապա** կգամ»:

ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Վերևում տեսանք, որ խոսքի մեջ մի խոսքի մասը կարող է հանդես գալ մեկ ուրիշ խոսքի մասի կիրառությամբ. այդ երևույթը կոչվում է **խոսքի մասերի փոխանցում**: **Փոխանցման** ավելի նեղ տեսակն է այն երևույթը, երբ **գոյականի դերում** է հանդես գալիս **ոչ գոյական** խոսքի մասը՝ ստանալով գոյականական կիրա-

ություն և գոյականին հատուկ քերականական կարգեր. այս երևույթն էլ կոչվում է **փոխանունություն**: Քննենք հետևյալ օրինակները. «**Լավագույնը լավի** թշնամին է», «**Երգողը** հաղթեց **արտասանողին**», «Մրցույթին մասնակցողների **տասներեքից** **հինգը** մրցանակներ ստացան»:

Առաջին նախադասության մեջ **լավագույնը** ածականի գերադրական աստիճանը հանդես է եկել գոյականաբար, ստացել է **ը** հոդ և ենթակայի պաշտոն է կատարել, իսկ **լավ** ածականը նորից գոյականաբար է գործածվել, դրվել է սեռական հոլովով և հատկացուցչի պաշտոն է կատարել:

Երկրորդ նախադասության մեջ **երգող** և **արտասանող** ենթակայական դերբայները հանդես են եկել գոյականաբար՝ ստանալով նրան հատուկ քերականական հատկանիշներ, մեկը դարձել է **ենթակա**, մյուսը՝ **ուղիղ խնդիր**:

Երրորդ նախադասության մեջ թվականներն են հանդես եկել գոյականաբար՝ **հինգը** ենթակայի դեր է կատարել, իսկ **տասներեքից**-ը՝ անջատման խնդրի: Այս նույն նախադասության մեջ **մասնակցող** ենթակայական դերբայը ստացել է գոյականին հատուկ հոգնակի թվի ցուցիչ՝ **ներ** և բացառական հոլովի վերջավորություն՝ **ից**:

Նկատելի է, որ որպես **փոխանուններ** են հանդես գալիս ածականները, թվականները, անկախ դերբայները (ոչ բոլորը):

Հատուկ ընդգծենք, որ որպես **փոխանուն** հանդես են գալիս նաև գոյականի և նրա պաշտոնում հանդես եկող փոխանուն բառի **սեռական** հոլովը, որը պարտադիր **հոդ** է ստանում և իր մեջ ներառում է հատկացյալի գաղափար. ձայնավորով վերջացողները կրկնակի հոդ են ստանում՝ երեխա - երեխայի - երեխայինը, նա - նրա - նրանը: Այս երևույթն էլ կոչվում է **փոխանուն սեռական**: Բերենք մի երկու օրինակ. «Վերցրո՛ւ երեխայի գրիչը — **երեխայինը**», «Քեզ կտրամադրեմ իմ ավտոմեքենան — **իմը**»:

Առաջին օրինակում **երեխայինը** փոխանուն սեռականը իր մեջ ներառել է **երեխայի գրիչը** հատկացուցիչ-հատկացյալը: Երկրորդ օրինակում **իմը՝ ես** դերանվան սեռական հոլովն է, որը նույնպես իր մեջ է ներառել հատկացուցիչ-հատկացյալը՝ իմ ավտոմեքենան:

Փոխանվանաբար են հանդես գալիս նաև **չթեքվող խոսքի** մասերը, բառակապակցությունները (դերբայական դարձվածներն ու դարձվածային միավորները), ինչպես նաև ամբողջական նախա-

դասությունները: Այս երևույթն էլ կոչվում է **ինքնանվանողական** գործառույթ, որը հատուկ է նաև բոլոր հնչույթներին (**Ա**-ն ձայնավոր է, **Բ**-ն՝ բաղաձայն, **Ֆ**-ն Մ. Մաշտոցի ստեղծած հնչույթը չէ), **բառաձևերին** (**գրքով**-ը, **գինուց**-ը առանձնատներում-ը գոյականների հոլոված ձևեր են), **ածանցներին** (**բար**-ը, **պես**-ը, **որեն**-ն ու **ովին**-ը մակբայակերտ ածանցներ են), **վերջավորություններին** (**ով**-ը, **ից**-ը, **ում**-ը հոլովական վերջավորություններ են և այլն):

Օրինակներ չթեքվող խոսքի մասերի վերաբերյալ՝ «**Ու**-ն միավորյալ շաղկապ է, **սակայն**-ը՝ հակադրական, **կամ**-ը՝ երկրայական»: «**Մասին** կապը համարժեք է **վերաբերյալ**-ին, **դեպի**-ն ուղղություն է ցույց տալիս, **մինչև**-ը ժամանակային և տարածական իմաստներ է արտահայտում»:

Ախ-ն ու **վախ**-ը ձայնարկություններ են: **Իհարկե**-ն հաստատական վերաբերական է, **գուցե**-ն՝ երկրայական և այլն:

Ինքնանվանողաբար հանդես եկող բառակապակցությունների և նախադասությունների օրինակներ.

Զորավար Անդրանիկը, մեծատաղանդ երգահան Կոմիտասը, համաշխարհային հռչակ ունեցող Հրաչյա Աճառյանը մեր ազգի պարծանքներն են:

«**Ականջին օղ անելը**» նշանակում է միշտ հիշել, իսկ «**էշը ցեխից հանելը**» մի կերպ յոլա տանելու իմաստ ունի:

Նախադասություններ – «**Երեկ ես դասին ներկա չեմ եղել**»-ը քեզ չի արդարացնում դաս չպատասխանելու համար:

«**Արի, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն**» պետք է լինի յուրաքանչյուր հայի հավատամքը:

Եզրակացությունը պարզ է՝ **փոխանունությունը** պետք է տարբերել փոխանցումներից:

Հարցեր.

1. Ի՞նչ եք հասկանում **խոսքի մասերի փոխանցում** ասելիս:
2. Ի՞նչ հատկանիշներ ու կիրառություն են ստանում փոխանցվող խոսքի մասերը:
3. Ի՞նչ է փոխանունությունը (բերել օրինակներ):

Առաջադրանք 1.

1. Որոշել ընդգծված բառերի խոսքիմաստային պատկանելու-

թյունը, ասել դրանց ձեռք բերած քերականական կարգերը (եթե ունեն)։

Սանկտ Պետերբուրգը **հերոս** *քաղաք է. այդ քաղաքի* **հերոս** *ժողովուրդը ինն հարյուր օր պահեց իր քաղաքը։ Այդ քաղաքը շատ* **հերոսներ** *է տվել։*

Բանվորը *պետք է պարտաճանաչ լինի։* **Բանվոր** *մարդու արժանապատվությունը չպետք է վիրավորել։ Մի* **աղքատ** *մարդ հանդիպեց մի հարուստ մարդու.* **աղքատը** **հարուստից** *փող խնդրեց,* **հարուստը** *չմերժեց, որովհետև մի ժամանակ ինքն էլ* **աղքատ էր** *եղել։*

Կիզիչ *արևի ճառագայթները չէին կազդուրում* **հոգնած** *մարդկանց։* **Հոգնածներն** *հաճախ էին* **բուժիչ** *վաննաներ ընդունում։*

— Ասացի դու **հետո** *կմտնես քննության, նա ինձանից* **առաջ** *մտավ, ես նրանից* **հետո**, *բայց ես ավելի* **առաջ** *պատասխանեցի։*

*«***Ժամանակը** *իր վախճանին կհասնի, արեգակը մի բուռ մոխիր կդառնա» (Ավ. Իս.)։ Դասի* **ժամանակ** *պետք է ուշադիր լինել։*

Հարցեր.

1. Ի՞նչ է **փոխանունությունը**, *ինչո՞վ է տարբերվում փոխանցումից։*

2. Ի՞նչ հատկանիշներ են ձեռք բերում **փոխանունները։**

3. Հայերենում ո՞ր խոսքի մասերն են փոխանվանաբար գործածվում։

4. Ի՞նչ է **փոխանուն սեռականը**, *ինչի՞ դեր է կատարում։*

5. Ի՞նչ է **ինքնանվանողական** *փունկցիան։*

6. Բառակապակցություններն ու նախադասությունները կարո՞ղ են փոխանվանաբար հանդես գալ (բերել օրինակներ)։

Առաջադրանք 2.

Դուրս գրել փոխանվանաբար գործածված բառերը, նշել տեսակները.

«— Ես կպատվիրեմ՝ կարմիր ձին պատրաստեն,— Ինչո՞ւ կարմիրը, Արտա՛կ, դու գիտես, որ ես ճերմակն եմ սիրում։— Ճերմակը դեռ նստելու չէ» (Րաֆֆի)։

«Առանց առողջության մարդն անկարող է նույնիսկ բարին ու գեղեցիկը տեսնել… Բարի գործ անելը ամեն մարդու վայել չէ» (Մուրացան)։

Առաջինը դու պիտի խոսես այդ մասին: Ելույթ ունեցողը թող զգա իր սխալը:

— Ես իմն ասացի, դու էլ՝ քոնն ասա:

— Վերադարձրու ուսանողինը և վերցրու իմը:

Ասածդ իսկապես ճիշտ էր, բայց նրանն էլ սխալ չէր:

Մուշեղ Գալշոյանի արձակը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, Սիրադեղյանինը՝ ոչ:

Իմ ասածը ճիշտ էր, քոնը՝ օբյեկտիվ:

Առաջադրանք 3.

Բերված նախադասություններից առանձին-առանձին դուրս գրել խոսքի մասերի փոխանցումներն ու փոխանվանումները:

Հայաստանի բարձր լեռները ամպերից էլ բարձր են: Բարձրին ձգտողը պետք է ազնիվ լինի: Ազնիվ մարդը իր ճիշտ ճանապարհը կգտնի: Ճշտի հետևից գնացողը երբեք չի սխալվի: Սխալ գործ բռնողը լավ օրվա չի հասնի, որովհետև լավը թեև ուշ, այնուամենայնիվ կհաղթանակի: Շատին ձգտողը քչին էլ չի հասնի: Բարի, գեղեցիկ առաքինի ընկերը մարդու, նրան միշտ լավն ու բարին է ցանկանում: Աշխարհ տեսած ու մարդուն ճանաչող մարդը միշտ բարի է լինում: Գրելն ու կարդալն են մարդուն մարդ դարձնում:

Լավն ու վատը հարաբերական հասկացություններ են, բայց պետք է միշտ ձգտել լավին ու լավ գործ կատարել:

ԳՈՅԱԿԱՆ

Հայերենի տասը խոսքի մասերից ամենամեծ թիվը կազմում են գոյականները: Ըստ Էդուարդ Աղայանի բացատրական բառարանի՝ Հայերեն 136 Հազար բառերի գրեթե ուղիղ կեսը գոյականներ են՝ 66300:

Գոյական *կոչվում են այն բառերը, որոնք անվանում են առարկա կամ և որպես առարկա մտածված երևույթները, Հասկացությունները, որոնք առարկայական նշանակություն ունեն: Այսպես՝ գոյականների մեջ են մտնում անձ, կենդանի, իր ցույց տվող բառերը, ինչպես՝* ***մարդ, կին, տղա, աղջիկ, գառ, եզ, կով, ոչխար, աղվես, առյուծ, Հող, ծառ, առու, գետ*** *և այլն: Բնության երևույթներն անվանող բառերը՝* ***գարուն, աշուն, ամառ, ձմեռ, փոթորիկ, քամի, կայծակ, լույս, խավար ...*** *զանազան վերացական Հասկացություններ անվանող բառերը՝* ***վախ, սեր, զգացմունք, ուրախություն, բարություն, թռիչք, ընթացք, վազք*** *և այլն:*

Որպես առարկա և առարկայական Հասկացություն արտաՀայտող, անվանող բառերի կարգ՝ գոյականը լեզվի ***ձևաբանական*** *մակարդակում բնորոշվում է* ***թվի, Հոլովի, առկայացման*** *(Հոդեր),* ***անձի*** *ու* ***իրի*** *քերականական կարգերով, իսկ շարաՀյուսական մակարդակում՝* ***ենթակայի, խնդիրների*** *ու* ***պարագաների, ստորոգելիական վերադիրի,*** *ինչպես նաև կոչականի,* ***Հատկացուցչի*** *ու* ***բացաՀայտիչի՝*** *իրեն Հատուկ պաշտոններով:*

Գոյականների իմաստային-քերականական խմբերը *— Ըստ բառիմաստային և քերականական առանձնաՀատկությունների՝ գոյականները բաժանվում են Հետևյալ խմբերի՝ ա)* ***Հատուկ*** *և* ***Հասարակ,*** *բ)* ***թանձրացական*** *և* ***վերացական,*** *գ)* ***անձ*** *և* ***ոչ անձ*** *ցույց տվող գոյականներ, դ)* ***շնչավոր*** *և* ***անշունչ*** *գոյականներ:*

1. Հասարակ և Հատուկ գոյականներ *—* ***Հասարակ*** *են այն գոյականները, որոնք արտաՀայտում են* ***միատեսակ*** *առարկաների* ***ընդՀանրացված*** *Հասկացություններ (մարդ, քաղաք, ծով, գետ, ջուր, երկիր, պետություն, լեռ, քար...):*

Հատուկ են այն գոյականները, որոնք տրվում են առանձին անձին կամ առարկային (Արշակ, Վարդան, Գյումրի, Հայաստան, Մասիս, Սև ծով, Արաքս գետ, Վարդանանք, Արշակունի...):

Բնականաբար, հասարակ գոյականներն ավելի շատ են, որովհետև ամեն առարկա չէ, որ անուն ունի: Հասարակ գոյականները ցույց են տալիս ***ընդհանուրը****, իսկ հատուկները՝* ***եզակին:***

Հասարակ և հատուկ գոյականները, բացի իմաստային կողմից, տարբերվում են նաև քերականորեն, հասարակները գործածվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, հատուկները՝ հիմնականում եզակի: Երկու տեսակներին էլ հատուկ են ***հոլովման*** *և* ***առկայացման*** *քերականական կարգերը:*

Ընդգծենք, որ հատուկ ու հասարակ անուններն անջրպետված չեն իրարից. հաճախ հասարակ անունները դառնում են հատուկ, իսկ հատուկները՝ հասարակ: Առաջին երևույթը շատ լավ նկատելի է, երբ հասարակ անուններից շատերը տրվում են մարդկանց և դառնում են հատուկ. օրինակ՝ վարդ, ծաղիկ, անթառամ, համիկ, մանուշակ, նունուֆար և այլ ծաղիկների անունները տրվում են մարդկանց և դառնում են հատուկ՝ գրվելով մեծատառով: Այդպես էլ բազմաթիվ այլ գոյականներ՝ տարբեր իմաստներով՝ ավագ, թոռնիկ, նվեր, մարտիկ, մանուկ, գյուտ, գալուստ, իշխան, հարություն, թագուհի, գոհար, աղավնի և այլն:

Մեծավաստակ Հրաչյա Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում» բերում է նաև հայերենում գործածվող այն հատուկ անունները, որոնք հայերենով չեն ստուգաբանվում. բերենք դրանցից մի քանիսը՝ ***Անահիտ*** *(պարսկ. անարատ),* ***Արշակ*** *(պարսկ. արջուկ),* ***Անաստաս*** *(հուն. հարություն),* ***Արսեն*** *(հուն. այր),* ***Բարսեղ*** *(հուն. թագավոր),* ***Գևորգ*** *(հուն. երկրագործ),* ***Գրիգոր*** *(հուն. արթուն),* ***Գուրգեն*** *(պարսկ. գայլ),* ***Դավիթ*** *(եբր. սիրելի),* ***Լևոն*** *(հուն. առյուծ),* ***Մարտիրոս*** *(հուն. նահատակ),* ***Մարիամ*** *(եբր. լուսավորյալ),* ***Շահեն*** *(պարսկ. բազե),* ***Պետրոս*** *(հուն. քար)...*,* ***Ստեփանոս*** *(հուն. պսակ):*

Լեզուներում նկատելի է նաև հակառակ երևույթը, երբ հատուկ անուններն են վերածվում հասարակի, օրինակ՝ վոլտ, օհմ,

---

** Բաց արեք Աճառյանի բառարանը և կարդացեք ձեր անունների բացատրությունը:*

ամպեր, կեսար, մաուզեր, կայսր, օգոստոս, ռենտգեն, բոստոն, խուլիգան:

Նկատելի է նաև, որ նշանավոր մարդկանց հատուկ անուններն են դառնում ընդհանրական՝ «Հայ ժողովուրդը **Վարդաններ** ու **Անդրանիկներ** շատ է ծնել»: «Մենք այժմ **Կոմիտասներ** ու **Աճառյաններ** չունենք»:

Հասարակ և հատուկ անունների իմաստային-քերականական տարբերությունը գրավոր լեզվում այն է, որ հասարակ անունները գրվում են փոքրատառով, հատուկները՝ մեծատառով (թեև այդ տարբերակումը ոչ բոլոր լեզուներն ունեն, ինչպես՝ գերմաներենը, վրացերենը, պարսկերենը):

Հատուկ անունները լինում են՝

Անձնանունները և կենդանիներին տրվող անուններ (Գոհար, Աշոտ, Տիգրան, Ծաղիկ (կով), Փնջո, Մարալ, Նիգյար, Ջուլբաս):

Աշխարհագրական անունները (Եվրոպա, Կովկաս, Արաքս, Սև ծով):

Պետությունների, երկրների անունները (Հայաստան, Լեռնային Ղարաբաղ, Ֆրանսիա, ԱՄՆ):

Ստեղծագործությունների, պարբերականների, հանդեսների անունները («Գևորգ Մարզպետունի», «Իններորդ ալիք», «Հայաստանի Հանրապետություն», «Գարուն», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի»):

Հիմնարկությունների, ձեռնարկությունների, հաստատությունների անունները (Գիտությունների ազգային ակադեմիա, Ազգային գրադարան, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան):

Նկատելի է, որ հատուկ անունները լինում են **պարզ** (մեկ բառով) և **բաղադրյալ** (երկու և ավելի բառերից կազմված):

Բաղադրյալ հատուկ անվան միայն առաջին բառն է գրվում մեծատառով: Եթե անվան մեջ կան նաև ուրիշ հատուկ անուններ, դրանք էլ են գրվում մեծատառով (Ջենով Օհան, Սասունցի Դավիթ): Մեծատառով են գրվում նաև տվյալ անձին բնորոշ **մականուններ** (Տիգրան Մեծ, Աշոտ Երկաթ, Արշակ Երկրորդ):

Առաջադրանք.

Ուշադիր կարդալ տեքստը և հատուկ անունները գրել մեծատառով:

Յոթ հարյուր տարի առաջ պատմական այունյաց նահանգի

վայոց ձորում գլաձորի վանքում, ծնվեց միջնադարյան Հայաստանի խոշորագույն կրթական կենտրոններից մեկը՝ գլաձորի համալսարանը: Նրա հիմնադիր ներսես մշեցին նշանավոր պատմիչ և մատենագիր վարդան արևելցու աշակերտն էր՝ խոր վիրապի վարդապետարանի սանը: Վերջինիս դպրոցն իր հերթին կապված է եղել վանական վարդապետը՝ հովհաննես տավուշեցու խորանաշատի դպրոցի հետ. սա էլ, մխիթար գոշի աշակերտը լինելով, անմիջականորեն շարունակել է նոր գետիքի (գոշավանքի) վարդապետարանի ավանդույթները: Այս դպրոցներն էլ իրենց հերթին սերտորեն կապված են եղել XI–XII դարերի խոշորագույն կրթական օջախներ անիի, սանահինի, հաղպատի, բջնիի դպրոցների հետ:

Լուսավորության նոր օջախը՝ գլաձորի համալսարանը, որն իր ծաղկումն ապրեց ներսես մշեցու աշակերտ եսայի նչեցու ղեկավարության տարիներին, սյունյաց իշխանական տների՝ օրբելյանների և պռոշյանների հովանավորությամբ գոյատևեց շուրջ վաթսուն տարի, բայց թողեց հոգևոր մեծ ժառանգություն, աճեցրեց շնորհալի ու բեղմնավոր գիտնականների ու մանկավարժների մի ջոկատ: Նրանց մեջ առանձնանում են հովհան որոտնեցին, մոմիկը, գրիգոր տաթևացին, թովմա մեծոփեցին և ուրիշներ:

(Ըստ Ս. Արևշատյանի)

2. **Թանձրացական և վերացական գոյականներ** – **Թանձրացական** գոյականները մարդկանց, կենդանիների, բույսերի, բնության երևույթների, նյութերի, այսինքն՝ իրական առարկաների անվանումներն են:

Վերացական գոյականները ցույց են տալիս ոչ նյութական հասկացություններ՝ գործողության անվանումներ (աշխատանք, զբաղմունք, քայլվածք, վերելք...), մարդու հոգևոր կամ մտավոր գործունեությունը (դատողություն, միտք, մտածողություն, տխրություն, ուրախություն, ցանկություն, կամք, ձգտում...):

Վերացական գոյականների մեծ մասը կազմվում է **ություն, ում, ք** ածանցներով:

Վերացականները սովորաբար հոգնակի թիվ չեն ստանում, թեև հատուկ դեպքերում ստանում են՝ **ցանկություններ, ձգտումներ, մտքեր, կրոններ...**

Նշենք նաև, որ հաճախ դժվար է լինում հստակ որոշել թանձրացականը և վերացականը։

3. **Շնչավոր և անշունչ գոյականներ** (անձի և իրի առում) – Շնչավոր գոյականները մարդկանց և կենդանիների հասարակ ու հատուկ անուններն են, շնչավորի դեպքում տրվում է **ո՞վ, ովքե՞ր**, հարցը, անշունչի դեպքում՝ **ի՞նչ, ի՞նչը** հարցերը։

Սա հատուկ է աշխարհի շատ լեզուների, սակայն հայերենում կենդանին թեև շնչավոր է, բայց նրան տրվում է **ինչը** հարցը՝ ի՞նչն է հաչում, ի՞նչն է մլավում, ի՞նչն է կաթ տալիս և այլն։ Օրինակ՝ ռուսերենում այդ դեպքում տրվում է **ո՞վ** հարցը (**кто лает? собака лает, кто летит? муха летит? кто дает молоко? - корова дает молоко**)։

Այդպես էլ նաև անգլերենում, ֆրանսերենում, իտալերենում. և մի շարք այլ լեզուներում։

Շնչավորի և անշունչի տարբերությունը հայերենում վերանում է **հայցական** հոլովում (այս մասին խոսվելու է հոլովման համակարգում)։

4. **Որոշյալի և անորոշի (առկայացման) կարգը** – **Ի** տարբերություն մի քանի լեզուների, հայերենում գոյականները կիրառվում են **որոշյալ** և **անորոշ** ձևերով ու իմաստներով (առումներով)։ **Անորոշը** անծանոթ առարկան է, որն ունի **զրո** վերջավորություն, այսինքն՝ բառը՝ ինչ տառով, որ վերջանում է՝ տուն, քաղաք, երեխա, պարտեզ, հիմք, խումբ և այլն, մինչդեռ որոշյալ առումը նշում է խոսողին, խոսակցին **ծանոթ** առարկա։ Գոյականի որոշյալ առումը ձևավորվում է **ը** կամ **ն**, ինչպես նաև **ս** կամ **դ** հոդերով։ Հոդառությունը Գ. Ջահուկյանը անվանում է **առկայացման քերականական կարգ**։

Բաղաձայնով վերջացող բառերը որոշյալի դեպքում ստանում են **ը** հոդը՝ (գիրք**ը**, տուն**ը**, մարդ**ը**, աշակերտ**ը**, ձայնավորով վերջացողները՝ **ն** հոդը՝ երեխա**ն**, աղավնի**ն**, երեկո**ն**, բազե**ն**, առու**ն**։

Ասվեց, որ անորոշ ու որոշյալ առարկաները տարբերվում են ծանոթ կամ անծանոթ լինելով։ Օրինակ՝ «Երեխան **գիրք** է կարդում» (ո՞ր գիրքը. հայտնի չէ), բայց «Երեխան կարդում է գիրքը» (հայտնի է, որ կարդում է ուսուցչի հանձնարարածը, կամ ծրագրով պահանջվողը)։

*Անորոշությունը դրսևորվում է նաև **մի** բառով (մի մարդ **մի** բան ասաց):*

*Որոշիչ հոդերը դրվում են միայն ուղղական, հայցական և տրական հոլովների վրա՝ «**Ուսուցիչը** (ուղղական), գիրքը (հայցական) տվեց աշակերտին (տրական)»: Արդի հայերենում սեռականի հետ հոդ չի դրվում, այն դրվում է միայն **փոխանուն սեռականի վրա՝** «Վերցրու ուսանողինը (ուսանողի գրիչը): Արմենինը վերադարձրու» (գրիչը): Արևմտահայերենում սեռականի վրա նույնպես հոդ է դրվում (կատվին ձագը, Արամին գիրքը):*

*Գոյականներին որոշյալության իմաստ են տալիս նաև **ս** և **դ** հոդերը, որոնք դրվում են բոլոր հոլովների հետ և արտահայտում են **ստացականություն** (գիրքս տուր (իմ), գիրքդ կվերադարձնեմ (քո) և **դիմորոշություն** – այս դեպքում **ս, դ** հոդերն ընդգծում են անձի դեմքը՝ առաջին և երկրորդ՝ Դասախոսս (ոչ թե իմ դասախոսը, այլ ես՝ դասախոսս) պետք պարտաճանաչ լինեմ: Ուսանողդ (ոչ թե քո ուսանողը, այլ դու՝ ինքդ) պետք է բարեխիղճ լինես:*

Առաջադրանք 1.

Դուրս գրել գոյականները և բնութագրել դրանց իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները:

Վերջալույսն էի դիտում ծովի վրա: Ջուրը լերդ կանաչ էր կտրել, կոհակները, միմյանց հրելով, հեռանում էին դեպի խորքերը և փրփրալի գծեր կազմում: Հեռվում երևում էին եզերքների գյուղերը, ծառերն ու ծառաստանները: Մի այլ կողմ Ադթամար կղզու կեսն էր, հորիզոնի մի կողմի վրա՝ Կտուց անապատը, իսկ մյուսի վրա Առտեղ կղզին, որ մի մեծ սև թռչունի նման երբեմն կարծես ընկղմվում էր ջրի մեջ, երբեմն դուրս ցցում իր լերկ գագաթը:

Մայր մտնող արեգակն այդ պահին աղոտ ճառագայթներով խաղում էր ջրերի հետ ու լայն, լուսավոր ուղի գծում մինչև ափը: Նրա դեմքը նման էր հրաշեկ գնդակի, որ հետզհետե ընկղմվում էր փրփրալից սև ջրի մեջ և լուսավորում գլխի վրայի ամպերը, նրանց եզերքներին վարդագույն, աննման ժապավեններ կազմում և դիմացի մի այլ ամպի էլ բոցավառ ու անշարժ խարույկի տեսք տալիս:

(Ըստ Գ. Բաշինջաղյանի)

Առաջադրանք 2.

Կազմել 5-ական նախադասություններ ը, ն, ս, դ հոդերով:

Առաջադրանք 3.

Առանձնացնել այն հասարակ գոյականները, որոնք գործած-վում են նաև իբրև հատուկ անուն.

արեգակ, արև, առյուծ, կորյուն, ձնծաղիկ, անթառամ, վարդ, շուշան, քաղաք, կռունկ, լրաբեր, ավետիս, շանթ, մառուռ, ռազմիկ, զինվոր, զարդ, գոհար, զանգակ, մանիշակ, սոխակ, ծիտ, շանթ, աղավնի, ծիծեռնակ, բուրաստան, այգեստան, գալուստ, հանգիստ, թռնիկ, ուսանող, համբիկ, նունուփար, գոռ, լեռ, բազե, հարություն, լավություն, նվեր, ընծա, ավազ, կրտսեր, երեխա, մանուկ, գեղանի, հրաչյա:

Առաջադրանք 4.

Խմբավորել թանձրացական և վերացական գոյականները՝ նշե-լով դրանց քերականական տարբերությունները.

ուսանող, ուսում, համալսարան, դաստիարակություն, անձրև, հեղեղ, նպատակ, մտերմություն, սեր, բարեկամություն, ծաղիկ, արհամարհանք, զարմանք, ագռավ, ազատություն, ազնվություն, աղվես, բացահայտում, մտածմունք, երգիչ, տաղասաց, հանելուկ, ժպիտ, կարգախոս, բանիմաց, պարտեզ, ջրատար, կանխում, հեռացում, այգի, բանջարաբուծություն, երաշխիք, գաղտնիք, այգեպան, խնամում, գինի, օդի, հարբեցողություն, տուն, տնատեր, կառավարում:

Առաջադրանք 5.

Փորձեք սահմանել անձի և իրի քերականական տարբերու-թյունները, առաջադրեք նաև հարցերը (ո՞վ, ի՞նչ).

Հիվանդի համար կանչեցին լավ բժշկին: Նա ճանաչված բժիշկ է: Դասախոսը ցուցակագրեց իր ուսանողներին: Լավ ուսանողներ նա շատ ունի: Հեռվից նկատեցի մի կին և մի երեխա: Ես ունեմ կին և երեխա: Որսորդ Ավին սպանեց մի արջ. նա այդ արջին վաղուց էր նկատել: Գյուղացի Համբոն մորթեց հիվանդ կովը. երեխաները այդ կովին շատ էին սիրում: Տանտիրուհին հյուրեր հրավիրեց. նա այդ հյուրերին վաղուց էր սպասում: Համմիկը տիկնիկ շատ է սիրում. նա միշտ շոյում ու գուրգուրում է իր տիկնիկին, Աշոտն էլ

իր չնիկին է շատ սիրում: Տատիկս էլ կատու էր շատ սիրում, երբ նա մուկ էր բռնում ու մկանը թաթիկներով խաղացնում էր, բոլորս էինք ուրախանում:

Առաջադրանք 6.
Ինքներդ անձը գործածեք իրի փոխարեն, իրը՝ անձի:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Մեզ շրջապատող, աշխարհում գոյություն ունեցող բոլոր առարկաները, անձերն ու երևույթները խոսքի մեջ հանդես են գալիս երկու թվով՝ ***եզակի*** *և* ***հոգնակի: Եզակին*** *ցույց է տալիս մեկ առարկա,* ***հոգնակին՝*** *մեկից ավելի, որոնք մտնում են նույն տեսակի մեջ՝ մինչև անսահմանություն աստիճան:*

Գոյականի ***եզակի*** *թիվը քերականական* ***ձևային*** *վերջավորություն չունի (մարդ, կին, ծառ, այգի, գիրք, դպրոցական, գրադարանավար և այլն), իսկ հոգնակի թիվը, որը նշում է իր տեսակի առարկաներից մի քանիսը, ունի իր ձևային վերջավորությունները, դրանք են՝* **եր, ներ, ք** *(***կին*** *և* ***մարդ*** *բառերի համար ունի* **այք,** *և* **իկ** *–* ***կանայք, մարդիկ****),* **եր, ներ, ք** *մասնիկները կոչվում են* ***հոգնակերտ ձևույթներ:***

Ըստ թվի քերականական կարգի՝ գոյականները կարելի է բաժանել 3 խմբի՝

ա) ***գոյականներ,*** *որոնք ունեն և՛* ***եզակի,*** *և՛* ***հոգնակի*** *թիվ (սա հատուկ է գոյականների մեծամասնությանը),*

բ) ***գոյականներ,*** *որոնք ունեն միայն* ***եզակի*** *թիվ (սրանք այնքան էլ շատ չեն). դրանք կոչվում են* ***անհոգնական*** *գոյականներ,*

գ) ***գոյականներ,*** *որոնք ունեն միայն հոգնակի թիվ. սրանք նույնպես շատ չեն և կոչվում են* ***անեզական*** *գոյականներ:*

Կան նաև ***հավաքական*** *գոյականներ:*

Հոգնակի թվի կազմությունը *– Գոյականի հոգնակի թիվն արդի հայերենում կազմվում է* **եր, ներ, ք** *ձևույթներով՝ բացի* ***մարդ*** *և* ***կին*** *բառերից:*

Եր *և* **ներ** *ձևույթների հավելումը եզակի թվի վրա, որպես կանոն, պայմանավորված է բառերի վանկերի քանակով.* **եր** *ձևույթը ստանում են միավանկ բառերը (ջուր-ջր***եր***, ծառ-ծառ***եր***, քար-քար***եր***, սար-սար***եր***, գիրք-գրք***եր***, միրգ-մրգ***եր***...),* **ներ** *ձևույթ են*

ստանում բազմավանկ բառերը (ուսուցիչ, տղա, դասագիրք, ծառաստան...):

Նկատելի է, որ հոգնակերտ ձևույթներ ստանալիս որոշ բառեր հնչյունափոխվում են՝ ջուր-ջրեր, միտք-մտքեր, ձու-ձվեր, լու-լվեր, դասագիրք-դասագրքեր և այլն:

Հոգնակի թվի կազմության նշված օրինաչափության հետ պետք է նկատի ունենալ նաև հետևյալ դեպքերը՝

1. Որոշ միավանկ բառերի՝ գրաբարում ունեցած եզակի թվի վերջին ն-վերջնահնչյունը աշխարհաբարի եզակի թվում ընկել է, բայց հոգնակին կազմելիս, այն պահպանվում է, ինչպես՝ **ձուկն, մուկն, լեռն, բեռն, գառն**: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այդ միավանկ բառերը հանդես են գալիս որպես բարդ բառի վերջին բաղադրիչ, ինչպես՝ **չնաձուկ, դաշտամուկ, բարձրալեռ, լծաեզ, ուսաբեռ** և այլն: Դրանք հոգնակի թվում լինում են՝ **ձկներ, մկներ, լեռներ, բեռներ** և **չնաձկներ, դաշտամկներ, բարձրալեռներ, ուսաբեռներ** և այլն: Թեև այդպիսի բառերի հոգնակի թիվն արտահայտվում է **ներ**-ով, բայց դա չպետք է շփոթել հոգնակի թվի **ներ** ձևույթի հետ. դրանք ստացել են **եր** ձևույթը, որին հավելվել է գրաբարի **ն**-ն:

Միավանկ բառերից միայն **ռուս** բառն է, որի հոգնակին ստանում է **ներ** ձևույթը՝ **ռուսներ**. դա էլ բացատրվում է այդ բառի բարբառներում երկվանկ լինելով՝ **ըռուս** կամ **ուռուս** ձևերով:

2. Գաղտնավանկ (**մեկ ու կես**) գոյականներն ստանում են և՛ **եր** և՛ **ներ** ձևույթները. եթե գաղտնավանկը բառավերջում է, հոգնակին ստանում է **եր**՝ **աստղեր, կայսրեր, դուստրեր, ուստրեր** (տղաներ), **վագրեր, արկղեր** և այլն, իսկ եթե գաղտնավանկը գտնվում է բառի սկզբում, ամբողջ բառը ստանում է **ներ**՝ **գրիչներ, ցրիչներ, բժիշկներ, թրթուռներ, գնդակներ, գլխարկներ, վտանգներ, քլունգներ, գնորդներ** և այլն:

3. Բարդ բառերի հոգնակին կազմելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա՝

ա) եթե բարդ բառի վերջին բաղադրիչը միավանկ է և պահում է իր հիմնական իմաստը, ստանում է **եր** ձևույթը՝ ինչպես՝ **սարալանջ-սարալանջեր, անձրևաջուր-անձրևաջրեր, աղբակույտ-աղբակույտեր, ածխահոր-ածխահորեր, ավտոդող-ավտոդողեր, արևմտահայ-արևմտահայեր, անկյունաքար-անկյունա-**

քարեր, զինատուն-զինատներ, հեռագիր-հեռագրեր, ձեռագիր-ձեռագրեր, վերնատուն-վերնատեր և այլն,

բ) եթե բարդ բառի վերջին բաղադրիչը միավանկ է, բայց իր բուն իմաստը չի պահպանում, այն բայական արմատ է կամ ընկալվում է որպես այդպիսին, և ամբողջ բարդ բառն արտահայտում է մի բան անողի կամ մի բան ունեցողի նշանակություն, ապա հոգնակիի կազմության ժամանակ ստանում է **ներ** ձևույթը, ինչպես՝ **բանասեր-բանասերներ, ջրկիր-ջրկիրներ, հացթուխ-հացթուխներ, գրագիր-գրագիրներ, պատշար-պատշարներ, դասալիք-դասալիքներ, մեծատուն-մեծատուններ** և այլն:

Նշված երկու դեպքերն ավելի ցայտուն կարելի է ցույց տալ **նույնարմատ** վերջնաբաղադրիչ ունեցող բարդ բառերի օրինակով: Այսպես՝ **հեռագիր, ձեռագիր, վերնագիր** բառերում վերջին միավանկ **գիր** բաղադրիչը պահել է իր իմաստը, դրա համար էլ ստացել է **եր**, իսկ **պատմագիր, վիպագիր, արձակագիր** բառերում **գիր** բառը բայական իմաստ է ստացել՝ **գրել, գրող**, այսինքն՝ իմաստը ձուլվել է առաջին բաղադրիչին, դրա համար էլ այդ բառերի հոգնակին ստացել է **ներ՝ պատմագիրներ, վիպագիրներ, արձակագիրներ:**

Այդպես էլ՝ **վերնատուն-մեծատուն, նստացույց-ժամացույց** բառերից առաջիններում **տունը** և **ցույցը** պահել են իրենց առարկայական իմաստները՝ **վերևի տուն** (հարկ) և **նստելու ցույց**, իսկ երկրորդ բառերում՝ **մեծատուն** (հարուստ, ունևոր), **ժամացույց** (ժամանակ ցույց տվող) իմաստափոխվել են:

Բաղաձայն բարդ բառի վերջին բաղադրիչը միավանկ **ձայն** բառն է, որ ստանում է **եր** (ձայներ), բայց երբ միանում է **բաղ** ածանցին, կորցնում է իր ձայնի հատկանիշը և ստանում է **ներ** (**բաղաձայններ**), ձայն չունեցող, մինչդեռ **ոտնաձայն, հեռաձայն, թռչնաձայն** բառերում **ձայնը** պահում է իր իմաստը և ստանում է **եր** (հեռաձայներ, ոտնաձայներ), իսկ **քաղցրաձայն, նրբաձայն, որոտաձայն** բառերը վերջավորություն չեն ստանում, որովհետև ածականներ են:

Բ Հոգնակերտը հանդես է գալիս հատկապես ժողովրդախոսակցական տարբերակում՝ **ացի, եցի** ածանցավոր բառերի հետ՝ գյուղա**ցիք**, քաղաքա**ցիք**, մշե**ցիք**, գյումրե**ցիք**, թիֆլիսե**ցիք**, անգլիա**ցիք**. սրանց գրական ձևը **ներ** ստանալն է՝ գյուղա**ցիներ**, գյումրե**ցիներ**, անգլիա**ցիներ**:

Իկ մասնիկով միայն **մարդ** բառի հոգնակին է կազմվում, ինչպես նաև բարդ բառի **մարդ** վերջնաբաղադրիչի դեպքում՝ մարդ-մարդ**իկ**, տղամարդ-տղամարդ**իկ**, նախամարդ-նախամարդ**իկ**:

Այք մասնիկով կազմվում է **կին** բառի հոգնակին, իսկ բարձր ոճերում նաև **տիկին** և **պարոն** բառերի հոգնակին՝ տիկն**այք**, պարոն**այք**: Այս բառերի սովորական հոգնակին **ներ**-ով ձևն է՝ տիկին**ներ**, պարոն**ներ**:

Տեր բառի (այժմ **պարոն** իմաստով) հոգնակին կազմվում է **տիարք** ձևով, որն ավելի հայացի է և խորհուրդ է տրվում գործածել **պարոններ** բառի փոխարեն (տեր-պարոն, տիարք-պարոններ):

Անհոգնական գոյականներ — Արդի հայերենում կան նաև այնպիսի գոյականներ, որոնք հոգնակի թիվ չեն ունենում, կամ հազվադեպ են ունենում. դրանք կոչվում են **անհոգնական** գոյականներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ իմաստներով.

ա) հատուկ անուններ՝ Գեղամ, Սոնա, Հայկական պար, Սևանա լիճ, Մասիս սար, Լոռու մարզ և այլն,

բ) վերացական գոյականները՝ սեր, արհամարհանք, վիշտ, թախիծ, ուրախություն, ազնվություն...

գ) չափվող-կշռվող նյութերի անուններից շատերը՝ նավթ, բենզին, օղի, մազութ, խմոր, կարագ, պանիր, մածուն, թան, կաթ, կաթնաշոռ...

դ) զանազան խաղերի, զբաղմունքների անուններ՝ շախմատ, լոտո, ֆուտբոլ, վազք, լող, չմշկասահք, ձեռնագնդակ...

ե) գիտությունների, ուսմունքների անվանումները՝ ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, մաթեմատիկա, բիոլոգիա (կենսաբանություն),

զ) **ություն**, **եղեն**, **իզմ** ածանցներով վերջացող բառերի մի մասը՝ երիտասարդություն, ուսուցչություն, վեհություն, ծուլություն, սակայն **ություն** ածանցով վերջացող այն բառերը, որոնք ընկերություն, կազմակերպություն, հիմնարկություն և նման իմաստներ ունեն, ստանում են **ներ** հոգնակերտը՝ հիմնարկություններ, ընկերություններ, կազմակերպություններ, կուսակցություններ, միություններ և այլն:

Ներ են ստանում նաև մի քանի ուրիշ բառեր՝ զեկուցումներ, հանդիպումներ, շարժումներ, ուսմունքներ:

եղեն *ածանցով գոյականները նույնպես անհոգնական են՝ կտորեղեն, խմորեղեն, հացաբուլկեղեն, կոշկեղեն, հագուստեղեն, մրգեղեն, բանջարեղեն, ոսկեղեն, փայտեղեն, երկաթեղեն և այլն:*

Իզմ *ածանցով կազմվողները նույնպես հոգնակի թվով չեն գործածվում՝ սոցիալիզմ, կոմունիզմ, ֆաշիզմ, ռոմանտիզմ, ֆեոդալիզմ:*

ելիք *ածանցով կազմվածները նույնպես անհոգնական են՝ հագնելիք, քաղցրավենիք, ծախսելիք, վառելիք, գրելիք, խոսելիք:*

Անեզական գոյականներ *— Հայերենում կան նաև գոյականներ, որոնք եզակի թիվ չունեն, դրանք են՝*

ա) **անք, ենք, ունց, ոնք** *ածանցներով կազմված բառերը՝ Վարդանանք, Մուշեղանք, Արամենք, Պողոսենք, Մարգպետենք, Բակունց, Շալունց, պապոնք և այլն:*

բ) Աշխարհագրական հատուկ անուններ, որոնք օտար լեզուներում նույնպես անեզական են՝ Ալպեր, Կարպատներ, Հիմալայներ, Անդեր, Կորդիլեռներ, Ապալաչներ, Ֆիլիպիններ, Պամպասներ:

Գրաբարում անեզական բառերը շատ էին, որոնք կազմված էին **ք***-ով՝ աչք, ունք, վերք, միտք, տանջանք, մեղադրանք, Հայք, Վիրք, Ուշտունիք. այդ բառերն այժմ հոգնակի են կազմում* **եր** *և* **ներ** *մասնիկներով՝ աչք-աչքեր, միտք-մտքեր, տանջանք-տանջանքներ, Ուշտունիներ:*

Հավաքական գոյականներ *— Սրանք այն գոյականներն են, որոնք ցույց են տալիս միատեսակ առարկաների ամբողջություն՝ զորք, ազգ, բանակ, հոտ, վտառ, նախիր, ոհմակ, երամակ, ժողովուրդ, վաշտ, գունդ: Սրանք գործածվում են նաև հոգնակի թվով (գնդեր, զորքեր, բանակներ...)*

Հավաքականները մեծ մասամբ կազմվում են **ություն** *(ընկերություն, աշխատավորություն, մտավորականություն...)* **եղեն** *(կաթնեղեն, մսեղեն, խմորեղեն, բանջարեղեն...) ածանցներով: Եթե* **ությունով** *կազմվածների մի մասը կարող է հոգնակի թվով գործածվել (ընկերություններ), ապա* **եղենով** *կազմվածները չեն կարող:*

Հավաքական գոյականներ են կազմվում նաև **անի** *(ավագանի, ընտրանի, նամականի, առածանի),* **որայք** *(դեղորայք) մասնիկներով:*

Մանոթության կարգով նշենք, որ կան լեզուներ, որտեղ նույն

գոյականը եզակի թվում այլ իմաստ ունի, հոգնակի թվում՝ այլ: Օրինակ ռուսերենում вес եզակի թվում նշանակում է **կշեռք**, հոգնակի թվում՝ весы - **կշիռ**, կամ՝ час - **ժամ**, часы - **ժամացույց**:

Առաջադրանք 1.

Կազմել տրված գոյականների հոգնակին՝ առաջին սյունակում գրել եր, երկրորդում՝ներ ձևերը.

Հայր, մայր, տուն, փողոց, ընտանիք, մուկ, ձուկ, աղվես, գայլ, լեռ, բեռ, ուսուցիչ, աշակերտ, սան, ուստր, դուստր, նապաստակ, տոնածառ, երթուղի, մեքենա, դեկ, փայտ, դուռ, նուռ, հնչյուն, տառ, բաղաձայն, ձայնավոր, երեխա, թոռ, բժիշկ, խրճիթ, գնդակ, տետրակ, միտք, գիր, գրագիր, վիպագիր, ծրագիր, անկյունածեփ, մեծատառ, գառ, ածխահոր, հանքափոր, հրացան, գեղագետ, պատմաբան, բանասեր, թռչուն, ինքնաթիռ, բթամիտ, վերջալույս, թաղապետ, ստորակետ, տոմսարկղ, վերջակետ, տարեգիր, խաչագող, խաչբառ, բազմակետ, պարսավանք, գեղագիր:

Առաջադրանք 2.

Բերված բառերը գրել 2 շարքով՝ անեզականներ, անհոգնականներ.

Բազմազգ, վարք, օդի, գինի, սեր, արհամարհանք, Հիմալայներ, Ֆիլիպիններ, կուպր, նավթ, վազք, ֆուտբոլ, պապոնք, Ծալունց, Սիսակյանք, մածուն, բուք, որոտ, հարբեցողություն, տքնանք, թենիս լող, Անդեր, նամականի, դեղորայք, ամանեղեն, երշիկեղեն, տանջանք, մեղադրանք, կապար, արև, լուսին:

Առաջադրանք 3.

Կազմել հետևյալ բառերի հոգնակիները և գործածել նախադասությունների մեջ.

Հացատուն, վերնատուն, մեծատուն, այգեգործ, ձեռագործ, լրագիր, ծրագիր, արձակագիր, խմբագիր, մատենագիր, սևագիր, թռչնաբույծ, պատաշար, ողնաշար, տեղաշոր, ավետաբեր, հրահան, կաթնակեր, բաղաձայն, հեռաձայն, անկյունածեփ, նստացույց, ժամացույց, ոտնաչափ, թզաչափ, հողաչափ, գյուղապետ, թաղապետ, խաչբառ, նորաբառ, բազմակետ, ստորակետ, դրամարկղ, աղբարկղ, խաչագող, ծխախոտ, դաշտախոտ, հականիշ, հոմանիշ, վերջալույս, տեսակետ, վերջակետ, նորածին, կին, տիկին, մարդ, նախամարդ, գյումրեցի, գյուղացի, պարոն:

Առաջադրանք 4.

Բերված գոյականներից առանձնացնել այն հավաքական բառերը, որոնք կարող են հոգնակիով էլ գործածվել.

ամբոխ, ժողովուրդ, ակնեղեն, գումարտակ, բանակ, առածանի, երեմակ, ոհմակ, հոտ, մտավորականություն, ավազանի, դասակ, դեղորայք, մշակույթ, տեսականի, հումոր, զարմանք, գոհարեղեն, ուսանողություն, ընկերություն, պարտիա, խմբավորում, ամանեղեն, միություն, բազմություն:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Նախ տեսնենք, թե ի՞նչ է հոլովը – **Հոլովը գոյականի, գոյականաբար առնված այլ խոսքի մասի և առարկայանիշ դերանվան քերականական կարգ է: Հոլովը բառի իմաստի և ձևի միասնական դրսևորումն է, որով էլ պայմանավորված է բառի շարահյուսական պաշտոնը:**

Առանց բառաձևի հոլով չկա. Նկատի են առնվում ոչ միայն բառերի հոլովակազմիչ ձևույթները, այլև բառերի ներքին թեքումը (**տուն-տան, հայր-հոր, անուն-անվան, միություն-միության**):

Ըստ այն բանի, թե **հարացուցային** մակարդակում բառը տվյալ լեզվում ձևաիմաստային քանի տեսակի փոփոխության է ենթարկվում, տվյալ լեզվում այդքան էլ հոլով կա: Հարացուցային միավորը որոշում է ոչ միայն բառաձևի, այլև նրա իմաստի հաշվառմամբ, այսինքն՝ յուրաքանչյուր հոլով որոշվում է **հոլովական ձևի և իմաստի միասնությամբ:** Օրինակ՝ մեզ ծանոթ լեզուներից ֆրանսերենն ու իտալերենը հոլովներ չունեն, որովհետև այդ լեզուներում բառերը ձևային փոփոխություններ չեն ստանում, անգլերենում կա մեկ՝ **սեռական** հոլով, որը կազմվում է ապոստրոֆ նշանով և հոգնակերտ s-ով՝ the book – the book's (գիրքը – գրքի): Լատիներենում և գերմաներենում բառը ձևափոխության է ենթարկվում միայն 4 ձևով, ուրեմն՝ դրանք ունեն 4 հոլով, ռուսերենում՝ 6 ձևով (չունի բացառականի ձևը: Այն կազմվում է **из** նախդիրով – **из ворота** – դարպասից):

Այն լեզուները, որոնցում բառը ձևային փոփոխությունների չի ենթարկվում, դրանցում բառի շարահյուսական իմաստները որոշվում են նախդիրների (articl) միջոցով. օրինակ՝ անգլերենում՝

from the book - գրքից, with the book - գրքով, in the book - գրքում:

Աշխարհում կան շատ լեզուներ, որոնցում բառը հարացուցային մակարդակում ավելի շատ փոփոխությունների է ենթարկվում, այսինքն՝ ավելի շատ հոլովակազմիչ ձևույթներ է ստանում, ուրեմն այդ լեզուներում հոլովների քանակն ավելի շատ է, օրինակ, սանսկրիտն ունի 8 հոլով, էստոներենը՝ 11, ֆիններենը՝ 16, հունգարերենը՝ 21, լեզուներ էլ կան, որոնց հոլովների թիվն անցնում է 50-ից:

Իսկ քանի՞ հոլով ունի հայերենը:

*Անվանի գրաբարագետ Միքայել Զամչյանը գրաբարում նշում է 10 հոլով (ժամանակակից հայերենի 7 հոլովներին ներառյալ նաև **պատմական (ի քաղաքէ), պարառական (զքաղաքաւ) և կոչական (Ով Աստուած)**: Այժմ գրաբարում դիտարկվում է 6 հոլով՝ առանց **ներգոյականի**: Նույնն է նաև արևմտահայերենում:*

*Արևելահայ աշխարհաբարի քերականության հիմնադիր Ստեփանոս Պալասանյանն արդի հայերենում ընդունում է 7 հոլով՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական**:*

*Բազմավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը, առաջնորդվելով զուտ **ձևաբանական** սկզբունքով, գրում է. «Մի գոյական հոլովել, նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ գոյականը» («Աշխարհաբարի քերականություն», Վաղարշապատ, 1906, էջ 134):*

*Մ. Աբեղյանը, նույնացնելով **ուղղականն** ու **հայցականը**, **սեռականն** ու **տրականը** որպես նույն ձևույթներն ունեցող հոլովներ, հայերենում ընդունում է 5 հոլով՝ **ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական**: Մ. Աբեղյանը և նրա հետևորդները **սեռական** և **հայցական** հոլովները հանում են հարացույցից, որովհետև հայցականն իր ձևույթները (հոլովական վերջավորությունները) չունի և ուղիղ խնդրի՝ **անձի** և **անձի առման** դեպքում այն նման է **տրականին** (Երեխան սիրում է **մայրիկին** և **տիկնիկին**), իսկ **իրի** և **իրի առման** դեպքում հայցականը նման է **ուղղականին** («Երեխան կարդում է **գիրքը**» և «Հիվանդի համար **բժիշկ** հրավիրեցին»): Իսկ **սեռական** հոլովը նույնացնում են **տրականի** հետ:*

*Նրանք անտեսում են **որոշիչ հողի** հոլովատարբերիչ դերը: Բայց չարահյուսական մակարդակում Աբեղյանն, ընդունելով*

*որոշիչ հոդի դերը և բառերի չարահյուսական պաշտոնները, ընդունում է 7 հոլով: Ըստ նշանակության նա առանձին հոլով է համարում նաև **կոչականը**:*

*Աբեղյանի 5 հոլովի տեսությունը գերիշխեց մինչև 1930-ական թվականները, երբ լեզվաբաններ Արարատ Ղարիբյանն ու Գուրգեն Սևակը հիմնավորեցին 7 հոլովի համակարգը, և դպրոցներում ու բուհերում դասավանդվեց 7 հոլովը մինչև 1967 թվի հայտնի բանավեճը, որից հետո մասնագետները միասնական կարծիքի չեկան: Լեզվաբանների նոր սերունդը՝ Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Մ. Ասատրյան, Հ. Բարսեղյան, Ա. Պապոյան էլի ուրիշներ ընդունեցին 5 հոլովի համակարգ: Էդուարդ Աղայանն ու Ռաֆայել Իշխանյանն, ընդունելով **որոշիչ հոդի** իմաստազատիչ դերը, ընդունեցին 6 հոլով՝ **սեռականը** համարելով առանձին հոլով՝ մանավանդ որ 8 անձնական դերանունների սեռական և տրական հոլովները լրիվ տարբեր ձևեր ունեն և տարբեր իմաստներ՝ **որպես անձ***

Ուղղական	**ես, դու**	**նա, մենք,**	**դուք, իրենք,**	**սա, դա**
Սեռական	**իմ, քո,**	**նրա, մեր,**	**ձեր, իր,**	**սրա, դրա**
Տրական	**ինձ, քեզ,**	**նրան, մեզ,**	**ձեզ, իրեն,**	**սրան, դրան**

*Այդուհանդերձ, բանավեճից հետո՝ առ այսօր, թե դպրոցներում և գրեթե բոլոր բուհերում (բացի Երևանի պետական համալսարանից) դասավանդվում է 7 հոլովը, որը մեր կարծիքով ավելի ճիշտ է և տրամաբանական, որովհետև հաշվի է առնվում բառի և՛ **ձևը և՛ իմաստը**: Այս առումով էլ ինչպես մեր **չարահյուսության** դասագրքում, այնպես էլ այս գրքում հետևում ենք 7 հոլովի համակարգին:*

*Ինչպես ասվեց վերևում, հոլովը որոշվում է բառի հոլովական ձևի և իմաստի միասնությամբ, այն ունի իր ձևային և իմաստային հատկանիշները, բայց հայտնի է, որ նույն հոլովն ունի թե՛ տարբեր ձևեր և թե՛ տարբեր իմաստներ. ասենք **սեռականը՝ ի, ու, ան, ոջ, վա, ց** (նաև մյուս ձևերն ու ներքին հոլովումները), բայց դրանք բոլորն էլ ունեն **նույն իմաստները**, այդպես էլ՝ **բացառականը՝ ից, ուց, գործիականը՝ ով, բ**, մյուս կողմից էլ՝ նույն հոլովով տարբեր անդամներ են դրվում:*

Հենց այս առումով էլ պետք է նկատի ունենալ, թե տվյալ

հոլովի համար ո՞ր պաշտոնն է **գլխավոր** համարվում: Հայտնի է, որ **ուղղականի** համար գլխավորը **ենթակայի** պաշտոնն է, հայցականի համար՝ **ուղիղ խնդիրը**, **սեռականի** համար՝ **հատկացուցիչը**, **բացառականի** համար **անջատման** գաղափարն է առաջնայինը, **գործիականի** համար՝ **միջոցը**, **ներգոյականի** համար՝ **տեղը, ժամանակը**:

Ուրեմն՝ յուրաքանչյուր հոլովի ընդհանուր իմաստը բնութագրելիս պետք է ներկայացնել **բառաձևը**, տվյալ հոլովի գլխավոր իմաստը, ինչպես նաև բառերի շարահյուսական **կիրառությունները**:

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Ուղղական հոլովը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան և պատասխանում է **ո՞վ** կամ **ի՞նչ(ը)** հարցերին: Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է՝ **զրո** վերջավորությամբ և դրանով էլ այն հակադրվում է մյուս հոլովներին, որոնցով դրվող բառերն ստանում են հոլովական տարբեր վերջավորություններ, կամ բառի մեջ կատարվում է ներքին թեքում (հայր-հոր, տուն-տան), այդ հիմնավորումով էլ մյուս հոլովները կոչվում են **թեք** հոլովներ, ի տարբերություն ուղղականի, որը կոչվում է **ուղիղ** հոլով: Ուղղականի **զրո** վերջավորության վրա կարող են ավելանալ միայն **ը** և **ն**, **ս** և **դ** հոդերը (ուսանողը, երեխան, գիրքս, գիրքդ):

Ուղղականի հիմնական, գլխավոր կիրառությունը **ենթակայի** պաշտոն կատարելն է (Մեկ ազգի **պահողը**, իրար **միացնողը լեզուն** է ու **հավատը** – Խ. Ա.): Նույն նախադասության մեջ **լեզուն** և **հավատը** գոյականները ևս դրված են **ուղղական հոլովով** և **ստորոգելիական վերադրի** պաշտոն են կատարել:

Կողմնակի ենթական ևս դրվում է ուղղական հոլովով (**Ջանգը** տալուն պես Գիքորը վեր թռավ – Հ. Թ.): **Առուն** վարարելիս աղմուկ է հանում:

Ուղղականով դրվում է նաև **գոյականով արտահայտված որոշիչը**՝ (**Գոհար** աստղերը փայլատակում են: **Ոսկի** ձեռքեր ունի): **Ճարտարապետ** որդի ունեմ, մատաղ լինեմ ջինջ հոգուն (ԳՍ):

Բացահայտիչ – Ահա և **Փարիզը**՝ իմ երազած **քաղաքը**: Ավարտ-

՝վեց Վերդիի «Տրավիատան»՝ **իմ սիրած օպերան:**

Կոչականը – Գարուն է, անուշ գարուն,
Դու ինչո՞ւ չկաս, մեր **երգի վեհափառ**,
Կաքավն է երգում սարում,
Կանչում է՝ եկ. **Կոմիտաս** (Սարմեն):

ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում կամ վերաբերում է որևէ բան, ցույց է տալիս նաև սերում և ծագում: Այն պատասխանում է **ո՞ւմ** և **ինչի՞** հարցերին:

Սեռականի հիմնական կիրառությունը **հատկացուցչի** չարահյուսական պաշտոն կատարելն է.

Հ. Թումանյանի գործերն անմահ **են: Հայաստանի** լեռները հրաբխային ծագում ունեն:

Հայերենում սեռական հոլովը ձևավորվում է **ի, ու, ան, ոջ, վա, ց, յան, ա, ո** ցուցիչներով, ինչպես նաև ներքին թեքմամբ (մայր-մոր, շուն-շան, դուստր-դստեր):

Սեռականով է դրվում նաև **գոյական որոշիչը** (Ծագում է **մանուկ** արևը **գարնան** – ՎՄ). այստեղ կան և՛ ուղղականով և՛ սեռականով գոյական որոշիչներ: **Պատի** ժամացույցը չի աշխատում: **Թեյի** բաժակը կոտրվեց: **Անորոշ դերբայի** սեռական հոլովը նույնպես կարող է որոշչի պաշտոն կատարել (**վառելու** փայտ, **խմելու** ջուր, **գրելու** թուղթ):

Ստորոգելիական վերադրի պաշտոն կատարելիս հանդես է գալիս **փոխանուն սեռականը**՝ Վերարկուն **Արամինն** է: Այս գիրքը **քոնն** է: «**Ամենքինն** ես, **իմը չես**, Ամենքին ես սիրում դու» (ՎՏ): Սեռական հոլովը միայն այս դեպքում է **հոդ** ստանում, այն էլ՝ **կրկնակի**:

Կողմնակի ենթակա – **Լուսնի** երևալը ուրախացրեց որսորդին:

Բացահայտիչ – **Թումանյանի**՝ **մեծ** լոռեցու գործերը դարեր կապրեն:

Մ. Աբեղյանը սեռականով դրվող բառերը խմբավորում է այսպես՝ **Ստացական** (գյուղացու ձին), **ծագման** (կատվի ձագը), **ենթակայական** (ամպի գոռալը), **առարկայական** (շենքի կառուցումը), **մասնական** (թշնամիների խումբ), **նյութի** (ծաղիկների փունջ), **պարունակության** (պատերազմի դաշտ), **տեղի** և **ժամանակի** (Նրա

մատի մատանին, այսօրվա գործը), **գնի և արժեքի** (հինգ ռուբլու ապրանք), **որակական** (**գործի** մարդ, **որսի** շուն), **բացահայտող** (Հրեաստանի աշխարհ) (տե՛ս **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 419-420):

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին տրվում, կամ մոտենում է մի բան, կամ որին հանգում է ենթակայի գործողությունը: Այն պատասխանում է **ո՞ւմ, ինչի՞(ն), ինչի՞ համար, ե՞րբ, որտե՞ղ** հարցերին:

Հայերենում տրական հոլովը հիմնական վերջավորություններ չունի, ինչպես և հայցականը: Տրականը ձևով նույն սեռականն է, որին հավելվում են **ը, ն, ս, դ** հոդերը (անորոշ տրականի դեպքում դրանք էլ չեն հավելվում՝ (Գիրքը տվեցի տղային և մի տղայի, հանդիպեցի ընկերոջս և մի ընկերոջ):

Հոլովական ինքնուրույն վերջավորություններ չունենալու հիմնավորումով է, որ տրականը նույնացվում է սեռականի հետ, սա՝ ձևային առումով, բայց չէ՞ որ **սեռականը** կապվում է հիմնականում **գոյականների** հետ, լինում է գոյականի լրացումներ՝ **որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ** և **ստորոգելիական վերադիր,** իսկ **տրական** հոլովը կապվում է **միայն բայերի հետ** և լինում է բայական անդամի լրացումներ՝ **խնդիրներ** ու **պարագաներ:**

Մինչդեռ, ինչպես ասվեց վերևում, հոլովը միայն ձևով չի որոշվում, այլև՝ բովանդակությամբ: Իսկ երբ միավորում ենք այդ երկու հոլովները, նկատի ենք ունենում միայն ձևը՝ անտեսելով բովանդակությունը:

Այստեղ տեղին ենք համարում Էդուարդ Աղայանի այն ճիշտ տեսակետը, թե **որոշիչ հոդը** տրականի համար նույնպես արժեք ունի, նա մի քանի համոզիչ փաստերով ապացուցում է, որ որոշ դեպքերում **ը** և **ն** հոդերը այս հոլովի համար **իմաստազատիչ** դեր ունեն: Բերենք երկուական նախադասություն, որտեղ այս հոդերն իմաստային վճռորոշ արժեք ունեն և դրանք են որոշում գոյականների պաշտոնները նախադասությունների մեջ: Օրինակ, Տիգրանը ծառայում է բանակում և հաճախ է նամակներ գրում ու ստանում, և ահա մի դեպքում նրա գրած նամակը չի հասնում ծնողներին, մի այլ դեպքում էլ՝ հակառակը՝ ծնողների նամակը չի հասնում Տիգրանին: Ահա այդ նախադասությունները՝

Տիգրանի գրած նամակը չհասավ ծնողներին (**Տիգրանի** կողմնակի ենթակա է, իսկ առանց **գրած** դերբայի՝ հատկացուցիչ (**Տիգրանի** նամակը) և սեռական հոլով, բայց **Տիգրանին** (ընդգծենք **ն** որոշիչ հոդը) գրած նամակը տեղ չհասավ: Այս դեպքում նույն **Տիգրան** գոյականը հասցեատերն է՝ **տրական** հոլովով: Նույնն է նաև՝ «**Ընկերոջ** գիրքը վերադարձրի» (**ընկերոջ** հատկացուցիչ՝ **սեռական** հոլովով), բայց «Գիրքը վերադարձրի ընկերոջը» (**ընկերոջը** **տրական** հոլով՝ մատուցման խնդիր), որը կարող է անորոշ առումով էլ հանդես գալ՝ «Գիրքը վերադարձրի մի ընկերոջ» նորից տրական:

Տրական հոլովի հիմնական իմաստը **հանգման** և **մատուցման** գաղափարն է՝ Տխուր ուռենի՝ **ջրերին** կքած,

Գուցե թիթեռ ես եղել տերևի,
Երկնքին ուղղված անմեղ մի հարցում (ՎԴ):

Մոտեցա **ուսանողին** և գիրքը տվեցի **ուսանողին** (**հանգում** և **մատուցում**):

Տրականով դրվում են նաև մի քանի պարագաներ.

Տեղի – **Կաքավաբերդի գլխին** տարին բոլոր ամպ է նստում (ԱԲ):

Փերիները **սարի գլխին** հավաքվեցին գիշերով (ՀԹ):

Ժամանակի – Դպրոցից վերադարձավ ժամը **երեքին**: **Կեսգիշերին** հնչեց հեռախոսազանգը: **Հունիսին** ավարտվում են դասերը:

Նպատակի պարագայի դերում հանդես գալիս գոյականները և անորոշ դերբայները հոդ չեն ընդունում՝

Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու **կռվի** (ՀԹ):

Գնացել էի գործարան **զեկուցման**: Աճառյանը գնաց Սորբոնի համալսարան՝ **սովորելու**: Երեխան գնաց **ջուր խմելու**:

Ձևի պարագա – Մանուշակներ **ոտքերիս** ու շուշաններ **ձեռքերիս**...
Սարից իջա ես քաղաք (ՀՇ):

Սպասում է՝ **աչքը ճանապարհին**:

Տրականով դրվում են նաև բերված օրինակների **կողմնակի** ձևերը, ինչպես նաև **ստորոգելիական վերադիրը** (Ես էլ քո **կարծիքին եմ**: Դու էլ այդ **մտքին ես**):

Բացահայտիչը (մոտեցա Գեղամին՝ **ընկերոջս** և գիրքը հանձնեցի նրա տղային՝ **Տիգրանին**):

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հայցական հոլովը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որն իր վրա է կրում ենթակայի գործողությունը: Այն պատասխանում է ***ո՞ւմ, ի՞նչ(ը), ո՞ւր, ե՞րբ որքա՞ն*** *հարցերին:*

Հայցականը հայերենի ամենավիճահարույց հոլովն է, որովհետև այն չունի իր առանձին ձևը, չունի հոլովակերտիչ ձևույթներ և ուղղականից ու տրականից տարբերվում է միայն իմաստային առումով. ***իրի*** *և* ***իրի առման*** *դեպքում այն նման է* ***ուղղականին*** *(****գիրք եմ*** *կարդում:* ***Մասնագետ*** *հրավիրեցինք), իսկ* ***անձի*** *և* ***անձի առման*** *դեպքում նման է* ***տրականին*** *(Ես սիրում եմ* ***մայրիկին:*** *Երեխան գուրգուրում է* ***տիկնիկին****):*

Բայց ինչո՞ւ 4-ից ավելի հոլովներ ունեցող լեզուներում ***հայցականը կայուն*** *հոլով է, և նրա չլինելու մասին խոսք լինել չի կարող: Պատճառը շատ պարզ է, նման լեզուներում այն ունի իրեն հատուկ հոլովական վերջավորություն:*

Օրինակ, ռուսերենում ***արական*** *և* ***չեզոք*** *սեռի գոյականների ուղղականն ու հայցականը նույն ձևն ունեն՝* **Карандаш** лежит на столе *և* Я взял **карандаш** *(արական),* **Море** - красивое *և* Я очень люблю море *(չեզոք): Սակայն իգական սեռի գոյականների դեպքում հայցականը տարբերվում է ուղղականից* **у** *հոլովակերտ մասնիկով -* **Книга** лежит на столе *և* я взял книгу*:*

Գրաբարում հայցականը ինքնուրույն հոլով է համարվում, որովհետև այն այդ հոլովում ունի իր հատուկ ցուցիչը՝ **զ** *նախդիրը, որը դրվում է գոյականի, ինչպես նաև դերանունների սկզբում, օրինակ՝ ճանաչել* **զ***Արշակ, բռնել* **զ***ձուկն, սիրեմ* **զ***քեզ, զի՞նչ կոչեն* **զ***քեզ:*

Իսկ հոգնակի թվում բացի **զ***-ից, բառավերջում դրվում է նաև* **ս** *ձևույթը. ահա հայերեն առաջին նախադասությունը՝*

«Ճանաչել **զ***իմաստութիւն և* **զ***խրատ, իմանալ* **զ***բանս հանճարոյ»:*

Այսպիսով, թերևս ***հայցականը*** *միակ հոլովն է արդի հայերենում, որը չունի իրեն հատուկ վերջավորություն – ցուցիչներ և մյուս հոլովներից տարբերվում է միայն* ***իմաստով****. այս հոլովը տրականի նման նույնպես կապվում է* ***բայական*** *անդամի*

լրացումների հետ, որոնք գործածվում են թե՛ հոդերով, և թե՛ առանց հոդերի:

Հայցականի բուն՝ գլխավոր կիրառությունը **ուղիղ խնդրի** պաշտոն կատարելն է, այսինքն՝ կրող **անձը** կամ **առարկան**։ Ինչպես ավեց վերևում, **իր** ցույց տալու և անձր՝ որպես իր դիտելու դեպքում հայցականը նման է ուղղականին:

Իր-ը ուղիղ խնդիր՝

Ոսոխն իր **որսը** խորովել դեռ չգիտեր,
Իսկ մենք **աստվածներ** էինք ձուլում
Ու վայելում **գինի** (ՆԶ):
Գարունն այնքա՜ն, այնքա՜ն
Կակաչներ է բերել,
Ասես դաշտում, այգում
Կրակներ է վառել (Պ. Խաչատրյան):

Անձ-ը իրի առումով – Հեռուստացույցը վերանորոգելու համար **մասնագետ** հրավիրեցինք: Իսկ ո՞ր հայը չի սիրում **հայր** ու **մայր**, **կին** ու **երեխա**:

Անձ-ը ուղիղ խնդիր – Դասախոսը գնահատեց **ուսանողին**։ Երաժշտասերներս պաշտում ենք **Լուսինե Զաքարյանին** (ՆԶ): Աշակերտները սիրում են **դասղեկին**:

Իր-ը անձի առումով – Համբիկը քնեցնում է **տիկնիկին**։ Արամը շոյում է **շնիկին**։ Հայրս լավ էր խնամում իր սիրած **ձիերին**:

Տեղի պարագա – Հր. Աճառյանը չմնաց **Սորբոն**, նա վերադարձավ **Հայաստան**՝ իր ժողովրդին ծառայելու: **Հնձան** է մտնում ծեր Դիլան դային (ԱԲ):

Ժամանակի պարագա – **Ձմռան մի գիշեր** կար մի հարսանիք: Մի հավք զարկի ես **մի օր**, Թռավ գնաց վիրավոր (ՀԹ):

Այս տարի բերքն առատ էր: **Գիշերը** անձրև եկավ:

Չափ ու քանակի պարագա – **Տասն անգամ** չափի՛ր, **մեկ անգամ** կտրի՛ր (Ժող.): **Հարյուր կիլոմետր** գնացինք, մինչև հասանք Բյուրական:

Բացահայտիչ – Բոլորն են սիրում Գոհար Գասպարյանին՝ **Հայաստանի սոխակին**։

Նորից եմ կարդում «Վարդանանքը»՝ **իմ ամենասիրած վեպը**։

Հայցականով են դրվում նաև **կողմնակի** ուղիղ խնդիրը և նշված պարագաները:

Առաջադրանք

Որոշել ընդգծված բառաձևերի հոլովները՝ ըստ 7 և 5 հոլովների համակարգի և բացատրել, թե ինչ սկզբունքով են նույն բառաձևերը մեկ համարվում ուղղական կամ հայցական, մեկ՝ սեռական, տրական կամ հայցական։

1. Յոթ հարյուր **տարի** առաջ բացվեց **Գլաձորի համալսարանը**։ **Գլաձորի համալսարանը** հիմնեց **Ներսես Մշեցին**։ **Ներսես Մշեցուն** փոխարինեց **Եսայի Նչեցին**։

1895 թվին Հրաչյա Աճառյանը դարձավ Սորբոնի **ուսանող**։ Ուսանող Աճառյանը տիրապետում էր մոտ 15 **լեզուներ**։ **Ուսանողը** համարվում էր դժվար **պայմաններին**. այդ **պայմանները** նրան դարձրին տոկուն ու կարգապահ։

Մի հմուտ **բժիշկ** բուժեց մեկ տարեկան **Հրաչյայի** միայն աջ **աչքը**։ Ձախ **աչքը** այդպես էլ չբուժվեց մինչև **կյանքի վերջը**։ Աճառյանը Փարիզում նորից դիմեց աչքի **բժշկին**. **բժիշկը** խորհուրդ տվեց քիչ գրել ու քիչ **գիրք** կարդալ, սակայն **գիրքը** Աճառյանի **տարերքն** էր. առանց **գրքի** նա կյանք չուներ. **Գրքին** էլ նվիրված մնաց մինչև կյանքի վերջը։

Քաշեց արևը **ծիլերը** հողից. այդ **ծիլերը** աճեցին ու **ծաղիկ դարձան**։ **Երեխաները** խնամեցին **ծառ** ու **ծաղիկ**։ Ծնողներն էլ **երեխաներ** խնամեցին, երեխաներին մեծացրին ու **մարդ դարձրին**։ Սիրելի երեխաներ, սիրեցեք ձեր **ծնողներին**, վստահեք ձեր **ծնողներին**, ծնողների **օրհնանքը** թող միշտ ձեզ վրա լինի.

2. Մենք սիրում ենք խաղաղություն, արև, ծաղիկ, ուրախ կյանք,
Մենք սիրում ենք երգ, խնդություն, գիտություն ու աշխատանք։
Կառուցում ենք գործարաններ ու ջրանցքներ նորանոր,
Կյանք ենք առնում նոր այգիներ ու դպրոցներ լուսավոր։
Որքան լավ է ապրել ազատ, արևի տակ կենսատու,
Ջան հայրենիք, մեր հարազատ, արևից էլ ջերմ ես դու։

(Վ. Վարդանյան)

Փիսոն կանչեց մկնիկին, մուկը բռնեց փիսիկից...
Հա քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից հանեցին։ (Խնկո Ապեր)

ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից բխում, ծագում և սկսվում է գործողությունը: Այն պատասխանում է **ումի՞ց, ինչի՞ց, որտեղի՞ց, երբվանի՞ց** հարցերին:*

*Հայերենում բացառական հոլովն ունի իր կայուն ցուցիչները՝ **ից** և **ուց**, այս հոլովի ընդհանուր իմաստն անջատման՝ ելակետի կամ սկզբնակետի իմաստն է, որն արտահայտում է չարահյուսական զանազան հարաբերություններ՝ հանդես գալով խնդիրների, պարագաների և այլ անդամների պաշտոններով:*

*Բացառականը կազմվում է երկու հիմքով՝ ա) **ուղղականից**, երբ բառի ուղիղ ձևի վրա ավելանում են **ից** (ծառ-ծառ**ից**, գիրք-գրք**ից**, բաժակ-բաժակ**ից**...) և **ուց** (ձի-ձի**ուց**, քամի-քամ**ուց**, տարի-տար**ուց**, գինի-գին**ուց**, (**ի**-ի սղումով), բ) **սեռականից**՝ ընկեր-ընկերոջ + **ից**, տիկին-տիկնոջ + **ից**, աներ-աներոջ + **ից**, օր-օրվա + ն + **ից**, տարի-վա + ն + **ից**, ամիս-ամսվա + ն + **ից**, մարոյենք-մարոյենց + **ից**, Արամենք - Արամենց + **ից**, պապոնք-պապոնց + **ից**:*

Բացառականով դրվում են՝

1. **Անջատման խնդիր** – *Հոգիս չի զարթնի վսեմ **երազից** (Ավ. Իս.): Երեխան **դաշնամուրից** չէր հեռանում, բայց **գրքից** էլ ձեռք չէր քաշում:*

2. **Ներգործման խնդիր** – *Նժդեհը միշտ էլ սիրվել է իր **ժողովրդից**: Ապակին կոտրվեց **քամուց**, իսկ ծառը՝ առատ **ձյունից**:*

3. **Վերաբերության խնդիր** – *Խոսում էին Լոռվա հին-հին **քաջերից** (ՀԹ): Վաղթանգ Անանյանը շատ էր պատմում **որսից**, իսկ ընկերը՝ **կենդանիներից**:*

4. **Սահմանափակման խնդիր** – *Թոռնիկս ուժեղ է **շախմատից**, բայց թույլ է **ռուսերենից**: Տատիկը խեղճացել էր **տխրությունից**, պապիկը՝ **լռությունից**:*

5. **Տեղի պարագա** – *Հնձած խոտի բույր է բերում **սարից** փախած քամին (ՀՍ): Ես մի սիրուն աղջիկ տեսա, ջուր էր տանում **աղբյուրից** (ժող.): **Գյուղից** հեռացան մի խումբ կտրիճներ (ՀԹ):*

6. **Ժամանակի պարագա** – ***Երեկվանից** անընդհատ ձյուն է գալիս:*

*... Եվ այն **օրվանից** դրա համար*

Կղզին կոչվեց Ախթամար (ՀԹ)։

7. **Պատճառի պարագա** – **Ծտապելուց** թև են առել,
Դարձել թեթև թիթեռներ (ՀԹ)։

Մարդիկ արթնացան գայլի **ոռնոցից**։ Երեխան լաց էր լինում **ամոթից**։

8. **Հիմունքի պարագա** – Աճառյանն իր ուսանողներին **ձայնից** էր ճանաչում։ Տատիկիս հաճախ եմ հիշում իր **աղոթքից** (ՊՂ)։

9. **Գոյական որոշիչը** – **Զթից** չրջազգեստը չատ հով է պահում։ **Մետաքսից** վերնաչապիկը սազում է տղային։ **Բրդից** գուլպաները տաք են պահում։

10. **Բացահայտիչ** – Իսահակյանը չատ գոհ էր սիրելի քաղաքից՝ **Վենետիկից**։ Հպարտանում եմ իմ թոռնիկներով՝ **Սոնայով** ու **Արթուրով**։

11. **Ստորոգելական վերադիր** – Շենքը **երկաթբետոնից** է, իսկ տունը՝ **աղյուսից**։

12. **Մասնական ենթակա** – Հնչեցին Կոմիտասի **երգերից**։ Վաճառվում է այս **գրքից**։

13. **Մասնական ուղիղ խնդիր** – Յարս էլ խմե՞ց էն **ջրից** (ՀԹ)։ Լսեցինք Կոմիտասի **երգերից**։

Ստորոգելիական վերադիր – Այս հուշարձանը **մարմարից** է։ Երեխայի հագուստը **մետաքսից** է, գուլպաները՝ **բամբակից**։

Բացառականով են դրվում նաև նշված խնդիրների ու պարագաների **կողմնակի տեսակները**՝ դերբայների լրացումները։

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը։ Այն պատասխանում է **ո՞ւմով, ինչո՞վ, որտե՞ղով, ե՞րբ, ինչպե՞ս** հարցերին։

Գործիական հոլովը ձևավորվում է **ով** և **բ** վերջավորություններով։ Այն հիմնականում **միջոցի** խնդրի հոլովն է. իհարկե այս հոլովով դրվում են նաև նախադասության այլ անդամներ՝ **տեղի, ժամանակի, ձևի, միասնության, պատճառի, հիմունքի, սահմանափակման, ներգործման, նպատակի, չափ ու քանակի** պարագաներ, նաև **գոյականական որոշիչը, ստորոգելիական վերադիրը** և **բացահայտիչը**, ինչպես նաև կողմնակի անդամներ։

Գոյականների մեծ մասի գործիական հոլովը ձևավորվում է

ուղղական հոլովի վրա **ով**-ի հավելումով (գիրք-գրքով, ձի-ձիով, դաշտ-դաշտով...), ինչպես նաև **սեռական** հոլովով (ընկեր-ընկերոջ-ընկերոջով, հայր-հոր-հորով, կանայք-կանանց-կանանցով...):

Սեռականով են կազմվում նաև ուղղականում **յուն**-ով վերջավորվող գոյականները, որոնք սեռականում դառնում են **յան**, իսկ գործիականում ստանում են **բ** հոլովակազմիչը, և **յան** վերջավորության վերջին ն-ն առնմանության հետևանքով **բ**-ից առաջ դառնում է **մ** (արյուն-արյան-արյամբ, հերոսություն-հերոսության-հերոսությամբ...):

Այս տիպի բառերի որոշ մասը երբեմն էլ (հատկապես խոսակցական լեզվում) կազմվում է **ուղղականի** վրա **ով**-ի հավելումով, ինչպես, օրինակ՝ արյուն-արյունով, գիտություն-գիտությունով, լավություն-լավությունով):

Գործիական հոլովով դրվում են՝

Միջոցի խնդիր – Տովափ գնացինք **գնացքով**, վերադարձանք **ավտոմեքենայով**: Եկել էին հրով ու **սրով**՝ երկիրը քանդելու (ՍԳ):

Ներգործման խնդիր – Աղջիկը հմայված է **երիտասարդով**: Սար ու ձոր ծածկվել է **ձյունով**: Հրապարակը շրջապատվեց **ոստիկաններով**:

Տեղի պարագա – Մայր Արաքսի **ափերով** քայլամոլոր գնում եմ (ՌՊ): ... Անցա յարիս տան **ճամփով** (Ավ. Իս.): Անցավ **փողոցով**:

Ժամանակի պարագա – Գալիս էին աշխարա՝ օրը **ցերեկով** (ՂԱ): Սոված, պատռած շորերով կորչում էր նա **օրերով** (ՀԹ):

Հիմունքի պարագա – Ազգային ժողովի **որոշմամբ** Հայաստանում բացվելու են օտարալեզու դպրոցներ: Նկատողություն ստացավ **ռեկտորի** հրամանով:

Նպատակի պարագա – 1999 թվին **գործով** Փարիզ գնացի: Ընկերոջս տեսնելու **նպատակով** գյուղ գնացի:

Ձևի պարագա – Սիրտս **կարոտով** կանչում է՝ եկ (ՎՏ): Մեր սուրը **փառքով** դրեցինք պատյան (Ավ. Իս.): **Հաճույքով** եմ կարդում Գեղամի գիրքը:

Չափ ու քանակի պարագա – Վերջին քսան տարիների ընթացքում հողերը հարյուրավոր **հեկտարներով** մնացել են անմշակ: **Քսան տոկոսով** բարձրացրել են թոշակները:

Միասնության պարագա – **Ընկերներով** որսի գնացինք: **Բարեկամներով** ամառանոց կառուցեցինք:

Գոյական որոշիչ – *Այ համով աղջիկ, այ ծամով աղջիկ (ժող.)։ Արթուրը խելքով տղա է, Սոնան էլ չնորհքով աղջիկ է։*

Ստորոգելիական վերադիր – *Նախաճաշը համով էր։ Արթուրն ավելի խելքով է։*

Բացահայտիչ – *Նա միշտ ման է գալիս մերսեդեսով՝* ***իր սիրած մեքենայով։*** *Միշտ զբաղվում է հեռուստատեսությամբ՝* ***իր միակ զբաղմունքով։***

Դրվում են նաև նույն լրացումների կողմնակի տեսակները։

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Ներգոյականը կազմվում է **ում** *վերջավորությամբ և արտահայտում է* ***տարածական*** *ու* ***ժամանակային*** *իմաստներ։ Այն պատասխանում է* ***որտե՞ղ, ինչո՞ւ, որքա՞ն*** *ժամանակ հարցերին։ Այն կազմվում է ուղղական հոլովից, այն էլ ոչ բոլոր բառերի դեպքում։ Ներգոյական հոլով չունեն՝*

ա) **անձնանունները** *(Արամ, Աշոտ, Մարգարիտ...)*

բ) **կենդանիների անունները** *(շուն, կատու, արջ, հավ, բադե...)*

գ) **որ, ոջ, ց** *հոլովումներին պատկանող բառերը (հայր, մայր, կին, ընկեր, քույր, Գուրգենենք, Մարոյենք)*

դ) **ում** *ածանցով վերջացող բառերը (ուսում, մատուցում, ճնշում...)*

ե) մի շարք սովորական գոյականներ նույնպես ներգոյական հոլով չունեն (մեխ, ասեղ, աքցան, ծայր, մատիտ, մատ, տուն, ատամ, շրթունք, մազ, արյուն)։ Նման բառերի ներգոյականը, ինչպես նաև ներգոյական ունեցողներինը, կազմվում է **մեջ** *կապով (***մոր մեջ, ընկերոջ մեջ, մատի մեջ, արյան մեջ,** *ինչպես նաև՝ ծով-ծովում, և ծովի մեջ, քաղաք-քաղաքում և քաղաքի մեջ)։*

Ներգոյական հոլովով են դրվում՝

Տեղի պարագա – *Ծաղկել ես* ***սարում, անտառում, արտում.***

Ուրիշ երգեր են հնչում իմ ***սրտում*** *(ՎՏ)։*

Բոլոր ***վայրերում,*** *բոլոր* ***կողմերում***
Աշխարհը մի նոր երգով է հղի (ԵՉ)։

Հայրենիքն իմ ***սրտում,*** *թե չընկնեմ ես* ***մարտում,***
Ախ, իմ մա՛յր թանկագին, տուն կգամ ես կրկին (ԳՍ)։

Ժամանակի պարագա – *Գլաձորի համալսարանը հիմնադրվել է* ***տասներեքերորդ դարում։*** *Ներկա* ***օրերում*** *էլ ինչ սև քնար (ՄՆ)։*

Մի օրում մի վեպ եմ կարդում:

Ձևի պարագա – *Մայրս **մտքում** էր աղոթում: Երեխան **քթում** է խոսում: Գիշերները **երազում** էր խոսում (ՊԽ):*

Սահմանափակման խնդիր – ***Թղթախաղում** էր բախտը բերում: **Մրցումներում** էր միայն հաղթում: **Ծախմատում** շատ ուժեղ էր:*

Գոյական որոշիչ – *Հիշում եմ մորս ձայնը **սարերում**... Հայաստանի պատգամավորը **Մոսկվայում** (Մոսկվայում եղած) նորից խոսեց Արցախի կարգավիճակի մասին («Իրավունք»):*

Ստորոգելիական վերադիր – *Բժիշկը **տեղում** չէ: Երեխան **դպրոցում** է: Իմ սիրտը **լեռներում** է (Վ. Սարոյան):*

Բացահայտիչ – *Ես նորից Գյումրիում եմ՝ **իմ սիրած քաղաքում:***

*Աշխատանքս ավարտվեց երկու ամսում՝ **նախատեսված ժամկետում:***

Հարցեր.

1. Ի՞նչ է հոլովը, ո՞ր խոսքի մասերին է այն հատուկ:

2. Ինչպե՞ս է կատարվում գոյականի կամ գոյականաբար գործածվող բառերի հոլովումը:

3. Արդի հայերենում քանի՞ հոլով եք ընդունում դուք:

4. Հայցական հոլովի վիճահարույց հարցի հիմնավորումները:

5. Ինչո՞ւ է ավելի տրամաբանական 7 հոլովի հարացույցը:

Առաջադրանք.

Դուրս գրել բոլոր գոյականները՝ նշելով առումը, հոլովը և պաշտոնները.

1. Աշունն էր ծաղկել լեռնաշխարհում: Ծաղկել էր խենթացնող գույներով: Կածաններով աշունն անտառից հասել էր լեռները, արահետներով հասել բացատն ու հիմա ծվարել էր աղբյուրների բերանին՝ ջահել ու հյութալի: Աշունն էլ իր հասակներն ունի և մի տարվա չափ վաստակ է թողնում իր ետևից: Լավ օրերին նա մոռանալ է տալիս խենթ ու կրակված ամռան փառքերը, իսկ ովքեր դժվարանում են մոռանալ, նա համբերությամբ հասկացնում է, որ եթե չլիներ շոգը, ինքն էլ այդքան հմայիչ ու ցանկալի չէր լինի այժմ: Աշխատավորը լավ է վայելում աշունը:

2. Ջինիկն ընկերների հետ հաց էր տարել Ներսեսին և հիշեցրել միաժամանակ, որ հարկավոր է արդեն մեղուն գյուղ իջեցնել: Ասել էր, իմանալով նաև, որ Ներսեսին լավ հայտնի է, թե ո՞ր մեղուն

իր թևի վրա ի՞նչ չունչ է փեթակ բերում, ո՞ր ծաղկի բույրն ի՞նչ սրության հասած պիտի լինի, չատ հոգնող արևը ո՞ր սարում ինչքա՞ն է մնալու, և անտառի ո՞ր օրվա չաղն է լուսաբացին եղյամի փոխվելու խաչամի վրա: Զինիկը եղբորն ասել էր նաև, որ երկու օր է, ինչ հայրը վերադարձել է հանդերից և զբաղվում է աչնանային աչխատանքներով. հողն է փխրեցնում, առուներն է նորոգում (ըստ Ա. Սեկոյանի):

3. Այսօրվա նման հիչում եմ Թամանյանի խոսքը, երբ կառավարության չենքի չքամուտքի սյուներն էր տաչում: Իր մտքերի հետևից ընկնելով, զրուցակիցներին դարձավ վարպետ Տիգրանը՝ բարի դեմքին մի ժպիտ դրվագելով. «Չի կարելի անտեսել հայկական ոճը, քանի որ այդ ոճը թեկուզ հանճարեղ, բայց և այնպես արվեստագետ ճարտարապետի երևակայության պտուղ չէ: Այդ ոճը ստեղծվել է դարերի ընթացքում: Հավաքական մտածողությունը վիթխարի ուժ է, ինչպես կոլեկտիվ ուժը՝ անհաղթահարելի: Մեր ճարտարապետությունը ներդաչնակ է մեր քարի բնույթին, մեր երկրի առանձնահատկություններին՝ լույսին, երկնքին, գույնին, կլիմային, ինչպես և ժողովրդի հոգևոր կերտվածքին» (Ա. Սեկոյան):

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՏԻՊԵՐԸ

Հոլովման տիպը որոչվում է բառի հոլովական փոփոխության ձևային հատկանիչով:

Ինչպես տեսանք, տարբեր գոյականներ տարբեր ձևերով են հոլովվում, այսինքն՝ սեռական հոլովում տարբեր վերջավորություններ են ստանում կամ հնչյունափոխության են ենթարկվում:

Գոյականի հոլովումը որոչվում է գոյականի **եզակի** թվի **սեռական** հոլովի կազմությամբ, որը տեղի է ունենում 3 կերպ.

ա) Բառի ուղիղ ձևի վրա հոլովական վերջավորությունների ավելացմամբ՝ ծառ-ծառ**ի**, ընկեր-ընկեր**ոջ**, օր-օր**վա**, մարդ-մարդ**ու**, գարուն-գարն**ան**:

բ) Բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ՝ ոսկ**ի**-ոսկ**ու**, այգ**ի**-այգ**ու**, (**ի**>**ու**) Մարոյեն**ք**-Մարոյեն**ց**, մերոն**ք**-մերոն**ց** (**ք**>**ց**):

Այս տիպերը կոչվում են **արտաքին թեքում**:

գ) Բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ,

օրինակ՝ տուն-տան (ու>ա), հայր-հոր (այ>ո), լավություն-լավության (յու>յա), կայսր-կայսեր (ր>ե):

Այս տիպը կոչվում է ***ներքին թեքում:***

Հոլովման ժամանակ ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների փոփոխությունները կոչվում են ***հերթագայություններ:***

*Ժամանակակից հայերենում կա 6 արտաքին հոլովում (**ի, ու, ան, ոջ, վա, ց**) և 2 ներքին հոլովում (**ո, ա**):*

*Սովորաբար ամեն մի գոյական հոլովվում է մի ձևով, բայց կան սակավաթիվ բառեր, որոնք կարող են հոլովվել երկու, նույնիսկ երեք ձևով, որոնք **զուգաձևություններ** են. օրինակ, **ծունկ** բառի սեռականն է **ծնկան**, այն կարող է նաև հոլովվել **ի** հոլովմամբ՝ **ծնկի**, **տեգր** բառը կարող է հոլովվել երեք ձևով՝ տեգոր, տեգրոջ, տեգրի, (նայած ինչ ոճերում), կամ **տարի** բառը հոլովվում է և **վա** և **ու** հոլովիչներով՝ տարվա, տարու:*

*Տարբեր հոլովումներով հոլովվելը պայմանավորված է նաև բառերի իմաստով: Օրինակ՝ **ճաշ** բառը **կերակուր** իմաստով հոլովվում է **ի** հոլովմամբ (**ճաշի** համը դուրեկան է), իսկ **ժամանակի** իմաստով այդ նույն բառը հոլովվում է **վա** հոլովմամբ (եկավ ճաշվան, կամ՝ **ճաշվա** չոգը տհաճ է): Չի բացառվում, որ ժամանակի իմաստով նույնպես հոլովվի **ի**-ով: Օրինակ, մենք կհանդիպենք ճաշին (այսինքն՝ կեսօրվան):*

Իմաստային և ձևային հոլովումներ *– Բառի այս կամ այն հոլովման պատկանելը պայմանավորված է ինչպես բառերի իմաստով, այնպես էլ գրության ձևով: Այսպես՝* ***ժամանակ ցույց տվող բառերը*** *հիմնականում հոլովվում են **վա** հոլովմամբ (**օրվա**, **տարվա**, **չարաթվա**, **ամսվա**, թեև կան նաև բացառություններ՝ **վայրկյանի**, **րոպեի**, **դարու**):*

***Ազգակցական** և **բարեկամական** իմաստներ արտահայտող բառերի մեծ մասը հոլովվում է **ոջ** հոլովմամբ (**քրոջ**, **կնոջ**, **աներոջ**, **ընկերոջ**): Կան նաև զգալի շեղումներ (եղբայր, ամուսին, բարեկամ և այլն), որոնք հոլովվում են տարբեր հոլովներով՝ եղբայր-եղբոր, ամուսին-ամուսնու, բարեկամ-բարեկամի: **Հայր, մայր, եղբայր** բառերը նույնպես **իմաստային** հոլովմանն են պատկանում՝ **այ> ո** հնչյունափոխությամբ:*

*Ըստ ձևային հատկանիշի **ություն** ածանցով վերջացող բառերը հոլովվում են ներքին **ա** հոլովմամբ (ուրախություն-ուրախության., միություն-միության):*

*Իմաստային հոլովումներն են՝ **ոջ, վա, ո**:*
*Ձայնային հոլովումներն են՝ **ի, ա, ան, ու, ց**:*

ԱՐՏԱՔԻՆ ԹԵՔՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

*Գոյականների ճնշող մեծամասնությունը ենթարկվում է **արտաքին թեքման**՝ վերջավորություններ ստանալով. սրանցում ամենատարածվածը **ի** հոլովումն է:*

Ի ՀՈԼՈՎՈՒՄ – *Հայերենի գոյականների ճնշող մեծամասնությունը ենթարկվում է **ի** հոլովման: Ինչպես ցույց են տվել մեր հաշվարկները, ըստ Էդուարդ Աղայանի **բացատրական բառարանի**, որտեղ վկայված է 135600 բառ, դրանց գրեթե ուղիղ կեսը՝ 66300 բառ, գոյականներ են, իսկ սրանց 68,5 տոկոսը ենթարկվում են «**ի**» հոլովման (տե՛ս աղյուսակը):*

*Մյուս հոլովումներին պատկանող գոյականներից շատերը ձգտում են դեպի **ի** հոլովումը. օրինակ, **ամիս** բառը ժամանակ է ցույց տալիս, հոլովվում է **վա** հոլովմամբ, բայց ավելի շատ տարածված է **ի**-ով ձևը (**ամսի**), կամ **աներ** բառը հավասարապես հոլովվում է թե՛ **ոջ** (**աներոջ**) և թե՛ **ի** (աների) ձևերով. այդպես էլ՝ բազմաթիվ այլ գոյականներ:*

*Պետք է նկատի ունենալ, որ երբ բառն ուղղական հոլովում ունի **ա** կամ **ո** ձայնավորներ, սեռական հոլովում **ի** հոլովակազմիչն ընդունելով, նրանց արանքում ավելանում է **յ** ձայնակապը (տղա-տղայի, Մարո-Մարոյի):*

***Ու** ձայնավորով վերջացող բառերը **ի** հոլովման ենթարկվելիս, **ու** ձայնավորը հնչյունափոխվում է **վ**-ի (առու-առվի, կատու-կատվի, ձու-ձվի, լու-լվի...): Որոշ բառերում հնչյունափոխություն չի լինում (գնչու-գնչուի, լորտու-լորտուի, Տարոու-Տարոուի...):*

*«**Ի**» հոլովման պատկանում են նաև այլ հոլովումների բառերի **հոգնակին**, ինչպես նաև **զուգաձևությունները** (տե՛ս վերևի օրինակները) և **գոյականաբար** գործածված բառերի մի մասը (լավը-լավի, մեծը-մեծի, չատախոսը-չատախոսի, հարբածը-հարբածի, երգողը-երգողի, մեկը-մեկի):*

*Այս հոլովումն իր տարածվածությամբ կոչվում է **ընդհանրական** կամ **հասարակ** հոլովում:*

ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ – *Սա նույնպես տարածված հոլովում է. այս հո-*

լովմամբ հոլովվում է գոյականների 2,8 տոկոսը:

Այս հոլովմամբ հոլովվող բառերը բաժանվում են 3 խմբի՝

1. **Ի**-ով վերջացող բառերի մեծամասնությունը, որտեղ **ի**-ն հնչյունափոխվում է **ու**-ի (գինի-գինու, այգի-այգու, գարի-գարու, պատանի-պատանու, թշնամի-թշնամու, բանվորուհի... ինչպես նաև մի քանի հատուկ անուններ՝ Վերդի-Վերդու, Մերրի-Մերրու, Րաֆֆի-Րաֆֆու: Թեև սրանք հոլովվում են նաև **ի**-հոլովիչով՝ Վերդիի, Մերրիի, Անիի, Սոչիի, Գորկի...), **ձի, թի** բառերում **ի**-ն մնում է (ձիու, թիու):

2. Բոլոր բայերի անորոշ դերբայները՝ գրել-**գրելու** (թուղթ), կարդալ-**կարդալու** (գիրք), երգել-**երգելու** (տրամադրություն):

3. **Մարդ, ամուսին, անկողին, Աստված** բառերը, որտեղ ամուսին և անկողին բառերի **ի**-ն սղվում է՝ **ամուսնու, անկողնու**, իսկ **Աստված** բառը կարող է հոլովվել 2 ձևով՝ **Աստծո** և **Աստծու**:

ԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ – «ի» հոլովումից հետո ամենատարածվածը **ան** հոլովումն է, որը կազմում է գոյականների 9,9 տոկոսը՝ մոտավորապես 65 հազար գոյական: Այս հոլովմանն են պատկանում՝

1. **Ում** ածանցով կազմվող բայանունները (ուսում, զեկուցում, կառուցում, մատուցում, հիացում, զգացում...), որոնցում **ու** ձայնավորը սղվում է (**ուսման, զեկուցման, կառուցման, հատուցման** և այլն):

2. Գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերը՝ **ձուկ-ձկան, մուկ-մկան, կուռ-կռան, լեռ-լեռան, ծոռ-ծոռան, բեռբեռան, եզ-եզան, թոռ-թոռան** և այլն:

3. **Գարուն, ամառ, աշուն, ձմեռ** բառերը և **մանուկ** բառը:

Ամառ, ձմեռ բառերը հոլովվում են նաև **վա** հոլովմամբ (ամառվա, ձմեռվա):

Մանուկ հատուկ անունը ենթարկվում է **ի** հոլովման՝ **Մանուկի**:

Ան հոլովման պատկանող բառերը ներգոյական հոլովաձև չունեն:

ՎԱ ՀՈԼՈՎՈՒՄ – Ինչպես նշվեց վերևում, **վա** իմաստային հոլովմանը պատկանում է ժամանակ ցույց տվող բառերի մի մասը՝ **օր, ժամ, շաբաթ, ամիս, տարի, գիշեր, ցերեկ, առավոտ, կեսօր, այսօր, վաղը, էգուց, երեկո...** Այս հոլովման են պատկանում նաև **առաջ** (**առաջվա** բան է դա) և **անգամ** (երկու **անգամվա** գործ է) բառերը, երբ գործածվում են ժամանակի

իմաստով: Նշվել է նաև, որ ժամանակ ցույց տվող ոչ բոլոր բառերն են ենթարկվում **վա** *հոլովման, ինչպես* **դար, րոպե, վայրկյան, աշուն, գարուն, կիրակի, լուսաբաց, լուսադեմ**:

Մյուս կողմից՝ **վա** *հոլովման պատկանող բառերի մի մասը հավասարապես հոլովվում է նաև* **ի** *հոլովմամբ՝* **ժամի, ամսի**:

Հաճախ են հարցնում օրվա ժամը. **ժամը քանի՞սն է**, *թե* **ժամի քանի՞սն է**: *Մեր կարծիքով պետք է* **ժամ** *գոյականը դնել ուղղական հոլովով՝* **ժամը քանիսն է**, *որովհետև ուրիշ գործածություններում այն ուղիղ ձևով է դրվում՝* **ժամը լրացավ, ժամը անցավ, ժամը կազմված է րոպեներից, ժամը փոխվեց** *և այլն:* **Ժամը քանիսն է** *ձևն էլ ոչ թե* **ժամի** *ինչ-որ հատվածի է վերաբերում, այլ կոնկրետ պահի:*

ՈՋ ՀՈԼՈՎՈՒՄ — *Այս հոլովման են պատկանում անձ ցույց տվող սակավաթիվ բառեր, որոնք հիմնականում ազգակցական ու բարեկամական իմաստներ ունեն՝* **կին, քույր, տիկին, աներ, տալ, տեգր** *նաև* **տեր** *և այս բառերով բարդվածները, որոնց վերջին բաղադրիչներն են՝* **քեռակին, հորաքույր, դասընկեր, համայնքատեր** *և այլն:*

Այս բառերի մեծ մասի բացառական և գործիական հոլովները կազմվում են սեռականի ձևից՝ **կնոջից-կնոջով, աներոջից-աներոջով, տալից-տալով**:

Ց ՀՈԼՈՎՈՒՄ — *Այս հոլովմամբ հոլովվում են հավաքական իմաստներ ունեցող տոհմ, գերդաստան ցույց տվող հատուկ անունները, որոնք ունեն* **անք, ենք, ոնք, ունք** *վերջավորությունները (***Վարդանանք, Աշոտենք, Արամենք, Մելքոնանք, Սաթունք***) նաև* **պապոնք** *բառը:*

Սրանց սեռականը կազմվում է ուղղականի **ք**-*ն փոխվելով* **ց**-*ի (***պապոնց, Աշոտենց, Արամենց, Վարդանանց, Սաթունց, Վեդունց***):*

Առաջադրանք 1.

Բերված օրինակներից դուրս գրել արտաքին հոլովման պատկանող գոյականները և որոշել, թե ո՞ր հոլովներով են գործածված.

Ամպերն իջան և լեռները պատեցին

էլ չեն փայլում գագաթները ձյունախիտ (Գ. Բորյան)

Արծաթահոս առուն առվին ձայն է տալիս ու երգում
Անտրտունջ է լալկան ուռին առվի եզերքում (ՎՏ):

Հեռվից գիշերային լռության մեջ լսվում է բուի կռինչը:

Սիմոն քեռու որդիները այգու մեծ առուն էին փորում և ձիով կրում էին դաշտում մնացած գարին, ցորենն ու լոբին: Մանուկի ընկերուհին անկողին էր դնում իր փափուկ մանկանը, որին որոշել էր ուսման տալ Մեղրու ուսումնարանում: Գարուն թե ամառ գյուղացին աշխատում է անդադար, մահ չկա նրա համար: Լեռների տոն է. մարդ թե անասուն ուրախ երգերով գնում են սարեր (ՎՄ):

Այս նոր տարվա առավոտ, երբ որ քնից զարթնեցի, ավաղ մերոնք միտս ընկան, և սրտիս մեջ լացեցի (Ավ. Իս.): Միշտ էի զգացել ընկերոջս քրոջ սերը եղբորս նկատմամբ. դա նկատել էին նաև մայրս ու մորաքույրս (ՊՂ):

Առաջադրանք 2.

Հետևյալ գոյականները գործածել նախադասությունների մեջ տարբեր հոլովներով. նշել պաշտոնները.

Մերոնք, պատանի, ուսում, գարուն, ամառ, ժամ, տարի, շաբաթ, վանահայր, տիրացու, քեռակին, ամանոր, տանտեր, վերնատուն, առաջ, հետո (և՛ ժամանակի իմաստով և՛ որպես կապ):

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

*Ներքին թեքման հոլովման գոյականները վերջավորություններ չեն ստանում, նրանց թեքումը կատարվում է բառի միջում՝ վերջին **ն**-ից առաջ կատարվող **ու** ձայնավորի **ա**-ի հնչյունափոխությամբ՝ քաջություն-քաջության, անկյուն-անկյան: Այդ երևույթը կոչվում է **ու>ա** հերթագայություն:*

Ա ՀՈԼՈՎՈՒՄ – Ա *հոլովման պատկանում են ներքին թեքման հոլովման բառերի մեծամասնությունը: Եթե **արտաքին** հոլովման դեպքում գերակշիռը **Ի** հոլովման բառերն են, ապա ներքին հոլովման դեպքում գերակշիռը **Ա**-ն է, որը կազմում է գոյականների 18 տոկոսը (տե՛ս աղյուսակը):*

Ա հոլովմամբ են հոլովվում՝

1. **ՈՒԹՅՈՒՆ** ածանցով կազմված գոյականները՝ գիտություն>թյան, ընկերություն >թյան, բազմություն > թյան և այլն:

2. **ՅՈՒՆ** ածանցով վերջացող մի քանի բառեր՝ արյուն — արյան, անկյուն — անկյան, սյուն — սյան, ձյուն — ձյան:

Ությունով և **յունով** վերջացող բառերի **բացառական** հոլովը կազմվում է ուղղականի հիմքից՝ **ից**-ի հավելումով՝ գիտությունից, ընկերությունից, բազմությունից, հեռավորությունից:

Նույն բառերի **գործիականը** կազմվում է երկու ձևով՝ **ով** (գիտությունով, բազմությունով) և **բ** ձևով (գիտությամբ, բազմությամբ), նկատելի է, որ **բ**-ի հավելումով բառավերջին **ն**-ն առնմանության հետևանքով հնչյունափոխվել է **մ**-ի:

Հիշի՛ր — **յուն**-ով վերջացող հետևյալ բառերը ներքին **ա** հոլովման չեն ենթարկվում, այլ արտաքին «**ի**» հոլովման. դրանք են՝ ***հնչյուն, դոփյուն, մռնչյուն, գոչյուն, շաչյուն, դղրդյուն, խոխոջյուն***:

3. ***Տուն, շուն, անուն*** բառերը՝ (տան, շան), ***անուն*** բառի **ու**-ն հնչյունափոխվում է **վ**-ի՝ անվան (դա գրաբարյան ***անուան*** ձևն է՝ **ու>վ** հնչյունափոխությամբ):

Ո ՀՈԼՈՎՈՒՄ — **Ո** հոլովման պատկանում են ***հայր, մայր, եղբայր*** բառերը և դրանցով կազմված վերջնաբաղադրիչ բարդությունները՝ ***նախահայր, տիրամայր, հորեղբայր***:

Այս հոլովումը կազմվում է ուղղականից **այ>ո** հերթագայությամբ՝ հայր-հոր, մայր-մոր, եղբայր-եղբոր, տիրամայր-տիրամոր, հորեղբայր-հորեղբոր:

Այս բառերի բացառականն ու գործիականը կազմվում են սեռականի հիմքից՝ **ով**, **ից** վերջավորություններով՝ ***հորից—հորով, մորից—մորով***: Ներգոյական հոլով չունեն:

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Հայերենում կան սահմանափակ թվով բառեր, որոնք նշված հոլովումներին չեն ենթարկվում և ունեն իրենց ուրույն հոլովաձևերը:

Նշենք դրանք.

1. **Աղջիկ** բառը հոլովվում է արտաքին **ա** հոլովմամբ՝ ***աղջիկ-աղջկա-աղջկան-աղջկանից-աղջկանով***:

2. **Սեր** բառը հոլովվում է արտաքին **ո** հոլովմամբ՝ **ե**>**ի** հերթագայությամբ՝ սեր-սիրո-սիրուց-սիրով:

3. **Հույս, լույս, սուգ** բառերը թեև ենթարկվում են **ի** հոլովման, բայց ունեն նաև հուսո, լուսո, սգո գրաբարյան ձևերը:

4. **Կայսր** և **դուստր** բառերը հաճախ հոլովվում են գրաբարյան ձևով՝ **կայսեր, դստեր**՝ ը>ե հերթագայությամբ: Սակայն հոլովվում են նաև **ի**-ով՝ **դուստրի, կայսրի** (նայած ոճերի):

5. **Ծնունդ, հանդիստ, գալուստ, կորուստ**. ընդամենը 4 բառ հոլովվում են արտաքին **յան** հոլովմամբ. **ծննդյան, հանգստյան, գալստյան, կորստյան**:

Ինչ խոսք, սրանք հոլովվում են նաև «**ի**» հոլովմամբ՝ ծննդի, հանգստի, կորուստի, գալուստի (աղթիվ):

Գալուստ բառը որպես հատուկ անուն ենթարկվում է միայն **ի** հոլովման, ինչպես **Մանուկը**:

Հարցեր.

1. Ի՞նչ է հոլովումը:
2. Ո՞ր հոլովում են հանդես գալիս հոլովման տիպերը:
3. Քանի՞ տեսակի հոլովումներ գիտեք:
4. Թվարկեք **արտաքին** հոլովումները, բերեք օրինակներ:
5. Թվարկեք **ներքին** հոլովումները. բերեք օրինակներ:
6. Թվարկեք **այլաձև** հոլովումները. բերեք օրինակներ:
7. Որո՞նք են **իմաստային** և որո՞նք **ձևային** հոլովումները:
8. «**Ի**»-ն ինչու է կոչվում **ընդհանրական** հոլովում. հայերենի բառերի քանի՞ տոկոսն է ենթարկվում «ի» հոլովման:

Առաջադրանք 1.

Հետևյալ բառերի հոլովված ձևերով կազմեք նախադասություններ.

մորաքույր, կնքահայր, ծնունդ, սեր, կայսր, աղջիկ, տիրամայր, զավակատուն, չքերթ, հեռաձայն, որսաչուն, ազգանուն, որսաձի, մականուն, գալուստ, Գալուստ, լռություն, եռանկյուն, ուսում, գիտություն, արյուն, տուն, ծունկ, մուկ:

Առաջադրանք 2.

Դուրս գրեք ներքին թեքման և այլաձև հոլովման պատկանող բառերը.

Կայսեր նամակը, այսինքն՝ նրա նկատողությունը, Տերենտին

Հանել էր իր սովորական Հավասարակշռությունից, և նա զգալով, որ կայսրն իրավացի չէ, վրդովվում ու զայրանում էր Պապի դեմ, որ առիթ էր դարձել Հանդիմանության: Միստեր Սմիթսոնը առանց առարկության Հավանություն տվեց դստերը: Այն փողոցը, որով անցել էր սգո բազմությունը թափուր էր: Երիտասարդ աղջկա թախծոտ դեմքին առկայծեց Հույս մի չող: Հայրենիքի սիրով տառապած մեր մարտիկները թշնամու դեմ կռվում էին Հերոսաբար: Եղբոր մաՀից Հետո նա Հայրական սիրո նման մի խոր զգացմունք էր տածում Հանգուցյալի դստեր և մոր նկատմամբ: Պիտերը, ատելով գազանաբարո գնդապետին, չեչտված ջերմությամբ էր վերաբերվում նրա եղբոր դուստրին: Մոտենում էին ծննդյան տոները, և Գալուստը սպասում էր Հարազատների գալուստին: Հանգստյան օրը Հորեղբայր Մանուկը մանուկներին տարավ այգին՝ զբոսանքի: Հոր գալստյան առթիվ ՎաՀանը ընկերներին Հրավիրել էր իրենց տուն: Հանգստի ժամին Հորաքույրը մանուկներին Հրավիրել էր վերնատուն՝ զրույցի: Հանգուցյալի տիկինը սգո զգեստ էր Հագել և սպասում էր տխուր Հանդեսին: Լռության մեջ Հողը թնդաց... խախտվեց բնության անդորրը և մարդու Հանգիստը:

Հայերենի գոյականների Հոլովման տիպերի վիճակագրություն

Ըստ Էդ. Աղայանի «Արդի Հայերենի բացատրական բառարանի» (1976):
Բառարանը պարունակում է 135600 բառ

Հոլովաձևեր	«Ի»	«Ա» ներքին	«ՄՆ»	«ՈՒ»	«ՈՋ»	«Ո»	«ՎԱ»	«Ց»	«Ը»/ «Ե»	«ՑՄՆ»	«Ա» արտաքին
Բառերի քանակը	45400	12000	6540	1840	280	140	40	25	18	7	10
Տոկոսային հարաբերությամբ	68,5	18	9,9	2,8	0,42	0,21	0,06	0,03	0,02	0,01	0,01

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ – *Բառարանում վկայված է 66300 գոյական:*

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում գոյականներ են կազմված բառակազմական բոլոր միջոցներով՝ **ածանցում, բարդություն, հապավում:**

Ածանցում. վերջածանցներ

Գոյականների մեծ մասը կազմվում է **գոյականակերտ** վերջածանցների միջոցով, դրանք եղած գոյականներից նոր գոյականներ են կազմում, ինչպես նաև գոյականներ են կազմում տարբեր խոսքի մասերից.

ԱԾՈ – չափածո, պահածո, գտածո, հանածո, ձուլածո...
ԱԾՈՒ – ծաղրածու, կատարածու, ժողովածու, թեկնածու...
ԱԿ – լճակ, հոգյակ, թոչնակ, գրչակ, հրոսակ, բուժակ...
ԱԿԱՆ – վանական, զինվորական, գիտնական, գաղթական...
ԱՆ – վիպասան, դերասան, ճարտասան, իշխան, գլան, խցան...
ԱՆԱԿ – ճոճանակ, հաղթանակ, ցուցանակ, մրցանակ...
ԱՆՈՑ – արվեստանոց, հյուրանոց, ամառանոց, կուսանոց, հնգանոց, երեքանոց, չորանոց...
ԱՆՔ – գովասանք, բամբասանք, աշխատանք, զբոսանք...
ԱՐԱՆ – դասարան, լսարան, բնակարան, ննջարան, առողջարան...
ԱՐԱՐ – գյուտարար, բարերար, հուշարար, շինարար, հավաքարար, խոովարար, աղմկարար...
ԲԱՆ – լեզվաբան, իրավաբան, հոգեբան, կենսաբան, մարդաբան, երգիծաբան, ձկնաբան...
ԵՂԵՆ – բանջարեղեն, խմորեղեն, ձկնեղեն, ամանեղեն, կոշկեղեն, հրուշակեղեն, երկաթեղեն...
ԵՆԻ – դեղձենի, խորդենի, հացենի, նշդարենի, լորենի...
ԵՆՔ, ԱՆՔ, ՈՆՔ – Վարդանանք, Արամենք, տատոնք, պապոնք...
ԵՍՏ, ԻՍՏ, ՈՒՍՏ – գովեստ, պահեստ, հագուստ, հանգիստ, գալուստ, ուտեստ, ապրուստ, ելուստ...
ԵՐԵՆ – հայերեն, ռուսերեն, հունարեն, լատիներեն...
ԵՔ – տնօրհնեք, նշանդրեք, դռնբացեք, ջրօրհնեք...
Ի – կաղնի, կեչի, մորի, թխկի, սոսի, սոճի, ծիրանի...

ԻԿ — [illegible] ձկնիկ. մանկիկ. ուլիկ. քույրիկ...

ԻՉ — [illegible] սրբիչ. բռիչ. սուլիչ...

ՄՈՒՆՔ — [illegible] պարապմունք. ցուցմունք. Հուզմունք...

ՅԱԿ — [illegible] եռամսյակ. [illegible]...

ՅԱՆ — [illegible] Ստեփանյան...

ՅԱՆՑ — [illegible] Սանոյանց. Տեր-Ղազարյանց...

ՅՈՒՆ — [illegible] Հնչյուն. մռնչյուն...

ՈՑ — [illegible] մատնոց. ակնոց. [illegible]...

ՈՑ — [illegible] շրխկոց. [illegible]...

[illegible]

ՈՒՆՔ — ակունք, բարձունք, մասունք, թիկունք, շրթունք, ծաղկունք, բուրմունք...

ՈՒՏ — կեչուտ, եղեգնուտ, թավուտ, ավազուտ, ծանծաղուտ...

ՈՒՐԴ — արձակուրդ, ժողովուրդ, խորհուրդ, խառնուրդ, հագուրդ, պարապուրդ, անուրդ...

ՈՒՔ//ՈՒՑՔ — բույք, մանրուք, գինարբուք, քաշկռտուք, սերուցք, ուռուցք, մոլուցք...

Ք — աչք, ունք, խելք, խնդիրք, Հավատամք, ընտանիք, խորք, մուտք, նզովք, գովք, ելք, սյուգք, Հայք, Վիրք, Աղվանք, Ծոփք, Սյունիք, Ռշտունիք, Աղձնիք, Գեղարքունիք...

Նորագույն փոխառյալ ածանցներ

ԻԱ — Հոմանիշ **ՍՏԱՆ** ածանցին — Բուլղարիա, Անգլիա, Իտալիա...

ԻԶՄ — դարվինիզմ, մարքսիզմ, կոմունիզմ, սոցիալիզմ, հումանիզմ...

ԻՍՏ — մարքսիստ, հումանիստ, իդեալիստ, ռեալիստ, ուտոպիստ...

Գոյականակերտ նախածանցներ

Գոյականակերտ նախածանցները հայերենում շատ քիչ են. դրանք են՝

ԳԵՐ — գերիշխան, գերածախս, գերշահույթ, գերհնչույթ...

ԴԵՐ — դերանուն, դերբայ...

ՀԱԿ — հակադրում, հակահարված, հակաթույն, հակագրոհ, հակահարձակում

Հիշի՛ր — **Հակամետ** բառը հակ ածանցով չի կազմված և հակառակ իմաստ չի արտահայտում, այլ՝ **համամիտ՝ համաձայն** (հակված ենք միտելու):

ՄԱԿ — մակբայ, մականուն, մակդիր, մակերես, մակերևույթ, մակագիր, մակընթաց + ություն...

ՆԱԽ — նախատիպ, նախաճաշ, նախարան, նախայեղու, նախահայր...

ՓՈԽ — փոխարքա, փոխնախարար, փոխանուն, փոխանցում, փոխգնդապետ, փոխվարչապետ...

Առաջադրանք 1.

Դուրս գրել ածանցավոր գոյականները, ընդգծել ածանցները, որոշել դրանց տեսակներն ու նշանակությունները.

Կատաղի հողմը մրրկի արագությամբ գրոհում էր ահեղ մոլուցքով...

Գյուղի ծայրից երևացին սրարշավ ձիավորներ ու ոտավորներ. Նրանք գալիս էին օգնության հասնելու: Բոլորը հայացքները, ուշքն ու միտքը սևեռել էին մրոտ ու ցեխոտ տնակների ու փրկիչների վրա: Կառապան ու ձիապան աճապարում էին՝ միջնորդ ճամփորդներին ժամանակ չտալով...

Օրերս ինձ մոտ եկավ իմ մանկության ընկերուհին՝ ամերիկյան մի նկարչուհի: Մենք մի հայրական օջախում չենք ծնվել, բայց մեզ մի ժողովուրդ է սնել, օժտել ընդհանուր զգացմունքներով...

Ծերունի իտալացին նստակյաց, գլխաքարշ աշխատանքից և կյանքի բեռից կորացած մեջքով գնում էր չուկա և թևատակին մի բան վերադառնում իր տնակը և երեկոյան էր միայն իր խցիկից դուրս գալիս, որտեղից միալար լսվում էր երկաթեղեն մուրճի թխկոցը, նա հաճախ էր տալիս թագավորների ու իշխանների մականունները:

Ուսուցչուհիները ***ուսման*** *կարոտ իրենց սաներին հանձնարարում էին* ***հումանիզմ, հումանիստ, արժույթ, դարձված, թավուտ, թեկնածու, տաղանդավոր, այցելու, Իտալիա, հակահարված*** *բառերով կազմել նախադասություններ:*

Առաջադրանք 2.

Ընդգծել գոյականակերտ ածանցները և դրանցով բառեր կազմել.

չափածո, ծաղրածու, թոշնակ, գիտնական, դերասան, արվեստանոց, զբոսանք, գյուտարար, հանգիստ, պապոնք, հոգեբան, իտալերեն, եռյակ, մատնոց, լողորդ, Պարսկաստան, հողված, քերթված, հակամետ, գերածախս, աշխատավոր, այցելու, խորհուրդ, բնակիչ, թարգմանիչ:

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Գոյականների մեծ մասը բարդություններ են՝ կազմված

համադրական և վերլուծական ճանապարհով.

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ – (*հոդակապով, չաղկապներով և առանց դրանց*).

1. **Գոյական + գոյական** – *գետափ, ծոցատետր, ծաղկաման, հանքահոր... անցուդարձ, այրուբեն, առևտուր, նիստուկաց, լացուկոծ, ելևէջ, հացատուն, անձրևաջուր, գրչատուփ...*
2. **Գոյական + բայարմատ** – *բանասեր, պատմագիր, բեռնակիր, հայասեր, բերքահավաք, հացադուլ, զինակոչ, ծառատունկ, արևածագ...*
3. **Ածական կամ մակբայ + բայարմատ** – *ծանրակշիռ, դժվարաշարժ, բարձրախոս, չատակեր, ուղղաթիռ, մենակատար, ստախոս, լավատես, հեռատես, պայծառատես...*
4. **Ածական + գոյական** – *թթվասեր, մանրանկար, նորալուսին, նորահարս, դեղնակտուց, կարճապոչ...*
5. **Բայահիմք + գոյական** – *աշխատասենյակ, զբոսայգի, փրկագին, ելակետ, գրասեղան, նստատեղ...*
6. **Անորոշ դերբայ + գոյական** – *գրելաձև, վառելափայտ, մտածելակերպ, վարելահող, պարելաոճ...*

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ – *Հայր ու մայր, թև ու թիկունք, նիստ ու կաց, զոր ու գիշեր, ընկեր-բարեկամ, հյուսիս-արևմուտք, գիշեր-ցերեկ, մարդ-մուրդ, հաց-մաց, աման-չաման, թուղթ-մուղթ...*

Զափազանց մեծ թվով են կազմում բառակապակցություններով հանդես եկող բաղադրյալ գոյականները – ***խոսքի մաս, դարձվածային միավոր, բաղադրյալ ստորոգյալ, Երևանի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն, Ազգային ժողով, Գերագույն դատարան և այլն։***

ՀԱՊԱՎՈՒՄ

Բարդության մի ձևն էլ հապավումներն են, որոնք լինում են՝

ՏԱՌԱՅԻՆ – ԱԺ – *Ազգային ժողով, ՀՀՇ – Հայոց համազգային շարժում, ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն, ՄԱԿ (Միավորված ազգերի կազմակերպություն), ԱՄՆ, ՀՀԳ (Հայկական հեռագրական գործակալություն), ՍՍՀՄ, ՀՀԿ, ՓԲԸ – Փակ բաժնետի-*

րական ընկերություն, ՆԱՏՕ, ՏԱՍՍ...

ՎԱՆԿԱՑԻՆ – *Կոմկուս, Հայպետհրատ, ուսմասվար, ֆիզմաթ, մասնուս...*

ԽԱՌԸ, Վանկաբառային – *շրջժողկրթբաժին, ժողդատարան, կուսկազմակերպիչ, քաղբաժին, սոցապբաժին, խնայդրամարկղ...*

Մանրամասնությունները տե՛ս ***Ալ. Մարգարյան****, Հայոց լեզվի համառոտումների բառարան, Ե., 1979:*

Առաջադրանք.

Դուրս գրել բարդ գոյականները, որոշել տեսակները և բաղադրիչների ի՞նչ խոսքի մաս լինելը.

Բարձրացավ տանտիրոջ երկհարկ բնակարանի ընդարձակ պատշգամբը, մտավ ճաշասենյակ, ակնդետ նայեց աջ ու ձախ, տեսավ գունազարդ ծաղկամաններ, բազկաթոռներ, հյուրասեղաններ, և կանգ առավ տանտիրոջ լուսավոր ու պայծառ առանձնասենյակի առաջ: Նա գործարանատեր էր, մայրաքաղաքի խորհրդի իրավասու, մի քանի հանձնաժողովների անդամ... Հետո ներս մտավ զգեստախանութ իբրև հասարակ գործակատար... Երկարատև ժամանակ չէր մտել գրավաճառանոց, քայլերն ուղղեց դեպի խմբագրատուն, նստեց գրասեղանի ծայրին... գրիչը թաթախեց թանաքամանի մեջ. աչքերը վեր ու վար անելով գրեց վերնագիրը... Տեսնելով, որ գրասեղանը ծածկված է աղտ ու կեղտով, գլխարկի տակ մի լրագիր դրեց, ապա նոր կողմնորոշվեց, թե խմբագրին ինչ պիտի պատասխանի: Նա շատ էր ղոնեղուռ ընկել, բայց ելք ու ճար չէր գտել, չէր տեսել իր աշխատասեր ու հոգատար բարեկամին: Լուռ ու մունջ դուրս եկավ:

Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ.

1. *Ի՞նչ է ուսումնասիրում քերականության* ***ձևաբանություն*** *բաժինը:*
2. *Ի՞նչ է քերականական* ***իմաստը****, ի՞նչ է ձևը:*
3. *Ի՞նչ են* ***քերականական կարգերը****:*
4. *Ի՞նչ է* ***հիմքը****, ի՞նչ են* ***վերջավորությունները****, քանի՞ տեսակ են:*
5. *Ի՞նչ հիմունքով են դասակարգվում խոսքի մասերը:*
6. *Ինչպե՞ս է կազմվում գոյականների հոգնակի թիվը:*
7. *Քանի՞ հոլով ունի հայերենը, պատճառաբանեք հայցականը:*

8. Խոսքի մասերի փոխանցում և փոխանունություն։
9. Իրի և անձի առումներ:
10. Հոլովման տիպերը:

Առաջադրանք 1.

Փակագծերում եղած բառերը գործածեք անհրաժեշտ թվով, հոլովով և առումով.

Թե ինչու ես իմ մանկական (տարի) մեծ մասը ոչ թե (մայր) մոտ, այլ (տատ) մոտ անցկացրի, չգիտեմ: Կասեմ միայն, որ (շաբաթ) մեջ հազիվ երկու (օր) հյուր գնացի մեր (տուն), մնացած (ժամանակ) ես ապրում էի (տատ) մոտ...: (Քեռի) (տարի) մեջ միայն (ձմեռ) (ամիս) էր լինում (տուն), մնացած (ժամանակ) նա գնում էր (գյուղ) և մի (կողմ) (տնտեսություն) զբաղվում, իսկ մյուս (կողմ), ինչպես (տատ) ասում «դաշնակ կոմիտե էր»...

(Մայրիկանք) (տուն) (այգի) դիմաց մի վիթխարի բարդի կար: Կնստեր (տատ) (ծառ) տակ, կգործեր գուլպա ու ձեռնոց և կպատմեր զանազան (հեքիաթ): Հիշում եմ նրա (հեքիաթ) մեկը, որի (հերոս) ինձ իր հետ տարավ (ձմեռ) այգի և տեղավորեց մի (ծառ) (փչակ): (Ըստ Գ. Մահարու):

Առաջադրանք 2.

Նախադասությունների մեջ հոլովել տրված գոյականները (յոթ հոլովի համակարգով).

Ուսուցիչ, ուսանող, աշակերտ, ընկեր, բժիշկ, դասագիրք, մատենադարան, հայր, տիրամայր, թագուհի, գարուն, ժամ, գիշեր, լուսին, մարդ, ծնունդ, գալուստ, Գալուստ, Աշոտենք, Մեղրի, Գյումրի, ընկերություն, անուն, հորեղբայր, դուստր, աղջիկ, սեր, ամուսնություն...

Առաջադրանք 3.

Արտագրել տեքստում եղած բոլոր գոյականները՝ նշելով դրանց քերականական կարգերը.

1. Հայրենիքը երգ էր, որը ոչ թե շուրթերն էին երգում, այլ հոգին. դա փոքրիկ, աղմկոտ գետ էր, գետափի տնակ, բարդիներ, օրորոցի ճռռոց, գառան մայուն, սրնգի բեկբեկուն նվագ, մեծ մոր քաղցրեղեններով լի գրպան, երեքնուկի թերթին սարսռող կաթիլ, որի մեջ բեկվում էր ողջ երկինքը, արևը և նրա կյանքը:

... Այրող ու հոգեխռով թարմությամբ նրան հաճախ էր հե–

տապնդում մանկությունից մնացած խոնավության, բորբոսի և էլի ինչ-որ բանի այդ հոտը: Ձայներից նա հիշում էր մահամերձ մոր մեղմ հեկեկանքը, մեծ մայրիկի աղոթքները, հետո մի բարակ ճռռոց, որով բացվել, փակվել էր իրենց այգու դուռը:

2. Մի ձիավոր է սլանում Մանազկերտի ճանապարհով: Ձիու ռունգերից կաթնագույն գոլորշի է հորդում աշնան սառն օդի մեջ: Սեթը դռների միջև դիմավորում է մռայլադեմ ձիավորին... Երեկոյան մեծ տանը մնում են երեք հոգի՝ մեծ մայրիկը և Սեթի երկու որդիները՝ Արմենն ու Անդրանիկը: Ուշ գիշերին կրակում են ջրաղացների մոտից: Մեծ տան առջևով քառատրոփ սլանում են ինչ-որ հեծյալներ:

Մեծ մայրիկը փակում է տան բոլոր դռները, բանալիները ծոցն է գցում, վերցնում է մի կապոց հաց ու երեխաների հետ ճանապարհ ընկնում:

«Իսկ Արամը թերևս տուն չունի», — մտածեց Անդրանիկը, և նրան թվաց, թե տեսնում է եղբորը այնպես, ինչպես թողել էր տարիներ առաջ: Հանկարծ նա ցանկացավ պատմել ծերունուն, որ ինքն էլ եղբայր ունի, որ հայրենադարձների մեջ կան հայրեր, մայրեր, որոնք չունեն որդիներ կամ ունեն որդիներ և չգիտեն այդ մասին: (Ըստ Ռ. Արամյանի):

Առաջադրանք 4.

Դուրս գրել նույն հատվածի բոլոր բարդ ևածանցավոր գոյականները

ԱԾԱԿԱՆ

Առարկայի որակական հատկանիշ կամ վերաբերություն անվանող բառը կոչվում է **ածական**. այն պատասխանում է **ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր** հարցերին:

Ածականի քերականական առանձնահատկությունն այն է, որ այն հիմնականում դրվում է գոյականների վրա **ուղիղ, անփոփոխ** ձևով և կատարում է **որոշչի** շարահյուսական պաշտոն:

Ես իմ **անուշ** Հայաստանի **արևահամ** բառն եմ սիրում,
Մեր հին սազի **ողբանվագ, լացակումած** լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը **վառման,**
Ու **նաիրյան** աղջիկների **հեզաճկուն** պարն եմ սիրում:
Սիրում եմ մեր երկինքը **մուգ,** ջրերը **ջինջ,** լիճը **լուսե,**
Արևն ամռան ու ձմեռվա **վիշապաձայն** բուքը **վսեմ**... (ԵՉ):

Բերված օրինակներում ածականներն անվանել են առարկաների **որակական** հատկանիշներ, իսկ **լեռնային** կլիմա, **հայրական** տուն, **ընկերական** վերաբերմունք բառակապակցություններում ածականները ոչ թե **որակ** են նշում, այլ **հատկացություն, վերաբերական հարաբերություն:**

Որոշչային կիրառությունն ածականի **ամենատարածված ու** ամենասովորական կիրառությունն է:

Ածականը լայնորեն կիրառվում է նաև որպես **ստորոգելիական վերադիր՝ ճոխ է** հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն (Բայրոն): **Գեղեցիկ** էր այդ առավոտը (Րաֆֆի): **Զգույշ** է միրհավը, **դժվար** է նրան **խփել** (ԱԲ): Օդը **մաքուր** էր, արցունքի պես **ջինջ** (ԱԲ):

Ածականն ունի նաև **մակբայական** կիրառություն, հանդես է գալիս որպես **ձևի** պարագա: Սա հատուկ է որակական ածականների մի մասին, որոնք, դրվելով բայերի վրա, ցույց են տալիս գործողության հատկանիշ: Համեմատենք հետևյալ օրինակները.

բարձր ծառ խելոք երեխա ճիշտ ճանապարհ մաքուր սենյակ հիանալի կատարում	ածական - որոշիչ		բարձր խոսել խելոք մտածել ճիշտ դատել մաքուր պահել հիանալի կատարել	ածական- ձևի պարագա

Հիշի՛ր — ճիշտ է, բայերի հետ գործածվելիս որակական ածականների մի մասը ***ձևի պարագայի*** *պաշտոն է կատարում, հանդես է գալիս* ***մակբայաբար****, բայց որպես* ***խոսքի մաս*** *մնում է* ***ածական*** *և ոչ թե վերածվում է* ***մակբայի****, ինչպես կարծում են որոշ լեզվաբաններ:*

Առաջադրանքներ.

1. ***Բերված ածականները նախադասությունների մեջ գործածել որոշչի և ձևի պարագայի պաշտոններով.***

լավ, վատ, բարձր, ցածր, ճիշտ, սխալ, հեռու, մոտիկ, մեղկ, տկլոր, հրաշալի, գեղեցիկ, մաքուր, տգեղ, սրտաբաց, իմաստուն...

2. Բերված ածականներից մի քանիսը գործածել ստորոգելիական վերադրի պաշտոնով:

ԱԾԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Ածականները, ըստ իրենց արտահայտած իմաստի, տարբեր կողմերից են բնութագրում առարկան՝ մի դեպքում որակում են առարկաների հատկանիշներն անմիջականորեն՝ առանց ուրիշ առարկաների միջնորդավորության՝ ***պայծառ*** *արև,* ***կանաչ*** *տերև,* ***կարճ*** *ճանապարհ,* ***խելոք*** *տղա... մյուս կողմից՝ ածականներն առարկաների հատկանիշներն արտահայտում են ուրիշ առարկաների միջնորդությամբ՝* ***երկաթե*** *կամուրջ,* ***հայրական*** *տուն,* ***լեռնային*** *կլիմա,* ***հրեղեն*** *ձի և այլն: Ըստ այդմ էլ՝ ածականները բաժանվում են 2 խմբի՝* ***որակական*** *(առաջին օրինակները) և* ***հարաբերական*** *(երկրորդ օրինակները):*

Որակական ածականներ

Որակական ածականներն արտահայտում են առարկայի էությունից բխող, ինքնին ունեցած, չմիջնորդավորված որակական հատկանիշներ. դրանք են՝

1. Առարկաների **արտաքին-ձևային** հատկանիշներ (**հաստ, բարակ, կարճ, երկար, մեծ, փոքր, լայն, նեղ, կլոր, գանգուր, գեր, նիհար, բարձր, ցածր...**):

2. Առարկաների և անձերի **ներքին** հատկանիշներ (**ազնիվ, աշխույժ, արդար, խելոք, հիմար, կծու, թթու, մեղմ, հպարտ, դառը, ցուրտ, ջերմ, չար, բարի...**):

3. **Գունային** հատկանիշներ (**կարմիր, կապույտ, կանաչ, սև, սպիտակ, դեղին...**):

Քանի որ միևնույն որակական հատկությունն առարկաների մեջ առկա է լինում տարբեր չափով (մեկը **խելոք** է, մյուսը՝ **ավելի խելոք**, բայց կա նաև **ամենախելոք**), հետևաբար որակական ածականներն ունեն **համեմատության** աստիճաններ. դրանք երեքն են՝ **դրական, բաղդատական, գերադրական**:

Դրական աստիճան – Սա ածականի սովորական ձևն է և անվանում է առարկայի տվյալ հատկությունը՝ առանց համեմատելու ուրիշ առարկաների նույն հատկության հետ՝ **լավ** մարդ, **հետաքրքիր** գիրք, **սիրուն** աղջիկ, **հմուտ** վարպետ...

Բաղդատական աստիճան – Սա ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի առավել կամ պակաս լինելը ուրիշ առարկայի (կամ առարկաների) նույն հատկության համեմատությամբ:

Բաղդատական աստիճանը կազմվում է.

1. Ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **ավելի** կամ **պակաս** (**քիչ, նվազ, սակավ**) բառերը, այսինքն՝ **վերլուծական** ձևով՝ **ավելի ուժեղ, ավելի գեղեցիկ, ավելի բարձր... պակաս ջանասեր, պակաս հայրենասեր, քիչ աշխատասեր, նվազ ջանասեր:**

Ավելի բառով կազմված բաղդատականը կոչվում է **առավելական, պակաս, քիչ, նվազ, սակավ** բառերով կազմված բաղդատականը կոչվում է **նվազական բաղդատական**, որովհետև ցույց է տալիս առարկայի տվյալ հատկության նվազ, պակաս լինելը: Այս դեպքում նվազական տարբերությունը չատ չընդգծելու նպատակով հաճախ գործածվում է օժանդակ բայի ժխտական ձևը՝ Վահանը պակաս հայրենասերը չէ: Ութերորդցիները պակաս աշխատասեր չեն:

2. Նույն հատկանիշով իրար հետ համեմատվող գոյականներն իրար հետ կարող են կապվել նաև **քան** բառով. օրինակ՝

Սպորտում Արամն ավելի ուժեղ է, **քան** Վահեն: Վանա լիճն ավելի մեծ է, **քան** Սևանը:

3. Ածականի բաղդատական աստիճանը կազմվում է նաև համեմատվող առարկան **բացառական** հոլովով դրվելով՝ Վանա լիճը մեծ է Սևանից: Արամը սպորտում ուժեղ է Վահեից: Գյումրին մեծ է Վանաձորից:

4. Որոշ ածականների բաղդատական աստիճանը կազմվում է նաև **ավուն** վերջածանցով, որը ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի պակաս լինելը. օրինակ՝ **հաստավուն**, նշանակում է քիչ հաստ, **կանաչավուն**՝ կանաչ գույնի թույլ լինելը:

Գերադրական աստիճան – Ածականի գերադրական աստիճանը ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի գերազանցությունն ուրիշ առարկաների նույն հատկությունից: Այն կազմվում է՝

1. Դրական աստիճանի ձևին ավելացնելով **ամենա** նախածանցը (**ամենալավ, ամենաուժեղ, ամենախելոք, ամենամոտիկ, ամենամեծ...**):

2. Դրական աստիճանին ավելացնելով (**ա**)**գույն** վերջածանցը (**լավագույն, մեծագույն, ազնվագույն, բարձրագույն**):

3. Դրական աստիճանը գործածելով **ամենից** բառի հետ (**ամենից ուժեղ, ամենից բարձր, ամենից հայասեր, ամենից քաջ, ամենից լավ**):

Նշենք, որ **ամենա** նախածանցով և **ամենից** բառով կարելի է բոլոր որակական ածականների գերադրական աստիճանը կազմել, իսկ (**ա**)**գույն** վերջածանցով՝ ոչ: Օրինակ, եթե ասում ենք **բարձրագույն**, ապա դրա **ցածրագույնը** չկա, կամ **շատ, քիչ, առատ, խելոք, հիմար, քաջ, վախկոտ, նիհար, կոպիտ**, և նման բազմաթիվ ածականներից, եթե կարելի է **ամենա** նախածանցով համեմատության աստիճաններ կազմել, ապա (**ա**)**գույն**-ով չի կարելի:

Ճիշտ է, գերադրական աստիճանը սովորաբար ցույց է տալիս որևէ հատկանիշի գերազանցությունը ուրիշ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ, որը կոչվում է **համեմատական գերադրական**՝ լավ-լավագույն, բարձր-բարձրագույն, բայց նույն գերադրականը ցույց է տալիս նաև հատկանիշի բարձր աստիճան, որը չի համեմատվում ուրիշ առարկաների հետ: Օրինակ՝ երբ ասում ենք «Տիգրանը **բարձրագույն** կրթություն ունի», չենք համեմատում տարրական կամ միջնակարգ կրթության հետ: Կամ

*Տիգրանը **լավագույն** շախմատիստ է, Արամը՝ **լավագույն** լողորդ: Ջրոսանքից **մեծագույն** բավականություն ստացանք:*

*Սա էլ կոչվում է **բացարձակ գերադրական**:*

*Ածականի գերադրական աստիճանը հաճախ արտահայտվում է նաև **շարահյուսական** միջոցներով: Հաճախ **բոլոր, ամեն** բառերի բացառական հոլովները, որևէ ածականի դրական աստիճանի վրա դրվելով, կազմում են նրա **գերադրական** աստիճանը՝ **բոլորից** քաջ, **ամենից** ուժեղ:*

*Մ. Ասատրյանը նշում է նաև գերադրականի արտահայտման հետևյալ միջոցները՝ «ածականի կրկնություն հոգնակի **սեռական**ի կամ բացառականի ձևով, ինչպես գեղեցիկների գեղեցիկը//գեղեցիկներից գեղեցիկը, լավերի լավը//լավերից լավը, մեծերի մեծը//մեծերից մեծը և այլն»:*

***Հիշի՛ր**—Հայերենում մի շարք որական ածականներ բաղդատական ու գերադրական աստիճաններ չունեն: Դրանք են՝ **որբ, ամուլ, չբեր, հղի, այրի, ամուրի, արու, էգ, կույր, համր, մունջ, ստերջ, մերկ, ունայն** և այլն:*

Առաջադրանքներ.

1. ***Կազմել հետևյալ ածականների համեմատության աստիճանները և գործածել նախադասությունների մեջ.***

առաջադեմ, գեղեցիկ, բարի, թարմ, լուրջ, խելացի, բարձր, ցածր, լավ, լայն, նեղ, հին, նոր, ընդարձակ, չքեղ, վատ, փայլուն, ջինջ, հաստ, կանաչավուն, երիտասարդ, բանիմաց, խիստ, ծանր, դժվար, մտերիմ, կարևոր, տկար:

2. ***Բնութագրել հատվածում գործածված ածականների իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.***

Հրաշալի է Սյունյաց երկրի կանաչազարդ բնությունը. արևի պայծառ շողերը երևան են հանում գեղեցիկ լեռների կանաչ ու դեղին տեսարանները: Կանաչն ու դեղինը ձուլված են իրար, և դժվար է դրանք իրարից զատելը: Խորդուբորդ ճանապարհը, որով բարձրանում էինք շատ անհարթ էր ու դժվարանցանելի: Ապա նեղ կածանով իջանք խոր ձորը, որը գրեթե մութն էր, և այդ մութը դժվար էր դարձրել մեր, առանց այդ էլ դժվար ուղին (Մուր.):

Բարակ ամպերը մաղում են ոսկի: Ջրերը անուշ հեքիաթ են ասում, Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի, Հոգնատանջ հոգիս

բախտ է որոնում: Լռին դաշտերի հանդիստը խոսուն մի հեզ տխրության լույս է ստվերում խաղաղ ջրերի վճիտ ալմաստում: Քո քաղցր վիշտը, սիրտ իմ մենավոր, Քո վիշտը փռված անհուն աշխարհում, Քո սերն է վառված և՛ պայծառ և՛ խոր, Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում (ՎՏ):

Հարաբերական ածականներ

Հարաբերական ածականները ցույց են տալիս այլ առարկայի հարաբերությամբ միջնորդավորված հատկանիշ, այսինքն՝ արտահայտում են մի առարկայի կապը մյուսի հետ: Այսպես **քարե կամուրջ, լեռնային կլիմա, մայրական սեր** բառակապակցություններում **քարե, լեռնային** և **մայրական** ածականները ցույց են տալիս **կամուրջ, կլիմա, սեր** գոյականների կապը, հարաբերությունը, այսինքն՝ կամուրջը քարից է կառուցված և ոչ երկաթից, կլիման հատուկ է լեռներին և ոչ ցամաքին, իսկ մայրական զգացմունքն էլ սերն է որդու նկատմամբ: Սրանցում կա **վերաբերության** իմաստը:

Հարաբերական ածականները սովորաբար արտահայտում են առարկաների ոչ համեմատելի հատկանիշ. չի կարելի ասել **ավելի քարե** կամուրջ կամ **ամենամայրական** սեր:

Այս խմբի ածականներն արտահայտում են առարկաների մի քանի հարաբերություններ.

ա) **տեղային, տարածական** – լեռնային, դաշտային, ծովափնյա, ցամաքային, գյուղական, գավառական...

բ) **ժամանակային** – գարնանային, ամառային, գիշերային, ցերեկային, հնադարյան, մայիսյան, քառամյա, տասնամյա...

գ) **ծագման, հատկացման** – հայրական, որդիական, աշակերտական, ուսանողական, գերմանական, իտալական, ռուսական...

դ) **կազմության** – երկաթե, ոսկյա, արծաթե, փայտե, բրդյա, ապակե, հրեղեն, հողեղեն...

ե) **ունենալու և չունենալու** – անտուն, անխելք, ակնոցավոր, միրուքավոր, աղեղնավոր, հրացանավոր և այլն.

զ) **գունային հատկանիշներ** – կարմրագույն, նարնջագույն, մոխրագույն, ծիրանագույն, վարդագույն, երկնագույն...

է) **նմանության հատկանիշ** – գմբեթաձև, աղեղնաձև, մարդանման, քաղաքատիպ...

Ինչպես դժվար չէ նկատել, հարաբերական ածականները միշտ **բաղադրյալ** են՝ առավելապես **ածանցավոր**։

Ճիշտ է, որականներն էլ կարող են բաղադրյալ կազմություն ունենալ, օրինակ, **բարդ** (միամիտ, պարզամիտ, մեծամիտ, հաղթանդամ, բազմանդամ...), **ածանցավոր** (վախկոտ, փութկոտ, վստահելի, սիրելի, նազելի, ուժեղ, չքեղ...), բայց որական բաղադրիչները չեն արտահայտում հարաբերականին հատուկ իմաստային յուրահատկություններ։ Ասենք՝ **գլխավոր**, **հիմնավոր** որականները թեև կազմությամբ նման են **գմբեթավոր**, **պոչավոր** հարաբերականներին, բայց դրանցում **գլուխ**, **հիմն** գոյականները զրկվել են նյութական իմաստից։

Հարաբերական ածականների փոխանցումը որականների

Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Ասատրյանը, որական և հարաբերական ածականների միջև չինական պարիսպ չկա, և հաճախ դժվար է լինում որոշել տվյալ ածականի տեսակը։ Դա շատ լավ նկատելի է **ական**, **ային**, **վոր** ածանցներով կազմված ածականներում, որոնք ինչ խոսք, հարաբերական են՝ **ընկերական վերաբերմունք**, **մարդկային** խիղճ, **գլխավոր** աստղ, բայց **գործնական** մարդ, **ներվային** բնավորություն, **լուսավոր** աստղ բառակապակցություններում **գործնական**, **ներվային** և **լուսավոր** ածականներն ավելի շուտ առարկայի որակն են նշում, քան հարաբերությունն ուրիշ առարկաների հետ և նշված ածականները հեշտությամբ ստանում են համեմատության աստիճաններ (ավելի **գործնական մարդ**, «**Ամենագործնական** մարդը իմ հարևանն է», կամ **ներվային** - ավելի ներվային)։ **Լուսավոր** ածականն էլ հեշտությամբ ստանում է **ամենա** ածանցը («Ամենալուսավոր մոլորակը Յուպիտերն է»), այն կարող է **ամենից** բառի հետ հանդես գալ «Մեր փողոցը ամենից լուսավորն է»։ Եվ այսպես, կարելի է բազմաթիվ օրինակներ բերել և ցույց տալ, որ շատ հարաբերական ածականներ կարող են համեմատության աստիճաններ ստանալ և վերածվել որականների. օրինակ՝ **դեմոկրատական** - **ամենադեմոկրատական** երկիրը Հայաստանն է։

Առաջադրանք.

Հետևյալ ածականները նախադասություններում գործածել թե՛ որպես հարաբերականներ և թե՛ որպես որակականներ, կազմել որակականների համեմատության աստիճանները.

բանական, բարեկամական, ընկերական, բարոյական, գործնական, մտերմական, դեմոկրատական, կապիտալիստական, գյուղական, զավեշտական, էական, ժողովրդական, գազանային, դիվային, ցամաքային, ծովային, դժոխային, մարդկային, ականավոր, լուսավոր, ահավոր, արտասովոր, գլխավոր, թևավոր, հրեշավոր, վտանգավոր, հեղինակավոր, բախտավոր:

Ածականների գործածությունը գոյականաբար և հակառակը

Ածականները բացի իրենց բուն կիրառություններից (որոշիչ, վերադիր, պարագա) խոսքի մեջ կարող են հանդես գալ ***փոխանվանաբար****, գործածվել գոյականների փոխարեն. այս դեպքում ձեռք են բերում գոյականին հատուկ թե՛* ***ձևաբանական*** *հատկանիշներ և թե՛* ***շարահյուսական*** *պաշտոններ: Այսինքն՝ փոխանվանաբար գործածվելիս ածականները* **հոդ** *են ստանում, հոլովվում են* **ի** *հոլովմամբ, ստանում են* **եր, ներ** *հոգնակերտ մասնիկները և կատարում են այն դերը, ինչ որ կատարում են գոյականները, բայց մնում են ածական և ոչ թե դառնում են գոյական:*

Հոլովվում են լրիվ հարացույցով.

	եզակի	**հոգնակի**
Ուղղ.	*խելոքը, կարմիրը*	*խելոքները, կարմիրները*
Սեռ.	*խելոքի, կարմրի*	*խելոքների, կարմիրների*
Տր.	*խելոքին, կարմրին*	*խելոքներին, կարմիրներին*
Հայց.	*խելոքին, կարմիրը*	*խելոքներին, կարմիրները*
Բաց.	*խելոքից, կարմրից*	*խելոքներից, կարմիրներից*
Գործ.	*խելոքով, կարմրով*	*խելոքներով, կարմիրներով*
Ներգ.	*կարմիրում*	*խելոքներում, կարմիրներում*

*«****Խելոքները*** *սովորաբար լսում են* ***մեծերին****» նախադասության մեջ* ***խելոք*** *ածականը գործածվել է գոյականաբար, ստացել է* **ներ** *հոգնակիակերտ ձևույթը,* **ը** *որոշիչ հոդը և հանդես է եկել* ***ենթակայի***

պաշտոնով, հետևաբար դրված է **ուղղական** հոլովով, իսկ **մեծ** ածականը նույն ձևույթներն ստանալով դրվել է **հայցական** հոլովով և **ուղիղ խնդրի** դեր է կատարել:

Ինչպես ասվել է՝ իրենց հերթին գոյականներն էլ կարող են փոխանվանաբար հանդես գալ և գործածվել ածականաբար, ցույց տալ առարկայի հատկանիշ. օրինակներ, Այ **վարդ** աղջիկ, մոտ արի: «**Գյուղացի** համբոյի տունը կռիվ էր ընկել» (ՀԹ): «**Զոքան** Զատին ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել» (ՀԹ): «**Բյուրեղ** լճից ցողն է ելնում ծիածանի ժպիտով» (Ավ. Իս.):

Նման դեպքերում չպիտի պնդել, թե խոսքի մասերը փոխում են իրենց խոսքիմասային պատկանելությունը: Ո՛չ, գոյականը մնում է գոյական, ածականը՝ ածական:

Առաջադրանքներ.

1. Տրված ածականները նախադասություններում գործածել թե՛ իրենց արժեքով և թե՛ գոյականների.

Հանցագործ, ավագ, կրտսեր, բարբարոս, դավաճան, կոլտնտեսական, պալատական, մտավոր, ծանոթ, հով, հսկա, բանակային, հրշեջ, ազնվական, դպրոցական, գյուղացի, բանվոր, լեռնային, հովիվ, ծաղիկ, վարդ, ազնիվ, գլխավոր, առավելագույն:

2. Առանձնացրեք այն բառերը, որոնք արտահայտում են և՛ առարկայի, և՛ հատկանիշի իմաստ.

բարեկամ, թշնամի, ծանոթ, մտերիմ, թանձր, խավար, ձմեռային, օդային, խելոք, նուրբ, հորդառատ, գրող, սուր, ծանր, ազնվական, մերկ, զինվորական արևելյան, ցածրաձայն, վիրավոր, զինված, հարձակվող, հոգնած, մտածող, նրբանկատ:

3. Բերված ածականների փոխանվանաբար գործածությամբ նախադասություններ կազմել բոլոր հոլովներով, ասել պաշտոնները.

իմաստուն, կաթնատու, մտավորական, դեղնավուն:

Ածականների կազմությունը

Ըստ կազմության ածականները գոյականների նման լինում են՝ **պարզ** կամ **արմատական** (*մեծ, փոքր, շատ, քիչ, լավ, վատ, թույլ, ամուր*) և **բաղադրյալ.** բաղադրյալ ածականները լինում են՝

ածանցավոր (*քարե, ոսկյա, լեռնային, մայրական, անկիրթ, անբախտ, տկար*),

բարդ *(արծվաքիթ, լայնարձակ, Հարցասեր, ամրապինդ, մռայլադեմ, Հոգատար),*

բարդ ածանցավոր *(անՀարցասեր, լեռնացամաքային, Հրացանավոր, անՀյուրասեր):*

Ածականներ են կազմվում նաև վերլուծական բարդության ճանապարՀով. կուլտուր-կենցաղային, սոցիալ-տնտեսական, անգլո-ամերիկյան առատ-առատ, բարդ-բարդ, մեծ-մեծ, մանր-մունր, Հին-մին:

Ածականներ են կազմվում նաև գոյականների կրկնությամբ՝ խումբ-խումբ, փունջ-փունջ, տեսակ-տեսակ, գունդ-գունդ, վաշտ-վաշտ:

ԱԾԱՆՑՈՒՄ – *Ածականների ավելի մեծ թիվ կազմում են ածականակերտ ածանցները, որոնք 2 տեսակ են՝* **նախածանցներ** *և* **վերջածանցներ:**

Նախածանցներ – *Ածականակերտ բուն նախածանցները՝* **ան, ապ, դժ, տ,** *չ կոչվում են ժխտական նախածանցներ, որոնք ցույց են տալիս մի բան չունենալը, մի բանից զուրկ լինելը.*

ԱՆ – *ա) գոյականներից է կազմում ածականներ (անխելք, անտուն, անսանձ, անՀույս, անողնաշար, անՀյուրասեր ...)*

բ) ածականներից է կազմում նոր ածականներ՝ ժխտական իմաստով (անթերի, անազնիվ, անկեղծ, անզգույշ, անՀամարձակ, անսովոր, անկուշտ...)

գ) բայահիմքերից է կազմում ժխտական ածականներ (անՀաղթ, անգետ, անաշխատ, անՀամբեր, անկոչ, անխնա, անխախտ...)

ԱՊ – *ապարախտ, ապաշնորՀ, ապարդյուն, ապերջանիկ, ապերասան, ապուշ, ապիկար, ապօրինի,* **ապ** *նախածանցը դրվում է նաև* **ական,ային** *ածանցներով կազմված մի քանի ածկանների վրա՝ ապազգային, ապաղասակարգային, ապապետական:*

ՏԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ – *Վերջին տարիներին* **ապ** *ածանցը լայնորեն գործածվում է նաև բայերի Հետ և ցույց է տալիս Հակառակ գործողությունը (ապամոնտաժ, ապակողմնորոշել, ապակենտրոնացնել, ապախոշորացնել, ապազգայնացնել, ապագաղութացում, ապաբևեռացում, ապառազմականացում և այլն):*

*Նշենք նաև, որ **ապ** ածանցը մի քանի բառերում ժխտական իմաստ չունի, օրինակ՝ **ապաշխարանք** նշանակում է **զղջում**, **ապաստան** տեղ է նշանակում, **ապացույց**-ը **անհերքելի** փաստն է, **ապաքինել** - բուժել, **ապահովիչ** - պահպանիչ, **ապահովագրել** - նախապես մտածել ապահովության մասին, **ապագա** - գալիք և այլն:*

Դժ — *դժգոհ, դժբախտ, դժգույն, դժկամ և այլն:*
Տ — *տգետ, տկար, տհաս, տհաճ, տձև, տմարդի, տկար և այլն:*
Չ — *չհաս, չկամ, չբեր, չխոսկան, չունևոր, չհավան և այլն:*

*Հայերենում գործածվում են նաև հունաբան դպրոցի (V-VIII դարեր) ստեղծած մի քանի նախածանցներ, դրանցով կազմված ածականներն են՝ **արտա**կարգ, **արտա**հերթ, **արտա**սովոր, **գեր**ադաս, **գեր**իմաստուն, **գեր**հզոր, **գեր**բնական, **հակա**դիր, **հակա**զգային, **հակա**ժողովրդական, **համա**հզոր, **համա**խառն, **համա**միտ, **համա**պետական, **տար**օրինակ, **տար**աբախտ և այլն:*

Վերջածանցներ — *Սրանք տարբեր խոսքի մասերից, ինչպես նաև ածականներից նոր բառեր են կազմում, կամ փոխում են դրանց իմաստները.*

ԱԾՈ — *չափածո, հանածո, ձուլածո, տաշածո, կոփածո, կռածո...*
ԱԿԱՆ — *հայրական, դպրոցական, քաղաքական, հոգեկան, բանվորական...*
ԱՅԻՆ — *ծովային, լեռնային, տնային, դիվային, բևեռային...*
ԱՆ — *կծան, փչան, ածան, թռվռան, բլբլան, մլավան...*
ԱՆԻ — *պիտանի, լեզվանի, գեղանի, միաչքանի, չորքոտանի...*
ԱՑԻ — *փաստացի, խելացի, բառացի, տառացի, հայացի...*
ԳԻՆ — *մոլեգին, լալագին, կաթոգին, հրվանդագին, թախծագին...*
ԳՈՒՅՆ — *նորագույն, լավագույն, բարձրագույն, նվազագույն...*
Ե||ՅԱ — *երկաթե||երկաթյա, արծաթե||արծաթյա, փայտե||փայտյա...*
ԵԼԻ||ԱԼԻ — *տանելի, ատելի, գովելի, խղճալի, յուղալի, ուսանելի...*
ԵՂ — *ահեղ, գունեղ, թիկնեղ, զորեղ, համեղ, հյութեղ, ուժեղ...*
ԵՂԵՆ — *ոսկեղեն, հրեղեն, լուսեղեն, հողեղեն, բոցեղեն...*
ԵՆԻ — *հայրենի, մայրենի, վայրենի, արծվենի...*
Ի — *քարի (դար), երկաթի (դար), աղի, վայրի, տմարդի...*

ԻԿ – *մեղմիկ, գռեհիկ, բացառիկ, կլորիկ, սուրուլիկ...*
ԻՆ – *խորին, նրբին, կարգին, խրթին, դժվարին, դյուրին...*
ԻՉ – *հմայիչ, դյութիչ, կեղեքիչ, գրավիչ, զգլխիչ...*
ԼԻԿ – *փափլիկ, թխլիկ, պստլիկ, կարճլիկ, թմբլիկ...*
ԿՈՏ – *վախկոտ, պարծենկոտ, փութկոտ, ամաչկոտ...*
ՅԱ – *արծաթյա, պղնձյա, միամյա, երկարօրյա, եռօրյա...*
ՅԱՆ – *արևելյան, վաղորդյան, երևանյան, աքիլլեսյան...*
ՅԱԼ – *անիծյալ, հիշյալ, մեռյալ, երդվյալ, որոշյալ...*
ՈՎԻ – *ջրովի, ծալովի, լարովի, կախովի, վարձովի...*
ՈՏ – *բրդոտ, յուղոտ, քարոտ, բորոտ, ցեխոտ, մրոտ...*
(Ա)ՎԵՏ – *հոտավետ, սիզավետ, բուրավետ...*
(Ա)ՎՈՐ – *լուսավոր, գունավոր, թունավոր, տաղանդավոր, կեղծավոր, բեղմնավոր, հրեշավոր...*
(Ա)ՎՈՒՆ – *դեղնավուն, կապտավուն, նեղավուն...*
ՈՒ – *ազդու, չինծու, ողբերգու, փորձառու, հասու, կծու...*
ՈՒԿ – *տաքուկ, խղճուկ, սևուկ, գիրուկ, երկարուկ...*
ՈՒՆ – *տոկուն, փայլուն, զրնգուն, թաքուն, գործուն:*

Դժվար չէ տեսնել, որ այս ցանկից մի քանի ածանցներ կային նաև գոյականակերտների շարքում: Դա նշանակում է, որ հայերենում որոշ ածանցներ տարբեր խոսքի մասեր կերտելու հատկություն ունեն:

Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ.

1. Ո՞ր խոսքի մասն է կոչվում ածական. քերականական ի՞նչ առանձնահատկություններ ունեն ածականները:
2. Բայերի հետ գործածվելիս նախադասության ի՞նչ անդամներ են դառնում. նման դեպքերում փոխո՞ւմ են իրենց խոսքիմասային արժեքը (օրինակներ):
3. Որո՞նք են որակական ածականները. նրանց համեմատության աստիճանները (օրինակներ):
4. Հարաբերական ածականները կարո՞ղ են փոխանցվել որականների (օրինակներ):
5. Ածականները կարո՞ղ են գոյականաբար գործածվել և հակառակը (օրինակներ):
6. Ի՞նչ կազմություն ունեն ածականները. թվարկել ածականակերտ ածանցները:

Առաջադրանքներ.

Դուրս գրել բոլոր ածականները, որոշել տեսակները, կազմությունը և նախադասության ինչ անդամ լինելը.

1. Հեռու հորիզոնի վրա, կապույտ երկնքի մեջ թաղված մշտարթուն պահակի պես կանգնած է ձյունափայլ Արարատը: Նա իր վեհ բարձունքից նայում է ներքևում փռված Արարատյան ոչ այնքան ընդարձակ դաշտին:

Ոսկեղեն աշուն է իջել Արարատյան բարեբեր դաշտի վրա: Ամենազոր մարդը, պայծառ արևն ու մաքուր ջուրը միահամուռ ուժերով կատարել են իրենց անուրանալի դերը. և այժմ կանաչ թփերի միջից ժպտում են ոսկեգույն խաղողը, կարմրաթուշ դեղձն ու դեղնավուն տանձը:

Ինչպիսի խաղող կա Արարատյան դաշտում... բազմերանգ, համով ու հյութալի... ահա սիրելի ոսկեհատը, դեղնափայլ արատին, մեծահատիկ իծապտուկն ու արևահամ մուսկատը և էլի ուրիշ շատ տեսակի անուշահյութ ու բազմազան խաղողներ:

2. Մյուս այգիներում քեզ հիացմունք կպատճառեն հայկական հողում փարթամորեն աճած մյուս բազմատեսակ մրգերը՝ կարմրաթուշ խնձորն ու ախորժաբեր ծիրանը, դեղձնասալորն ու սև սալորը, կլորիկ դամբուլը, պարկավոր փշատը, պնդաճակատ ընկույզն ու համով նուշը, հատիկավոր նուռն ու պնդակազմ սերկևիլը, ո՞րն ասես, ո՞րը թվարկես...

Այս դեռ այգիներն են, իսկ կանաչին տվող առատ բանջարանոցների բարիքները՝ բուրումնավետ սեխն ու դուդման, չափազանց հոտավետ շամաման ու քաղցրահամ ձմերուկը, կանաչ վարունգն ու կաս-կարմիր պոմիդորը, կծու պղպեղն ու դարչնագույն բադրիջանը, կարմիր ու սպիտակ ճակնդեղը, սպիտակ կաղամբը, անուշաբույր կանաչին՝ իր զանազան տեսակներով:

Դրախտ է աշնանային դաշտն Արարատյան: Նրա գեղեցիկ, առատ լինելը լավ պատկերացնելու համար պետք է լինել այնտեղ և սեփական աչքերով տեսնել դրախտային ու եդեմական այդ անծայրածիր տարածքը:

Գեղեցիկ, շատ է գեղեցիկ թե՛ ամառային և թե՛ աշնանային հինավուրց մեր երկիրը: Հարգարժան տիարք, օտարերկրյա սիրելի հյուրեր, եղեք այնտեղ և ինքներդ զգացեք: (Ըստ Մերուն Թորգոմյանի):

Առաջադրանք.

Առանձին սյունակներում արտագրել որակական և հարաբերական ածականները և նշել նրանց քերականական հատկանիշները.

Թովիչ ու քաղցր է սերը մայրական,
Այն լույս ակունք է ուժի, ավյունի,
Բայց գորովագութ ու նվիրական
Մայրական սերն էլ իր սահմանն ունի:

Ազնիվ ընկերը թանկ է եղբորից,
Ու նրա սերը՝ սիրտ հուզող գինի,
Բայց գորովագութ, պայծառ ու անբիծ
Ընկերոջ սերն էլ իր սահմանն ունի:

Օ, կա մի այլ սեր, որ սահման չունի,
Որ բորբ արևից վսեմ է, պայծառ,
Որ ճարտար լեզվով պատմել չի լինի,–
Այդ՝ հայրենիքի սերն է բոցավառ:

Այդ՝ հայրենիքի սերն է հրավառ,
Որ հրդեհում է բոլորիս հոգին,
Եվ մենք այդ սիրո սրբության համար
Ամեն ինչ կտանք մեր հայրենիքին:

(Նապոլեոն Մատուրյան)

ԹՎԱԿԱՆ

Առարկաների թիվ, քանակ և թվային կարգ անվանող բառերը կոչվում են **թվական**:

Ածականների նման թվականներն էլ գործածվում են գոյականների հետ, եթե ածականն անվանում է առարկայի **որակական** հատկանիշ, ապա թվականն անվանում է առարկայի **քանակական** հատկանիշ, ինչպես նաև նրա թվային **կարգը** և **բաշխումը**:

Ինչպես երևում է սահմանումից, մենք **թիվը** և **կարգը** չենք հակադրում **կամ** շաղկապով, ինչպես արված է շատ դասագրքերում ու ձեռնարկներում, այլ միավորում ենք **և** միավորիչ շաղկապով, որովհետև թվականներն անվանում են և՛ թիվ, և՛ կարգ, ոչ թե կամ մեկը, կամ մյուսը:

Երկրորդ՝ թե՛ գոյականների, թե՛ ածականների և թե՛ թվականների համար չենք գործածում ավանդաբար գրքից գիրք փոխանցվող **ցույց է տալիս** բնորոշումը, այլ դրա փոխարեն գործածում ենք **անվանում է**, որովհետև գոյականը ոչ թե ցույց է տալիս առարկա, այլ անվանում է, ածականն ու թվականները ոչ թե ցույց են տալիս հատկանիշներ, այլ **անվանում** են դրանք: **Ցույց տալ**-ը բնորոշ է **դերանվանը**, որը ոչ թե անվանում, այլ ցույց է տալիս առարկա և հատկանիշ՝ որևէ հարաբերությամբ:

Թվականն ունի յուրահատուկ իմաստային հատկանիշ. նրան հատուկ է **մենիմաստությունը**. այդ պատճառով էլ թվականների և այլ խոսքի մասերի միջև փոխանցումներ քիչ են լինում: Թվականը միշտ դրվում է գոյականի վրա ուղիղ, անփոփոխ ձևով և **որոշչի** պաշտոն է կատարում՝ «**Առաջին** կուրսում սովորում են **հիսունհինգ** ուսանող»: Լինում են նաև **ստորոգելիական վերադիր**. «Հերթում ես **առաջինն** եմ, դու՝ **երկրորդը**»: «Առաջին կուրսի ուսանողների թիվը **հիսունհինգ** է»:

Ճիշտ է, այլ խոսքի մասերից թվականի վերածում հնարավոր չէ, բայց թվականները հեշտությամբ ստանում են գոյականին հատուկ քերականական կարգեր և գործածվում են **գոյականաբար**:

Թվականների՝ այլ խոսքի մասերի փոխանցման երկու դեպք

կարելի է ընդգծել՝ ***մի*** *թվականի փոխանցումն անորոշ դերան-վան (****մի*** *մարդ* ***մի*** *բան ասաց) և* ***բյուր*** *(տասը հազար) թվականը ձեռք է բերել նաև ածականի իմաստ (բյուր-բյուր ծաղիկներ)* ***շատ, բազում*** *նշանակությամբ:*

Դասական թվականներից ***առաջինը*** *ածականի իմաստ է ձեռք բերել տրամաբանական այն հիմքով, որ ըստ կարգի* ***առաջինը*** *հաճախ ճանաչվում է, գիտակցվում է նաև որպես էությամբ, որա-կով, դերով ամենաբարձրը, ամենաբնորոշողը, ամենագլխավորը, ինչպես՝* ***առաջին կարգի*** *մրցանակ,* ***առաջին տեսակի*** *այլուր:*

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Թվականները լինում են 2 տեսակ՝ ***քանակական և դասական։***

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ – *Սրանք առարկաների կոնկրետ թիվ և քանակ արտահայտող թվականներն են, որոնք լինում են՝* ***բացարձակ, կոտորակային և բաշխական.***

Բացարձակ – *Սրանք նշում են առարկաների քանակն ամբողջ թվերով: Բացարձակ թվականների մեջ արմատական բառերի քանակը խիստ սահմանափակ է: Դրանք են՝* ***մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը(ինն), տասը(տասն), հարյուր, հազար*** *և փոխառյալ* ***միլիոն, միլիարդ։*** *Ըստ Աճառյանի՝* ***մեկից տասը*** *բոլոր թվականները հնդեվրոպական ծագում ունեն,* ***հազար*** *բառը պահլավական փոխառություն է,* ***հարյուր*** *բառի ծագումն անհայտ է:*

Քանակական թվականներն ըստ կազմության լինում են ***պարզ, ածանցավոր և բարդ.***

Պարզ *կամ արմատական թվականներն են միավորների անուն-ները՝* ***մեկից ինը(ինն),*** *տասնավորներից՝* ***տասը, քսանը, հարյուր, հազար, միլիոն։***

Ածանցավոր *են համարվում տասնյակների անվանումները՝ սկսած* ***երեսունից*** *մինչև* ***իննսուն։*** *Սրանցում հանդես եկող* ***սուն*** *մասը սկզբնապես նշանակել է* ***տաս,*** *հետագայում կորցրել է իր իմաստը և վերածվել է ածանցի:*

Բարդ – *Սկսած 11-ից մինչև 99 (իննսունինը)* ***կցական*** *բար-դություններ են, իսկ հարյուրից բարձր բոլոր թվականները՝* ***հա-րադրական*** *բարդություններ, որոնց բաղադրիչները գրվում են*

տասնձին. օրինակ՝ հարյուր մեկ, հազար ինն հարյուր իննսունինը, հինգ միլիոն տասնինը հազար երկու հարյուր քսանհինգ:

Հայերը գրերի գյուտից մինչև 16-րդ դար, երբ արաբներից փոխ առան 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 թվանշանները, թվականները գրում էին հայկական այբուբենի 36 տառերի թվային արժեքով, որոնք կարդացվում էին և՛ քանակական և՛ դասական իմաստներով:

Տաղանդավոր գիտնական Մեսրոպ Մաշտոցն իր ստեղծած 36 տառերը բաժանել է 4 շարքի՝ **միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ**։

Յուրաքանչյուր շարքում բնականաբար պետք է 9-ական տառ լինի, նա իր այբուբենին տվել է հետևյալ թվային արժեքը՝

Ա-Թ (միավորների դաս), Ժ-Ղ (տասնավորների դաս), Ճ-Ջ (հարյուրավորների դաս), Ռ-Ք (հազարավորների դաս): Ստացվում է 9000-որի տառային արժեքը Ք-ն է: **Տասը** հազարի համար դնում է Ւ (վյուն) նշանը և կոչում բիւր (բյուր):

Ահա հայերենի այբուբենի թվային արժեքը.

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ - 70	Չ - 700	Ւ - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Հայերեն տառերով 9999-ը կլինի՝ ՔՋՂԹ:

Քանակական թվականները խոսքի մեջ հանդես են գալիս որոշչի պաշտոնով՝ նշելով առարկայի քանակային հատկանիշը, իսկ **հետադաս** գործածվելիս՝ **դասական** թվականի իմաստ են ձեռք բերում. օրինակ՝ կարգ **3**, աթոռ **25**, կամ՝ փողոց **12**, շենք **4**, մուտք **1**, բնակարան **8**։

*Իրենց բուն գործածությամբ լինում են նաև ստորոգելիական վերադիրներ՝ (օրինակները բերվել են վերևում), իսկ փոխանվանաբար հանդես գալիս՝ հոլովվում են «ի» հոլովմամբ և դառնում են նախադասության ցանկացած անդամ: Մեր դասարանի **տասնինն** աշակերտներից **վեցը** գերազանցիկ են, որոնցից **չորսին** տնօրենը կանչեց իր մոտ, **երկուսին** գովասանագիր հանձնեց, մյուս **երկուսով** նրանց նկարները փակցրեց պատին: Բերված նախադասության մեջ թվականներից **վեցը ենթակայի** դեր է կատարել, **չորսին**-ը **ուղիղ խնդրի**, **երկուսին** մատուցման խնդրի, **երկուսով**-ը՝ միջոցի խնդրի:*

***Մի** կամ **մեկ** թվականի հետ գոյականը դրվում է **եզակի** թվով (Աճառյանն այդքան աշխատությունները գրել է մեկ աչքով): Մեկից բարձր թվականների հետ գոյականները կարող են դրվել և՛ եզակի (հինգ **գիրք** եմ կարդացել և **երկու** շարադրություն գրել) և **հոգնակի** թվերով (**Հինգ տղաներ** մասնակցեցին մրցույթին, **երկու տղաները** հաղթեցին):*

Թվականների հետ գործածվող գոյականները դրվում են հոգնակի թվով, եթե՝

*ա) գոյականները գործածվում են **որոշյալ** առումով՝ նրա երկու **եղբայրներն** էլ հայտնի շախմատիստներ են: Տված **հինգ գրքերն** էլ կարդացել եմ, մնացել են **երեքը**,*

*բ) թվականով արտահայտված որոշչի և դրա որոշյալի միջև կա մեկ ուրիշ որոշիչ ևս: Օրինակ՝ «Ձեր կուրսի հինգ **առաջադեմ ուսանողներն** էլ պարգևատրվեցին ռեկտորի կողմից»: «Բուկինիստական գրախանութից գնածս երեք **հնատիպ գրքերն** էլ շատ կարևոր են»:*

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ — *Սրանք այն քանակական թվականներն են, որոնք արտահայտում են առարկաների բաշխումը որոշ թվային քանակով: Սրանք կազմվում են 2 ձևով՝*

*1. Բացարձակ թվականներին ավելացնելով **ական** վերջածանցը՝ Աշակերտներին բաժանեցին **երկուական** հարցաշար և տվեցին **մեկական** տետր:*

*2. Բացարձակ թվականների կրկնությամբ՝ Աշակերտներին շարեցին **երկու-երկու** և ներս կանչեցին **մեկ-մեկ**:*

*Ինչպես երևում է բերված օրինակներից, բաշխական թվականները հավասարապես կարող են հանդես գալ և՛ գոյականների, և՛ բայերի հետ՝ դառնալով **որոշիչ** (քանի հարցաշար բա-*

ժանեցին՝ ***երկուական*** *և* ***ձևի պարագա*** *(ինչպես ներս կանչեցին՝* ***մեկ-մեկ****)։*

ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ – *Քանակական թվականների* ***կոտորակային*** *տեսակը նշում է միավորի մի քանի հավասար մասերից կազմված լինելը, այսինքն՝ ամբողջի և մասի հարաբերություն։*

Կոտորակային թվականները ***հարադիր*** *բարդություններ են. հասարակ կոտորակի դեպքում առաջին բաղադրիչը (****համարիչը****)* ***բացարձակ թվական*** *է, իսկ երկրորդ բաղադրիչը (****հայտարարը****) կազմվում է* **րորդ, երորդ** *կամ* **երորդական** *ածանցներով՝*

1/2 (մեկ երկրորդ), 3/4 (երեք չորրորդ), 5/6 (հինգ վեցերորդ, կամ վեցերորդական), 1/4 (մեկ քառորդ), 1/2 (կես)։

Տասնորդական կոտորակները *կազմվում են՝* **երորդ** *և* **ական,** *ածանցներով՝ 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական), 2,25 (երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) և այլն։*

Առաջադրանքներ.

1. Տեքստում բերված թվականները գրեցեք տառերով.

Իր ջրառատությամբ և ավազանի տարածությամբ (7.180.000 քառ. կմ) ամենամեծ գետի՝ Ամազոնի գլխավոր ակունքը սկիզբ է առնում 4840 մ բարձրությունից և մինչև գետաբերան հոսում՝ ընդունելով մոտ 500 վտակ, որոնցից 20-ն ունեն 1500-3500 կմ երկարություն։ Գետի հոսանքի արագությունը 2,5 կմ/ժամ է։

2. Ներկայումս աշխարհի տարբեր վայրերում հաշվվում են հայերեն շուրջ 25000 ամբողջական և 4000 պատառիկ ձեռագրեր։ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվում են 10780 ամբողջական և 2000 պատառիկ ձեռագրեր։

3. Ըստ Հրաչյա Աճառյանի հաշվումների աշխարհաբար խոսքում հնչյունական կազմը այսպիսի տեսք ունի՝ ձայնավորների հաճախականության 41,2 տոկոս, իսկ բաղաձայնների՝ 58,8 տոկոս, ուստի կարելի է ասել, որ հայերենը երաժշտական, փափուկ և հնչեղ լեզու է։

4. Լուսնի զանգվածը երկրի զանգվածի 1,81 մասն է։ Երկրի մակերևույթի միջին ջերմաստիճանը 14,8°-ն է։ 5,500 միլիոն տարի առաջ օրվա տևողությունը 20,8 ժամ է եղել։ Այժմ ավելացել է մոտ 1,78 տոկոսով։

5. Տիգրան Չուխաջյանը 1868-ին Պոլսում ստեղծել է հայկական

ազգային առաջին օպերան՝ «Արշակ 2-րդ», իսկ 1912-ին Ալեքսանդրապոլի թատրոնում առաջին անգամ բեմադրվեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան:

6. Ձեր և ձեր մտերիմների ծննդյան թվականները գրեք հայերեն տառերով:

7. Հետևյալ տարեթվերը գրեցեք հայերեն այբուբենի տառերով. 301, 451, 978, 1211, 1308, 1869, 1999, 2005, 2010, 2019, 3164, 3248:

8. Հայկական այբուբենի տառերով արտահայտված թվականները գրեցեք թվանշաններով. Ե, Թ, Ժ, ԺԹ, ՏՈՁ, ՆԵ, ՌՊՀԹ, ՌՋԼԲ, ՌՋԼՁ, ՍԺ, ՍՃԺԱ, Արշակ Բ, Լևոն Գ:

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ — *Դասական թվականները նշում են միատեսակ առարկաների* ***թվային կարգը*** *և կազմվում են* ***բացարձակ*** *քանակական թվականներին ավելացնելով* **րորդ** *կամ* **երորդ** *վերջածանցները:*

Ըստ որում **րորդ** *ածանցով կազմվում են* ***երկու, երեք, չորս*** *թվականների դասականները (****երկրորդ, երրորդ, չորրորդ****):*

Նկատելի է, որ **երկու** *թվականի* **ու** *ձայնավորը սղվել է և նրա փոխարեն ավելացել է* **րորդ** *ածանցը, իսկ* ***երեք*** *և* ***չորս*** *թվականների արմատների (***եր, չոր***) վրա ավելանալով* **րորդ** *ածանցը, ստացվել է կրկնակի՝* **րր** *(***երրորդ, չորրորդ***):*

Երորդ *ածանցն ավելանում է* **հինգ** *թվականից սկսած մինչև վերջ:*

Եթե ***երկու, երեք*** *և* ***չորս*** *թվականները հանդես են գալիս որպես բաղադրյալ թվականների վերջին բաղադրիչ, ապա դրանք դասականի կազմության ժամանակ նույնպես ստանում են* **երորդ** *ածանցը՝ տասներկու***երորդ***, քսանհինգ***երորդ***, իննսուն***երորդ***, հազար երկու հարյուր քառասուներեք***երորդ***...*

Մեկ *բացարձակ թվականով դասական չի կազմվում, դրա փոխարեն գործածվում է* ***առաջին*** *բառը:*

Երբ ***մեկ*** *թվականը բաղադրյալ թվականի վերջին բաղադրիչն է, այդ դեպքում կազմվում է* ***մեկերորդ*** *ձևը, օրինակ՝* ***քսանմեկերորդ*** *դարի սկիզբն է, հիսունմեկերորդ, հարյուրմեկերորդ և այլն:*

Դասական թվականների գրությունը — *Դասական թվականները գրվում են՝*

1. Ամբողջական բառերով՝ ***առաջին, երրորդ, իններորդ, տասնիններորդ...***

*2. Արաբական թվանշաններով, որոնցից հետո դրվում է գծիկ և գրվում է՝ **րդ** 2-րդ, 4-րդ, 9-րդ, 13-րդ, 264-րդ և այլն:*

***Առաջին** բառը գրվում է **1-ին**, կարդացվում է՝ **առաջին**, իսկ քանակական թվականի դեպքում նորից գրվում 1-ին և կարդացվում է **մեկին** (հունվարի **1-ին** նոր տարի է, **մայիսի 1-ին**՝ աշխատավորության միջազգային օրը):*

3. Հռոմեական թվանշաններով, որոնցից հետո ոչինչ չի գրվում՝ I, II, IV, V, VIII, IX, X, XI, XXV, L(50), XL (40), C-100, D-500, M (1000):

*4. Հայերեն այբուբենի տառերով՝ **Ա**-առաջին, **Ե**-հինգերորդ, **ԺԱ**-տասնմեկերորդ:*

ՄԱՆՐԹՈՒԹՅՈՒՆ — *Թվարկությունների ժամանակ արաբական թվանշաններից հետո դրվում է փակագիծ կամ միջակետ, նույնն էլ հայերեն տառերից հետո՝ 1), 2), 5), 11), 1., 2., 5., 11., և ա), բ), ե), ժա), ա., բ., ե., ժա., և դրանք կարդացվում են որպես **դասական** թվականներ:*

Առաջադրանքներ.

1. Հետևյալ բացարձակ թվականներից կազմել դասականներ՝
1, 2, 3, 7, 9, 10, 13, 19, 27, 136, 2001, 991, 369, 1259:

2. Հետևյալ դասական թվականները 3 սյունակով գրել հայկական այբուբենի տառերով, հռոմեական թվանշաններով և հայերեն բառերով.

1-ին, 2-րդ, 3-րդ, 9-րդ, 13-րդ, 10-րդ, 68-րդ, 149, 2011-րդ:

3. Դուրս գրել թվականները և առանձին սյունակներում գրել տեսակները.

Հայաստանի առաջին պատմական թանգարանն ստեղծվել է 1927 թ.: Մի քանի նկարներում պատկերված է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և հոկտեմբերի 1-ին պարսիկ հազարավոր ենիչերիների ձեռքից Երևանի ազատագրումը: Երևանի № 139 դպրոցի 3 դասվարներ իրենց դասարանների 20-ական աշակերտների տարան թանգարան և 3-3 ներս էին տանում 5 ընդարձակ սրահները նայելու: Իններորդ դասարանի Հայկին շատ դուր եկավ Աղասու նկարը, որի կողքին գրված էր Խ. Աբովյանի՝ 19-րդ դարի տաղանդավոր արձակագրի կենսագրությունը, ծննդյան և անհայտացման տարին 1809-1848, ապրիլի 2:

4. Լրացնել բաց թողած թվականները՝ տառերով.

Մաշտոցը հայոց գրերը ստեղծել է.... թվականին: Հայոց այբուբենն ունի .... տառ, որից .... ձայնավոր: Հ. Թումանյանն ու Կոմիտասը ծնվել են նույն թվին..., իսկ Աճառյանը՝ 7 տարի հետո՝ .... մարտի ....: Գրաբարով են ստեղծագործել Խորենացին, Եղիշեն, Դավիթ Անհաղթը (.... դար), Անանիա Շիրակացին (.... դար), Գրիգոր Նարեկացին (.... դար), Նահապետ Քուչակը (.... դար), Սայաթ-Նովան (.... դար):

Ըստ Հր. Աճառյանի տվյալների հայերենում հնդեվրոպական արմատների թիվը հասնում է   հազարի, ավելի ճիշտ՝

ԴԵՐԱՆՈՒՆ

*Բանավոր և գրավոր խոսքում գոյականների, ածականների, թվականների ու մակբայների կրկնությունից խուսափելու համար լեզվում գործածվում են դրանց փոխարինող, դրանց դերը կատարող բառեր, որոնք կոչվում են **դերանուններ**: Սակայն, եթե գոյականը, ածականը և թվականը անվանում են համապատասխանաբար առարկա, առարկայի որակական ու քանակական հատկանիշներ, իսկ մակբայը՝ գործողության հատկանիշ, ապա դերանունները ոչ թե անվանում են դրանք, այլ դրանք **ցույց են տալիս որևէ հարաբերությամբ**:*

*Դերանունն անվանողական արժեք չունի, նրան հատուկ է **ընդհանրական**՝ չտարբերակված իմաստը: Օրինակ, ամեն մի առարկա, նույնիսկ անձ կարելի է ցույց տալ **սա, դա**, դերանուններով (**Սա** լավ ստացավ, իսկ **դա**՝ միջակ): Կամ թե՛ լավ և թե՛ **վատ** հատկանիշ անվանվում է **այսպիսի** կամ **այսպես** դերանուններով: Օրինակ, ինչ-որ համերգից հետո ընկերդ ասում է. «**Այսպիսի** կատարում ես չէի սպասում» (չես հասկանում՝ լա՞վ, թե՞ վատ):*

*Բացի իմաստային բազմաբնույթ լինելուց՝ դերանունները չունեն նաև **ձևաբանական** միօրինակություններ, օրինակ, ոչ բոլոր դերանուններն են հոլովվում, հոլովվողների մի մասն էլ ենթարկվում է **անվանական** հոլովման, մյուս մասը՝ **դերանվանական**:*

*Դերանունները **թվի** քերականական կարգի տեսակետից ևս միօրինակ չեն. կան քերականական թիվ ունեցող և չունեցող դերանուններ:*

Ահա թե ինչու որոշ լեզվաբաններ, հիմք ընդունելով, որ դերանունները չունեն քերականական հատկանիշների ընդհանրություն ու միասնականություն, որ նրանց տարբեր խմբեր տարբեր խոսքիմասային առանձնահատկություններ ունեն՝ մի մասը հարաբերակից է գոյականներին, մյուս մասը՝ ածականներին, երրորդ մասը թվականներին, չորրորդը՝ մակբայներին,

դերանունները տարաբաժանել են նշված 4 խոսքի մասերի միջև: Ռուս քերականագիտության մեջ հարցին այս տեսակետով է մոտենում Ա. Պեշկովսկին: Հայ քերականագիտության մեջ Մ. Աբեղյանը, տարաբաժանելով դերանունները, դրանք անվանում է ***դերանուն գոյական*** *կամ* ***գոյական դերանուն*** *(ես, դու, նա),* ***դերանուն ածական*** *կամ* ***ածական դերանուն*** *(այս, այդ, այն) և այլն:*

Ժամանակակից հայերենի դերանունների համակողմանի ուսումնասիրությունն է նվիրված Ս. Աբրահամյանի «Արդի հայերենի դերանունները» ԳԱ հրատ., 1956:

Նա դերանունը սահմանում է այսպես. **«Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ»** *(էջ 62):*

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դպրոցական դասագրքերում նշվում է դերանունների 8 տեսակ՝ ***անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ*** *և* ***ժխտական:*** *Սակայն Ս. Աբրահամյանն ընդունում է 6 տեսակ. նա իրավացիորեն* ***հարցական*** *և* ***հարաբերական*** *դերանունները միավորում է, որովհետև դրանք բացարձակորեն* ***նույն բառերն*** *են, տարբերվում են միայն շարահյուսական կիրառությամբ և հնչերանգով՝* ***Ո՞վ*** *գնաց: **Ով** գնաց, թող վերադառնա: Այստեղ չկա 2* **ով**, *այն մեկն է՝ տարբեր հնչերանգներով և կիրառություններով:*

Ուրեմն ***հարցա-հարաբերականները*** *պետք է դիտել որպես մեկ տեսակ:*

Իսկ ինչ վերաբերում է ***ժխտական*** *դերանունների մերժմանը՝* ***ոչինչ, ոչ ոք, ոչ մի, ոչ մեկը,*** *որպես որոշյալ դերանունների ժխտման ձև՝ ամեն ինչ -* ***ոչինչ,*** *ամեն ոք -* ***ոչ ոք,*** *ամեն մի -* ***ոչ մի*** *և ամեն մեկը -* ***ոչ մեկը,*** *այս հարցում չի կարելի համաձայնել Ս. Աբրահամյանի հետ, որովհետև ժխտումը քերականական առանձին կատեգորիա է:*

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ – *Անձնական դերանունները ցույց են տալիս* ***անձ*** *և գործածվում են անձի անվան փոխարեն, նշանակում են* ***խոսող, խոսակից*** *կամ* ***երրորդ անձ,*** *այսինքն՝ անձ*

են ցույց տալիս **դիմային** հարաբերությամբ:

Անձնական դերանուններն իրենց արտահայտած իմաստով հավասարվում են բայերի դիմքերին՝ կազմելով **եռանդամ հակադրություն**՝ ցույց տալով խոսող, խոսակից, կամ այն անձը, որի մասին խոսվում է՝ **ես** և **եմ, դու** և **ես**:

Անձնական դերանունները ունեն **դեմքի, թվի** և **հոլովի** քերականական կարգեր.

Դեմքի կարգ – **Առաջին դեմք՝ ես, ինքս** – գործածվում են խոսողի անվան փոխարեն (**Ես** կանգնած եմ լուռ):

Ինքս եմ լուծելու իմ հարցերը:

Երկրորդ դեմք՝ դու, ինքդ – գործածվում են խոսակցի անվան փոխարեն (**Դու** պիտի հնչես, հնչես հաղթական,

Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իս.):

Ինքդ զբաղվիր քո հարցերով:

Երրորդ դեմք՝ նա, ինքը – գործածվում են մի երրորդ անձի փոխարեն, մատնացույց են անում ոչ խոսող, ոչ էլ խոսակից.

Նա ուզում էր տեսնել ողկույզի առաջին ժպիտը (Գար.):

Նա՝ ինքը կզբաղվի իր հարցով:

Դուռը բացեց **ինքը՝** վաղուցվա սպասած ընկերս (ՊԴ):

Թվի կարգ – Անձնական դերանունները ունեն 2 թիվ՝ եզակի և հոգնակի

	եզակի	**հոգնակի**
I դեմք	– ես, ինքս	մենք, ինքներս
II դեմք	– դու, ինքդ	դուք, ինքներդ
III դեմք	– նա ինքը	նրանք, ինքները, իրենք

Նշենք նաև, որ անձնական դերանվան ձևափոխությանը՝ հոգնակիացմանը և հոլովմանը բնորոշ է **տարարմատությունը**, այսինքն՝ **ես**-ի հոգնակին դառնում է **մենք, ես**-ի սեռականը՝ **իմ**, տրականը՝ **ինձ** և սրանից էլ կազմվում են մյուս հոլովները՝ **իմ-ինձ-ինձանից-ինձանով: Մենք**-ը դառնում է՝ **մեր–մեզ**...

Դու դերանվան հոգնակին ստանում է **ք** հոգնակերտ մասնիկը՝ **դուք**, իսկ **դու**-ի հոլովման արմատը փոխվում է՝ սեռական՝ **քո**, տրական՝ **քեզ** և սրանից էլ կազմվում են մյուս հոլովները: **Դուք** 2-րդ դեմքի հոգնակի թվի սեռական հոլովը նույնպես տարար-

մատ է՝ **ձեր**, տրական՝ **ձեզ**, և սրանից էլ՝ մյուս հոլովները:

Նա դերանվան ձևափոխություններից պահպանվում է միայն **ն**-ն (նա-նրա-նրան, նրանք-նրանց):

Գործող անձը կամ դեմքը չեշտելու, ընդգծելու համար հաճախ **ինքս, ինքդ, ինքը** դերանունները գործածվում են **ես, դու, նա,** դերանունների հետ՝ **ես ինքս, դու ինքդ** (նույնը նաև հոգնակի թվով): Կետադրական նշան չի դրվում:

Քաղաքավարական դիմումի դեպքում **դու**-ի փոխարեն գործածվում է **դուք** և դրա հոլոված ձևերը, որոնք գրավոր խոսքում գրվում են մեծատառերով՝ օրինակ, **Դուք**, տիար Վարդանյան, ինձ շատ օգնեցիք, հետևաբար, շատ շնորհակալ եմ **Ձեզանից**:

Այս երեկո կրկին **Դուք**
Եկաք որպես հուշ (ՎՏ):

Մենք դերանունը երբեմն գործածվում է **ես** դերանվան իմաստով, երբ գործածողը համեստաբար իր **ես**-ը չի ուզում ընդգծել, օրինակ «**Մենք** այն կարծիքին ենք, որ դերանվան ժխտական տեսակը պետք է պահել», կամ «**Մենք** ունենք հետևյալ առաջարկությունը» (փոխանակ՝ **ես ունեմ**...):

Անձնական դերանունների հոլովումը – Անձնական **ես, դու, նա, ինքը, մենք, դուք** դերանունները և ցուցական **սա, դա, նա (ինքը),** ինչպես նաև հարցահարաբերական **ով** դերանունները տարբերվում են հայերենի հոլովման մյուս խմբերից, այսինքն՝ սեռական հոլովում հոլովական վերջավորություններ չեն ստանում, այլ արմատը փոխվում է լրիվ կամ մասնակիորեն. դրանք կոչվում են **դերանվանական հոլովում.**

Ուղղ. –	ես	դու	նա	ինքը	մենք	դուք	սա	դա	ով
Սեռ. –	**իմ**	**քո**	**նրա**	**իր**	**մեր**	**ձեր**	**սրա**	**դրա**	**ում**
Տր. –	ինձ	քեզ	նրան	իրեն	մեզ	ձեզ	սրան	դրան	ում
Հայց. –	ինձ	քեզ	նրան	իրեն	մեզ	ձեզ	սա	դա	ում

Անձնական դերանվան ժամանակակից հայերենի սեռական հոլովաձևերը՝ **իմ, քո, իր, մեր, ձեր,** գրաբարում դիտվել են **ստացական դերանուններ** և ունեցել են իրենց հատուկ հոլովաձևերը:

Դերանվանական հոլովման դեպքում բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են **անվանական հոլովման ից, ով, ում** վերջավորություններով, որոնք դրվում են

տրականի վրա, ըստ որում **ես, դու, մենք, դուք** *դերանունների* **ից, ով, ում** *վերջավորություններից առաջ հավելվում է* **ն**, *ինչպես նաև՝* **ան** *մասնիկը և ստացվում է՝*

Տրակ. – *ինձ||ինձ*	*քեզ*
Բաց. – *ինձնից||ինձանից*	*քեզնից||քեզանից*
Գործ. – *ինձնով||ինձանով*	*քեզնով||քեզանով*
Ներգ. – *ինձնում||ինձանում*	*քեզնում||քեզանում*
մենք	*դուք*
մեզնից||մեզանից	*ձեզնից||ձեզանից*
մեզնով||մեզանով	*ձեզնով||ձեզանով*
մեզնում||մեզանում	*ձեզնում||ձեզանում*

(***ինքս, ինքդ, ինքներս, ինքներդ***) *անձնական դերանունները չեն հոլովվում, իսկ* **նրանք** *և* **իրենք** *դերանունները հոլովվում են անվանական* **ք>ց** *հոլովման սովորական հարացույցով* (**նրանք-նրանց, իրենք-իրենց**)*:*

Անձնական դերանունների կիրառությունը – *Անձնական դերանունները նախադասությունների մեջ հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական բոլոր պաշտոններով.*

Ենթակա – ***Ես*** *քեզնից դառնացած հեռացա,*
Ես *քեզնից հեռացա ու լացի (ՎՏ):*

Ստորոգելիական վերադիր – ***Ես*** ***եմ*** *հիմա մի պոետ, և*
Իմ *անունը Չարենց (ԵՉ):*

Հատկացուցիչ – ***Իմ*** *աչքերի առաջ պիտի փովի չուտով*
Մանկության կանչող օրորանը (ՀՍ):

Մատուցման և չահի կամ օգուտի խնդիր –
Քեզ *եմ տալիս այգիս, ինչ որ կուզես արա,*
Բոլորը ***քեզ*** *լինի,* ***քեզ*** *համար եմ պահել (ՀՍ):*

Այսօրվանից հանձնում եմ ***քեզ****,*
Հայոց լեզուն հազարագանձ (ՍԿ):

Ուղիղ խնդիր – *Ամեն առավոտ հուշերս նորից*
Ինձ *տանում են այն զմրուխտե հեռուն (ՀՍ):*

Ասում են, թե դու այնպես մոռացել ես ***ինձ*** *այնպես,*
Որ երբ անունս են տալիս, հազիվ միտքդ եմ գալիս (Ավ. Իս.):

Հանգման խնդիր – *Մեքենան մոտեցավ* ***ինձ****, և դժվարությամբ*

*Հասանք **ձեզ** (Մամ.):*

Վերաբերության խնդիր – ***Քո** մասին չատ է խոսվում, և ընկեր*
*ներդ բամբասում են **քեզանից**:*

Ներգործող խնդիր – *Լեռներ, ներշնչված դարձյալ **ձեզանով**՝*
Թնդում է հոգիս՝ աշխուժով լցված (ՀԹ):

Անջատման խնդիր – *Հովե՛ր, **ինձնից** բարև տարեք,*
Բարև տարեք իմ յարին (Ժող.):

Միջոցի խնդիր –***Ինձանով** ու Խնուսա խաս կամուրջով*
Հավքս հասավ երամին (Սասուն Գրիգորյան):

Տեղի պարագա – ***Մեզանում** գժեր չկան (Ոգնի):*

Կազմվում է նաև սեռական + մեջ կապով՝
Թույլ տուր ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ,
*Մարիր **իմ մեջ**, մարիր **իմ մեջ** ցնորք ու հուշ... (ՎՏ):*

*Ինչպես երևում է վերջին օրինակից (... Մարիր **իմ մեջ** ցնորք ու հուշ) անձնական դերանունները լայնորեն հանդես են գալիս թե՛ նախադիր և թե՛ ետադիր կապերի հետ և լինում են նախադասության տարբեր անդամներ:*

Նախադրության օրինակներ.

***Առանց** ինձ (քեզ, նրա) հնարավոր չէ գործը գլուխ բերել:*

***Բացի** ինձանից (քեզանից, նրանից, մեզանից, ձեզանից, նրանցից) ուրիշ մարդիկ էլ էին հրավիրված հանդեսին:*

***Մինչև** ինձ (քեզ, նրան, մեզ, ձեզ, նրանց) հասնելը պետք է հանդիպեին նախ տնօրենին:*

***Հանձին** Ձեզ ես լավ բարեկամ ունեմ:*

Ետադրությունների օրինակներ.

*Ինձ (քեզ, նրա, մեզ, ձեզ, նրանց) **համար** դժվար չէ այդ հարցը լուծելը:*

***Հ ի շ ի՛ ր** – Սխալ են բանավոր խոսքում **իմ համար**, **քո համար**, **մեր համար**, **ձեր համար** ձևերը, որովհետև **համար**, **վրա** կապերը դրվում են ոչ թե սեռական, այլ **տրական** հոլովի հետ:*

*Այդ ծանրությունը վերցնում եմ **ինձ** վրա, վերցրու **քեզ** վրա և ոչ թե **իմ**, **քո**:*

*Իսկ **մասին**, **շնորհիվ**, **վերաբերյալ**, **հանդեպ**, **տակ**, **մեջ** կապերը դրվում են անձնական դերանունների **սեռական** հոլովի վրա՝*

***Քո մասին** չատ է խոսվել: Իմ մասին գրել են թերթերում:*

***Ձեր** շնորհիվ հասավ այդ բարձունքին: **Նրա տակ** չատ բան կա:*

Իմ հանդեպ լավ չվարվեցին: **Մեր մեջ** լավ մարդիկ էլ կան:

Անձնական դերանունները կարող են լինել նաև **կողմնակի** անդամներ: Օրինակ, «Աշխատիր, որ հյուրերը չզղջան **իրենց** գալու համար» (**իրենց** կողմնակի ենթակա է): **Մեզանից** հեռանալուն պես, մեքենա նստեցին (**մեզանից** կողմնակի անջատման խնդիր է):

* * *

Անձնական դերանվան 2-րդ դեմքը՝ **դու**- (**դուք**), մատնացույց է անում նաև ոչ անձ.

(**Դու**, Արագա՛ծ ալմաստ վահան...(Ավ. Իս.):
Իմ սուրբ Հայրենիք, **դու** սրտիս մեջ ես...
Դուք էլ ինձ հետ ձեն տվեք.
Իմ դարդերին թայ սարեր (ՀԹ):
Դուք վեհ վկաներ մեր անմահ փառքի... (Ավ. Իս.):

Իսկ անձնական դերանվան 3-րդ դեմքը՝ **նա**-ն հավասարապես և՛ անձ է ցույց տալիս (**նա** գնաց համալսարան) և՛ ոչ անձ (**նա** (շունը) իմ սիրած կենդանին է): Գոյականը խոսքի մաս է. **նա** անվանում է առարկա: Արարատը մեր սուրբ լեռն է. **նա** մեր երկրի խորհրդանիշն է:

Խորհուրդ է տրվում ոչ անձի դեպքում գործածել **այն** կամ **դա** դերանունները (**Այն** մեր երկրի խորհրդանիշն է):

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել անձնական դերանունները, որոշել հոլովները և նախադասության ի՞նչ անդամ լինելը:

Թագավորը գովեց յուր զգուշությունը և դառնալով Նրան ու Վահրամ սեպուհին՝ ավելացրեց.

— Իմ իշխանները թողեցին ինձ միայնակ և ամոթահար, այդ պատճառով ես մտա Սևան իբրև կամավոր գերի: Եթե դուք կհաջողիք ձեր ձեռնարկության մեջ և կկարողանաք սրբել այն արատը, որ դրին մեր դրոշի վրա տիրադրուժ իշխանները, այն ժամանակ ես նորեն կելնեմ իմ բանտից և կպսակեմ ձեր հաջողությունը իմ արշավանքներով: Այդ օրվանից ես կսիրեմ ձեզ և իմ դրոշը կհանձնեմ ձեզ ու ձեզանից կպահանջեմ հասկացնել նրանց, որ իրենք սխալ են և նրանց գործերը՝ անհաջող: (Ըստ Մուրացանի):

2. Դուրս գրել անձնական դերանունները և որոշել դրանց դեմքը, թիվը, հոլովը և թե ինչ կապերի հետ են գործածվել.

Արդյոք դու միշտ սիրալի՞ր ես հյուրերիդ նկատմամբ: Ահա թակեցին դուռը, քեզ մոտ են եկել ընկերներդ: Նրանք քո հյուրերն են: Առաջին իսկ րոպեից նրանք պետք է զգան, որ դու ուրախ ես նրանց գալու համար...

Եթե տրամադրությունդ վատ է, աշխատիր նրանց ցույց չտալ, թե չէ, կարող են զղջալ իրենց գալու համար: Օգնիր նրանց հանելու և կախելու իրենց վերարկուները, հետո նրանց ուղեկցիր քո սենյակը և թույլ տուր, որ առաջինը նրանք ներս մտնեն: Եթե սենյակ է ներս մտնում քեզանից մեծը, ընկերոջդ ծանոթացրու նրան:

Հյուրեր ընդունելիս աշխատիր զբաղվել նրանցով և քեզ պահել այնպես, որ նրանք քեզ մոտ ուրախ և հաճելի ժամանակ անցկացնեն: Մտածիր նրանց և ոչ թե քո մասին: Նույնը դու խորհուրդ տուր քո փոքրերին, նրանց էլ սովորեցրու հյուրեր ընդունելու կարգը (Մամուլից):

3. Նախադասություններ մեջ հոլովիր դու և դուք դերանունները:

4. Նախադասություններ կազմիր ինքս, ինքդ և իրենք դերանուններով:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ — *Ցուցական դերանունները մատնացույց **են** անում չտարբերակված **անձ, առարկա** կամ **հատկանիշ**՝ տարածական ու ժամանակային հարաբերությամբ:*

*Ցուցական դերանունները հարաբերակից են գոյականներին (**սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք**), ցույց են տալիս թե՛ առարկա և թե՛ անձ:*

*Ածականներին հարաբերակից են **այս, այդ, այն** դերանունները, որոնք հիմնականում անփոփոխ դրվում են գոյականների վրա՝ լինելով որոշիչ:*

*Թվականներին հարաբերակից են **այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ** դերանունները, որոնք հավասարաչափ դրվում են և՛ գոյականների վրա՝ դառնալով որոշիչ, և՛ բայերի վրա՝ դառնալով չափ ու քանակի պարագաներ:*

*Մակբայներին հարաբերակից են **ձև** (**այսպես, այդպես, այն-***

պես, նույնպես) **տեղ** (**այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ**) և **չափ ու քանակ** (**այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, նույնչափ**) ցույց տվող դերանունները:

Ցուցական դերանունները թվով ամենաշատն են՝ 30 դերանուն, որոնցից 9-ը պարզ են կամ արմատական՝ **սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, մյուս**, իսկ 21-ը՝ բարդ կամ ածանցավոր, որոնք կազմվում են **այս, այդ, այն, նույն** արմատական դերանուններից և **պես, պիսի, քան, տեղ, չափ** ածանցներից ու բառերից:

Ցուցական դերանունների մտապահման լավագույն միջոցն է՝

այս
այդ ——► } + պես, պիսի, քան, տեղ, չափ (4x5= 20)
այն
նույն

սլաքներով 4 դերանունները կապում ենք 5 ածանցներին ու բառերին, և կստանանք՝

այսպես, այդպես, այնպես, նույնպես,
այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի
այսքան, այդքան, այնքան, նույնքան,
այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ,
այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ:

Ստացված 20 դերանուններին հավելվում են նշված 9 պարզերը և **միևնույն** բաղադրյալ դերանունը:

Այժմ անցնենք դրանց իմաստային և գործառական քննություններին.

սա, դա, նա դերանունները մատնացույց են անում թե՛ առարկա և թե՛ անձ:

Համեմատենք հետևյալ օրինակները՝

Մի նայիր աչքերիս **Սա** ոչինչ,
Սա կանցնի այս հիմար արցունքը (ՍԿ):
Մի օր **սա** եկավ, թե չորան Ջատին
Ոչխարը թաքուն **իմ** հանդն է քաշել (ՀԹ):

Առաջին նախադասության մեջ **սա** դերանունը **իր** է մատնացույց անում, իսկ երկրորդում՝ **անձ**:

Նույնը նաև՝ **Դա** այն է, ինչ դու էիր ուզում:
Դա ո՞վ է, որ քեզ խելք-խրատ տա:

Սա, դա, նա, դերանուններն ունեն դիմային նշանակություն՝ մատնացույց անելով առարկան ըստ առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքի նկատմամբ ունեցած **տարածական** հարաբերության. **սա** դերանունը ցույց է տալիս **խոսողին մոտ** առարկա (**Սա** տար ուսուցչանոց), **դա** դերանունը ցույց է տալիս **խոսակցին մոտ** առարկա (**Դա** տուր ինձ), իսկ **նա** դերանունը ցույց է տալիս առաջին և երկրորդ դեմքից հեռու առարկա, կամ այդպես է մտածվում (**Նա** կտեղափոխենք միջանցք):

Սա, դա, նա, դերանունները ենթարկվում են **դերանվանական** հոլովման, սրանց սեռականն ուղղականից չի կազմվում, դրանք **տարարմատ** ձևեր են՝ **սա-սրա, դա-դրա, նա-նրա,** տրականը կազմվում է նույն սեռականից՝ **ն**-ի հավելումով, իսկ բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են **անվանական** հոլովման նման՝ **ից, ով, ում** վերջավորություններով:

Որպես գոյականներին հարաբերակից բառեր, այս դերանուններն ունեն նաև հոգնակի ձևեր, ըստ որում հոգնակիները կազմվում են տրական հոլովին հավելելով **ք** հոգնակերտը՝ **սրանք, դրանք, նրանք,** որոնք հոլովվում են **ց** հոլովմամբ (**սրանց, դրանց, նրանց**):

Չմոռանանք, որ **հայցական** հոլովում՝ **իրի** դեպքում նման են **ուղղականին** (**Սա** տուր ինձ, **դա** տուն տար, **նա** տեղափոխիր), իսկ անձի դեպքում՝ **տրականին** (**Սրան** ուղարկիր կավիճ բերելու: **Դրան** կանչիր գրատախտակի մոտ, իսկ **նրան** տուն ուղարկիր):

Անցնենք **այս, այդ, այն** դերանուններին: Այս 3 դերանուններն արտահայտում են և՛ հատկանշանային և՛ առարկայական նշանակություն՝ նախադասություններում հանդես գալով ածականին և գոյականին համարժեք շարահյուսական պաշտոններով:

Այս դերանուններն էլ նախորդների նման ունեն տարածական իմաստ. **այս** դերանվամբ մատնացույց է արվում խոսողին մոտ գտնվող առարկա կամ անձ (**Այս** գիրքը հանձնիր գրադարանին: **Այս** տղան լավ է սովորում): **Այդ** դերանունը մատնացույց է անում խոսակցին մոտ գտնվող առարկա կամ անձ (**Այդ** գիրքը ինձ տուր: Այդ երեխան շատ պարտաճանաչ է): **Այն** դերանունը մատնանշում է խոսողից և խոսակցից հեռու գտնվող առարկա կամ անձ (**Այն** գիրքը, որ խոստացել ես, չմոռանաս: **Այն** մարդը, որ խոստացավ, խոստումը չկատարեց):

Ածականական կիրառությամբ հանդես գալիս այս, այդ, այն դերանունները կատարում են որոշչի շարահյուսական պաշտոն.

Հազար չեփոր հնչեն թող այն առավոտ,
Հազար թմբուկ խփեն թող այս առավոտ (ԳՄ):

Ախ այս կարոտը՝ հայի կարոտը անթարգմանելին.
Ես ինչպես ճեղքեմ այս թանձրությունը,
Ու թեև ճեղքեմ էլ՝
Նույն այդ կարոտի անվերջ կարոտը ինչպես մոռմոքամ (ՍԿ):

Այն ի՞նչ փողեր են հնչում Աշտիշատից և Խութից,
Քաջ Վարդանն է մեզ կանչում Հացեկացից, Նեմրութից (ՍԳ):

Գոյականներին հարաբերակից լինելիս այս, այդ, այն դերանունները չեն հոլովվում, հոգնակի թիվ չունեն և նախադասություններում մեջ կարող են հանդես գալ միայն ենթակայի, ուղիղ խնդրի և ստորոգելիական վերադրի շարահյուսական պաշտոններով:

Ենթակա – Մի ահավոր գուշակություն էր այս (ՆԶ):
Այդ նորակառույց է այս պողոտայում (մամուլ):
Այն գրավում էր բոլորիս ուշադրությունը (ՊԴ):
Ուղիղ խնդիր – Ես այն եմ սիրում (ՀՀ): Բոլորս գիտեինք այս:
Քննիչն էլ հենց այդ էր պահանջում (մամուլ):
Ստորոգելիական վերադիր – Այժմ խնդիրն այս է:
Բոլորիս նպատակն էլ այդ է:
Հայրենասիրությունն այն է, որ մարդ, արհամարհելով ամեն տեսակ վտանգներ, կռվելու գնա առաջին շարքում, իբրև հասարակ զինվոր (Ստ. Զորյան):

Առաջադրանքներ

1. Թվարկել ցուցական դերանունները և ասել, թե ի՞նչ են ցույց տալիս։

2. Դուրս գրել ցուցական դերանունները, գրել, թե նախադասության ի՞նչ անդամներ են և ի՞նչ են մատնացույց անում։

Գյուղն էր նրան պահում. մի օր մեկի տանը, մյուս օրը մյուսի գոմում կամ մարագում (ԱԲ): Ինձ դուր են գալիս այդպիսի մարդիկ, նրանց նկատմամբ այդքան խիստ մի եղեք (Աք. Ավ.): Դա

նեղ ճանապարհ է, դրանով մի՛ գնացեք (ՄԳ)։ Սա արյուն քարն է. սրա տակ՝ գետի այն կողմից եկավ Նադիր շահը (ՍԽ)։ Ես էլ ահա գնում եմ այնտեղ՝ պարտքս կատարելու։ Չնայած հայրս չէր թողնում, բայց այդպիսի ժամանակ հայ տղամարդը կարո՞ղ էր տանը նստել. դա չէ հայրենասիրությունը, այլ այն, որ մարդ առաջին շարքերում կռվի այնպես, ինչպես հերոսը։ — Այդպես չէ՞, հայրենակիցներ (Ստ. Զորյան)։

Անցյալում շատ էր ընդունված ու տարածված այդ։ Նա ամաչում էր, որ այդպիսին էր իր հարսնացուի հայրը, այդպիսի տեսք ու խելք ուներ (ՊՂ)։

Գարունը այնքան ծաղիկ է վառել.
Գարունը այնպես պայծառ է կրկին...
Այնպես գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում (ՎՏ)։

Այս գիշեր նորից լալիս է քամին... (ՎՏ)։

... Հեռացի՛ր, մոռացի՛ր մի՛ հիշիր,
Ինձ այդպես քրոջ պես մի գթա (ՎՏ)։

3. Սա, դա, նա, *դերանունների բոլոր հոլովներով կազմել նախադասություններ։*

4. Կազմել 5-ական նախադասություն, որոնցում այս, այդ, այն *դերանունները հանդես գան ածականական և գոյականական կիրառություններով, գոյականների տարբեր պաշտոններով։*

5. *Բերված օրինակներից դուրս գրել* այսպիսի, այդպիսի, այնպիսի *և* այսպես, այդպես այնպես *դերանունները և որոշել, թե ո՞ր խոսքի մասերի կիրառմամբ են հանդես եկել։*

Հայրենի երկիր, ժողովուրդ, երիտասարդություն — այսպիսի բառեր են լսվում նրանց բերանից։ Նա ինչով է մեղավոր, որ բնությունից այդպես է ստեղծված։ Նա գիտեր արդեն, որ այդպես էլ պետք է լինի։ Երբեմն նրա միտքը այնպիսի թռիչքներ էր գործում, որ հազիվ կարողանում էի երևակայությամբ հասնել նրան։ Ինչպես կարող էի հանդգնել մտածել, որ այդպիսի ազնիվ մարդը կարող է այդպես մտածել մեկ ուրիշի մասին... Եվ քաղաքից նա դուրս եկավ այնպես, ինչպիսին եղել էր։ Նա այնպես չէր խոսում, այնպիսի մտքեր չէր արտահայտում, ինչպես ուրիշները։ Այդպիսի

մարդկանց էլի եմ հանդիպել, որոնք հենց այդպես էլ եղել են ողջ կյանքում:

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ – Հայերենի փոխադարձ դերանուններն են՝ ***միմյանց, իրար, մեկմեկի*** (***մեկմեկու***). վերջին ձևը ժողովրդախոսակցական է:

Փոխադարձ դերանունները գործածվում են գործողությամբ փոխադարձաբար իրար հետ կապված առարկաների կամ անձերի անունների փոխարեն.

Ու ***իրար*** բռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դժվար է իբրև հաղթել ***մեկմեկի*** (ՀԹ):

Փոխադարձ դերանունները եզակի թիվ և ուղղական ու ներգոյական հոլովներ չունեն: Սրանց ***սեռական, տրական*** և ***հայցական*** հոլովները ***ձևով նույնն են,*** միայն պաշտոններով են տարբեր. սեռականը լինում է հատկացուցիչ, տրականը՝ հանգման կամ մատուցման խնդիր, հայցականը՝ ուղիղ խնդիր.

Սեռ. – Արամն ու Աշոտը **իրար** կոշիկներ են հագնում – հատկ.
Տր. – Արամն ու Աշոտը **իրար** հանդիպեցին այգում – հանգում.
Հայց.– Արամն ու Աշոտը **իրար** շատ են հարգում – ուղիղ խնդիր:

Նախադասության մեջ լինում են միայն լրացումներ. ենթակա չեն լինում, որովհետև ***ուղղական*** հոլով չունեն: Եզակի թիվ չունեն, որովհետև դրվում են մեկից ավելի անձերի կամ առարկաների փոխարեն:

Սրանց բացառական և գործիական հոլովները կազմվում են **ից** և **ով** վերջավորություններով, այսպես՝

Ուղղ. –	–	–	–
Սեռ. –	միմյանց	իրար	մեկմեկի (մեկմեկու)
Տր. –	միմյանց	իրար	մեկմեկի (մեկմեկու)
Հայց. –	միմյանց	իրար	մեկմեկի (մեկմեկու)
Բաց. –	միմյանց	իրարից	մեկմեկից (մեկմեկուց)
Գործ. –	միմյանցով	իրարով	մեկմեկով
Ներգ. –	–	–	–

Բերենք գրական օրինակներ,

*Սարեր ու ձորեր **իրար** երեսի նայում են ժպտում ամպի մշուշով (ՎՄ) — Հատկացուցիչ:*

*Հարևանի կանայք **իրար** օձիք են պոկոտում — Հատկացուցիչ:*

*... **Իրար** են Հասնում Թափով մոլեգին (ՀԹ) — Հանգման խնդիր:*

*... Որքան ենք մենք խաղացել, **իրար** սիրել ու ծեծել (ՀԹ) — ուղիղ խնդիր:*

***Թե իրարից** ի՞նչ են ուզում, մարդ բան չի Հասկանում (ՄԳ)— անջատում:*

Ջունաչին փչեց կոխի եղանակ:

*ԱՀել ու ջաՀել **իրարով** անցան (ՀԹ) — ձևի պարագա:*

***Իրարով** են գործը գլուխ բերում — միասնության պարագա:*

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել փոխադարձ դերանունները, որոշել Հոլովները.

Կանչում են, մայում գառն ու մարին

Անուշ ձայներով փնտրում միմյանց (ՎՄ):

Մեզ կյանքը նետեց միմյանցից Հեռու,

Եվ մենք չուզեցինք մեկմեկու կանչել (ՎՏ):

Սկսեցին իրար կտրելով, իրար ուղղելով, պատմել եղելությունը:

Հարցնում էին իրար, թե որտեղից կարող էր ցավը պատաՀած լինել (ԱԲ):

Մոտ քսան մետր բարձրության վրա, մեկմեկու պոչից բռնելով, մի կենդանի շղթա կազմեցին (Թարգմ.): Որոշեցին սպասել և տեսնել, թե նրանք չե՞ն բաժանվում իրարից (Թարգմ.): Պիտի մաչենք իրար՝ պարսիկը մեզ, մենք՝ պարսիկին (ԴԴ): Ծիծաղում էինք իրար վրա, ծաղրում էինք իրար, ձեռ առնում միմյանց (Ն-Դ): Թաղի կանայք իրար ձայն տալով վազվզում են (Ն-Դ): Իրար Հետևից անցնում են վազողները (ՆԶ):

2. Միմյանց և մեկմեկի դերանունների բոլոր Հոլովներով կազմել մեկական նախադասություններ:

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ — ***Որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների կամ անձերի քանակական ամբողջությունը կամ առանձին առարկայի ամբողջությունը:***

Որոշյալ դերանուններն են՝ ***ամեն, ամեն մի, ամեն մեկը, ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), ամեն ինչ, յուրաքանչյուր***

ոք, ամեն ոք, ողջ(ը), ամբողջ(ը), համայն, ամենայն:

Ըստ իրենց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների, այս դերանունները բաժանվում են 3 խմբի՝ (տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 109).

*1. **Դերանուններ**, որոնք ցույց են տալիս առարկաների, նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը. դրանք են՝ **ամենքը, բոլորը**:*

*2. **Դերանուններ**, որոնք ցույց են տալիս ամբողջության մեջ մտնող անձերն ու առարկաներն առանձին-առանձին՝ **ամեն, յուրաքանչյուր, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի, յուրաքանչյուր ոք**:*

*3. **Դերանուններ**, որոնք ցույց են տալիս առանձին առարկայի ամբողջությունը՝ **ողջ, ամբողջ, համայն, ամենայն**:*

Ըստ իմաստային կիրառության որոշյալ դերանունները բաժանվում են առարկայական և հատկանշանային խմբերի.

*Հատկանշանային (**ամեն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ամենայն**), որոնք նախադասության մեջ հանդես են գալիս ածականին հատուկ շարահյուսական պաշտոնով, այսինքն՝ չեն հոլովվում, հոդ չեն ստանում և որոշչի պաշտոն են կատարում: Օրինակներ՝ **Բոլոր** մարդիկ են ձգտում խաղաղության:*

***Ամբողջ** կյանքը ժողովրդական երգարվեստին նվիրած Կոմիտասը իր վերջին հանգրվանը գտավ հայրենի հողում (ԽԲ)...*

*Անցնում է, հսկում սեղաններն **ամեն** (ՀԹ):*

*Ես **ամեն** գիշեր գնում եմ այնտեղ,*
Կանգնում եմ այնտեղ ու ողբանում (ՎԴ):
Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են Աստված, երկիր ու երկինք,
*Պիտի փլվի **ամեն** պատնեշ, **ամեն** սուտ,*
Պիտի երթանք, պիտի երթանք մեր էրգիր (ՍԿ):
Առ իմ հոգին ու իմ սիրտը նվեր
Հանուն քո փառքի՝ հողում համայն (ԳԷ):

Նշված հատկանշանային դերանունները կարող են հոդ ստանալ և գործածվել գոյականաբար, այս դեպքում հոլովվում են և դառնում ենթակա, խնդիրներ ու պարագաներ.

*Ինչքան որ հուր կա իմ սրտում — **բոլորը** քեզ,*
*Ինչքան կրակ ու վառ խնդում — **բոլորը** քեզ...*

Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա՝
*Դու չմրսես ձմռան ցրտում — **բոլորը** քեզ* (ԵՉ)։

*Չարենցի «Տաղարանից» բերված այս քառատողում **բոլոր** հատկանշային դերանունը հոդ է ստացել և հանդես է եկել 2 կիրառությամբ՝ երեքը ենթակայի պաշտոնով (**բոլորը քեզ**), մեկը՝ ուղիղ խնդրի (**բոլորը տամ**)։*

*... **Ողջը** կդառնա կրակի բաժին* (ենթակա)։
Սեղան, մահճակալ, գորգ ու տեղաշոր (ՆԶ)։

*Անձի և առարկայի իմաստ արտահայտող **որոշյալ** դերանուններն են՝*

ամեն, ամենքը, ամեն մեկը, բոլորը, յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ամեն ինչ, ողջը, ամբողջը։

*Այս դերանուններն ունեն հոլովման լրիվ հարացույց, ենթարկվում են անվանական ի հոլովման։ **Ամեն ոք, յուրաքանչյուր ոք** դերանունները չեն հոլովվում (**Ամեն ոք** աշխատում է իր գործն արդար կատարել)։*

Բերենք օրինակներ հոլովվող դերանուններով.

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, ամենին մոռանալ,
Չըսիրել, չըտենչալ, չըկանչել, հեռանալ (ՎՏ)։

*Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք հոգի, որոնցից **ամեն մեկը** մտքի մեջ հյուսում էր իր նախշը* (ԱԲ)։

***Ամեն** տեսակ երգ երգեցի — **ամենից** լավ տաղն է էլի* (ԵՉ)։

***Յուրաքանչյուրս** մեր բաժին կշտամբանքն ու ապտակներն ստացանք, բայց թե ինչի համար էինք թշնամացել, չասացինք։*

Առաջադրանքներ.

***1.** Նախադասություններ կազմեցեք այն որոշյալ դերանուններով, որոնք կարող են գործածվել թե՛ առարկայական և թե՛ հատկանշային իմաստներով։*

***2.** Նախադասությունների մեջ լրիվ հարացույցով հոլովել հետևյալ որոշյալ դերանունները.*

ամբողջ(ը), բոլոր(ը), ամեն ինչ, յուրաքանչյուր։

***3.** Դուրս գրել որոշյալ դերանունները, որոշել դրանց շարահյուսական պաշտոնները.*

Ամեն գիշեր երկնակամարում երևում են պայծառ աստղեր. ամենքն են նկատում այդ: Այդ մի սարսափելի հարված էր. նրա բոլոր հույսերը խորտակվեցին. բոլորն էին զգում դա: Կարծես թե մի ամբողջ բլուր էր շարժվում գետի վրա... Ողջ ժողովուրդը ցնծությամբ ընդունեց այդ լուրը, և յուրաքանչյուրը գոհ էր դրա համար: Այդ գաղափարներն իրենց հաղթական երթն են կատարում համայն աշխարհում: Ամենքինն ես, իմը չես, Ամենքին ես սիրում դու, Ախ, ոսկով են գնում քեզ, Անհաս ցնորք իմ հոգու... (ՎՏ):

Ցուրտ հոկտեմբերն է ծեծում իմ դուռը, բոլոր լուսամուտները փակում եմ, բոլորին տուն եմ հրավիրում, յուրաքանչյուրից մի բան եմ խնդրում ամբողջ ձմեռն ապահով անցկացնելու համար:

Ողջ գիշեր հովը պարեց, ամբողջ տնակը կարծես շարժվում էր:

Նրան թվաց, թե ջուրն արտացոլում է ամեն ինչ:

Բոլոր հարցերին պատասխանում էր ամենայն ճշտությամբ:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ — ***Անորոշ դերանունները ցույց են տալիս անորոշ, չտարբերակված անձ, առարկա կամ անձի ու առարկայի անորոշ հատկություն, քանակ:***

Հայերենի անորոշ դերանուններն են՝ ***ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, ոմանք, մեկը, մի քանի, մի քանիսը, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, ովևէ, երբևէ, երբևիցե, որևիցե, մեկն ու մեկը, մի:***

Անորոշ դերանունները հարաբերակցվում են ***գոյականին՝ մեկը, մեկնումեկը, ոմանք,*** *հոլովվում են (մեկը-մեկի, մեկնումեկը-մեկնումեկի, ոմանք-ոմանց) և դառնում են նախադասության* ***ենթակա*** *(****Ոմանք*** *այս մասին սխալ կարծիք ունեն:* ***Մեկն*** *իր կամքին ինչ ասես անի, մյուսը խոսելու իրավունք չունի — ՀԹ: Այնտեղ՝ վերջում,* ***մեկը*** *խոսում է),* ***հատկացուցիչ*** *(****Ոմանց*** *պատասխանները ճիշտ չեն:* ***Մեկի*** *աշխատանքը «գերազանց» է գնահատվել),* ***մասնուցման խնդիր*** *(Գովասանագիրը հանձնվեց* ***մեկին****),* ***ուղիղ խնդիր*** *(Դասախոսը գնահատեց* ***մեկին****) և այլն:*

Անորոշ դերանունները հարաբերակից են ***ածականներին****. այս դեպքում* ***որոշչի*** *շարահյուսական պաշտոն են կատարում. դրանք են՝* ***այլ, որոշ, այլևայլ, ինչ-ինչ, ինչ-որ, մի, որևէ, որևիցե, այսինչ, այնինչ.***

Օրինակ, ***Ինչ-ինչ*** *մարդկանց մոտ* ***ինչ-որ*** *բաներ սխալ են:* ***Որևէ*** *հարցում չե՞ն սխալվել արդյոք:*

Ուրիշ *դերանունը հավասարապես և որոշչի պաշտոն է կատարում (****Ուրիշ*** *բան եմ ասում:* ***Ուրիշ*** *երգեր են հնչում իմ հոգում – ՎՏ). և՛ ունի* ***գոյականական*** *իմաստ (Այդ մասին էլ թող* ***ուրիշը*** *պատմի: Ինձ չես սիրում,* ***ուրիշին, ուրիշին*** *ես սիրում դու – ՎՏ):*

Մի քանի *դերանունը հարաբերակից է* ***թվականներին*** *(****Մի քանի*** *մարդ էր եկել ժողովին):*

Երբևէ, երբևիցե *դերանուններն էլ հարաբերակից են* ***մակբայներին*** *(****Երբևիցե*** *խոսվե՞լ է այդ մասին:* ***Երբևէ*** *հանդիպե՞լ ես նրան):*

Անորոշ դերանունները կազմությամբ լինում են՝ ***պարզ, բարդ և բաղադրյալ:***

Պարզ *դերանուններն են՝* ***ոմն, մեկը, ուրիշ, այլ, որոշ, մի:***

Բարդ *դերանունները կազմվում են երկու դերանուններից (****այսինչ, այնինչ, մի քանի, մի քանիսը, մեկն ու մեկը, ինչ-որ մեկը****):*

Որևէ, երբևէ, ինչևէ *դերանունները կցական են. կազմված են. որ+ և + է, երբ + և+ է, ինչ + և + է բառերից, իսկ* ***որևիցե, ինչևիցե*** *և* ***երբևիցե*** *դերանունները կազմված են* ***որ+*** *և,* ***ինչ*** *+ և,* ***երբ****+և բառերից և գրաբարյան* **իցէ** *վերջավորությունից, որն այժմ գրվում է* **իցե** *ձևով:*

Ճիշտ է նկատել Լ. Եզեկյանը, ***ինչևէ, ինչևիցե*** *անորոշ դերանունները հաճախ կարող են եղանակավորող բառերի արժեք ստանալ. օրինակ՝ ինչևէ (ինչևիցե), անցածը վերադարձնել հնարավոր չէ (տե՛ս* ***Լ. Եզեկյան,*** *«Հայոց լեզու», ԵՊՀ, 2005, էջ 265):*

Առաջադրանքներ

1. Դուրս գրել անորոշ դերանունները, որոշել նրանց շարահյուսական պաշտոնները.

Մի ոմն թագավոր չինեց գեղեցիկ դարպաս: Լեռնին ուղեկցում էր կանանց ու տղամարդկանց մի խումբ. ոմանք գանգատվում էին, թե, պահեստապետը հացահատիկ չտվեց, ուրիշները դժգոհում էին, թե բոստանատեղ չունեն, ոմանք էլ ոչ մի կարիք չունեին և հենց այնպես պահանջում էին մի որևէ բան (ՆԶ):

Երևում էին միայն մի քանի պատուհաններ: Բոլորը սպասում էին ինչ-որ բանի և չգիտեին երբևէ կբերեն այն կամ որևէ բանով կփոխանակե՞ն, ինչևիցե, սպասում էին:

Մի քանիսը պառկած էին գետափին, մի քանիսն էլ լողանում

էին: Մեկը ոգևորված մի բան էր պատմում, մյուսները լսում էին: Ոմանք սովոր են պղտոր ջրում ձուկ որսալ: Մեկնումեկը, երբևիցե տեսած կլինի որևէ հետաքրքիր բան:

Եվ ուրիշ է կարոտս հիմա,
Այլ սիրով եմ այսպես դժգունել,
Ու հոգուս ճամփեքի վրա
Վրնջում են ուրիշ նժույգներ (Գ. Մահարի):

2. Նախադասությունների մեջ լրիվ հարացույցով հոլովել հետևյալ անորոշ դերանունները.

մի քանիսը, ոմանք, մեկը, մեկն ու մեկը:

3. Հետևյալ անորոշ դերանունները գործածել նախադասությունների մեջ.

ուրիշ, այլ, ինչ-որ, որոշ, երբևէ, երբևիցե, այսինչ, ինչ-ինչ, մի:

ՀԱՐՑԱՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ — *Լեզվաբանական տարբեր աշխատություններում ու տարբեր դասագրքերում այս դերանունները ներկայացված են ինչպես առանձին, այնպես էլ՝ միասին:*

Լեզվաբան Սերգեյ Աբրահամյանը, ելնելով այն բանից, որ հարցական և հարաբերական դերանունները բացարձակապես նույն բառերն են և նախադասություններում չարահյուսական նույն պաշտոններն են կատարում, իրավացիորեն դրանք չի տարանջատում: Այդ դերանունները նա սահմանում է այսպես՝ **«Հարցական-հարաբերական (բացարձակ անորոշ) կոչվում են այն դերանունները, որոնք ցույց են տալիս առարկա և հատկանիշ բացարձակ անորոշ կերպով»:**

Ինչպես ասվեց, հարցական ու հարաբերական դերանունները բացարձակ նույն ***բառերն*** *են՝* ***ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչչափ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ւր, որքա՞ն, որչա՞փ, որպիսի՞, ո՞րերորդ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, քանի՞, քանի՞սը, քանի՞երորդ:***

Այս դերանունները նախադասություններում նույն պաշտոններն են կատարում. դրանք տարբերվում են միայն ***գործառույթով*** *և* ***հնչերանգով.*** *հարցականներն արտաբերվում են հարցական հնչերանգով, հարաբերականները՝ սովորական, միայն կարող են շեշտվել: Տարբերվում են նաև կիրառությամբ. եթե հարցականները հարցում են արտահայտում անձերի ու առարկաների և*

նրանց հատկանիշների, ինչպես նաև գործողությունների հատկանիշների վերաբերյալ, ապա հարաբերականները երկրորդական՝ ստորադաս նախադասությունները կապում են գլխավոր՝ գերադաս նախադասություններին: Այսպես՝

Ո՞ւր կորան ծաղիկները — Սո՛ւս քնած են հողի տակ (ՀԹ):
Ուր աՀեղ կռվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աչուղն իր սազի հետ (ՀԹ):

Ուր դերանունը առաջին նախադասության մեջ հարցում է արտահայտում տեղի վերաբերյալ, իսկ հաջորդ նախադասության մեջ նույն դերանունը ստորադասական նախադասությունը կապել է գերադասի հետ:

Հարաբերականները փաստորեն շաղկապների դեր են կատարում, բայց շաղկապներից տարբերվում են նրանով, որ հոլովվում են, հոդ են ստանում, երբեմն էլ գործածվում են հոգնակի թվով, հետևաբար դառնում են նախադասության անդամներ, որոնցից զուրկ են շաղկապները:

Համեմատենք նաև հետևյալ նախադասությունները, որոնցում ենթակայի դեր կատարող նույն բառերը մի դեպքում հարցական դերանուն են, մյուս դեպքում՝ հարաբերական.

Մեղրագետի ափերին
Ո՞վ է հիմա թափառում,
Ո՞վ է փնտրում տունն իր հին,
Ո՞վ է կրակն իր վառում (Սասուն Գրիգորյան)

Ով հայրենիք ունի սրտում,
Իր մայր լեզուն չի մոռանա (ՀՇ)

Նույն դերանունը ուղիղ խնդրի պաշտոնով՝

Ո՞ւմ է փնտրում խրխինջով
Դավթի Քուռկիկ Ջալալին,
Խնուսա խաս կամուրջով
Հավքս հասավ երամին (Սասուն Գրիգորյան)

Ում շատ եմ սիրել.
Նրան շատ եմ վստահել (Ք. Գրիգորյան)

Նույն դերանունը հատկացուցչի պաշտոնով՝

Ո՞ւմ երկրում է մարդն անազատ, ո՞ւմ այգին է, որ չունի
Բախտը բանտող ոչ մի վանդակ՝ թեկուզ ոչ մի թռչունի (ՀՇ)։
Ում ճարը քեզ անճար թողեց, դու նրան ճար ու քույր եղար (ՀՇ)։

Հարցական և հարաբերական դերանուններն ըստ իրենց գործառական ոլորտների հարաբերակցվում են աճականներին, թվականներին և մակբայներին։

Գոյականներին *հարաբերակից են* **ո՞վ** *և* **ի՞նչ** *դերանունները, որոնցից* **ո՞վ-ը** *տարարմատ հոլովում ունի, դրվում է անձի անվան փոխարեն, որի սեռական, տրական և հայցական հոլովները նույնն են՝* **ո՞ւմ**, *պետք է դրանք տարբերել միայն պաշտոններով.*

Ուղղ.– *Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան, ո՞վ անիծեց, Մարո՛ ջան (ՀԹ)։*
Սեռ. – *Ում տունն էլ գնամ, դու այնտեղ հյուր ես (ՍԿ)։*
Տր. – *Ում համար է յասամանը, որ բացվում է նա գարնան (Ժող.)։*
Հայց.– *Ում էլ սիրել եմ հետո ու թախծել եմ կարոտած (ՍԿ)։*
Որ ես մի օր աշխարհից գնամ,
Ո՞ւմ ես զցելու բերանն աշխարհի (ՀՍ)։

Բացառական և գործիական հոլովներն անվանական ձևեր ունեն՝ **ից, ով**, *ներգոյական հոլով չունի։*

Ո՞վ դերանվան հոգնակին լինում է **ովքե՞ր**, *որն ունի միայն ուղղական հոլովաձև՝*

Հեյ ճամփաներ, ճամփանե՛ր,
Անդարձ ու հին ճամփանե՛ր,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գնացին, ճամփաներ (ՀԹ)։

Հետաքրքիր է.

Հաճախ են աշակերտներն ու ուսանողները հարցնում, թե ինչո՞ւ **ով** *և* **ովքե՞ր** *դերանունները բացառություն են կազմում* **օ**-*ի ուղղագրության կանոններից՝ «բառասկզբում* **օ** *լսելիս, գրվում է* **օ**»*։ Այս հարցի պատասխանը տալիս է Հրաչյա Աճառյանը։ Նա գրում է, որ հին մատենագիտության մեջ* **ով** *բառ-դերանունը չի եղել, այն գրվել է* **ո՝** *բաղաձայնով սկսվող բառերից առաջ՝ (***ո՞** *կար է –* **ո՞վ** *կարող է)։ Բայց հնչյունական տեսակետից ներդաշնակություն ստեղծելու համար* **ո**-*ից հետո՝ ձայնավորից առաջ դրվել է* **վ**-*ն (Ո՞վ իցէ) և* **ո** *բառ-դերանվան կողքին հանդես է եկել*

ո՞վ բառ-դերանունը, որը հետագայում ավելի գործածական է դարձել և **ո**-ն դուրս է մնացել գործածությունից: **Ով**-ը ավելի է ամրապնդվել ձայնավորից առաջ (Ո՞վ ես) և հետագա մատենագիտության մեջ գերիշխող են դարձել **ո՞վ**-ը և **ովքեր**-ը: (Տե՛ս Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հտ. 3-րդ, էջ 571):

Եվ այդ դերանունների ուղղագրությունը պահպանվեց ավանդաբար:

Ի՞նչ դերանունը գործածվում է **իրի** անվան փոխարեն, ունի անվանական հոլովում. հոլովվում է **ի** հոլովմամբ և դառնում է նախադասության ցանկացած անդամ.

– **Ի՞նչ** կա քաղաքում, դե պատմիր, տեսնեմ,
Իմանամ, ես էլ ուրիշին ասեմ (ՀԹ): (ենթակա)

Մեր ապրուստն **ի՞նչ** է,– մի կտոր չոր հաց,
Էն էլ հրեն հա - երկնքից կախված (ՀԹ): (ստ. վերադիր)

Ի՞նչ անես, ախպե՛ր, ո՞ւմից խռովես (ՀԹ): (ուղիղ խնդիր)
– Ինչի՞ցն է, պապի, այսքան ճոխ երկրում,
Ինչպես ասում ես, դժվար եք ապրում (ՀԹ): (պատճառ)

Ինչ դերանվան հոգնակին լինում է **ինչեր**. հոլովվում է և դառնում է նախադասության ցանկացած անդամ՝

Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված (ԵՉ): (ուղիղ խնդիր)

Ածականներին հարաբերակից են **որ**, **ինչպիսի**, **որպիսի**, նաև **ինչ** դերանունները:

Ո՞ր ջուրը տանեմ քո ձորերից դաշտի ծարավ ծաղիկներին (ՀՍ):

Էլ **ո՞ր** սև օրվա համար եմ դարդս լալիս (ՊԴ):
Ի՞նչ սարի արծիվ կհասնի քաջին,
Ի՞նչ չահ կկանգնի նրա առաջին (ՀԹ):
Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան (ՀՀ):
Քեզ **ի՞նչ** խոսքերով սփոփեմ հիմա
Ի՞նչ արցունքներով հիմա հեկեկամ (ՎՏ):

Որ և **ինչ** դերանունները կարող են հոդ ստանալ, հոլովվել և հարաբերակից լինել գոյականներին (Մորթի՛ր, **որը** պատահի – ՀԹ):

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չլինին կինն ու գինին (ՀԹ):

Թվականներին հարաբերակից են **ինչքան, որքան, որչափ, քանի, որերորդ, քանիերորդ** դերանունները, որոնք հանդես են գալիս ինչպես որոշչային, այնպես էլ պարագայական պաշտոններով. օրինակներ՝

Ինչքան որ հուր կա իմ սրտում – բոլորը քեզ (ԵՉ):
Որքան ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել (ՀԹ):
Քանի՛-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի-քանի մարդ դառավ մարդասպան (ՀԹ):

Ո՞րերորդ անգամ քեզ զգուշացնեմ, որ հեռուստացույցին այդքան մոտիկ չնստես և ինչքան ասեմ, որ գիշերով դրանով չզբաղվես:

Մակբայներին հարաբերակից են՝ **ո՞ւր, ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ, որտե՞ղ, ինչքա՞ն, ո՞րչափ, ո՞րքան** հարցահարաբերական դերանունները, որոնք հիմնականում պարագաների դեր են կատարում՝ նշելով **տեղ, ժամանակ, չափ ու քանակ**: Օրինակներ՝

Ես չգիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար (ՎՏ):

Որտե՞ղ է ընկած այն քարը հիմի,
Որ հողիս վրա շիրիմ պիտ լինի (Ավ. Իս.):
Ինչպե՞ս որոշեցիր այս լճում ձուկ կա՞, թե՞ չէ (ՎԱ): Ինչպե՞ս գտար տունս:
Ինչո՞ւ իզուր հանգցնում ես ջահել կրակն աչքերիդ (ՀԹ):

Երբ *դերանունը հարցում է արտահայտում գործողության կատարման ժամանակի վերաբերյալ՝*

Ու պառավ նանի սրտի մեջ հանկարծ
Ձեն տվավ թաքուն մի խավար կասկած.
– Էն ե՞րբ էր Անուշն իր կուժը առավ,
Աղբյուրը գնաց ու ետ չդառավ... (ՀԹ):
Ես ե՞րբ եմ եկել, էստեղ քարացել (ՀԹ):

Երբ *դերանունը հոլովվում է՝ ենթարկվելով վա հոլովման.* ***Երբվա՞*** *ֆիլմ է Փարաջանովի «Նռան գույնը» ու երբվանի՞ց է,*

որ չի ցուցադրվում մեր էկրաններում:

Օրինակներ հարաբերական դերանուններով.

Ինչքան տարիքս առաջ է գնում,
Ինչքան անցնում են օրերս անփույթ,
Այնքան հոգուս մեջ ամեն ճեղք լցնում,
Դու ես թանձրանում, իմ Հա՛յ ժողովուրդ (ՍԿ):
Երնեկ նրան, ով իր գործով,
Կապրի անվերջ, անդադար (ՀԹ):
Որտեղ մթնի, այնտեղ քնեմ միայնակ (Ավ. Իս.):

Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես: Ինչ ցանես, այն կհնձես (ժող.):

Հարցեր.

1. Ինչո՞ւ են հարցական և հարաբերական դերանունները միավորվում:

2. Հարցահարաբերական դերանունները ո՞ր խոսքի մասերին են հարաբերակից և նախադասության ի՞նչ անդամներ են լինում:

3. Հարցահարաբերական դերանուններից որո՞նք են հոլովվում և ինչո՞ւ:

4. Հարցահարաբերական դերանուններից որո՞նք ունեն հոգնակի թիվ և ինչո՞ւ:

Առաջադրանքներ.

1. Գտնել հարցահարաբերական դերանունները, գտնել առանձին սյունակներում և գրել, թե ի՞նչ պաշտոն են կատարել նախադասություններում, որոշել նաև գոյականներին հարաբերակից դերանունների թիվն ու հոլովը.

ա) Մատնիչ է նա, ով իր սուրը չի հանում: Թումանյանի պալատում ով քեֆի չի նստել, նա դեռ չի տեսել խնդում աշխարհում: Երբ կհոգնես, կզազազես աշխարհից, դարձիր իմ մոտ, վերադարձիր դու նորից:

Ո՞վ է անվերջ հեծեծում: Ո՞ւմ է կանչում հիմա նա: Ո՞վ ես դու, չգիտեմ: Ինձ ի՞նչ մնաց այն լուսավոր ու պայծառ օրերից: Եվ ի՞նչ է սերը – անզոր մի մանուկ: Ի՞նչ ես կորցրել, ինչի ման գալիս:

Մոռանալ ամեն ինչ, ամենին մոռանալ: Ամեն ինչ չպետք է հիշել: Ամենքինն ես, իմը չես, ամենքին ես սիրում դու: Քանի՞ տարեկան ես և քանի՞ լեզու գիտես:

բ) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:
Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, էն աղբյուրը քար չի գցի:
Որ գյուղը գնաս, էն տեղի գդակը դիր: Քանի լեզու գիտես՝ այնքան մարդ ես: Մենությունը միշտ չարիք է դառնում, երբ բաժանվում է գութը նրանից: Երբվա՞ թխած հաց է, երբվանի՞ց եք վաճառում: Դու որտեղի՞ց իմացար՝ ինչ էր Լևոնի նվագածը, ի՞նչ գիտե նա: Սուսմա քար ու հող հեղեղը տանի, ո՞վ դեմը կերթա, ո՞վ կռիվ կանի: Ո՞ւր կորար, Անո՛ւշ, այ մազդ կտրած: ժամանակ չեղավ մեկին սիրելու: Քույրի՛կ, ասա ո՞րն է ճամփան Բինգյոլի: Ես սիրում եմ մեր մշուշը անգամ, որ ձորերը լցրած կաթ լինի ասես:

2. Հարցական ո՞վ և ինչ(ը՞) դերանունները հոլովել լրիվ հարցույցով (նախադասությունների մեջ):

3. Որ դերանունը հոլովել նախադասությունների մեջ. կազմել նախադասություններ որ շաղկապով:

4. Կազմել մի քանի նախադասություններ ինչքան, որքան դերանունների տարբեր պաշտոններով:

5. Ով և ինչ դերանունները գործածել բարդ ստորադասական նախադասությունների մեջ:

ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ – Դպրոցական դասագրքերում ժխտական դերանուններ են համարվում ժխտվող անձերի ու առարկաների կամ առարկայի ժխտվող հատկանիշների փոխարեն դրվող բառերը. դրանք 4-ն են. **ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը:**

Սրանք փաստորեն **որոշյալ** դերանունների ժխտական ձևերն են, ինչպես՝ **ամեն ոք – ոչ ոք, ամեն ինչ – ոչինչ, ամեն մի – ոչ մի, ամեն մեկը – ոչ մեկը:** Այս հիմնավորումով էլ, ինչպես ասվել է, Ս. Աբրահամյանը **ժխտական** դերանունն առանձին տեսակ չի ընդունում և դրանք քննում է որոշյալ դերանունների համակարգում, որպես նրանց ժխտական ձևեր: Քանի որ ժխտումը քերականական առանձին կատեգորիա է, հետևաբար, պետք է ընդունել, առանձնացնել դերանունների այս խումբը:

Սրանց հետ արևելահայերենում բայերը միշտ հանդես են գալիս ժխտական խոնարհմամբ՝ **Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի: Ոչ մեկը** չի կարող չհիշել իր առաջին ուսուցչին: **Ոչինչ** չկա խանութում:

Արևմտահայերենում այդպես չէ. նրանք այս դերանունների հետ բայը դնում են **դրական** խոնարհմամբ (Խանութին մեջ ոչինչ կա):

Ոչ ոք ըսավ – «Հեք տղա,
Արդյոք ինչո՞ւ կմխա...» (Պ. Դուրյան):

Ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ *ժխտական դերանունները ունեն միայն եզակի թիվ և հոլովվում են անվանական** ի** հոլովմամբ: Սրանք գործածվում են գոյականների փոխարեն և դառնում են՝*

ենթակա՝ ***Ոչ ոք*** *չի մտածում կրթական համակարգը բարելավելու մասին:* ***Ոչ մեկը*** *չխոսեց այդ մասին,*

հատկացուցիչ՝ ***Ոչ ոքի*** *խոսքը բանի տեղ չանցավ (Մամուլ):*

Ոչ մեկի *առաջարկը չընդունվեց,*

ստորոգելիական վերադիր՝ ***Ոչինչ*** *են անջատ տարիները ձիգ (Մ. Մարգարյան),*

ուղիղ խնդիր՝ *Հիշո՞ւմ ես երկար դասերն այն խրթին,*
Որ հաճախ ***ոչինչ*** *չէինք հասկանում (Մ. Մարգարյան):*

Այլ լրացումներ՝

Ոչ ոքից *մի վախենա:* ***Ոչ ոքով*** *մի պարծենա:* ***Ոչնչից*** *չատ աղմուկ:*

Ոչ մի *ժխտական դերանունը չի հոլովվում, գոյականաբար չի գործածվում և միայն որոշչի դեր է կատարում՝*

Իմ կարոտած սրտի համար ***ոչ մի*** *ուրիշ հեքիաթ չկա (ԵՉ):*

Աչուն իջավ ողջ աշխարհին, ***ոչ մի*** *չչուկ չլսվեց (Մ. Մարգարյան):*

Ժխտական բոլոր դերանունները կազմությամբ բարդ բառեր են. դրանցից մեկը՝ ***ոչինչ-ը****, գրվում է միացած բաղադրիչներով, մյուսները՝ անջատ և առանց գծիկի՝*

ոչ ոք, ոչ մի, ոչ մեկը:

Առաջադրանքներ.

1. Ոչ ոք և ոչինչ դերանունները նախադասությունների մեջ հոլովել բոլոր հոլովներով:

2. Ոչ մի դերանվամբ կազմել 3 նախադասություն. բերել գրական օրինակներ:

3. Բերված օրինակներում որոշել ժխտական դերանունների չարահյուսական պաշտոնները և թիվն ու հոլովը.

Ոչ մի աստղ չէր երևում այդ գիշեր, և ոչինչ նկատելի չէր: Ես մոլորվել եմ մութ աշխարհում, և ինձ ոչ ոք չի կանչում, ոչ ոքի համար գուցե այլևս պիտանի չեմ: Ոչ մեկը չհասկացավ նրան և ոչ

մեկին չկարողացավ համոզել, թեև ոչինչ էր նրա ասածը: Ոչ մեկից մի ճիչ խոսք չլսվեց և ոչ մեկով չես կարող ասածդ հաստատել: Ժխորի մեջ ոչ ոք ուշք չէր դարձնում նրա վրա: Նրանք կգան կավերեն, և չի մնա էլ ոչինչ: Դեղին տերևն ընկավ քարին, ոչ մի շշուկ չլսվեց: Նա ոչ ոքից ահ չուներ բացի հորից ու ոչ մեկից չէր վախենում: Նա ամեն ինչ մոռացել է, ոչինչ չի հիշում. ոչնչով չի հետաքրքրվում, նույնիսկ թատրոնով:

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԴԵՐ – *Հոդը այն մասնիկն է, որն արտահայտում է* ***առկայացում:*** *Առկայացումը քերականական կարգ է, որն արտահայտում է առարկայի կամ անձի որոշյալությունը հաղորդակցվողների նկատմամբ: Առկայացումը իմացաբանական ըմբռնում է, որը դրսևորվում է հոդերի միջոցով, և այդ երևույթը կոչվում է* ***հոդային առում*** *կամ* ***հոդի կարգ*** *(տե՛ս* ***Հ. Պետրոսյան,*** *«Հայերենագիտական բառարան», 1987, էջ 50-54 և 408):*

Հոդեր ստանում են՝ ***գոյականները*** *(գիրքը, գիրքս, գիրքդ, այգին, այգուս, այգուդ), գոյականական որոշ* ***դերանուններ*** *(ինքս, ինքդ, ինքը, բոլորս, բոլորդ, բոլորը),* ***գոյականաբար գործածվող բառերը՝*** *լավը, լավս, լավդ (ածականը՝ գոյականաբար) երկուսս, երկուսդ, երկուսը (թվականը՝ գոյականաբար). եսՙ նստածս, դուՙ նստածդ, նաՙ նստածը (դերբայը գոյականաբար), մոտս, մոտդ, մոտը (մակբայը գոյականաբար) և այլն:*

Հայերենի հոդերն են **ս, դ, ը(ն)**, *որոնք արտահայտում են հետևյալ իմաստները՝* ***որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն:***

1. **Որոշյալություն** – *Ինչպես ասվել է «Գոյականի» բաժնում,* **ը(ն)** *հոդերը դրվում են գոյականների վրա և որոշակի են դարձնում տվյալ գոյականի իմաստը, ըստ որում,* **ը** *հոդը դրվում է բաղաձայնով վերջացող գոյականների վրա (գիրքը, աշակերտը, ծառը),* **ն** *հոդը՝ ձայնավորով վերջացողների վրա (լեզուն, առուն, գինին):*

Հետևում է ***տարին*** *տարուն,* ***միտքը՝*** *մտքին,*
Հետևում է դեռ նոր գտած ***ելքը*** *մուտքին,*
Ապրում է նա՝ ***աչքը*** *գրքին*
*   **Ուշքը՝*** *երգին (ՊՍ):*

Գրական լեզվում որոշիչ հոդը դրվում է ուղղական, տրական և հայցական հոլովներով գործածվող գոյականների վրա, սեռականի վրա դրվում է, երբ այն փոխանուն է (Կարդացի Աշոտի գիրքը – Աշոտինը), ըստ որում, դրվում է կրկնակի հոդ:

Ինչպես տեսանք որոշիչ հոդը դրվում է նաև փոխանվանաբար գործածվող խոսքի մասերի վրա (**Լավագույնը** լավի թշնամին է: **Հաղթողը** արժանացավ բարձր պարգևի: **Հինգը** պարգևատրվեցին: Դեպին կապ է, ու-ն՝ շաղկապ):

ՄԱՆՐՈՒՍՈՒԹՅՈՒՆ – *Բարբառներում բացառական, գործիական, նույնիսկ ներգոյական հոլովներն էլ կարող են որոշիչ հոդ ստանալ (**Քաղաքիցը** մի բան պատմիր: **Դրսումը** անձրև է գալիս):*

2. **Ստացականություն** – Ստացական հոդերն են **ս, դ, ն(ը)**, որոնք, դրվելով մի առարկայի կամ անձի անվան վրա, ցույց են տալիս, թե այն ում է պատկանում կամ վերաբերում՝ խոսողի՞ն, խոսակցի՞ն, թե՞ մի երրորդ անձնավորության. դրանք փոխարինում են **իմ, քո, նրա(իր)** կամ դրանց հոգնակի թվերին՝ **մեր, ձեր, նրանց(իրենց)** դերանուններին:

Այս հոդերը կարող են ստանալ բոլոր գոյականները (հատուկ թե հասարակ, եզակի թե հոգնակի), դրանք դրվում են բոլոր հոլովների վրա՝ **Գիրքդ** լավ է կարդացվում (ուղղական): **Գրքիդ** օրինակները հետաքրքիր են (սեռական): Հետևում եմ **գրքիդ** հրատարակմանը (տրական): **Գիրքդ** կարդացի հաճույքով (հայցական): **Գրքիցդ** շատ բան կարելի է սովորել (բացառ.): **Գրքովդ** հանձնեցի պետական քննությունը (գործ.): **Գրքումդ** գրում ես նաև իմ մասին (ներգ.):

Ինչպես երևում է բերված օրինակներից, **դ** հոդը դրվել է **դու** երկրորդ դեմքի դերանվան սեռականի փոխարեն՝ **քո**:

Առաջին դեմքի ստացական հոդը **ս**-ն է, որը դրվում է առաջին դեմքի **ես** դերանվան սեռական հոլովի (**իմ**) փոխարեն՝ գիրքս, գրքիս, գրքիցս, գրքովս, գրքումս:

Հիշի՛ր – Տարբեր հոլովներով դրվող ստացական հոդ ունեցող բառի հետ դերանվան սեռական հոլովը չի դրվում. չի կարելի ասել **իմ** գիրքս, **իմ** գրքիս, **իմ** գրքիցս կամ **քո** գիրքդ:

Հարադիր գոյականներից հոդ ընդունում է երկրորդ բաղադրիչը՝ Տուն ու **տեղդ** թողած ո՞ւր ես գնում: Ձեռ ու **ոտս** դողում են:

Ածականները, թվականները, անկախ դերբայները Հոդ ստանում են միայն գոյականաբար գործածվելիս (Խելոքներիդ լավ եմ ճանաչում: Արտասանելդ դուրս չեկավ: Լավ վազողներին պարգևատրեցին: Ասածդ թող լինի):

Երբեմն էլ կոչականները կարող են ստացական Հոդ ընդունել՝ Աղջիկս, ավելի լավ կարող էիր պատասխանել: Ինչպե՞ս Հայտնեմ սրտիս Հուրը, նազելիս (Ավ. Իս.), իսկ եթե կոչականը դ Հոդ է ստանում, այդ դեպքում դ-ն դիմորոշ Հոդ է՝ «Սիրելիդ, իմ Գայանե՛, ամեն բան լավ կլինի՝ (այսինքն՝ «Դու՝ իմ սիրելի Գայանե՛, Հավատա, որ ամեն բան լավ կլինի»):

Հոգնակի մեր, ձեր, իրենց կամ նրանց դերանունների նշանակությամբ գործածվելիս ստացական Հոդերից առաջ միավանկ բառերին նույնպես Հավելվում է եր Հոգնակերտը՝ աչքներդ լույս (ձեր աչքերը), գործներս Հաջող են (մեր գործերը), բայց՝ գործերս Հաջող են (իմ գործերը), տեղներս նեղ է (մեր տեղերը), ձեռքներս փլավ չեն ուտում (մեր ձեռքերը), բայց՝ ձեռքերս փլավ չեն ուտում (իմ ձեռքերը) և այլն:

3. Դիմորոշություն — Դիմորոշ Հոդերը 2-ն են՝ ս և դ, որոնք դրվելով որևէ անձի կամ առարկայի անվան վրա՝ նրան տալիս են առաջին (ս) և երկրորդ (դ) դեմքի նշանակություն: Օրինակ՝ Ուսանողս պետք է պարտաճանաչ լինեմ: Այստեղ ս Հոդը ցույց է տալիս, որ խոսողը ինքն է՝ ուսանողը (առաջին դեմք — Ես՝ ուսանողս):

Իսկ եթե ասվի «Ուսանողս պետք է պարտաճանաչ լինի» այս դեպքում գործ կունենանք ՝ոչ թե դիմորոշության, այլ ստացականության Հետ՝ «Իմ ուսանողը պետք է պարտաճանաչ լինի»:

Այդպես էլ՝ «Դասախոսդ պետք է բարեխիղճ լինես» նախադասության մեջ դ Հոդը ցույց է տալիս, որ դասախոսը խոսակիցն է՝ երկրորդ դեմք: Իսկ եթե ասվի՝ «Դասախոսդ պետք է բարեխիղճ լինի» գործ կունենաք ստացականության Հետ՝ քո դասախոսը:

Դիմորոշությունը ստացականությունից զանազանելու լավագույն միջոց է նաև բայ-ստորոգյալի դեմքը. ս առաջին դեմքի դիմորոշության դեպքում բայ-ստորոգյալը պետք է դրված լինի նույնպես առաջին դեմքով՝ «Ուսանողս (ես) պետք է պարտաճանաչ լինեմ» (առաջին դեմք), իսկ եթե նույն ս-ն ստացականություն է նշում, այս դեպքում բայ-ստորոգյալը պետք է դրված լինի

երրորդ դեմքով՝ «Ուսանողս (իմ) պետք է պարտաճանաչ **լինի**»:

Նույնն է նաև դ երկրորդ դեմքի դեպքում՝ բայ-ստորոգյալը դրվում է **երկրորդ** դեմքով՝ «Ուսանողդ (դու) պետք է պարտաճանաչ **լինես**» (երկրորդ դեմք), իսկ ստացականության դեպքում բայ-ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով՝ «Ուսանողդ (քո) պետք է պարտաճանաչ **լինի**»:

Դիմորոշության գաղափարն ավելի է ընդգրկում, երբ դիմորոշ հոդ ստացող բառի հետ գործածվում է նաև համապատասխան դեմքի անձնական դերանունը՝ «Ես՝ ուսանողս, պետք է պարտաճանաչ լինեմ» և «Դու՝ դասախոսդ, պետք է բարեխիղճ լինես»:

Նույնն է նաև հոգնակի թվում՝ «Ուսուցիչներս (մենք) նաև դաստիարակներ ենք»: «Աշակերտներդ վաղվա մեր ապագան եք»:

Դիմորոշ հոդերը դրվում են նաև հատկանիշ ցույց տվող բառերի վրա՝ «Գերազանցիկներդ պետք է օգնեք ետ մնացողներիս», այսինքն՝ դուք (2-րդ դեմք) օգնեք մեզ (1-ին դեմք):

4. **Ցուցականություն** – ժամանակակից հայերենում ցուցականության իմաստ ունի միայն ս հոդը, որն ունի այս դերանվան իմաստը և արտահայտում է առարկայի կամ ժամանակի մոտիկության գաղափար: Օրինակ՝ «Ամառս (այս) ամառ գնալու եմ բուժման»: «Օրերս նորից լսվեց Ղարաբաղի հարցը» (այս օրերին): «Վերջերս քիչ-քիչ ես երևում» և այլն:

Գործածվում է նաև տեղի իմաստով՝ **Տեղիս** բնակիչները հայեր են (**այս տեղի**): Մայրաքաղաքս ժամանեց հայտնի երգիչ Շառլ Ազնավուրը (այս մայրաքաղաքը), կարելի է մտածել նաև մեր մայրաքաղաքը: 1773 թվականին հարավային իր շրջագայությունների ժամանակ **քաղաքումս** (այս քաղաքում) կանգ է առնում Եկատերինա Թագուհին (Հրաչյա Քոչար):

Առաջադրանքներ.

1. Ս, դ հոդերով կազմել 5-ական ստացականություն և 5-ական դիմորոշություն արտահայտող նախադասություններ:

2. Ս ցուցական հոդով կազմել 3 նախադասություն:

3. Գտնել հոդերը և որոշել դրանց տեսակները.

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք (ՀՇ):

Դու մշտահաղթ մեր ապավեն, մի ձեռքիդ թուր, մեկիդ՝ զութան.

Գիշեր ու զօր աչքերդ բաց՝ դու ապավեն խաղաղության:
Սվիններդ հազարաբյուր ճաճանչներ են արեգակի,
Ու փառքերդ կրծքիդ վրա այնպես հուռթի են ճառագել,
Թվում է, թե աստղալից յոթը երկինք ես դու հագել (ՀՇ):

Մենք՝ հոգեբաններս, սխալվել չենք կարող: Երկուսս այժմ միացած գնում ենք բնության քաղցրություններից մեր կարոտն առնելու (Մուր.): Թիֆլիսում նա առաջին անգամ բեմ է եկնելու ամսույս տասին (Ն-Դ): Բանը մարդուս բախտն է (ՀԹ): Ինչպես ինքներդ եք ասում, նա վերջերս շատ է փոխվել, մտերիմներիս էլ չի ճանաչում (Վ. Փ.):

Ամփոփիչ հարցեր ու առաջադրանքներ «Դերանուն» թեմայի վերաբերյալ

1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի «Դերանուն» խոսքի մասը:

2. Թվարկեք հայերենի դերանունները և ասեք նրանց քերականական հատկանիշները (յուրաքանչյուր տեսակի):

*3. **Մենք** և **նրանք** անձնական դերանունները հոլովել նախադասությունների մեջ:*

4. Կազմել 4-ական նախադասություններ որոշյալ և անորոշ դերանուններով:

5. Նույն հարցահարաբերական դերանուններով կազմել 3-ական նախադասություններ, որոնք մի դեպքում հարցում արտահայտեն, մյուս դեպքում ստորադասական նախադասությունները կապեն գերադասներին:

*6. **Ս, դ** հոդերով կազմել ստացականություն և դիմորոշություն արտահայտող 5-ական նախադասություններ:*

*7. **Ս** ցուցական հոդով կազմել 3 նախադասություն:*

*8. **Դուրս գրել դերանունները, նշել տեսակները և քերականական կարգերը.***

... Ու մարդիկ ինձ տեսնելով իրենց հոգնած աչքերին՝
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր (ՀՇ):

Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա:
Դու չմրսես ձմռան ցրտում – բոլորը քեզ (ԵՉ):

Մենք մեկտեղ անցանք ճանապարհն այն ողջ,
Ուր մահն էր սուլում իր դաժան հիմնը (ՎԴ):
Ո՞վ է հիմա բույն հյուսել Մշո դուրան դաշտերում,
Ո՞վ է կարոտն իմ կալսել և իր երգն է տանում տուն (ՍԳ):
Այդ խաղաղ պահին թագավորանիստ
Վաղարշապատի իր ապարանքում
Մթնած, մտախոհ, անքուն, անհանգիստ,
Մի մարդ էր ցավից մերթ ընդ մերթ տնքում (Սարմեն):
Ասաց ու ձեռքը պարզեց Մասիսին,
Որ այդ վայրկյանին ննջում էր կարծես,
Այնքան վճիտ էր, այնքան անրասիր
Նրա հայացքը՝ խորն ու վեհատես (Սարմեն):
Դու քո գրերով զրահել ես մեզ,
Մեր դեմ բացել ես անծիր ասպարեզ (Սարմեն):
Դու երգի ծով ես անափ, Ես քո մի կաթիլը կյանքում...
Ախ այս Մասիսը... Որից փափկում են սրտերը բոլոր,
Երբ ինքը քար է, որ ջերմացնում է սրտերը մոլոր...
(Գ. Էմին):

Մենք փոքր ենք, այո՛, Ձեզ ո՞վ էր ասում,
Որ մեզ սեղմեք այնքան,
Որ մենք ստիպված... ադամանդ դառնանք...
Ոչ ոք չի ասի՝ այդ ցորենի բերքն ինչքան է եղել.
Ո՞վ եղավ քո գալու վկան,
Գնալդ ո՞վ է իմանում (Գ. Էմին):

ԲԱՅ

Հայտնի իրողություն է, որ աշխարհը **նյութական** է՝ առարկայական, որին ներհատուկ է **շարժումը** որպես նրա գոյության ձև, նրա անբաժան հատկանիշ: Քերականագիտության մեջ **նյութը, առարկան, մատերիան** անվանվում է **գոյական**, իսկ նրա անբաժան հատկանիշը՝ **շարժումը՝ բայ**:

Ինչպես որ **գոյականի** խոսքիմաստային իմաստային հիմքը **առարկայի հասկացությունն** է, այնպես էլ **բայի** խոսքիմաստային իմաստային հիմքը **գործողության, եղելության, ընթացականության** հատկանիշն է:

Այստեղից էլ՝ բայի սահմանումը՝ **Բայ են կոչվում այն բառերը, որոնք նշում են գործողություն, եղելություն, դրություն, վիճակ և** պատասխանում են **ի՞նչ անել, ի՞նչ լինել** հարցերին, բացի **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** պակասավոր բայերից, որոնք ոչ մի հարցի չեն պատասխանում:

Սահմանումից հստակ երևում է, որ բայը նշում է՝

ա) **գործողություն** (գրել, կարդալ, խաղալ, կառուցել, նվագել...),

բ) **եղելություն** (լինել, դառնալ, համարվել, հանդիսանալ...),

գ) **դրություն** (նստած, քնած, կառուցած, ծավալված...),

դ) **հատկանիշի** դրսևորում (մեծանալ, կարծրանալ, հնանալ, թուլանալ, առաջադիմել, կարմրել, կանաչել, դեղնել...),

ե) **վերաբերմունքի** դրսևորում (սիրել, **ատել**, հարգել, **պաշտել**...),

զ) **զգայական** ընկալում (լսել, **տեսնել**, զգալ, ծիծաղել...),

է) **մտային ու հոգեկան** այլ իրողություններ (իմանալ, գիտենալ, ճանաչել, հասկանալ, մտածել, ցանկանալ, ձգտել...): (Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 15):

Իսկ ի՞նչ է նշանակում **բայ** բառը. ըստ Հրաչյա Աճառյանի այն «**բալ – խոսիլ, ասել** բայերի պարզ **բա** արմատն է, որն առանձին գործածական չէ, ավանդված են նրա **ներկայի եզակի երեք դեմքերը**՝

բամ (ասում եմ, խոսում եմ),

բաս (ասում ես, խոսում ես),

բայ (ասում է, խոսում է)։

Սրանց առաջին և երկրորդ դեմքերից էլ կազմվել է՝ **բամ+ բաս+ել** (**բամբասել**) բայը, որը գործածվում է առ այսօր»[1]։

Աճառյանի տեսությունը հաստատում է Աշոտ Աբրահամյանը[2]։ Մեր քերականները բայը դիտել են իբրև խոսքային արտահայտության էական հատկանիշ՝ այն համարելով խոսքի՝ նախադասության առանցքը. **«Ամենայն բայ կազմում է մի խոսք, առանց բայի խոսք չկա»**,– գրում է Մանուկ Աբեղյանը[3]։

Խոսքի մասերի համակարգում իր ձևերի բազմազանությամբ, քերականական կարգերի հարստությամբ ու ճոխությամբ և խոսքի մեջ ունեցած բացառիկ դերով բայն առանձնակի տեղ է գրավում։

Բայի **ձևաբանական** առանձնահատկությունն այն է, որ **խոնարհվում** է. այսինքն ունի **եղանակի, ժամանակի, դեմքի, թվի** և **ժխտման** քերականական կարգեր, որոնք ներհատուկ են բային և ունեն իրենց բնորոշիչ առանձնահատկությունները։

Բայի կազմությունը նույնպես ձևաբանական կարգ է (տե՛ս «Բայի կազմությունը» բաժնում)։

Բայի **շարահյուսական** առանձնահատկությունն այն է, որ միակ խոսքի մասն է, որ հանդես է գալիս **ստորոգյալի** պաշտոնով (պարզ ստորոգյալի դեպքում՝ խոնարհված բայը, բաղադրյալի դեպքում՝ օժանդակ բայերն ու վերացական բայերը՝ հանգույցը)։

Անկախ դերբայները (անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար) նույնպես հանդես են գալիս գոյականին, ածականին ու մակբային հատուկ շարահյուսական կիրառությամբ։

Որոշ լեզվաբաններ իրավացիորեն **բայի խնդրառությունը** նույնպես համարում են շարահյուսական կարգ, թեև նրան ներհատուկ է նաև ձևաբանական-իմաստայինը։

Այսպիսով, բայը մյուս խոսքի մասերից տարբերվում՝ է իր **բայիմաստով** (սա նրա խոսքի մասային իմաստն է), բայի **սեռով** (սրա մասին քիչ հետո), նաև՝ խնդրառությամբ (սա էլ բայի այն

---

[1] **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, 1971, էջ 383։

[2] **Ա. Աբրահամյան,** Բայը ժամանակակից հայերենում, 1, 1962, էջ 13։

[3] **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 362։

հատկանիշն է, որով պայմանավորված է բայիմաստի պահանջով լրացումներ (խնդիրներ և պարագաներ առնելու հանգամանքը):

Բայը, իբրև թեքվող խոսքի մաս, խոսքի մեջ գործածվում է 2 ձևերով՝ **անդեմ** (**դերբայական**) և **դիմավոր** (**եղանակային**):

Այս երկու ձևերին էլ հատուկ են բայի նշված 3 հատկանիշները, իսկ միայն **դիմավոր** ձևերին հատուկ են նաև **եղանակի**, **ժամանակի**, **դեմքի** ու **թվի** քերականական կարգերը:

Բայի այս բոլոր հատկանիշներով փոփոխությունը կոչվում է **խոնարհում**:

ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բայի կազմությունը որոշվում է **անորոշ դերբայով**, որը բայի սկզբնաձևն է, որով անվանվում է առարկայի գործողությունը, դրությունը, վիճակը:

Անորոշ դերբայը կազմվում է **ել** և **ալ** վերջավորություններով, որոնք միաժամանակ նաև ածանցներ են, որոնցով ինչպես բայարմատներից, այնպես էլ խոսքի մասերից բայեր են կազմվում.

Օրինակ՝

ա) **բայարմատներից՝** կարդալ, ասել, պայթել, խոսել, բուժել, պոկել, վազել, բախել, վանել, խարել...

բ) **գոյականներից՝** երգել, թխսել, ամպել, խնդալ, մոխրանալ, ճանապարհել, կայծակել, կմախքանալ, արմատանալ, ճաշել...,

գ) **ածականներից՝** սևանալ, կանաչել, մեծանալ, փոքրանալ, մեղմել, ծռել, գիրանալ, ուժեղանալ, ամրանալ, ցածրանալ...,

դ) **թվականներից՝** երկրորդել, տասնապատկել, երկուանալ (քիչ են)

ե) **մակբայներից՝** ուշանալ, հաճախանալ, կրկնել, առաջանալ, արագանալ, կանխել, ետանալ...,

զ) **դերանուններից՝** ոչնչանալ, ամբողջանալ, նույնանալ, այլայլվել...,

է) **ձայնարկություններից՝** (շատ քիչ են) ափսոսալ, վայվայել...:

Ել, **ալ** ածանց-վերջավորություններից առաջ ընկած մասը կոչվում է բայի **հիմք**, որը կարող է կազմված լինել մեկ արմատից **պարզ** (գրել, ջրել, ձայնել) և մեկից ավելի արմատներից՝ **բարդ** (արձանագրել, ոսկեջրել, հեռաձայնել, բազմապատկել, մեքենավարել, նկարազարդել...):

Եթե **ել, ալ** վերջավորություններից առաջ կան բայածանցներ (**ան, են, ն, չ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, կոտ, տ, վ**), դրանք նույնպես մտնում են բայահիմքի մեջ, և բայի հիմքը դառնում է **ածանցավոր** (**տեսնել, փախչել, հեռացնել, մոտեցնել, հեռանալ, մոտենալ, կոտրատել, թաքնվել**):

Ուրեմն՝ բայի հիմքը կարող է լինել **պարզ** և **ածանցավոր**:

Հիշի՛ր – կազմությամբ բարդ բառերը (**արձանագրել, ոսկեջրել, հեռահայնել**) բայերի կազմության մեջ դիտվում են որպես **պարզ** հիմքեր:

Անորոշ դերբայի **ել, ալ** վերջավորությունների **ե** և **ա** ձայնավորները կոչվում են **խոնարհիչներ** կամ **լծորդություններ** (երգել – **ե** լծորդության բայ է, կարդալ – **ա** լծորդության բայ): Ասենք, որ **ա** լծորդության բայերի թվաքանակը շատ չէ:

Նկատելի է, որ բերված բոլոր բայերի բաղադրիչները գրվել են **միասին**. հետևաբար, դրանք կոչվում են **համադրական** բայեր:

Բայերի մյուս տեսակը կոչվում է **հարադրական**. սրանք այն բայերն են, որոնք մեկ բառի արժեք ունեն, թեև մեկ բառական միավոր են, սակայն կազմվում են բառերի հարադրությունից և գրվում են առանձին-առանձին, դրանց բաղադրիչները **միաձույլ չեն**. օրինակ՝ **դուրս գալ, ներս մտնել, բեմ ելնել, ականջ դնել, ջուր դառնալ, աչքով անել, աչքից ընկնել, քար կտրել, վրան ջուր մաղվել, աչքը ջուր դառնալ...**:

Հարադրական բայերի մի մասը **բայական դարձվածներ են**:

Հարադրական բայերի մի զգալի մասը համադրականների համարժեք կազմություն ունի. օրինակ՝ **խույս տալ – խուսափել, եռ գալ – եռալ, մոտ գալ – մոտենալ, անց կենալ – անցնել, երդում ուտել – երդվել, պար գալ – պարել, թույլ տալ – թույլատրել, ձեռք բռնել – օգնել** և այլն:

Հարադրական բայերը երկու տեսակ են լինում.

1) **բայեր**, որոնք կազմվում են **բայից** և ոչ բայական բաղադրիչից (**մոտ գալ, ձեռք տալ, հաշվի առնել, երգ ասել, գլուխ տալ...**),

2) **բայեր**, որոնք կազմված են միայն բայական բաղադրիչներից (**գնալ-կորչել, մեռնել-պրծնել, ասել-խոսել, քշել-տանել, ուտել-խմել, տանել-բերել, թողնել փախչել, բերել պահել...**): Սրանք կոչվում են **զուգադրական** բայեր:

ԲԱՅԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

Ինչպես ասվեց, ըստ անորոշ դերբայի, բայի հիմքը լինում է ***պարզ** և **ածանցավոր**. ըստ իրենց իմաստների բայական ածանցները 4 տեսակ են՝* ***սոսկածանցներ, պատճառական, բազմապատկական** և **կրավորական** ածանցներ:*

Բայական սոսկածանցներն են՝ ան, են, ն, չ, *որոնք դրվում են անորոշ դերբայի* ***ել, ալ*** *վերջավորություններից առաջ՝ հեռանալ, մոտենալ, բազմանալ, գիտենալ, տեսնել, բռնել, կպչել, փախչել:*

*Անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում այս ածանցներից երկուսը (**ն, չ**) դուրս են ընկնում, իսկ* ***ան** և **են** դառնում են* ***աց, եց**. և դա չի ազդում բայերի նշանակության վրա, դրա համար էլ կոչվում են* ***սոսկածանցներ**: Այսպես՝*

Անորոշ դերբայ	վաղակատար դերբայ	անցյալ կատարյալ ժամանակ
հեռանալ	*հեռացել*	*հեռացա*
մոտենալ	*մոտեցել*	*մոտեցա*
տեսնել	*տեսել*	*տեսա*
թռչել	*թռել*	*թռա*

Պատճառական ածանցներն են՝ ացն, եցն, ցն. *դրանք կոչվում են* ***պատճառական**, որովհետև դրվելով անորոշի* ***ել, ալ*** *վերջավորություններից առաջ, ցույց են տալիս, որ գործողության կատարման համար ինչ-որ մեկը, ինչ-որ բան պատճառ է դառնում. օրինակ՝ հեռանալ-հեռացնել, մոտենալ-մոտեցնել, տեսնել-տեսցնել, մտնել-մտցնել:*

Պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմելիս ***ացն, եցն, ցն*** *ածանցների* ***ն**-ն փոխվում է* ***ր**-ի.*

Անորոշ դերբայ	վաղակատար դերբայ	անցյալ կատարյալ ժամանակ
հեռացնել	*հեռացրել*	*հեռացրի*
մոտեցնել	*մոտեցրել*	*մոտեցրի*
տեսցնել	*տեսցրել*	*տեսցրի*
թռցնել	*թռցրել*	*թռցրի*

Որոշ բայերի պատճառականը կազմվում է ***տալ*** *բայի*

Հարադրությամբ (երգել տալ, բերել տալ, բանալ տալ, խոսել տալ...)։

Բազմապատկական ածանցներն են՝ *ատ, ոտ, կոտ, տ,* որոնցով կազմված բայերը ցույց են տալիս գործողության **կրկնություն, բազմապատկություն** (կոտրել-կոտրատել, թռչել-թռչկոտել, մորթել-մորթոտել, ցատկել-ցատկոտել...)։

Բազմապատկական ածանց ունեցող բայերը ներկայի և անցյալի հիմքում ոչ մի փոփոխություն չեն կրում (կոտրատում եմ-կոտրատեցի)։

Շատ քիչ բայերից է հնարավոր բազմապատկական բայեր կազմել։

Մի քանի բայերի բազմապատկականը կազմվում է նույն արմատի կրկնությամբ (**վազել-վազվզել, քաշել-քաշքշել, ծալել-ծալծլել, խշալ-խշխշալ, տաշել-տաշտշել, գզել-գզգզել, ծամել-ծամծմել, ծակել-ծակծկել...**)։

Կրավորական ածանցը *վ*-ն է, որը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ենթական կրում է մեկից, մի առարկայից կամ ենթական ինքն է գործողությունը կատարում իր նկատմամբ (**հյուրասիրվել, առաջնորդվել, տանջահարվել, հագնվել, լվացվել, սանրվել, սափրվել...**), այս վերջին 4 բայերը կոչվում են **կրավորակերպ չեզոք** բայեր։

Պատճառական բայերի կրավորական ձևերը կազմելիս **վ** ածանցը դրվում է **ն** պատճառական ածանցի փոխարեն (հեռացնել-հեռացվել, խաղացնել-խաղացվել, հատկացնել-հատկացվել...)։

Ոչ բոլոր բայերից կարելի է կազմել կրավորական ձևեր, օրինակ. **քայլել, վազել, դողալ, նստել, բղավել, թռչկոտել, գզվել,** խշալ, գոռալ և այլն։

Առաջադրանքներ.

1. Խմբավորել պարզ և ածանցավոր բայերը։ Որոշել ածանցավոր բայերի տեսակը.

Վերջապես վանդակը շարժեցին, շատ օրեր գլորվեցին առաջ, ապա ինչ-որ երերուն տախտակի վրա ամրացրին և մեծ ջրի վրա շողացնելով՝ տարան, բազմամարդ երկիր հանեցին։ Առյուծն այդ բոլորը տեսավ ու զարմացավ, մնաց զմայլված։ Շուրջը նայեց քամահրանքով, հոտոտեց աջ ու ձախ, ցոնցվեց և իմացավ, որ

իրեն մտցրել են մի անծանոթ տեղ, ուր ոչ անտառ կա, ոչ անապատ.

Ինչ բրուտ է Հունցել սիրտը մայրական,
Որ ինչքան էլ փշրոտում է որդին խենթ,
Ջանցած մի պահ, չանցած վշտի մի վայրկյան՝
Կպչում է միշտ ու քեֆ անում որդու Հետ (ՀԹ):

2. Հետևյալ բայերից կազմել կրավորական բայեր.

բաժանել, բազմապատկել, գումարել, Հանել, տեսնել, գտնել, ասել, խաղալ, ներկայանալ, միացնել, ներկայացնել, նշանակել, գրել, մերժել, ուտել, խմել, Հեռացնել, ջարդոտել, սվաղել, ծածկել, Հոտոտել, մրոտել, միանալ:

3. Հետևյալ բայերը տեղաբաշխել աղյուսակում՝ ըստ կազմության.

գումարել, Հանել, բազմապատկել, բաժանել, բնութագրել, լուծվել, պատկանել, տեսնել, գտնել, առնել, խաղացվել, ներկայանալ, միացնել, ստանալ, ստացվել, Հաշվել, նշանակել, լրանալ, ժխտել, ձևափոխվել, գալ, կարդացվել, կոտրատել, թաղել, գիտենալ, վախեցնել, դիպչել, վազվզել, Հոտոտել, փոշոտվել, թռցնել, փախչել, դիպչել, կառչել, կորչել, կծկվել, կրակել, ընկնել, թողնել, ամաչել, մեծանալ, փոքրացվել, ժանգոտվել, մրոտել, սիրել, տեսնել, որսալ, կարդացվել, ուտել, Հեռանալ, Հեռացնել, Հեռացվել, սովորել, սովորեցնել:

Պարզ	Ածանցավոր			
Ա խոնարհում, Ե խոնարհում	Սոսկածանցավոր	Պատճառական	Բազմապատկական	Կրավորական

ԲԱՑԱՀԻՄՔԵՐ

Բայի Հիմքը մինչև նրա **եւ**, **ալ** *վերջավորություններն ընկած մասն է:* **Ե** *և* **ա** *ձայնավորները կոչվում են* **խոնարՀիչներ** *կամ* **լծորդություններ:**

Ինչպես ասվել է, բայի ուղիղ ձևը **անորոշ** *դերբայն է, որի Հիմքը կարող է լինել* **պարզ** *և* **ածանցավոր**' *գր-***ել**, *կարդ-***ալ** *(պարզ Հիմք), ածանցավոր Հիմքերը* **ել**, **ալ**-*ից առաջ ունենում են վերևում նշված բոլոր ածանցները. սոսկածանցներ (***ան, են, ն, չ***), պատճառական ածանցներ (***ացն, եցն, ցն***), բազմապատկական ածանցներ (***ատ, ոտ, կոտ, տ***) և կրավորական ածանց'* **վ:**

Թե' դերբայական և թե' խոնարՀման ձևերին որպես սկզբնաձև է ծառայում **անորոշ դերբայը:**

Ժամանակակից Հայերենի բոլոր բայաձևերը կազմվում են 3 Հիմքով'

1. **Անորոշ դերբայի** *կամ* **անկատարի** *(նաև* **ներկայի***) Հիմք,*
2. **Անցյալ կատարյալի** *կամ* **անցյալի** *Հիմք,*
3. **Անորոշ դերբայը** *որպես Հիմք:*

1. **ԱՆԿԱՏԱՐԻ (ՆԵՐԿԱՅԻ) ՀԻՄՔ** *— Այս Հիմքով կազմվում են Հետևյալ բայաձևերը'*

ա) **Դերբայներ' անորոշ** *(գր-ել, կարդ-ալ),* **անկատար** *(գր-ում, կարդ-ում),* **ժխտական** *(գր-ի, կարդ-ա),* **ե** *խոնարՀման բայերի* **ենթակայական** *դերբայը (գր-ող, երգ-ող, գրվ-ող, թռչ-ող, մոտեցն-ող),* **ե** *խոնարՀման պարզ և բազմապատկական բայերի* **Հարակատար** *դերբայը (գր-ած, նստ-ած, գրոտ-ած, նստոտ-ած):*

բ) **Եղանակային ձևերից' սաՀմանական** *եղանակի* **ներկա** *(գրում եմ... կարդում եմ...),* **անցյալի անկատար** *(գրում էի..., կարդում էի...),* **ըղձական եղանակի ձևերը** *(գր-եմ..., խաղ.-ամ..., գր-եի..., խաղ.-այի...). սրանցից էլ կազմվում են* **պայմանական** *(կգր-եմ..., կխաղ-ամ..., կգր-եի..., կխաղ-այի...) և* **Հարկադրական** *(պիտի գր-եմ..., պիտի խաղամ..., պիտի գր-եի..., խաղ-այի),* **եղանակների բայաձևերը** *և* **Հրամայական** *եղանակի որոշ բայերի*

եզակին՝ (կարդ-ա՛, խաղ-ա՛, նստ-ի՛ր, վազ-ի՛ր, ինչպես նաև՝ ցատկոտ-ի՛ր, տեսնվ-ի՛ր):

2. **ԱՆՑՅԱԼԻ ՀԻՄՔԸ** – Բայի անցյալի ժամանակաձևերի ընդհանուր մասն է՝ առանց խոնարհման վերջավորության, ինչպես՝

գրեց-ի	կարդաց-ի	տես-ա	փախ-ա
գրեց-իր	կարդաց-իր	տես-ար	փախ-ար
գրեց-0	կարդաց-0	տես-ավ	փախ-ավ

Սկզբնատիպ բայաձևերի անցյալ կատարյալի հիմքը 2 տեսակ է՝ **ոչ ցոյական** և **ցոյական**. **Ն** և **չ** ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքը անբայածանց է. այսինքն՝ անորոշ դերբայի **Ն**-ն և **չ**-ն այս հիմքում դուրս են ընկնում, ինչպես՝ մտնել-մտ-ա, տեսնել-տես-ա, փախչել-փախ-ա, մյուս բոլոր բայերի անցյալ կատարյալի հիմքը **ցոյական** է (գրե**ց**-ի, կարդա**ց**-ի, հեռա**ց**-ա, մոտե**ց**-ա, կոտրատե**ց**-ի, հրավիրվե**ց**-ի):

Անցյալ կատարյալի հիմքով կազմվում են հետևյալ բայաձևերը՝

ա) **Դերբայներ** – **Ա** խոնարհման բայերի **հարակատար** (կարդացած), **վաղակատար** (կարդացել) և **ենթակայական** (կարդացող) դերբայները, նաև **Ն** և **չ** ածանց ունեցող բայերի **հարակատար** և **վաղակատար** դերբայները (տես-ած, փախ-ած, տես-ել, փախ-ել) – **Ն** և **չ** ածանցներն ընկնում են:

բ) **Եղանակային ձևեր** – Անցյալի հիմքով կազմվում են սահմանական եղանակի **վաղակատար** և **անցյալի վաղակատարի** **ա** խոնարհման բայերը (կարդաց-ել → եմ, ես, է, ենք, եք, են,
կարդաց-ել → էի, էիր, էր, էինք, էիք, էին),
սահմանականի **անցյալ կատարյալ** ժամանակը՝

գրեցի, ինք	կարդաց-ի, ինք	տես-ա, անք
գրեցիր, իք	կարդաց-իր, իք	տես-ար, աք
գրեց, ին	կարդաց - ին	տես-ավ, ան

Հրամայական եղանակի **հոգնակի** թիվը (կարդաց-ե՛ք, գրեց-ե՛ք, մոռաց-ե՛ք, մտ-ե՛ք, փախ-ե՛ք), ինչպես նաև **ան**, **են**, **Ն**, **չ** ածանց ունեցող բայերի **հրամայականի** **եզակին** (մոռաց-ի՛ր, վախեց-ի՛ր, մտ-ի՛ր, փախ-ի՛ր):

3. **ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՔ** – Սա դիտարկել է Էդուարդ Աղայանը: Անորոշ դերբայը ամբողջությամբ որպես հիմք է

ծառայում ***ապառնի*** *(գրել-ու) և* ***Համակատար*** *(գրել-իս) դերբայների Համար:* ***Ապառնի*** *դերբայով են կազմվում սաՀմական եղանակի* ***ապառնի*** *և* ***անցյալի ապառնի*** *ժամանակները*

(գնալ-ու → եմ, ես, է, ենք, եք, են,

գնալ-ու → էի, էիր, էինք, էիք, էին),

իսկ Համակատար դերբայը մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը, օրինակ՝

գրել-իս, կարդալ-իս կլինեմ, կլինեի

գրել-իս, կարդալ-իս պիտի լինեմ, պիտի լինեի

գրել-իս, կարդալ-իս եմ եղել

գրել-իս, կարդալ-իս պետք է եղած լինեի և այլն:

Առաջադրանքներ.

1. Բերված բայաձևերից անջատել Հիմքերն ու վերջավորությունները՝ ցույց տալով անկատարի և անցյալ կատարյալի Հիմքերը.

գրում, կարդում, գրած, կարդացած, գրող, կարդացող, մտնել, թռչել, տեսնել, մտնող, փախչող, թռչող, տեսնող, տեսած, փախած, մտնելիս, կարդալիս, կմտնեմ, կկարդացվեր, պիտի կարդալիս լինեի, կոտրատում, կոտրատեց, թռչկոտել, կթռչկոտեր, կվազվզեր:

2. Կազմել Հետևյալ բայերի անկատարի և կատարյալի Հիմքերը.

սիրել, ծեծել, գտնել, փախչել, մեծանալ, Հեռանալ, մտնել, տեսնել, բարձրացնել, մոտեցնել, կոտրատել, փախցնել, թռչկոտել, վազվզել, մտածել, մտորել, մտմտալ, ցատկոտել:

3. Կազմել բերված անորոշ դերբայների անկատարի, կատարյալի և դերբայական Հիմքերը.

Անորոշ դերբայ	Անկատարի հիմք	Կատարյալի հիմք	Դերբայական հիմք
մոտենալ կոտրատել հարգել դիպչել հրավիրվել կարոտել ուրախացնել խելոքանալ տեսնվել սիրվել			

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Բայով արտահայտված գործողությունը իրականության մեջ կապված է որոշակի անձերի, առարկաների ու երևույթների հետ: Որպեսզի որևէ գործողություն կատարվի, նախ անհրաժեշտ է որևէ անձ կամ առարկա, որը կատարի այդ գործողությունը կամ որի հետ տեղի ունենա այդ գործողությունը, ապա անհրաժեշտ է մեկ այլ անձ կամ առարկա, որի նկատմամբ կատարվի, որի առնչությամբ տեղի ունենա այդ գործողությունը. բայի այդ հատկանիշն էլ կոչվում է **բայի սեռ**.

Սեռը բայի քերականական այն կարգն է, որով արտահայտվում է գործողության հարաբերությունը այդ գործողությունը կատարողի՝ քերականական **ենթակայի՝** (տրամաբանական **սուբյեկտի**) և կրող առարկայի՝ քերականական **խնդրի՝** (տրամաբանական **օբյեկտի**) նկատմամբ:

Սեռը հատուկ է բայի թե՛ դիմավոր և թե՛ անդեմ ձևերին:

Բայի սեռը պայմանավորված է բայի իմաստով, բայերի մի խումբ պահանջում է, որ ենթակայի գործողության հետ որևէ առարկա (խնդիր) կապվի, որի վրա անցնի ենթակայի գործողությունը. այդ դեպքում բայից հետո տրվում է **ո՞ւմ** կամ **ի՞նչ(ը)** հարցը՝ **կարդալ** (ի՞նչ-գիրք, լրագիր, **սիրել** (ո՞ւմ) - երեխային, ուսուցչին): Պահանջվում է **ուղիղ խնդիր** լրացում:

Բայերի մեկ այլ խումբ էլ պահանջում է, որ գործողությունը ոչ թե ենթակայից անցնի կրող առարկայի՝ **ուղիղ խնդրի** վրա, այլ այդ առարկայից (խնդրից) անցնի ենթակայի վրա, այդ դեպքում բայն ստանում է **վ** ածանցը, և նրանից հետո պահանջվում է **ումի՞ց, ինչի՞ց** հարցը, կամ դրվում է **կողմից** կապը (Գիրքը կարդացվեց **ո՞ւմ կողմից:** Երեխան սիրվում է **ո՞ւմից** կամ **ո՞ւմ** կողմից):

Բայերի մի երրորդ խումբ էլ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում ոչ անմիջական առարկա (ուղիղ խնդիր) և ոչ էլ ենթական է այն կրում իր վրա. այսպես՝ «Երեխան խաղում է բակում», «Ջուրը հոսում է առվով», «Ծառը կանաչել է»:

Ուրեմն՝ բայն ունի 3 սեռ՝ **ներգործական** (տե՛ս առաջին խմբի օրինակները), **կրավորական** (տե՛ս երկրորդ խմբի օրինակները), **չեզոք** (տե՛ս երրորդ խմբի օրինակները): Ուսումնասիրենք դրանք առանձին-առանձին:

Ներգործական սեռ

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է, առարկա կամ անձ, որն իր վրա կրի կամ որի հետ առնչվի ենթակայի գործողությունը (կոտրել **փայտը**, կառուցել **տուն**, ծեծել **չարագործին**, սիրել **ծնողներին**): Այս սեռի բայերն ունեն **ակտիվ** գործողության նշանակություն, միշտ պահանջում են **ո՞ւմ** և **ի՞նչ(ը)** հարցերը և անպայման ունենում են **ուղիղ խնդիր** քերականական լրացում՝ կառուցել (ի՞նչ) **տուն**, սիրել (ո՞ւմ) **ծնողներին**:

Ներգործական սեռի բայերը կոչվում են **անցողական** (**переходный**) բայեր, ի տարբերություն մյուս սեռերի, որոնք կոչվում են **անանցողական** (**непереходный**), այլ լեզուներում կոչվում են նաև **ակտիվ** և **պասիվ**:

Ներգործական սեռը ժամանակակից հայերենում ցուցիչ չունի (գրաբարում ունեի **զ**, հոգնակիի համար նաև՝ **ս**՝ «ճանաչել **զ**իմաստութիւն և **զ**խրատ, իմանալ **զ**բանս հանճարոյ»): **Թե**՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում **ուղիղ խնդիրը** դրվում է միայն **հայցական հոլովով**:

Ներգործական սեռի բայերի տարբերակման հատկանիշը **վ** սեռածանց ընդունելն է, որով փոխվում է նրա սեռը, դառնում է **կրավորական** (սիրել-սիր**վ**ել, ծեծել-ծեծ**վ**ել, կառուցել-կառուց**վ**ել, քանդել-քանդ**վ**ել): Կան մի քանի ներգործական սեռի բայեր, որոնք **վ** ածանց չեն ստանում և կրավորական չեն դառնում. դրանցից են՝ **սովորել, ունենալ, գիտենալ, ցանկանալ, ուզենալ** և այլն:

Ներգործական սեռի բայերը կազմությամբ լինում են **պարզ** և **ածանցավոր**. ածանցավորները կազմվում են **ացն, եցն, ցն** պատճառական ածանցներով (հեռա**ցն**ել, մոտե**ցն**ել, թռ**ցն**ել, փախ**ցն**ել), կազմվում են նաև **անորոշ** դերբայով և **տալ** բայի հարադրությամբ (կառուցել տալ, գրել տալ, կոտրատել տալ):

Ներգործական սեռի պահանջով դրվող ուղիղ խնդիրն իմաստային տարբեր դրսևորումներ է ունենում.

ա) Ուղիղ խնդիրը լինում է այն առարկան, որը **որպես արդյունք** առաջանում է ենթակայի գործողության հետևանքով. ինչպես՝ **տուն** կառուցել, **գիրք** գրել, **հագուստ** կարել, **ծառ** աճեցնել, **երեխա** ծնել...

*բ) Ուղիղ խնդիրը կարող է լինել այն առարկան, որը ոչ թե ստեղծվում, այլ **փոփոխություն է կրում ենթակայի գործողությունից**, ինչպես՝ վերանորոգել **բնակարանը**, կարկատել **հագուստը**, ձևափոխել **վերարկուն**, պատռել **թուղթը**. կազմել **գիրքը**, դաստիարակել **երեխային**...*

*գ) Ուղիղ խնդիր կարող է լինել նաև այն առարկան, որի հետ **առնչվում է ենթակայի գործողությունը**՝ առանց փոփոխության ենթարկելու այն, ինչպես՝ դիտել **հեռուստացույց**, կարդալ **լրագիր**, **ռադիո** լսել, «տանգո» պարել, սիրել **երեխային**, հարգել **մեծերին**։*

Ներգործական սեռի բայերն իրենց ակտիվության և իմաստների շնորհիվ ճանաչվում են նաև նախադասություններից դուրս։

Առաջադրանք.

Գտնել ներգործական սեռի բայերը և որոշել դրանց իմաստները.

Ո՛չ, մենք չենք սիրել ճանապարհներ. ճանապարհները կամ թշնամիներ են բերել տուն կամ մեր պապերին են տարել դեպի օտարություն ու ետ չեն բերել։

Զգիտեմ՝ որտեղից եմ լսել, որտեղ եմ կարդացել այս տարօրինակ միտքը, բայց նույնը չի՞ ասում արդյոք մեր ոչ այնքան հեռու անցյալը։ Մեր բոլոր գավառները կտրված էին իրարից, կապվում էին բարալիկ, հազար տեղ թելի նման կտրտվող կածաններով... Ես հիմա հրճվում եմ, երբ ինքնաթիռի բարձունքից տեսնում եմ Հայաստանը, տեսնում ճանապարհները, որ արյունատար անոթների պես մեր հողը դարձնում են շնչող մարմին։ Ես սիրում եմ գիշերով նայել ճանապարհներին, երբ երևում են ավտոմեքենաների շարժվող կրակե աչքերը։

Նոր ճանապարհները բարեկամներ են բերում մեր երկիրը. երկիր, որը քանդել է հինը, կառուցել է նորը, վերանորոգել է տաճարներ ու հուշարձաններ (ՎՊ)։

Ով ինձ համար ուշքը կորցրեց, Ո՞վ գիտե՝ ում սիրտը կոտրեց,
Զտեսնելու տվի, անցա, Բայց երբ հետո ուշքի եկա,
Թե ես ինչ եմ կորցրել անդարձ, անվերադարձ, ուշ էր արդեն (ՀՍ)։

Կրավորական սեռ

Ինչպես տեսանք, **ներգործական** սեռի բայերի գործողություն կատարողը քերականական **ենթական** է՝ տրամաբանական **սուբյեկտը**, իսկ կրող առարկան՝ քերականական **ուղիղ խնդիրն** է՝ տրամաբանական **օբյեկտը**, մինչդեռ բոլորովին հակառակն է **կրավորական** բայերի դեպքում, երբ քերականական ենթական ոչ թե ինքն է կատարում գործողությունը, այլ **օբյեկտ է հանդիսանում** մեկ այլ առարկայի գործողության համար, այսինքն՝ փոխվում են պաշտոնները. օրինակ՝ «Գյուղացին մշակում է հողը»՝ նախադասության ենթական **գյուղացին** է, ուղիղ խնդիր՝ **հողը**: Սա **ներգործական** կառուցվածքի նախադասություն է, իսկ երբ փոխում ենք նախադասության կառուցվածքը, այն դարձնում ենք **կրավորական**՝ «Հողը մշակվում է գյուղացու կողմից», փոխվում են նաև նախադասության անդամների պաշտոնները՝ ենթական դառնում է **ներգործող խնդիր**, իսկ նախկին ուղիղ խնդիրը՝ **հողը**, դառնում է **ենթակա**: Այսինքն՝ ներգործական կառուցվածքի նախադասության մեջ քերականական ենթական և ուղիղ խնդիրը համապատասխանում են տրամաբանական **սուբյեկտին** և **օբյեկտին**, մինչդեռ **կրավորական** կառուցվածքի դեպքում փոխվում են պաշտոնները, տրամաբանական սուբյեկտը (գյուղացին)՝ ենթական, հանդես է գալիս ներգործող խնդրի պաշտոնով, իսկ տրամաբանական օբյեկտը (հողը)՝ ենթակայի պաշտոնով. ավելի **ակտիվ** դերում հանդես է գալիս **հողը**, իսկ **գյուղացին՝ պասիվ** դերում է:

Նման փոփոխությունը կատարվում է **բայի սեռի** փոփոխության շնորհիվ, երբ ներգործական սեռի բայը դառնում է կրավորական:

Կրավորական սեռի բայերի համար պարտադիր է **վ** կրավորական ածանցի առկայությունը, որը դրվում է **ներգործական** (գրել, կարդալ, սիրել) և **պատճառական** (հասկացնել, մոտեցնել, տեսցնել) բայերի վրա (կան սակավ բացառություններ):

Կրավորական կառույցի նախադասություններում տրամաբանական **սուբյեկտը** կամ քերականական **ներգործող** խնդիրն արտահայտվում է **բացառական** հոլովով («Ծառը կոտրվեց **քամուց**», «Երեխան վիրավորվեց **ընկերներից**») կամ սեռական

հոլովի և **կողմից** կապի միջոցով (Հողը մշակվում է **գյուղացու կողմից։ Երևան վիրավորվեց ընկերների կողմից**)։

Կրավորական սեռի բայերով կազմված նախադասություններում հաճախ ներգործող խնդիրը՝ տրամաբանական սուբյեկտը, չի հիշատակվում, ինչպես՝ Քաղաքում օրեցօր **կառուցվում** են նոր անցուղիներ։ **Ցուցադրվում** են նոր հողատարածություններ։ **Մտցվեցին** նոր առաջարկություններ և այլն։

Առաջադրանքներ.

1. Ներգործական կառուցվածքի նախադասությունները վերածել կրավորականների.

Դեկանը դիտողություն արեց ուսանողին։ Ուսանողը հարգում է դասախոսին։ Դասախոսը սիրում է իր ուսանողներին։ Շրջանավարտներին հրավիրել էին նախարարություն։ Հրամանատարը պատժեց անկարգապահ զինվորին։ Նա չէր հարգում իր հրամանատարին։ Նա մեծարում էր միայն վաշտի պետին, իսկ պետը գնահատում էր նրան։ Զինվորը սպանեց թշնամուն։ Թշնամին հետապնդում էր զինվորին։

2. Հետևյալ կրավորական բայերով կազմել ներգործող խնդիր ունեցող նախադասություններ.

զովաբանվել, գնահատվել, սիրվել, առաջադրվել, արհամարհվել, տուժել, բարձրացվել, ոչնչացվել, համակերպվել, արտահանվել, ծաղրվել։

3. Որոշել կրավորական բայերի իմաստները.

ա) Փաստաթուղթը հանձնվեց կառավարությանը։

բ) Ինքնակամ գերի հանձնվեց։

ա) Բանվորները վարչության կողմից տեղափոխվեցին նոր բնակարաններ։

բ) Նրանք ընտանիքներով տեղափոխվեցին քաղաք։

Սկսվեցին ուժեղ սառնամանիքները։

Լուսինը ծածկվեց ամպերով։

Նա լվացվեց, հագնվեց, տեղավորվեց մեքենայում ու գործի գնաց։

Լավ աշխատանքի համար առաջադրվեց պատգամավոր։

ա) Ուսանողների կողմից մի համար նվեր պատրաստվեց։

բ) Երեխան պատրաստվեց դպրոց գնալ։

Չեզոք սեռ

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում կրող առարկա (ուղիղ խնդիր) և ոչ էլ գործողությունը ենթական է կրում իր վրա. այս դեպքում ենթական գործողությունը կատարում է կամ **ինքնին** (վազել, պառկել, քնել, արթնանալ, նստել...) կամ ինքն իր նկատմամբ (հագնվել, սանրվել, լվացվել...):

Ինչպես տեսանք, ներգործական և կրավորական սեռի բայերը խնդրառական միասնություն ունեն. առաջինները կապակցվում են **ուղիղ խնդրի** հետ (խմել **ջուր**, տեսնել **ընկերոջը**), իսկ երկրորդները՝ կրավորականները, կապակցվում են **ներգործող** խնդիրների հետ (Վատ մարդն արհամարհվում է **ժողովրդից** (ժողովրդի կողմից): Այգին ավերվեց **ջրհեղեղից**): Մինչդեռ **չեզոք** սեռի բայերը խնդրառական միասնություն չունեն: Դրանց մի մասը պահանջում է **տրական** հոլովով դրվող անուղղակի խնդիր (սպասել **ընկերոջը**, նայել **թշնամուն**, դիպչել **ծառին**, օգնել **ծնողներին**), մյուս մասը պահանջում է **գործիական** հոլովով խնդիրներ (պարծենալ **ընկերներով**, ուրախանալ **ձեռք բերածով**, զմայլվել **նորակառույցով**...), չեզոքների մի մասն էլ ուժեղ խնդրառությամբ կապակցվում է **բացառական** հոլովի հետ (խուսափել վատ **մարդկանցից**, դժգոհել **ուսուցչից**, օգտվել **հնարավորություններից**, ամաչել **ավագներից**...):

Չեզոք սեռի մեջ են մտնում նաև **անդրադարձ** բայերը, օրինակ. «Երեխան արթնացավ վաղ առավոտյան, **լվացվեց**, **հագնվեց**, **սանրվեց**, վերցրեց պայուսակը և դպրոց գնաց»: Այս մեկ նախադասության մեջ կա 6 բայ-ստորոգյալ, որոնցից մեկը ներգործական սեռի բայ է (**վերցրեց**) երկուսը չեզոք սեռի են (**արթնացավ և գնաց**), իսկ մյուս երեքը՝ **անդրադարձ**, որոնք թեև **ներգործական** սեռի են (**լվալ, հագնել, սանրել**), ստացել են **վ** ածանցը (լվացվել հագնվել, սանրվել), բայց ցույց են տալիս, որ ենթական ուրիշից չի կրում գործողությունը, այլ իր գործողությունը կրում է իր վրա. դրա համար էլ **վ** ածանց ունեցող այդ բայերին տրվում է **անդրադարձ** անվանումը:

Մեկ ուրիշ օրինակ. «Եղբայրս **սափրվեց**, **փաթաթվեց** վերարկուի մեջ, **տեղավորվեց** մեքենայում և գնաց գործի»:

Կան նաև սահմանափակ թվով կրավորական բայեր, որոնք ցույց են տալիս երկու կամ մի քանի առարկաների այնպիսի գործողություններ, որոնք կատարում են միասին, համատեղ, այսպես՝ «ընկերները ***գրկախառնվեցին, համբուրվեցին*** *և* ***բաժանվեցին»****: Ընդգծված բայերը կոչվում են* ***փ ո խ ա դ ա ր ձ*** *բայեր:*

Չեզոք սեռի բայերի մի զգալի մասն էլ ցույց է տալիս ***անառարկա*** *գործողություն, այսինքն՝ այդ գործողության կատարման համար կողմնակի առարկա, օբյեկտ չի պահանջվում, օրինակ՝* ***դղել, ծաղկել, բուսնել, թռչել, լռել, քայլել, ապրել, մեռնել, հարստանալ, մեծանալ*** *և այլն:*

Այսպիսի բայերը սովորաբար խնդիր լրացումներ ստանալ չեն կարող. դրանք կարող են պարագայական լրացումներ ստանալ (բարձր թռչել, շուտ մեծանալ, դժվարությամբ քայլել, կարոտով մեռնել, վատ ապրել և այլն):

Չեզոք սեռի բայերը բաժանվում են 2 խմբի՝ ա) սեռային ածանց չունեցող՝ պարզ բայեր (գալ, գնալ, խաղալ, քնել, վազել, նստել, ցոլալ, նվալ...), բ) ածանցավոր բայեր. սրանց շարքին են դասվում ***վ*** *ածանց ունեցող, բայց իմաստով* ***չեզոք*** *բայերը (հաշտվել, գունափոխվել, թեքվել, կուտակվել, հուզվել, գժվել, հագնվել, սանրվել և այլն):*

Չեզոք սեռի են ***չ*** *ածանց ունեցող բոլոր բայերը (փախչել, դիպչել, սառչել, կորչել, հանգչել, կպչել, թռչել...), ինչպես նաև* ***ն*** *ածանց ունեցող բայերի մի մասը (մտնել, մեռնել, պրծնել, ընկնել, ելնել, իջնել, հասնել...):*

Ան *ածանց ունեցող բայերի մի մասը նույնպես չեզոք սեռի է (ուժեղանալ, մեծանալ, ծերանալ, փոքրանալ, գեղեցկանալ, աճեղանալ, հիանալ և այլն):*

Կրավորակերպ չեզոք բայեր

Արդի հայերենում չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաև ***վ*** *ածանց ունեցող բազմաթիվ բայեր, որոնք ձևով կրավորական են, բայց իմաստով չեզոք: Օրինակ՝* ***պոկվել, փոխվել, փռվել, այրվել, բորբոքվել, թեքվել, մոլորվել, սիրահարվել, սթափվել, կուտակվել, համոզվել, գժվել*** *և այլն: Այս տիպի բայերը կոչվում են* ***կ ր ա վ ո ր ա կ ե ր պ   չ ե զ ո ք****: Այս տիպի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ ենթական ոչ թե կրում է իր*

վրա, այլ ինքն է հանդիսանում գործողության օբյեկտը, այսպես՝ Գետակի վրա **թեքվել** է ուռին (Ավ. Իս.)։ Երկնակամարում գորշ ամպեր են **կուտակվել**, Արեգակը **թեքվել** էր դեպի մուտքը։ Երիտասարդը իզուր **բորբոքվեց**, նրա աչքերը լայն **բացվեցին**, ու ինքը **պոկվեց** տեղից (ՄԳ)։

Կրկնասեռ բայեր

Հայերենում կան սակավաթիվ բայեր, որոնք խոսքում հանդես են գալիս 2 սեռի իմաստով և կոչվում են **երկսեռ** կամ **կրկնասեռ**։ Այսպես՝ **աշխատել** բայը չեզոք սեռի է (Մայրս աշխատում է դպրոցում), բայց այն կարող է ստանալ նաև **ուղիղ խնդիր** և վերածվել ներգործականի, օրինակ՝ **Հաց** աշխատելու համար ինձ գցեցի Բաքու (Տիրվ.)։ Տունը պահելու համար դժվարությամբ է **փող** աշխատում (Մամ.)։ Նույնն են նաև՝ **երգել** և **խոսել** բայերը իմաստով **չեզոք** են (Արամոն լավ է երգում։ Դասախոսը բարձր է խոսում), բայց դրանք խոսքի մեջ կարող են ստանալ նաև **ուղիղ խնդիր** (Դու միշտ քո **հին երգն** ես երգում։ Նա իր **խոսքն** էր խոսում Աստծու հետ)։

Այդպես էլ **պոկվել** ու **այրվել** բայերը **կրավորակերպ չեզոք** են (Քարը **պոկվեց** տեղից ու ցած գլորվեց։ Այրվում էր հսկայական անտառը), բայց «Մաղիկը **պոկվեց** երեխայի կողմից և «Անտառը **այրվում** էր տաք արևից» նախադասություններում արդեն կան **ներգործող** խնդիրներ, հետևաբար՝ փոխվել է և բայերի սեռը՝ **չեզոքից** վերածվել է կրավորականի։

Այլ օրինակներ. **նայել**-ը չեզոք սեռի բայ է և պահանջում է հանգման խնդիր (նայել **մեկին**, նայել **մեքենային**), սակայն մի քանի իմաստներով **ներգործական** սեռի է (նայել **նկարը**, նայել օրվա **թերթերը**, նայել դիպլոմային **աշխատանքը**)։

Սպասել բայը նույնպես **չեզոք** սեռի է և պահանջում է հանգման **խնդիր** (սպասել ավտոբուսին, սպասել զանգին, սպասել ընկերոջը), բայց իր մի քանի իմաստներով՝ **ակնկալել**, **նախատեսել**, այն **ներգործական** սեռի է (Քեզանից լավ բան **եմ սպասում**։ Այս տարի խաղողի **բարձր բերք** է սպասվում։ Ըստ եղանակի տեսության՝ տաք **ձմեռ** է սպասվում)։

Նշենք նաև, որ կան մի շարք բայեր, որոնցում **վ**-ն ոչ թե ածանց

է, այլ մտնում է հիմնական բայիմաստի մեջ, և առանց **վ**-ի նման բայերը գործածական չեն, ինչպես՝ **գժվել, բնակվել, թաքնվել, խաղաղվել, հրաժարվել, հաշտվել, սխալվել, սթափվել, համարձակվել, նմանվել, սիրահարվել** և այլն:

Կա նաև սրա մյուս տարբերակը: Կան չեզոք սեռի մի քանի բայեր, որոնք հավասարապես գործածվում են և՛ **վ** ածանցով և՛ առանց դրա, այսինքն՝ ունեն զուգահեռ ձևեր. դրանցից են՝ համաձայնել>համաձայնվել, հանդարտել>հանդարտվել, բոնկել> բոնկվել, տրաքել>տրաքվել, մռայլել>մռայլվել և այլն:

Իմաստային տարբերություններ սրանցում գրեթե չկան:

Հիշի՛ր — Միայն **վերաբերել** և **վերաբերվել** զուգաձևությունների միջև կա իմաստային տարբերություն. առանց **վ**-ի ձևը գործածվում է **իրի** անուն հանդիսացող ենթակայի դեպքում (Այդ **բանը** ինձ չի վերաբերում: **Դիտողությունը** վերաբերում է բոլորին), իսկ ածանցավոր ձևը գործածվում է **անձ** ցույց տվող ենթակայի դեպքում (**Տիգրանը** ընկերուհու հետ լավ չի **վերաբերվում: Դու** ինձ հետ վատ ես **վերաբերվում**):

Վերջին դեպքում բայն ունի վերաբերմունքի դրսևորման իմաստ:

Խուսափի՛ր հետևյալ սխալ ձևերից — **պարպ(վ)ել, տուժ(վ)ել, քծն(վ)ել, նախանձ(վ)ել, գաղթ(վ)ել...**

Առաջադրանք.

Դուրս գրել կրավորակերպ չեզոք բայերը և ըստ հնարավորության դրանցից կազմել պատճառական բայեր.

ա) Կատուն թաքնված էր թփերի արանքում: Ավագյանը հարձակվեց նրա վրա և մատները սեղմեց նրա կոկորդին: Սարսափից խելագարված թռչունները երամով թռչում էին դեպի վեր, դիպչում ցածր տանիքին ու կրկին ցած թափվում: Նա վտանգավոր հանցանք էր համարում հրաժարվել այդ մտքից, բայց չէր հաջողվում: Տուն գնալիս նա սառն օդի ազդեցության տակ սթափվեց: ... Էլուշը նրանից հիասթափվել էր և չէր սխալվել... Ամբողջ օրը բամբասանքով էր զբաղված... Կանայք մի րոպե սսկվեցին... (ըստ Ն. Զարյանի):

բ) Նրա ջլուտ, մկանուտ դեմքը խորխտանում էր արծվային քթի հպարտ կորագծով և մռայլվում աջ այտին վերևից վար

գծված մի բարակ սպիով... Լույսը բացվում էր: Աստղերը գունաթափվեցին, և առարկաները կերպարանք առան... Նա հակառակվեց և առաջ վազեց մյուս նժույգից: Հասկացավ, որ իր հայրը զբաղված է չատ ծանրակչիռ գործով: Բակում խռնվել էին սեպուհները և իրար գլխի հավաքված վիճում էին: Գամփռը հաչոցով հարձակվեց եկողների վրա (ԴԴ):

ԲԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Ինչպես ասվել է, բայը խոսքի մեջ արտահայտության 2 ձև ունի՝ ***դիմավոր*** *կամ* ***եղանակային*** *և* ***անդեմ*** *կամ* ***դերբայական:***

Դիմավոր *են այն ձևերը, որոնց գործողության իմաստի հետ հատուկ՝ են* ***եղանակի, ժամանակի, դեմքի*** *ու* ***թվի*** *քերականական կարգերը. սրանք կազմում են խոնարհման լրիվ հարացույցը: Այս ձևերը նախադասության մեջ լինում են միայն* ***պարզ*** *(բայական) ստորոգյալներ (գրում եմ... գրելու եմ, գրել եմ, գրեցի, գրեմ, կգրեմ, պիտի գրեմ, գրի՛ր):*

Անդեմ *են այն ձևերը, որոնք արտահայտում են սոսկ գործողություն՝ առանց եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի (կարդալ, կարդացած, կարդացող, կարդալիս). այս ձևերը նախադասության մեջ լինում են՝* ***ենթակա, ստորոգելիական վերադիր, գոյականական և բայական անդամների լրացումներ:***

ԴԵՐԲԱՅՆԵՐ

Բայի անդեմ ձևերը կոչվում են ***դերբայներ****, որոնց, ինչպես բայի դիմավոր ձևերին, հատուկ են* ***բայիմաստի, սեռի*** *և* ***խնդրառության*** *հատկանիչները, որոնց չնորհիվ էլ դրանք մտնում են* ***բայ*** *խոսքի մասի մեջ:*

Ասվել է նաև, որ առանց բայի խոսք չկա, իսկ բայը խոսքի մեջ հանդես է գալիս նչված 2 ձևերով: Հայերենի բոլոր բայերն ունեն իրենց դերբայական ձևերը, բացի ***գալ, տալ,*** *լալ անկանոն բայերից (սրանք չունեն անկատար դերբայի ձևեր) և* ***եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ*** *պակասավոր բայերը, որոնք չունեն դերբայական ձևեր:*

Ժամանակակից հայերենի գրական լեզուն ունի 8 դերբայներ, որոնցից 4-ը՝ ***անկատար, ապառնի*** *(ապակատար),* ***վաղակատար*** *և* ***ժխտական*** *ցույց են տալիս* ***բուն*** *գործողության ընթացքային*

վիճակ, այսինքն՝ օժտված են քերականական կարգերով և կոչվում են **կախյալ** (**ձևակազմիչ**) դերբայներ, սրանք դպրոցական քերականության մեջ անվանվում են **ձևաբայեր**:

Մյուս 4 դերբայները՝ **անորոշ, ենթակայական, Հարակատար, Համակատար**, դիմավոր ձևեր չեն կազմում և կոչվում են **անկախ** դերբայներ. դրանք էդ. Աղայանը կոչում է **վիճակային** դերբայներ:

ԱՀա արդի Հայերենի այդ 8 դերբայները.

Կախյալ դերբայներ	**Անկախ դերբայներ**
Անկատար — գրում, կարդում	**Անորոշ — գրել, կարդալ**
Ապառնի — գրելու, կարդալու	**Ենթակայական — գրող, կարդացող**
Վաղակատար — գրել, կարդացել	**Հարակատար — գրած, կարդացած**
Ժխտական — գրի, կարդա	**Համակատար — գրելիս, կարդալիս**

ԱՆԿԱԽ ԴԵՐԲԱՅՆԵՐ

Անորոշ դերբայ

Անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության կամ եղելության անորոշ վիճակ. այն Համարվում է բայի **ուղիղ, ելակետային** ձևը, ինչպես **ուղղական** Հոլովը գոյականի Համար, որից էլ կազմվում են մյուս Հոլովները: Բայական Համակարգում էլ **անորոշ դերբայն** է այն ելակետային ձևը, որը Հիմք է Հանդիսանում բոլոր դերբայների ու եղանակային ձևերի Համար:

Անորոշ դերբայը կազմվում է **ել** և **ալ** ձևույթներով, որոնք դրվում են բայի թե՛ պարզ և թե՛ ածանցավոր Հիմքերի վերջում:

Անորոշ դերբային բնորոշ են և՛ **բայի** և՛ **գոյականի** քերականական կարգերը:

Գոյականաբար գործածվելիս (**Ս. ԱբրաՀամյան**, նշվ. աշխ., էջ 148) այն Հոդ է ստանում, Հոլովվում է՝ պատկանելով **ու** Հոլովման, կարող է նաև **Հոգնակի** թվով գործածվել. օրինակ, «**Վազելները** ինձ դուր չեկավ, — ասում է մարզիչը»:

Բացի նշված ձևաբանական Հատկանիշներից, Հաճախ անորոշ դերբային տրվում է գոյականին տրվող **ի՞նչ(ը)** Հարցը («Երեխան սիրում է խաղալ» — **ի՞նչ** է սիրում և «Խաղալը (ի՞նչը) երեխան շատ է սիրում»):

Ձևաբանական այս հատկանիշներն ստանալով՝ անորոշ դերբայը, բնականաբար, կատարում է նաև շարահյուսական պաշտոններ.

ա) **Ուղիղ** ձևով հանդես գալիս այն կատարում է **ենթակայի** շարահյուսական պաշտոն (**Գրելն** ու **կարդալը** զարգացնում են մարդուն: **Կառուցելը** մեր ժողովրդի դարավոր ավանդույթն է: Ճիշտ **խոստովանելը** փրկեց քեզ: Դասական երաժշտություն **լսելը** ազնվացնում է մարդուն):

Հայցական հոլովով դրվելիս՝ կատարում է **ուղիղ խնդրի** պաշտոն (Սոնան շատ է սիրում **պարել**: Դարան են մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի **մոտենալը** (ԱԲ): Ձեն սիրում քո այդ **տրտնջալը** (ՄԳ):

Ուղիղ ձևով գործածվելիս անորոշ դերբայը լինում է նաև ստորոգելիական վերադիր, օրինակ, «Բա սա **գրե՞լ** է, որ դու ես գրել», Դա **երգե՞լ** էր, որ երգեցիր: Այս դեպքում ավելի գործածական են ժխտական նախադասությունները՝ Դա **պատասխանել** չէ, այլ կմկմալ: Դա **բարևել չէր**, որ դու բարևեցիր ուսուցչին:

Սեռական հոլովով դրվելիս հիմնականում **որոշչի** պաշտոն է կատարում (**Խմելու** ջուրը պետք է խնայել: **Գրելու** թուղթ շատ ունեմ):

Այս հոլովով հանդես է գալիս նաև **հատկացուցչի** պաշտոնով՝ (**Խաղալու** հերթը ինձ հասավ: **Գնալու** ժամանակը եկել է):

Որպես բայից կախված՝ անորոշի **տրական** հոլովը հանդես է գալիս ինչպես **հանգման խնդրի** (Սպասում էր **զանգը տալուն** և ընկերոջ **ներս մտնելուն**), այնպես էլ **նպատակի պարագայի** պաշտոններով (Երեխան գնաց ջուր **խմելու**: Դասախոսը գնաց դասախոսություն **կարդալու**: Եկել են իրենց հարգանքը **մատուցելու**):

Անորոշ դերբայի **բացառական** հոլովը հիմնականում 2 պաշտոններով է հանդես գալիս՝

ա) **անջատման** անուղղակի խնդրի՝ Խուսափում է իր ընկերներին **հանդիպելուց**: Հրաժարվում է բացատրություն **տալուց**:

բ) պատճառի պարագայի՝ Հոգնեցի շատ **գրելուց**: Քիչ **քնելուց** և վատ **սնվելուց** ես այդպես նիհարել: **Շտապելուց** թև են առել, դարձել թնթև թիթեռներ (ՀԹ):

Գործիական հոլովով դրվելիս անորոշը **ձևի** պարագայի դեր է կատարում՝ Երեխան **վազելով** դպրոց գնաց: **Երգելով** է երեխային քնեցնում:

Լինում է նաև **հիմունքի** պարագա՝ Մարդ **կարդալով** է զարգա-

նում: Արդարությամբ **դատելով** ես վստահություն չահում:

Ներգոյական հոլովով սակավադեպ է կիրառվում. այդ հոլովով հանդես գալիս լինում է **սահմանափակման** պարագա՝ **Խաղալում** չատ ակտիվ ես, իսկ **սովորելում**՝ ծույլ:

Անորոշ դերբայը հանդես է գալիս նաև որպես ստորոգյալի մաս կազմող բառ (անհրաժեշտ է հեռանալ):

Գործածվում է նաև **հրամայական** եղանակի իմաստով: Այս առումով հիշենք ստորակետի գործածման մի հայտնի ասացվածք. «Հրամանատարը մի չարագործի դատապարտում է մահվան և գրավոր հրամանն ուղարկում է դահճին՝ գրելով «Գնդակահարել, չի կարելի ազատել»: Կաշառված դահիճը փոխում է ստորակետի տեղը՝ «Գնդակահարել չի կարելի, ազատել», և մահապարտն ազատվում է:

Անորոշ դերբայն ինքնին դառնում է նաև բայական միակազմ նախադասություն՝

Մոռանա՛լ. ամեն ինչ: Ամենին **մոռանալ**,
Ջնջե՛լ, **չխորհե՛լ**, չափսոսա՛լ... **Հեռանալ** (ՎՏ):

Լինել, թե՞ **չլինել**՝ այս է խնդիրը (Շեքսպիր):

Ապրել, այնպես **ապրել**, որ սուրբ հողդ չզգա քո ավելորդ ծանրությունը (ՊՍ):

Ճանաչե՛լ զիմաստություն և զխրատ:

Առաջադրանքներ.

1. Բերված առած-ասացվածքներում գտնել անորոշ դերբայները, որոշե՛լ դրանց հոլովն ու պաշտոնը.

Լավ է կանգնած մեռնել, քան ծնկաչոք ապրել (հայկ.):

Խոփն աշխատելով է փայլում, մարդը՝ սովորելով (հայկ.):

Մորուքը բերելու գնաց, բեղը կորցնելով ետ եկավ (հայկ.):

Մեռնելը հեշտ է, ապրելը՝ դժվար (հնդ.):

Հարցնելով մինչև Կարս էլ կգնաս (քրդ.):

Ամենալավ սովորությունը լեզուն ատամների տակ պահելն է (արաբ.): Լավ է մաքուր սիրտ ունենալ, քան լիքը քսակ (արաբ.): Ապրելով խաղաղության մեջ՝ պատերազմի մասին մի՛ մոռացիր (ճապ.): Պատժից խուսափելու ամենալավ միջոցը հանցանք չգործելն է (չին.): Պատվով մեռնելն անպատիվ ապրելուց լավ է (չին.):

2. Դուրս գրել անորոշ դերբայները և ցույց տալ բայի արմատը, ածանցը և վերջավորությունը.

Մենք գիտենք մարտնչել կյանքում:
Մենք գիտենք հառաչել ու լալ:
Ծովի պես չառաչել գիտենք
Եվ կանչել առվի պես՝ զուլալ:
Ամպի պես գիտենք որոտալ,
Սոսափել սոսու պես մի պերճ,
Հողմի պես ոլորել գիտենք,
Հովի պես օրորել անվերջ...
Մենք գիտենք մխրճվել երկինք
Եվ ծովի հատակը սուզվել,
Մի ծաղկի մահով վշտանալ,
Մի բացվող բողբոջով հուզվել...
Մենք քեզնով ներշնչվել գիտենք
Եվ գիտենք քեզ համար մեռնել
Եվ անգամ վիրավոր ձեռքով
Հաղթության դրոշակ բռնել (Հ. Սահյան):

3. Մոտենալ, կառչել, հոտոտել, թաքնվել անորոշ դերբայները հոլովել նախադասությունների մեջ և որոշել դրանց պաշտոնները.

Հարակատար դերբայ

Հարակատար դերբայն ունի ***երկակի*** *բնույթ, այսինքն՝ այն արտահայտում է անցյալում սկսված, կատարված գործողություն և դրա հետ միասնաբար՝ դրություն, վիճակ:*

Երբ ասում ենք՝ ***հոգնած մարդ, ծաղկած ծառ,*** *հասկանալի է, որ մարդու և ծառի հետ գործողությունները կատարվել են անցյալում, որը թողել է իր հետևանքը որպես տվյալ առարկայի հատկանիշ: Այս առումով հարակատար դերբայն իր իմաստով մոտենում է առարկայի հատկանիշ ցույց տվող բառին՝* ***ածականին,*** *բայց ածական չէ, որովհետև ունի բայիմաստ, սեռ և խնդրառություն:*

Հարակատար դերբայը կազմվում է ***ած*** *վերջավորությամբ, որը դրվում է* ***ե*** *խոնարհման* ***պարզ*** *բայերի և կրավորական ու բազմապատկական ածանցներ ունեցող բայերի* ***ներկայի հիմքի*** *վրա (գրել-գրած, նստել-նստած, լվացվել-լվացված, գրվել-գրված,*

կոտրատել-կոտրատված, մրոտել-մրոտված), իսկ **ա** *խոնարհման բոլոր բայերի և* **ան, են, ն, չ,** *ածանցներ ունեցող բոլոր բայերի* **անցյալի հիմքի** *վրա (կարդալ-կարդացած, հեռանալ-հեռացած, մոտենալ-մոտեցած, տեսնել-տեսած, թողնել-թողած, թռչել-թռած, կպչել-կպած, կպցնել-կպցրած):*

Նարահյուսական կիրառությունը *— Հարակատար դերբայը խոսքի մեջ ունի ինքնուրույն կիրառություն. քանի որ այն գործողության հետ ցույց է տալիս նաև առարկայի վիճակ, նմանվում է ածականին, հետևաբար նրա առաջնային կիրառությունը* ***որոշչի*** *պաշտոնով հանդես գալն է՝* ***Դեղնած*** *դաշտերին իջել է աշուն (ՎՏ):* ***Տաշած*** *քարը գետնին չի մնա (Ժող.):* ***Մաղկած*** *ծառին քար չեն գցի (Ժող.):*

Բայերի հետ գործածվելիս կատարում է ***ձևի պարագայի*** *պաշտոն, օրինակ՝ Տուն եկավ* ***հոգնած*** *ու* ***սոված:*** *Պատկերասրահը դիտում էին* ***հմայված*** *ու* ***հիացած*** *(Մամ.): Ես քեզնից* ***դառնացած*** *հեռացա (ՎՏ):*

Հարակատար դերբայը գործածվում է նաև փոխանվանաբար՝ ենթարկվելով **ի** *հոլովման, ստանում է* ***որոշիչ հոդ*** *և հանդես է գալիս գոյականին հատուկ բոլոր պաշտոններով, նախ՝ կատարում է* ***ենթակայի*** *պաշտոն՝ օրինակ. «Գիշերվա* ***կերածը*** *կորած է» (Ժող.):* ***Քանդվածը*** *էլ չի շինվի:* ***Քնածն*** *արթնացավ:*

Սեռական *հոլովով դրվելիս* ***հատկացուցչի*** *պաշտոն է կատարում:* ***Գրածիդ*** *բովանդակությունը մի քիչ բարդ է:* ***Կարդացածիս*** *իմաստը լավ չհասկացա:*

Տրական *հոլովով լինում է* ***հանգման*** *ու* ***մատուցման*** *խնդիրներ (Մոտեցիր* ***կանգնածներին*** *ու սուրճը մատուցիր միայն* ***նստածներին****):*

Հայցականը *լինում է ուղիղ խնդիր (****Գրածդ*** *լավ չհասկացա:* ***Քամու բերածը*** *քամին կտանի (Ժող.):*

Դրվում է նաև մյուս հոլովներով:

Հատուկ նշենք, որ հարակատարի որոշ ձևեր որոշչային կիրառության հետևանքով վեր են ածվում ***ածականների****, ինչպես՝* ***հասած*** *աղջիկ,* ***նեխած*** *բնավորություն,* ***սոված*** *երեխա (Ինձ են նայում մերկ ու* ***սոված*** *մի տուն լիքը մանուկներ (ՀԹ):*

Մի քանի հարակատար դերբայներ էլ փոխանվանական կիրառության հետևանքով վեր են ածվել ***գոյականների****, ինչպես՝* ***խորոված, սիրած, նշանած, հատված, փարկած, կոտորած:***

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ – *Ոչ վաղ անցյալում գրված դասագրքերում Հարակատար դերբայի և օժանդակ բայերի Համատեղ գործածվելը դիտվել է որպես եղանակային ձև. այն դիտվել է որպես սաՀմանական եղանակի Հարակատար ներկա (նստած եմ,…) և Հարակատար անցյալ (նստած էի,…), և սաՀմանական եղանակի մեջ դիտվում էր 9 ժամանակային ձև:*

*Սակայն վերջին շրջանի դասագրքերում Հարակատար դերբայ + օժանդակ բայ ձևերը Համարվում են բաղադրյալ ստորոգյալ. օրինակ. Երևխան **քնած** է, ծառը **ծաղկած** է:*

Սա նույնպես Էդուարդ Աղայանի տեսակետն է:

Հիշի՛ր – Բայերի խոնարՀման Համակարգում Հարակատար դերբայը մասնակցում է նաև երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը. այսպես՝

*Պետք է, որ այդ գիրքը **կարդացած լինեմ:***

*Անշուշտ, դու էլ այն **կարդացած կլինես:***

*Պետք է, որ երկուսս էլ այն **կարդացած լինենք** և այլն:*

Առաջադրանքներ.

1. Բերված առած-ասացվածքներում գտնել Հարակատար դերբայները, որոշել նրանց Հոլովներն ու պաշտոնները.

Ժողովուրդը քնած առյուծ է, որ զարթնեց, էլ չի քնի (Հայկ.): Կաթի Հետ մտածը Հոգու Հետ դուրս կգա (Հայկ.): Աչքի տեսածը Հաստատ է, քան ականջի լսածը (Հայկ.): Քնածը քնածին չի կարող արթնացնել (Ճապ.): Ջուրը չտեսած՝ ոտքերդ մի՛ Հանիր (Հնդ.): Բերնիցդ թռած խոսքը Հրեղեն ձիով էլ չես բռնի (չին.):

2. Կազմել կառուցել, կարդալ, Հեռացնել, կռվել անորոշ դերբայների Հարակատարը, դրանք Հոլովել նախադասությունների մեջ և որոշել պաշտոնները:

3. Կազմել բերված բայերի միայն առաջին դեմքերի երկրորդական բաղադրյալ ժամանակները.

Օրինակ՝ նստած եմ լինում, նստած կլինեմ, նստած պիտի լինեի, կարդալ, վերանորոգել, նկարվել, փախչել, տեսնել, առաջադրվել, Հիմնավորել…

Ենթակայական դերբայ

Ենթակայական դերբայն արդի հայերենում կազմվում է **ող** ձևույթով, որը դրվում է **ե** խոնարհման բայերի **ներկայի** հիմքի (վազող, երգող, թռչող, ուտող, իջնող, ընդունող, իջեցնող, վազեցնող, կարդացվող...) և **ա** խոնարհման բայերի (կարդացող, ժպտացող, լվացող, մոտեցնող, հեռացող, մեծացող,...) **անցյալի** հիմքի վրա:

Լինել բայն ունի ենթակայական դերբայի 2 ձև՝ **լինող** և **եղող**:

Ենթակայական դերբայը ցույց է տալիս, բնութագրում է գործողության մեջ գտնվող, եղող առարկան. հետևաբար այն գործողի անուն է, և նրա մեջ կա և՛ գործողության գաղափար, և՛ առարկայի գաղափար:

Այսպես՝ **երգող, քայլող, վազող, կարդացող, լսվող** դերբայները մատնանշում են նրան, ով վազում է, երգում է, քայլում է, կարդում է և այլն: Ինքնըստինքյան հասկանալի է, որ բերված դերբայներն առարկայական ընդհանուր գաղափար ունեն, ուրեմն՝ «ինքնին գոյական են, և փոխանվանական կիրառության մասին խոսք լինել չի կարող» (**Մ. Ասատրյան,** նշվ. աշխ., էջ 267): Դա շատ լավ է երևում ցանկացած օրինակում՝ «Ասողին լսող է պետք». այստեղ գործ ունենք 2 գոյականների հետ, որոնք ենթակայական դերբայներ են: Նույնն է նաև՝ «Գրողը պատասխանեց հարցնողներին»:

Նույն դերբայն ունի նաևածականական-որոշչային կիրառություն՝ «**Երգող** երեխան մոտեցավ **զմահաստող** հանձնաժողովին»:

Առաջին երկու նախադասություններում ենթակայական դերբայներն առարկայական իմաստ են արտահայտում և հանդես են եկել **ենթակայի** շարահյուսական պաշտոնով, իսկ մյուս երկու նախադասություններում ենթակայական դերբայները հանդես են եկել **որոշչի** շարահյուսական պաշտոնում և ածականական իմաստ են արտահայտում: Բայց և այնպես նշված դերբայները որպես խոսքի մաս մտնում են **բայական** համակարգի մեջ, որովհետև նրանց հատուկ է **բայիմաստի, սեռի** և **խնդրառության** հատկանիշը:

Մ. Ասատրյանը նշում է նաև մի կարևոր հատկանիշ. դա այն է, որ ենթակայական և հարակատար դերբայները ժամանակային

իմաստով Հակադրության մեջ են. ենթակայականը ցույց է տալիս **ընթացքի մեջ** գտնվող գործողություն (**քննվող** ուսանող, **կառուցվող** շենք), իսկ Հարակատար դերբայը ցույց է տալիս ընթացքից դուրս եկած գործողություն (**քննված** ուսանող, **կառուցված** շենք), այսինքն՝ **ենթակայականը՝ ներկայի, Հարակատարը՝ անցյալի ժամանակային** Հատկանիշներ ունեն:

Ենթակայականի շարաՀյուսական կիրառությունը – Արտահայտելով **առարկայական** նշանակություն՝ այս դերբայը նախադասության մեջ Հանդես է գալիս գոյականին Հատուկ շարաՀյուսական պաշտոններով ու քերականական կարգերով՝ թվի, Հոլովի, առկայացման.

Տեսնողն էլ կասի՝ ինչ աղջիկ է սա (ՀԹ): **Ձու գողացողը** ձի էլ կգողանա (ժող.) – ենթակա:

Տանողի աչքը դուրս գա (ժող.) – Հատկացուցիչ:

Կյանքն ու արևը բաշխում է **ապրողներին** (ՀԹ) – մասնուցում: Մոտեցանք **երգողին** – Հանգում:

Հաղթողին փեսի թախտի մոտ բերին (ՀԹ) – ուղիղ խնդիր: **Հաղթվողին** դուրս տարան – ուղիղ խնդիր:

Սուտ **խոսողից** ու **բամբասողից** Հեռու մնա – անջատում: Քեզ շրջապատիր ճիշտ **խոսողներով** ու կյանքը լավ **Հասկացողներով** – միասնություն:

Ինչպես տեսանք, ենթակայական դերբայի Հիմնական կիրառություններից է նաև նրա **ածականական-որոշչային** կիրառությունը՝

> ... Տաճարի շուրջ սուրբ, սուրբ վանքեր.
> **Հնչող, չնչող, կանչող** զանգեր (Պ. Սևակ):

> ... Եկեք այսօր մենք Համբուրենք որդիաբար
> Փոշի **սրբող**, լվացք **անող**,
> Անվերջ **դատող**, անվերջ **բանող**
> Այս ձեռքերը (Պ. Սևակ):

Նշենք նաև, որ մի շարք ենթակայական դերբայների մեջ թանձրացական, առարկայական բովանդակությունն այնքան է ամրացել, որ դրանք լրիվ գոյականացել են, ինչպես՝ **գրող, ուսանող, ծառայող, սիրող** (սիրած իմաստով), **չաՀագործող, մեղադրող, ծնող, ընտրող, մասնուցող, ասմունքող, ուրացող**...

Առաջադրանքներ.

1. Որոշել, թե ենթակայական դերբայները նախադասության ինչ անդամների շարահյուսական պաշտոններ են կատարել.

Իր արհեստին ծուռ նայողը կուշտ չի ուտի (Ժող.)։ Ասողին լսող է պետք (Ժող.)։ Պատվով մեռնողը փառքով է ապրել (Ենքս.)։ Մի պահ Միքայելն իրար հակասող կարգադրություններ էր անում։ Մահճակալի շուրջը հավաքվել էին մեռնողի ընտանիքի անդամները։ Մեռնողից շատերը ակնկալիքներ ունեին (Շիրվ.)։

... Հոնքերի տակից փայլեցին անսովոր վիշտ արտահայտող աչքերը։ Լսվում էին օգնություն կանչողների ձայները։ Ներկա եղողներից շատերը մռայլված էին։ Նրա զառանցանքի վրա ուշադրություն դարձնողներ քիչ եղան ... Խրատողը մեր հարևան Թորոսն էր՝ շատերի կարծիքով նա ճիշտ դատող էր և խելոք մտածող։ Նրան սովորեցնող է եղել (Շիրվ.)։

2. Կազմել բերված բայերի ենթակայական դերբայները և գործածել նախադասությունների մեջ՝ տարբեր պաշտոններով.

գնալ, կառուցել, խաղալ, հաղթել, թողնել, փախչել, հեռանալ, մոտենալ, տեսնել, բանել...

Համակատար դերբայ

*Անկախ՝ ինքնուրյուն կիրառություն ունեցող դերբայների թվին է պատկանում **համակատար** դերբայը։ Այս դերբայը ցույց է տալիս որևէ գործողությանը զուգընթաց կատարվող գործողություն։*

Օրինակ՝ Ե. Չարենցն իր ընկերոջը՝ Լիպարիտ Մխչյանին, հիշում է, երբ միտքն է գալիս իր մանկությունը.

*Մանկությունը **հիշելիս**՝ սիրտս դառնում է գինով,*
Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով։
*Ո՞վ ցած կբերի նրան **թռչելիս**,*
Թե չլինեին կինն ու գինին (ՀԹ)։

*Կամ՝ «Համալսարան **գնալիս** ճանապարհին հանդիպեցի վաղեմի ընկերոջս»։ Ակնհայտ է, որ գնալու և հանդիպելու գործողությունները տեղի են ունեցել զուգընթացաբար՝ միաժամանակ։ Այս հիմնավորումով էլ այս դերբայը կոչում են նաև **զուգընթացական** (Ն. Պառնասյան), կամ **ժամանակային** (Էդ. Աղայան), հարակ-*

*ցական (Ս. Աբրահամյան), իսկ Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը և Մ. Ասատրյանը այն համարում են **անկատար** (գրում, կարդում) դերբայի երկրորդ ձև (գրելիս, կարդալիս...):*

*Համակատար դերբայը կազմվում է **լիս** ձևույթով, որը դրվում է բոլոր բայերի (պարզ թե ածանցավոր) **անորոշ** դերբայի վրա՝*

գրել կարդալ տեսնել փախչել	+ **լիս**	հեռանալ մոտենալ կոտրատել հյուրասիրվել	+ **լիս**

Այս անկախ դերբայը նախադասության մեջ 2 հիմնական կիրառություն ունի՝

*ա) **ժամանակի** պարագայի պաշտոն է կատարում (**Գրելիս** չեն խոսում, **Կարդալիս** ուշադիր եղիր):*

*բ) Մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը, այսպես՝ Երբ դասի **գնալիս եմ լինում**, ստուգում եմ պայուսակս: Հենց որ դասի **գնալիս կլինես**, փոխիր տնային հագուստդ:*

*Համակատար դերբայը մասնակցում է միայն **գալ, տալ, լալ**, անկանոն բայերի սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակաձևերի կազմությանը.*

Սահմանական եղանակ

ներկա		անցյալի անկատար	
գալիս տալիս լալիս	եմ, ես, է ենք, եք, են	գալիս տալիս լալիս	էի, էիր, էր էինք, էիք, էին

*Այս անկանոն բայերը գրական լեզվում չունեն անկատար դերբայի ձև (**գալում, տալում, լալում**). սրանք գործածվում են միայն «Կ» ճյուղի որոշ խոսվածքներում:*

Առաջադրանքներ.

1. Գտնել համակատար դերբայները և դրանցով կազմել նոր նախադասություններ.

Դուրս եմ գալիս ես փողոց, շրջում անվերջ ու տրտում (ՎՏ)։ Ուսանողը ճաղերի արանքից դիտում էր նրան՝ հանվելիս ու հագնվելիս (ՆԶ)։ Պարում են ասես կռիվ գնալիս... Ով ցած կբերի նրան թռչելիս, թե չլինին կինն ու գինին (ՀԹ)։ Կարծես թե ես եմ լալիս այդ երգում (ՎՏ)։ Իրենցից անկախ մի բան հիշելիս, իմ ներբանները նվում են հիմա (ՀՍ)։ Եվ ամեն անգամ քեզ հանդիպելիս, մի թեթև բարև եմ տալիս (ՎԴ)։ Գարուն է գալիս, դռները բացեք (ՀՇ)։ Գարունդ հայերեն է գալիս, ձյուներդ հայերեն են լալիս (ՀՍ)։

2. Կազմել կառուցել, առաջանալ, տեսնվել, ունենալ, կանչել, բայերի համակատար դերբայները և դրանցով կազմել նախադասություններ.

ԿԱԽՅԱԼ (ՁԵՎԱԿԱԶՄԻՉ) ԴԵՐԲԱՅՆԵՐ

Նախ՝ ինչո՞ւ **կախյալ**, որովհետև սրանք հանդես են գալիս միայն **օժանդակ բայի** հետ համատեղ գործածվելիս։

Ինչպես ասվել է, հայերենում կա 4 կախյալ դերբայ (**անկատար, ապառնի (կատարելի), վաղակատար, ժխտական**), որոնք միանալով օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերին, կազմում են բայի խոնարհման հարացույցը. դրա համար էլ կոչվում են **ձևաբայեր։** Այս դերբայները իրենց **բայիմաստի, սեռի և խնդրառության** հետ, օժանդակ բայերի շնորհիվ ձեռք են բերում նաև **դեմքի, թվի, ժամանակի** ու **եղանակի** քերականական կարգեր, որոնցից զուրկ են **անկախ դերբայները,** որոնք, ինչպես տեսանք, խոնարհման հարացույցին չեն մասնակցում և համարժեք են գոյականներին ու ածականներին, նախադասություններում էլ կատարում են դրանց շարահյուսական պաշտոնները։

Անկատար դերբայ

Ժամանակակից հայերենում **անկատար** դերբայը կազմվում է բայի **ներկայի** հիմքի վրա հավելելով **ում** դերբայական ձևույթը, որը դրվում է անորոշ դերբայի **ել** և **ալ** ձևույթների փոխարեն (եթե բայն ածանցավոր է, ածանցներից հետո, այսպես՝ **գր+ում, կարդ+ում, մոտեն+ում, հեռան+ում, տեսն+ում, փախչ+ում, հիշեցն+ում, սիրվ+ում, կոտրատ+ում, կոտրատվ+ում**)։

Անկատար դերբայը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող հարաձիգ գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար:

Անկատար դերբայ ունեն հայերենի բոլոր բայերը, բացառությամբ ***գալ, տալ, լալ,*** *անկանոն բայերից, որոնց անկատարի իմաստը, ինչպես տեսանք, կազմվում է համակատար դերբայի* **իս** *ձևույթով (գալիս, լալիս, տալիս):*

Անկատարի, ինչպես նաև մյուս դերբայների ձևերը չունեն նաև ***պակասավոր*** *բայերը (****եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ****):*

Անկատար դերբայը խոսքի մեջ ինքնուրույն, անկախ գործածություն չունի, նրա դերը միայն ձևաբանական է. միանալով օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերին, կազմում է սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ձևերը՝ նախադասության մեջ դառնալով պարզ (բայական) ստորոգյալ.

ներկա		անցյալի անկատար	
գրում կարդում	**եմ, ես, է** **ենք, եք, են**	գրում կարդում	էի, էիր, էր էինք, էիք, էին

Գրական օրինակներ՝

Այսօրվանից ***հանձնում*** *եմ քեզ Հայոց լեզուն հազարագանձ (ՍԿ): Գարունդ հայերեն* ***է գալիս,*** *Ջուներդ հայերեն* ***են լալիս,*** *Հայերեն* ***են հորդում*** *ջրերդ: Հավքերդ* ***երգում են*** *հայերեն, Խոփերդ* ***հերկում են*** *հայերեն, Հայերեն* ***են տոկում*** *գրերդ (ՀՍ):*

Ապառնի դերբայ

Նախ տերմինի մասին. ***ապառնի՞,*** *թե՞* ***ապակատար:*** *Կարծում ենք* ***ապառնին*** *ավելի նպատակահարմար է, որովհետև այդպես է անվանվել գրաբարում և միջին հայերենում: Բայի հիմնական ժամանակներն այդպես էլ անվանվում են՝* ***ներկա, անցյալ, ապառնի: Ապակատար*** *կամ* ***կատարելի*** *տերմինները կարծում ենք նպատակահարմար չեն:*

Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայի **ու** *ձևույթի հավելումով (****գրել+ու, կարդալ+ու, մոտենալ+ու, հեռանալ+ու, տեսնել+ու, փախչել+ու, սիրվել+ու, կոտրատել+ու*** *և այլն):*

Ապառնի դերբայը ցույց է տալիս ապագայում կատարվելիք գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար: Այն

խոսքի մեջ ինքնուրույն կիրառություն չունի և հանդես է գալիս միայն ձևաբանական դերով՝ օժանդակ բայերի հետ կազմելով **սահմանական** եղանակի **ապառնի** և **անցյալի ապառնի** ժամանակաձևեր և նախադասության մեջ դառնում է միայն **պարզ** (բայական) ստորոգյալ.

ապառնի		անցյալի ապառնի	
գրելու կարդալու	եմ, ես, է ենք, եք, են	գրելու կարդալու	էի, էիր, էր էինք, էիք, էին

Հիշի՛ր – Ապառնի դերբայը ձևով նման է անորոշ դերբայի **սեռական** և **տրական** հոլովներին՝ **գրելու** թուղթ և երեխան նստեց շարադրություն **գրելու**: Այս դեպքում տվյալ դերբայի պաշտոնը որոշվում է միայն նախադասությունների կամ բառակապակցությունների մեջ՝ **հարցի միջոցով**:

Այսպես՝ **գրելու թուղթ, կարդալու գիրք, խմելու ջուր** բառակապակցություններում **գրելու, կարդալու, խմելու** բառերը **անորոշ** դերբայի **սեռական** հոլովաձևեր են և **որոշչի** շարահյուսական պաշտոն են կատարել, պատասխանում են **ինչպիսի՞** և **ո՞ր** հարցերին: Իսկ «Երեխան նստեց շարադրություն **գրելու**» նախադասության մեջ **գրելու** բայն անորոշ դերբայի **տրական** հոլովն է և նպատակի պարագայի շարահյուսական պաշտոն է կատարել, այն պատասխանում է **ինչո՞ւ** հարցին (ինչո՞ւ նստեց երեխան):

Այդպես էլ հետևյալ նախադասություններում՝ «Տիգրանը գնաց Մոսկվա **սովորելու**», «Ես գնացի գյուղ **հանգստանալու**» (ինչո՞ւ, ի՞նչ նպատակով):

Անորոշ դերբայի սեռական հոլովը կատարում է նաև **հատկացուցչի** պաշտոն (**խաղալու** ժամանակը վերջացավ: **Վազելու** հերթն ինձ հասավ): Այս դեպքում էլ տրվում է **ինչի՞** հարցը՝ **ինչի՞** ժամանակը, **ինչի՞** հերթը:

Անորոշ դերբայի տրական հոլովը կարող է ստանալ նաև **որոշիչ հոդ** և պատասխանել ինչի՞ն հարցին, այս դեպքում այն կկատարի **հանգման խնդրի** պաշտոն (Հետևի՛ր երեխայի ճիշտ **գրելուն**: Ուշադիր եղե՛ք մեքենաների ճիշտ **երթևեկելուն**):

Անորոշ դերբայի սեռական և տրական հոլովաձևերը կարող են գործածվել նաև օժանդակ բայերի հետ, այս դեպքում դառնում են

բաղադրյալ ստորոգյալ և հատկանիշի իմաստ են արտահայտում. օրինակ, «Այս խնձորը ***ուտելու է****», «Այս թուղթը* ***գրելու է****»: Երկու դեպքում էլ տրվում է* ***ինչպիսի՞ն*** *է հարցը. հետևաբար դրանք բաղադրյալ ստորոգյալներ են՝ արտահայտված անորոշի* ***տրական*** *հոլովով, որանք համարժեք են՝* ***ուտելու համար է, գրելու համար է:***

Մինչդեռ նույն ***ուտելու է, գրելու է*** *բայաձևերը հետևյալ նախադասություններում՝ «Երեխան* ***խնձորը ուտելու է*** *ճաշից հետո»: «Նա շարադրությունը* ***գրելու է*** *հանգստանալուց հետո», նույն* ***ուտելու*** *և* ***գրելու*** *բայերը օժանդակ բայի հետ կազմել են* ***պարզ*** *ստորոգյալներ, որովհետև ժամանակի իմաստ են արտահայտում և ոչ թե հատկանիշի, ուրեմն այդ բայաձևերը ոչ թե* ***անորոշ դերբայի*** *սեռական կամ տրական հոլովով են դրված, այլ* ***ապառնի դերբայներ*** *են, ունեն* ***դեմքի, թվի, ժամանակի*** *քերականական կարգեր, որոնք հատուկ են միայն խոնարհված բայերին:*

Եզրակացությունը պարզ է՝ ***ապառնի դերբայ + օժանդակ բայ = է պարզ*** *ստորոգյալի (գործ ունենք դիմավոր բայի՝* ***կախյալ*** *դերբայի հետ):* ***Անորոշ դերբայի սեռական–տրական հոլով + օժանդակ բայ = է բաղադրյալ*** *ստորոգյալի ստորոգելիական վերադիր (գործ ունենք անդեմ բայի՝* ***անկախ*** *դերբայի հետ):*

Առաջադրանքներ.

1. Բերված նախադասություններում առանձնացնել ապառնի և անորոշ դերբայները. գրել վերջինիս պաշտոնները.

Երբ ճեմելու է ելնում իր սիրուհին ոսկեթագ (ՍԿ):

... Ու դու մեզ հետ՝ քո քյամանչով գալու ես դեռ, Սայա՛թ-Նովա (ՍԿ):

Գալու է աշունը դարձյալ, և դարձյալ գլխիդ վրայով,
Կռունկը հարավ է գնալու, չինարի, չինարի իմ ծառ,
Դու էլ ինձ հետ ես մնալու:
Օրերն այս անցյալ են դառնալու, հեռավոր, հեռավոր, անցյալ,
Գալու են տարիներ դարձյալ, և դարձյալ գլխիդ վրայով,
Կռունկը գարնանը՝ հյուսիս, աշնանը՝ հարավ է գնալու...
Չինարի, չինարի իմ ծառ, առանց ինձ ինչպե՞ս ես մնալու (ՀՍ):

Շուտով գալու է ուսումնական տարին, գալու են գրելու և սովորելու օրերը: Պապիկը թոռնիկների համար գրելու թուղթ ու

կարդալու գրքեր է գնելու. Թոնիկները պապիկին ամոթով չեն անելու, գնում են դպրոց՝ լավ սովորելու: Նրանց սովորելուն հետևում են նաև ծնողները, չէ՞ որ լավ սովորելուց է կախված նրանց ապագան, որոնք դառնալու են մեր ապագա ղեկավարները, լավ են կառավարելու երկիրը, կառուցելու են նոր շենքեր, բացելու են երթևեկելու նոր ուղիներ, ստեղծելու են հանգստանալու հարմարավետ գոտիներ:

2. Կազմել բերված բառերի անորոշ և ապառնի դերբայները և դրանցով կազմել տարբեր նախադասություններ.

Կարդալ, խաղալ, երգել, հանգստանալ, հաղթել, հիշել, հիշեցնել, կոտրատել, ամրացնել, գալ, խորանալ, խորացվել, հյուրասիրվել, թաքնվել, թռչել...

Վաղակատար դերբայ

Վաղակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված, ընթացքից դուրս եկած գործողություն:

Վաղակատար դերբայը կազմվում է **ել** ձևույթով, որը դրվում է **անկատարի** ինչպես նաև **կատարյալի** հիմքերի վրա:

Այս դերբայը նախադասության մեջ չունի ինքնուրույն կիրառություն. նրա դերը միայն ձևաբանական է, այսինքն՝ օժանդակ բայի ներկայի ու անցյալի հետ կազմում է **սահմանական** եղանակի **վաղակատար** (**գրել եմ, կարդացել եմ, մոտեցել եմ, տեսել եմ, փախել եմ**) և **անցյալի վաղակատար** ժամանակաձևերը (**գրել էի, կարդացել էի, մոտեցել էի, տեսել էի, փախել էի**):

Հիշի՛ր – **Ե** խոնարհման պարզ բայերի **վաղակատար** դերբայները (**գրել, երգել, վազել**) նույնանում են **անորոշ** դերբայների հետ. տարբերելու միակ միջոցը նախադասությունների մեջ դրանց գործածությունն է. եթե դրանց հետ կան օժանդակ բայեր, ուրեմն **վաղակատար** դերբայներ են, ինչպես՝ Երևխան **գրել է** չարադրություն, Արամոն լավ **է երգել**, Նրանք **վազել էին** շատ արագ:

Իսկ եթե դրանց հետ օժանդակ բայեր չկան, ուրեմն **անորոշ** դերբայներ են (Արամը սիրում է բանաստեղծություններ **գրել**: **Երգելը** Սիրուշոյի տարերքն է. նա ցանկանում է միշտ **երգել**: Մարգիկին կարգադրված էր արագ **վազել**):

Ե խոնարհման պարզ, ինչպես նաև կրավորական ու բազ-

մապատկական ածանցներ ունեցող բայերի վաղակատարը կազմվում է **անկատարի** *(ներկայի) հիմքից, այսպես՝*

Անորոշ	**անկատարի հիմք**	**վաղակատար**
գրել	*գր*	*գր +ել*
խմել	*խմ*	*խմ + ել*
կոտրատել	*կոտրատ*	*կոտրատ+ ել*
կոտրատվել	*կոտրատվ*	*կոտրատվ+ ել*
սիրվել	*սիրվ*	*սիրվ + ել*

Ա *խոնարհման պարզ (կարդալ, խաղալ) և ածանցավոր բայերի (հեռանալ, մոտենալ, վախենալ), ինչպես նաև* **Ե** *խոնարհման* **Ն, Չ, ՑՆ** *ածանցավոր բայերի (տեսնել, փախչել, ուրախացնել) վաղակատար դերբայները կազմվում են* **անցյալի** *հիմքից նորից* **ել** *ձևույթի հավելումով, այսպես՝*

Անորոշ	**կատարյալի հիմք**	**վաղակատար**
կարդալ	*կարդաց*	*կարդաց+ել*
վախենալ	*վախեց*	*վախեց+ել*
տեսնել	*տես*	*տես+ ել*
փախչել	*փախ*	*փախ+ել*
ուրախացնել	*ուրախացր*	*ուրախացր+ել*

*Որպեսզի վաղակատար դերբայը ամրապնդվի հիշողության մեջ. 3-րդ շարքին (վաղակատար դերբայներին) մտովի ավելացնում ենք օժանդակ բայեր (***կարդացել եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին, փախել եմ, ես, է... վախեցել եմ, ես, է... ուրախացրել եմ, ես, է...***): Ինչպես երևում է բերված օրինակներից, անցյալի հիմքից կազմվող վաղակատար դերբայներից դուրս են եկել անորոշ դերբայների* **Ն** *և* **Չ** *ածանցները, իսկ* **ՑՆ** *դարձել է* **ՑՐ**:

Անկանոն բայերի դեպքում վաղակատարը մեծ մասամբ կազմվում է նույնպես **անցյալ** *կատարյալի հիմքից՝*

Անորոշ	**վաղակատար**
անել	*արել*
դնել	*դրել*
գալ	*եկել*
ուտել	*կերել*
լինել	*եղել և այլն:*

Մի քանի օրինակներ.

Իմ Հայրենիքը ***տեսե՞լ ես,*** *ասա... (ՀԹ):*

Քանի ձեռքից եմ վառվել, վառվել ու Հուր ***եմ դառել,***
Հուր ***եմ դառել,*** *լույս տվել, լույս տալով եմ սպառվել (ՀԹ):*

Իմ պապը ***տնկել է*** *մեր գյուղի շիվերը,*
Իմ պապը ***պայտել է*** *մեր գյուղի ձիերը,*
Իմ պապը մեր գյուղի պատերը ***շարել է***
Եվ բոլորի կամերը մեն-մենակ ***քարել է*** *(ՀՍ):*

Դեռ պատանության տարիներին ես երազել եմ քեզ Հայերեն,
Բոլոր խոսքերը՝ Թանկ ու վերին ես միշտ ասել եմ քեզ
Հայերեն (ՍԿ):

Առաջադրանք.

Առանձնացնել անորոշ և վաղակատար դերբայները.

Եղբայրս ամռանը ցանկացել է գնալ գյուղ և այնտեղ կարդալ «Խողեղանը», բայց գնացել է ամառանոց և այնտեղ կարդացել է «Ռանչպարների կանչը»: Նա շատ էր ուզում տեսնել Խաչիկ Դաշտենցին, խոսել Հետը, բայց տեսել է նրա Համերկրացուն, և խոսել են իրենց էրգրի մասին, պատմել են շատ եղելություններ ու Հիշել են իրենց անցյալը: Իսկ ով չի կամենում վերՀիշել իր անցյալը, չի ուզում վերապրել այն, չի Հիշում, Թե ինչ է արել մանկության տարիներին ու ինչպես է ապրել, էլ ի՞նչ մարդ, էլ ի՞նչ Հայ:

Ժխտական դերբայ

Ժխտական դերբայն արտաՀայտում է կատարելի, Հնարավոր գործողության ընդՀանուր գաղափար, որը ժխտվում է օժանդակ բայերի ժխտական ձևերով:

Ժխտական դերբայը նույնպես կախյալ դերբայ է, այն ինքնուրույն գործածություն չունի, խոսքի մեջ Հանդես է գալիս միայն օժանդակ բայի ժխտական ձևերի ՀարադրուԹյամբ և դառնում է միայն **պարզ** *ստորոգյալ:*

Ե *խոնարՀման բայերի ժխտական դերբայը կազմվում է անորոշ դերբայի* ***ել*** *վերջավորությունը* ***ի*** *վերջավորությամբ փոխարինելով, իսկ* ***ա*** *խոնարՀման բայերի անորոշ դերբայի* ***լ****-ն դուրս է ընկնում. այսպես՝*

Ե խոնարհում		**Ա խոնարհում**	
Անորոշ	**Ժխտական**	**Անորոշ**	**Ժխտական**
գրել -	(չեմ) գրի	կարդալ	- (չեմ) կարդա
թռչել	(չեմ) թռչի	մոռանալ	- (չեմ) մոռանա
կռվել -	(չեմ) կռվի	բարձրանալ	- (չեմ) բարձրանա
մոտեցնել-	(չեմ) մոտեցնի	մոտենալ	- (չեմ) մոտենա

*Ժխտական դերբայը գործածվում է միայն պայմանական (ենթադրական) եղանակի ժխտական խոնարհման ձևերում. օրինակ՝ Օձի կծածը **կլավանա** (պայմանականի դրական), լեզվի կծածը **չի լավանա** (պայմանականի ժխտական): Այդպես էլ՝*

*Մի ծաղկով գարուն **կգա՞**: Մի ծաղկով գարուն **չի գա**: Թրի կտրածը **կլավանա**, լեզվի կտրածը **չի լավանա**:*

Առաջադրանքներ.

1. Հետևյալ առած-ասացվածքներում գտնել ժխտական դերբայները.

Ամեն անգամ գետը գերան չի բերի: Ամեն բան իր տեղը կգա, քոսայի մորուքը չի գա: Աչքն ինչքան բարձրանա, հոնքից վերև չի բարձրանա: Բզի գլխին բռունցքով չեն խփի: Գայլից վախեցողը անտառ չի մտնի: Խնձորը իր ծառից հեռու չի ընկնի: Ծառի տակ պառկելով՝ բերանդ տանձ չի ընկնի: Կարմիր կովը իր կաշվից դուրս չի գա: Ջուրն ընկածը անձրևից չի վախենա: Օձն իր շապիկը կփոխի, բնավորությունը չի փոխի:

2. Կազմել հասնել, աղալ, սառչել, լուծվել, ավելանալ, փախչել, քայքայել, ավելացնել, մոռացվել, տեսնվել բայերի ժխտական դերբայները և դրանցով կազմել նախադասություններ:

Ընդհանրական առաջադրանք

Տետրի ձախ կողմում արտագրեք անդեմ, աջ կողմում՝ դիմավոր բայերը՝ նշելով դրանց նախադասության ինչ անդամ լինելը.

Երգելը Կոմիտասի տարերքն էր. Նա երգել է աշխարհի շատ նշանավոր քաղաքներում: Երգելուց նա երբեք չէր հոգնում ու երգելով էր օրերն անցկացնում: Նա երգում էր դեռ մանուկ հասակում:

Կոմիտասը՝ Սողոմոն Սողոմոնյանը, ծնվել է 1869-ի Հոկտեմբերի 26-ին Անատոլիայի Կուտինա քաղաքը ներգաղթած ծնողների ընտանիքում: Մանուկ Սողոմոնը իր ծնողներից է ժառանգել իրենց Հետ Հայրենի երկրից՝ Վասպուրականից բերած և Աստծու կողմից իրեն չնորՀված ձայնով երգելու արվեստը: Սակայն Թուրքական այս փոքրիկ քաղաքում Հայերին արգելված էր Հայերեն խոսել, նրանք կտրում էին Հայերեն խոսողների լեզուն: Ու երբ Սողոմոնին բերեցին Էջմիածնի ճեմարան ընդունելու, նա ՎեՀափառի մոտ Թուրքերեն երգեց: Զարմացած ՎեՀափառը Հարցրեց նրան, Թե որ Հայերեն չգիտի, ինչո՞ւ է եկել, չէ՞ որ ճեմարանում ուսուցանում են միայն Հայերեն: Սողոմոնը պատասխանել է. «Հայերեն չգիտեմ, դրա Համար էլ եկել եմ, որ Հայերեն սովորեմ»: Նրա այսպես պատասխանելը և Հայերեն «Շարականներ» երգելը դուր է եկել ՎեՀափառին, և նա կարգադրել է 12 տարեկան պատանուն ընդունել ճեմարան: Սողոմոնը զգալով ՎեՀափառի՝ Գևորգ 4-րդ կաԹողիկոսի գուԹ ներչնչող Հայացքը՝ Հուզվելով արտասվել է:

Ավարտելով ճեմարանը և Խրիմյան Հայրիկի կողմից վարդապետ ձեռնադրվելուց Հետո Կոմիտաս վարդապետը մեկնեց Բեռլին. այստեղ 3 տարի Արքայական Կոնսերվատորիայում սովորելուց Հետո չրջեց ամբողջ աչխարՀում, եղավ նույնիսկ Բուրգերի երկրում և Հայ երգը տարածեց ամենուրեք, ինքն էլ դարձավ Հայոց երգի վեՀափառը (Խ. Բ. «Կոմիտասը՝ ինչպիսին եղել է» գրքից):

ԲԱՅԻ ԴԵՄՔԻ, ԹՎԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

*Ասվել է, որ բայի դիմավոր ձևերը նախադասուԹյան մեջ Հանդես են գալիս պարզ (**բայական**) ստորոգյալի պաչտոնով, որին Հատուկ են **դեմքի**, **Թվի**, **ժամանակի** (սրանց Հետ էլ սերտորեն կապված **սեռի**, **կերպի**), ինչպես նաև **եղանակի** քերականական կարգերը:*

Անդրադառնանք դրանց (սեռի մասին խոսվել է վերևում):

***Դեմքի քերականական կարգը** – Բայի մատնանչած գործողուԹյունը կամ եղելուԹյունը ցույց են տալիս, որ այդ գործողուԹյունը կատարում է **խոսողը**, **խոսակիցը** կամ մի **երրորդ** անձ (կամ առարկա), ըստ այդմ էլ բայն ունի 3 դեմք.*

Առաջին դեմքը հենց ինքը՝ խոսողն է, որը մի բան է ասում, հաղորդում, պատմում, ներկայացնում՝

Գիտեմ՝ ես եմ քո աշխարհն աշխարհում (ՍԿ):

Մենք հայ **էինք ծնվել** այս երկնի տակ՝ այստեղ... (ՊՍ):

Երկրորդ դեմքով խոսողը հաղորդում է իր խոսակցի գործողությունը, կամ գործողությունը կատարողը **խոսակիցն** է՝

Ինձ հետ **ես դու հյուսել** հույսերդ հիմի (ՍԿ):

Տղան հասավ իր մուրազին, **Դուք էլ հասեք** ձեր մուրազին (ՊՍ):

Երրորդ դեմքով խոսողն արտահայտում է ոչ իր, ոչ էլ խոսակցի, այլ մի երրորդ անձի կամ առարկայի գործողությունը, որևէ իրողություն, կամ գործողություն կատարողը մի երրորդ անձ է՝

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր (ՎՏ):

Բոլորի պես՝ նրանք նույնպես

Անկարող են ապրել առանց թթվածնի (ՊՍ):

Առաջին սերը, ինչպես որ հացը,

Ինչ էլ որ անես՝ միշտ **կուտ է գնում** (ՊՍ):

Սիրտս նման է էն փլած տներ,

Կոտրեր գերաններ, **խախտեր** են սներ (Կոմիտասի երգերից):

Ինչպես երևում է բերված օրինակներից, առաջին և երկրորդ դեմքի բայերն ունենում են միայն առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուն – ենթականեր (չի բացառվում սակայն, որ այդ դերանունները գործածվեն նաև առարկաների հետ): Օրինակ՝ **«Հայաստանն եմ ես, հայ ժողովուրդն եմ ես**՝ հավերժի ճամփորդը, որը դարերի խորքից եկած, դեպի գալիք դարերն է գնում...» (Գ. Էմին): Ո՛, գարնան ամիս, ապրելու ապրիլ,

Դու, որ բերում ես ծաղիկներ ու կյանք,

Ինչո՞ւ դու դարձար մահվան տարեկից (ՍԿ):

Բայի դեմքն արտահայտվում է նրա վերջավորությամբ, որն ավելանում է կամ անմիջապես բայի հիմքին (տես**ա**, տես**ար**, տես**ավ**, տեսն**եմ**, տեսն**ես**, տեսն**ի**), կամ արտահայտվում է օժանդակ բայով (տեսնում **եմ**, տեսնում **ես**, տեսնում **է**,
տեսնում **ենք**, տեսնում **եք**, տեսնում **են**):

Թվի քերականական կարգը – *Յանկացած գործողություն կատարվում է մեկի կամ մի քանիսի կողմից, Հետևաբար՝ գոյականների նման բայն էլ ունի երկու թիվ՝* ***եզակի և Հոգնակի։***

Բայի ***եզակի*** *թիվը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը մեկն է (անձ կամ առարկա)՝*

Լուսամփոփը *Հանկարծ չողաց,*
Ես *Հանկարծ քեզ* ***Հիշեցի***
Սառը խշշաց, ճյուղը դողաց *(Մ. Մարգարյան)։*

Հոգնակի թիվը ցույց է տալիս երկու կամ ավելի անձերի կամ առարկաների գործողություն՝

Երևում էին մի քանի պահապաններ, որոնք անցուդարձ էին անում, ոմանք ամրոցի դռների մոտ կամ պահականոցի առաջ էին սպասում։ *Հոգուս ճամփեքի վրա* ***վրնջում են*** *ուրիշ նժույգներ (ԳՄ)։*

Բայի դեմքի և թվի քերականական կարգերն արտաՀայտվում են բայաՀիմքի կամ օժանդակ բայի նույն դիմորոշ վերջավորություններով՝

եզակի		**Հոգնակի**	
*տեսն****եմ***	*տեսնում* ***եմ***	*տեսն****ենք***	*տեսնում* ***ենք***
*տեսն****ես***	*տեսնում* ***ես***	*տեսն****եք***	*տեսնում* ***եք***
*տեսն****ի***	*տեսնում* ***է***	*տեսն****են***	*տեսնում* ***են***

Առաջադրանք.

Որոշել բայերի դեմքն ու թիվը

«Հարգելի Հայրենակիցներ, բարեկամնե՞ր, թե՞ եղբայրներ։ Չգիտեմ՝ ինչպես դիմեմ ձեզ...

Ես երջանիկ եմ, որ Դուք գոյություն ունեք աշխարՀում, որ կա մեր նաՀապետական տոՀմի ազգանունը կրող զորավար ՀովՀաննես Բաղրամյանը։ Եթե նույնիսկ Դուք իմ եղբայրը չեք, եթե միևնույն մայրը չի ծնել մեզ, Դուք, այնուամենայնիվ, իմ եղբայրն եք։ Իմ եղբայրը իմ ճակատագրի Համար չէր կարող ավելին անել, քան Դուք եք արել։ Թող բնությունը Ձեզ երկար կյանք պարգևի, և թող ապրի մեր ժողովուրդը...

Թույլ տվեք ստորագրել այսպես՝ Ձեր քույր Աննա»։

«... Թանկագին քույրս։ Ձեր նամակը շատ Հուզեց մեզ։ Ես ծնվել եմ ոչ թե ԹուրքաՀայաստանում, այլ Կովկասում և մինչև այսօր

Անահիտ անունով քույր չունեի: Դուք կարող եք ինձ Ձեր հարազատ եղբայրը համարել: Մի մայր չի ծնել մեզ, բայց ծնել է մեզ մի ժողովուրդ և օժտել ընդհանուր զգացմունքներով: Այսօրվանից ես, ուրեմն, քույր ունեմ հեռավոր օվկիանոսից այն կողմ... և պարտք ունեմ նրա առաջ»

Ձեր եղբայր՝ Հովհաննես:

(Հր. Քոչար):

Ժամանակի քերականական կարգը — *Բայի դիմային ձևերը միաժամանակ նույն ժամանակային ձևերն են, այսինքն՝ միևնույն խոնարհված բայով արտահայտվում են բայի և՛ դեմքը, և՛ թիվը, և՛ ժամանակը, բայի դեմքի և թվի կարգերը նրա բոլոր եղանակների համար միհասնական են (բացառություն է կազմում հրամայականի դեմքի կարգը, որը մեկն է՝ երկրորդ դեմք):*

Բայի ժամանակի քերականական կարգը մատնանշում է, թե երբ է կատարվում, կատարվել կամ կատարվելու գործողությունը. խոսելու պահի՞ն, նրանից առա՞ջ, թե՞ հետո, ըստ այդմ էլ՝ բայն ունի **տրամաբանական** *3 ժամանակ՝* **ներկա, անցյալ** *և* **ապառնի**: *Ինչպես շատ լեզուներում, այնպես էլ հայերենում այս 3 ժամանակների մեջ կան ժամանակաձևեր (կոնկրետ ժամանակակետեր), օրինակ, անգլերենն ունի ներկայի 3 ժամանակաձև՝* **I read** *(ընդհանրապես),* **I am reading** *(շարունակական),* **I have read** *(անցյալի հետ): Ֆրանսերենն ունի 60-ից ավելի ժամանակաձևեր:*

Հայերենն ունի 14 գլխավոր ժամանակային ձևեր, որոնք երկրորդական ժամանակային ձևերի հետ կազմում են 42 ժամանակային ձևեր, որոնք պայմանավորված են բայի եղանակներով:

Ներկա *ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը, եղելությունը կատարվում է խոսելու պահին՝*

Մաղկում*-ծփում են մեր արտերը ծով,*
Մուխն է բարձրանում *մեր օջախներից (Սարմեն):*

Այսօրվանից **հանձնում եմ** *քեզ*
Հայոց լեզուն հազարագանձ (ՍԿ):

Բարակ ամպերը **մաղում են** *ոսկի,*
Ջրերը անուշ հեքիաթ **են ասում** *(ՎՏ):*

Ներկա ժամանակը կազմվում է **անկատար դերբայով** *և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ ասում* **եմ, ես, է** *և* **ենք, եք, են**:

Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը, եղելությունը նախորդում է խոսելու պահին, տեղի է ունեցել նրանից առաջ՝

Մոտեցավ. **բացեց** Աստվածաշունչը
Ու սաղմոս **կարդաց** մի քանի բերան.
Անդորրություն էր հեռուն ու չուրջը,
Լոկ **օրորվում** էր սոսին գեղիրան (Սարմեն):

Քար են շրջել, սար **են շարժել** այս ձեռքերը (ՊՍ):
Համբարձումն **եկավ**, ծաղկունքը ալվան,
Զուգել են հանդեր նախշուն գորգերով (ՀԹ):

Անցյալ ժամանակը կազմվում է **վաղակատար** դերբայով ու օժանդակ բայերով (շարժել **եմ, ես, է, ենք, եք, են** և **էի, էիր, էր, էինք, էիք, էին**) և **բայահիմքով** ու **վերջավորություններով** (կարդաց**ի**, կարդաց**իր**, կարդաց, կարդաց**ինք**, կարդաց**իք**, կարդաց**ին** և եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան):

Ապառնի ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը, եղելությունը հաջորդելու է խոսելու պահին, տեղի է ունենալու նրանից հետո՝

Դարեր են եկել, գնացել անդարձ և **գալու են** նորից,
Ազգեր են ծնվել ու մեռել անհետ և **ծնվելու են** նորից (Սարմեն):

... Ու դու մեզ քո քյամանչով **գալու ես** դեռ, Սայա՛թ-Նովա (ՍԿ):

Ապառնի ժամանակը կազմվում է **ապառնի** դերբայով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով՝

գալու
եմ, ես, է, ենք, եք, են
էի, էիր, էր, էինք, էիք, էին

ինչպես նաև բայի **ըղձական** ու նրանից կազմված **պայմանական** ու **հարկադրական** եղանակների բայաձևերով (**Ցանկամ** տեսնել դիմ Կիլիկիա – Ռուսինյան).

Նորից **կթողնեմ** քաղաքն աղմկոտ... (ՎՏ):
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ անդադար՝ ազատություն (ՄՆ):
Դու **պիտի վրեժ առնես** ապրելով (ՍԿ):

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ (ՊԱՐԶ) ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ (ԲԱՂԱԴՐՅԱԼ) ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԵՐ

*Ըստ արտահայտման ձևի՝ բայի ժամանակները կազմվում են երկու եղանակով՝ **համադրական** և **վերլուծական** կամ **պարզ** ու **բաղադրյալ**.*

Համադրական կամ պարզ – *Սրանք բայի այն ժամանակներն են, որոնք կազմվում են բայահիմքով և վերջավորություններով (գնաց**ի**, գնաց**իր**, գնաց0 և գնա**մ**, գնա**ս**, գնա0): Ըստ որում **պարզ** կամ **համադրական** ժամանակային ձևերն են՝*

Սահմանական *եղանակի անցյալ կատարյալը՝*

*գնաց**ի**, գնաց**իր**, գնաց և գնաց**ինք**, գնաց**իք**, գնաց**ին***

Հրամայական *եղանակի բայաձևերը՝*

*գնա՛, գնացե՛ք, նստ**ի՛ր**, նստ**եք** (նստ**եցե՛ք**),*

Ըղձական *եղանակի բայաձևերը՝*

*գնա**մ**, գնա**ս**, գնա, գնա**յինք**, գնա**յիք**, գնա**յին**,*

*նստ**եմ**, նստ**ես**, նստ**ի**, նստ**եինք**, նստ**եիք**, նստ**եին**:*

***Համադրական** (պարզ) են համարվում նաև **պայմանական** և **հարկադրական** եղանակների ձևերը, որոնք կազմվում են **ըղձականից** և **կ** ու **պիտի** եղանակիչ մասնիկներով՝*

***կ**գնամ, **կ**գնաս, **կ**գնա, **կ**գնայի, **կ**գնայիր, **կ**գնար...*

***պիտի** + գնամ, գնաս, գնա, գնայի, գնայիր, գնար...*

Վերլուծական *կամ* **բաղադրյալ** – *Սրանք բայի այն ժամանակներն են, որոնք կազմվում են **անկատար**, **վաղակատար**, **ապառնի** և **ժխտական** դերբայներով ու օժանդակ բայերի ներկայի ու անցյալի ձևերով՝*

անկատար	- գնում	եմ, ես, է, ենք, եք, են	- ներկա
վաղակատար	- գնացել	էի, էիր, էր, էինք, էիք, էին	- անցյալ
ապառնի	գնալու		

ժխտական դերբայը հանդես է գալիս միայն պայմանական եղանակի ժխտման ձևերի կազմության մեջ: Ինչպես՝

չեմ(չէի) գնա, չես(չէիր) գնա, չի(չէր) գնա,

չենք(չէինք) գնա, չեք(չէիք) գնա, չեն(չէին) գնա:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՁԵՎԵՐ

Երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են ***համակատար*** *(գնալիս),* ***հարակատար*** *(գնացած),* ***ապառնի*** *(գնալու) դերբայներով և* ***լինել*** *բայի խոնարհման ձևերով: Ամեն մի գլխավոր ժամանակի համապատասխանում են երկրորդական ժամանակների երեք ձևեր՝ կատարվող, կատարված և կատարվելիք և ցույց են տալիս* ***տևական, ընթացային*** *գործողություն կամ* ***եղելություն****: Օրինակ՝* ***գնում եմ*** *և* ***գնալիս եմ լինում, գնում էի և գնալիս էի լինում, կանգնած եմ և կանգնած եմ լինում, գնալու եմ և գնալու եմ լինում, գնացած եմ և գնացած եմ եղել, կգնայի և գնացած պիտի լինեի*** *և այլն:*

Նշենք, որ երկրորդական վերլուծական այս ժամանակաձևերը ժամանակակից հայերենում այնքան էլ գործածական չեն, հազվադեպ գործածվում են բանավոր խոսքում: Այնուամենայնիվ, բերենք մի երկու օրինակ. Երբ էլ ***գնալիս լինեմ*** *ընկերոջս մոտ, նա* ***գնացած է լինում*** *այգի, ես էլ այգի* ***գնացած պիտի լինեի****, բայց գործս դեռ չէի ավարտել:*

Առաջադրանք.

Դուրս գրել բայերը, որոշել նրանց ժամանակը.

Մութն ընկավ: Մռայլվեց Ավարայրի դաշտավայրը իր շրջափակ լեռներով, իր զորաբանակներով: Աստղերի նվաղուն լույսը հազիվ տարտամորեն գծագրեց Տղմուտի շամբուտներն ու ափերը երկու բանակների միջև: Գետի այն կողմից շարունակական մի խուլ հեղեղի ձայն էր հասնում՝ մերթ ուժգնացող, մերթ նվազող: Դա թշնամու զորաբանակն էր, որ հարափոփոխ դասավորում էր զորագնդերը: Եվ քանի անգամ զանգված առ զանգված մոտենում էր նա, լցվում, թանձրանում, տարածվում:

Տարածվում և տեղավորվում էր նաև հայոց զորաբանակը, որ Տղմուտի մատույցներից առաջացավ և գետափի երկայնքով գնաց, տարածվեց ու կանգնեց թշնամու դիմաց (ԴԴ):

Քուլ խշշում է անտառը սարերի լանջերին, խշշում է խոր անդունդներում ու ձորերում...

Ստորոտներում աճում են դողդոջուն կաղամախիներ, հացիներ, մոշի թփեր, մասրենիներ: Վերևում տարածվում է սոճիների խառնված կաղնուտը: Անտառում կարելի է հանդիպել վայրի խնձորենիների, տանձենիների, տխլի ու նաև կարճահասակ ծառերի:

Քուլ տնքում է անտառը, ծառերի ճռինչով օրորվում, կռանում են, ասես, ուզում են դուրս կորզել իրենց արմատները քարերի խեղդող ճիրաններից: (Վ. Խեչումյան):

Բայի կերպի քերականական կարգը

Բայի կերպի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ 2 տեսակետ կա: Ինչպես գրում է Գ. Ջահուկյանը. «Բայի համար, որպես որոշ վիճակի արտահայտություն, բնորոշ են կերպի տարբեր դրսևորումները...»:

Որոշ լեզվաբաններ **կերպը** *կապում են բայերի* **կազմության** *հետ, դրանք բաժանելով հետևյալ տեսակների՝*

Սոսկական կերպի *բայեր. սրանցում քննում են* **ն, չ, ան, են** *սոսկածանցներ ունեցող բայերը (գտնել, փախչել, հեռանալ; մոտենալ), սրանք ցույց են տալիս մեկ անգամ կատարվող գործողություն (***միակատար կերպ***):*

Բազմապատկական կերպ. *սրանք բազմապատկական ածանցներ ունեցող բայերն են (կոտրատել, կրծոտել, բոցկլտալ), որոնք ցույց են տալիս բազմիցս կատարվող գործողություններ:*

Պատճառական կերպ. *սրանք պատճառական ածանցներով կազմված բայերն են (խաղացնել, մոտեցնել, փախցնել), որոնք ցույց են տալիս, որ գործողության կատարման համար ինչ-որ մեկը, կամ ինչ-որ բան պատճառ են դառնում (նաև* **տալ** *բայը):*

Կրավորական կերպի *բայեր. սրանք էլ* **վ** *ածանց ունեցող կրավորական սեռի բայերն են (լսվել, հալածվել, թափվել...): (Ալ. Մարգարյան, Ն. Պառնասյան, Ֆ. Խլղաթյան):*

Մանուկ Աբեղյանը բայի կերպը կապում է **նրա ժամանակի** *հետ: Նա գրում է, որ բայերի ցույց տված գործողությունը կարող է տեղի ունենալ 3 ժամանակի նկատմամբ՝ (ներկա, անցյալ և ապառնի) և նշում է չորս կերպ՝* **կատարվող, կատարված, կատա-**

ըսկի և պարզ (նշվ. աշխ., էջ 299-300):

Աբեղյանի տեսությանն է հետևում Գ. Ջահուկյանը. նա միաժամանակ կերպը կապում է նաև բայի կազմության և ածանցների հետ (տե՛ս նշվ. աշխ., էջ էջ 249 և 347): Այսպես է վարվում նաև Ն. Պառնասյանը (Ժ. Հ. լ. հտ. 2, էջ 259 և 351): Մ. Ասատրյանը և Հ. Բարսեղյանը բայի կերպը կ՛ապում են միայն նրա **ժամանակի** հետ:

Տրամաբանորեն երկու մոտեցումներն էլ ճիշտ են, քանի որ թե՛ բայի կազմության և թե՛ ժամանակների դրսևորման իրողություններում բայը հանդես է գալիս տարբեր հատկանիշներով, որին տրվել է **կերպ** անվանումը:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Բայի դիմավոր ձևերը անդեմ ձևերից տարբերվում են նաև **եղանակի** քերականական կարգով, որով արտահայտվում է խոսողի տարբեր վերաբերմունքը գործողության և եղելության նկատմամբ: Այսինքն միևնույն գործողությունը խոսողը կարող է ներկայացնել որպես **իրական, ցանկալի, անհրաժեշտ, ենթադրական, պայմանական, հրամայական** և այլն: Ըստ այդմ էլ՝ բայական համակարգում լեզվաբանները առանձնացրել են 5 եղանակ՝ **սահմանական, ըղձական, պայմանական կամ ենթադրական, հարկադրական** և **հրամայական**:

Սահմանական եղանակ

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս **ստույգ** կերպով **կատարվող, կատարված** կամ **կատարելի** գործողություն, կամ խոսողը ժխտում է այդ գործողության կատարումը:

Սահմանական եղանակն ունի 7 ժամանակային ձև, որոնցից 1-ը **պարզ** է՝ կազմված բայահիմքից և վերջավորություններից, իսկ 6-ը **բաղադրյալ** (վերլուծական) են, որոնք կազմվում են 3 դերբայներից՝ **անկատար, ապառնի, վաղակատար** և օժանդակ բայերի **ներկայի** ու **անցյալի** ձևերի համադրումից և կազմում են 6 ժամանակային ձևեր:

գնում / գնալու / գնացել → **եմ, ես, է / ենք, եք, են**

գնում / գնալու / գնացել → **էի, էիր, էր / էինք, էիք, էին**

Ներկա ժամանակ – *Սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ցույց են տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, եղելություն. այն կազմվում է* **անկատար** *դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով:*

Ե *խոնարհում*		**Ա** *խոնարհում*	
գրում եմ	*գրում ենք*	*կարդում եմ*	*կարդում ենք*
գրում ես	*գրում եք*	*կարդում ես*	*կարդում եք*
գրում է	*գրում են*	*կարդում է*	*կարդում են*

Ներկան ունի իմաստային մի քանի դրսևորումներ՝

ա) Հենց խոսելու պահին կատարվող գործողություն՝

Գարնանային երկնքի տակ երկու մանուկ են խաղում,
Երկու արդար չակներ երգում են, ծիծաղում (Թ. Հուրյան)
Պսակ եմ դնում քո շիրմաքարին...
Դու, Մեսրոպ Մաշտոց՝ հանճար մեծագործ (Սարմեն):

բ) Բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտություն՝

Ծաղկում-ծփում են մեր արտերը ծով,
Ծուխն է բարձրանում մեր օջախներից *(Սարմեն):*
Արջը անտառում է **ապրում,** *ձուկը՝ ջրում: Շունը* **հաչում է,** *կատուն՝* **մլավում:** *Մարդը* **մահկանացու է:**

գ) Առածական ներկա – *«Մարդը պտղից է* **ճանաչվում**»: *«Մուկը ծակը* **չի մտնում,** *ցախավելը պոչից* **են կապում**»: *«Կաշառքը մութ տեղը* **լույս է տալիս**»:

դ) Պատմական ներկա – *սրանով անվանվում են անցյալում կատարված-վերջացած գործողությունները, եղելությունները. օրինակներ.*

... Լավ **ես ասում,** *դու ծերունի',– ասավ Դավիթն ալևորին...*
... Ով գիտի՝ Դավիթն ո՞ւր **է քեֆ անում:**
Դու էլ քեզ համար քու տանը քնած՝
Ուրիշի համար **երազ ես տեսնում** *(ՀԹ):*
«Վարդան Մամիկոնյանը իր կտրիճներով **անցնում է** *գետը, տապալում է բազում թշնամիների, ինքն էլ այդ մարտում* **ընկնում է** *քաջաբար» (ՀԺՊ):*

ե) *Ներկա ժամանակով երբեմն էլ արտահայտվում է ապագայում* **կատարվելիք** *գործողություն, օրինակ՝ «Ամռանը ար-*

ձակուրդ **եմ ստանում**, Հավաքում **եմ** գրքերս, գյուղ եմ գնում և աշխատում եմ այնտեղ»: «Միշտ ես ասում՝ երկուսով **լծվում ենք** այդ գործին, **աշխատում ենք** Համատեղ և գործը գլուխ **ենք բերում** միասին»:

Սահմանական եղանակի **ներկա** ժամանակի **ժխտականը** կազմվում է օժանդակ բայի **ներկա** ժամանակին Հավելելով չ ժխտականը, որի դեպքում եզակի թվի երրորդ դեմքի **է**-ն դառնում է **ի** և օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ՝

գրում, կարդում եմ → չեմ գրում, կարդում
գրում, կարդում ես → չես գրում, կարդում
գրում, կարդում է → չի գրում, կարդում

Անցյալի անկատար ժամանակաձև – Այս ժամանակաձևը ցույց է տալիս մի անցյալ ժամանակում ընթացքի մեջ գտնվող Հարաձիգ գործողություն. այն կազմվում է նույն **անկատար** դերբայով և օժանդակ բայի **անցյալի** ձևերով՝

Ե խոնարՀում		**Ա** խոնարՀում	
գրում էի	գրում էինք	կարդում էի	կարդում էինք
գրում էիր	գրում էիք	կարդում էիր	կարդում էիք
գրում էր	գրում էին	կարդում էր	կարդում էին

*Ես **տեսնում էի**, որ ճանապարՀը **չեղում էր**, **ուզում էի** նախազգուշացնել, բայց **գիտեի**, որ ինձ չէր լսի: Ինչքան ավելի **էր** անծանոթը **մոտենում** մեզ, այնքան ավելի չիտակ էր դառնում նրա կեցվածքը* (Գէ):

Մի ռուս գեներալ Կովկաս լեռներից
*Մի անգամ դեպի Թիֆլիս **էր գալիս**.*
*Իր Հետ նա գերի մի մանուկ **ուներ*** (ՀԹ):

Այս ժամանակաձևի ժխտականը կազմվում է չ ժխտականով, որը Հավելվում է անցյալի օժանդակ բային՝ անփոփոխ, իսկ անկանոն և պակասավոր բայերի դեպքում՝ ավելանում է բայարմատին (չտեսա, չտեսար, չտեսավ... չկամ, չկաս, չկա...):

Ապառնի ժամանակ – Սահմանական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսելու պաՀից Հետո, դրան Հաջորդող գործողություն, այն կազմվում է **ապառնի** դերբայով և օժանդակ բայի **ներկայի** ձևերով՝

Ե խոնարհում		Ա խոնարհում	
գրել	~~էի, էիր, էր~~ ~~էինք, էիք, էին~~	կարդացել	~~էի, էիր, էր~~ ~~էինք, էիք, էին~~

Օրինակներ՝ Թող Աստված եղածը պահի,
Եվ հետո, ինչ էլ պատահի՝
*Ձյուներդ հայերեն **են լալու**,*
*Գարունդ հայերեն **է գալու**,*
*Հայերեն **են գալու** դարերդ (Հ. Սահյան)*

*Արևի պես հավերժական միշտ **լինելու ես** մեզ հետ:*
*Միշտ մնալու ես աշխարհում, **չի լինելու** նրգիդ վերջ,*
***Երգելու ես** ամեն դարում, ամեն սիրող սրտի մեջ (Գ. Սարյան):*

Ժխտականը նույնպես կազմվում է եզակի երրորդ դեմքի **է>ի** *հնչյունափոխությամբ (չի գրելու):*

Անցյալի ապառնի ժամանակաձև – *Սա ցույց է տալիս մի գործողություն, որը մի անցյալ ժամանակում կատարելի էր, այն կազմվում է նույն՝* ***ապառնի*** *դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝*

Ե խոնարհում		Ա խոնարհում	
գրել	էի, էիր, էր էինք, էիք, էին	կարդացել	էի, էիր, էր էինք, էիք, էին

Օրինակ՝ «Երբ նա եկավ ինձ մոտ, ես ***գնալու էի*** *դասի և կուրսում* ***կարդալու էի*** *իմ նոր բանաստեղծությունը»: «Երկու-երեք օր տանը փակված* ***էինք մնալու****, մեզ* ***չէին այցելելու*** *մեր ընկերները...* ***խոստովանելու էինք*** *մեր արարքները» (ՊՂ):*

Այս ժամանակը սահմանական եղանակի ամենասակավ գործածական ժամանակաձևն է:

Ժխտականը կազմվում է չ-ի հավելումով՝ անփոփոխ:

Անցյալ ժամանակ – *Սահմանական եղանակի* ***ներկա, անցյալ*** *և* ***ապառնի*** *ժամանակները բայի* ***հիմնական՝ գլխավոր*** *ժամա-*

նակներն են, իսկ սրանց **ածանցյալ անցյալի անկատար, անցյալի ապառնի** և **անցյալի վաղակատար** ժամանակները կոչվում են **ժամանակաձևեր**, որովհետև ցույց են տալիս նշված **հիմնական՝ գլխավոր** ժամանակներին հարաբերակից ժամանակաձևեր: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը. «Յուրաքանչյուր ժամանակ իր գլխավոր իմաստից բացի ունի նաև երկրորդական իմաստներ կամ իմաստային առումներ» («Ժամանակակից հայերենի քերականություն», 1975, էջ 166): Հենց դրանք էլ ժամանակաձևեր են:

Սահմանական եղանակի **անցյալ** ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից առաջ, նրան նախորդող գործողություն և ունի դրսևորման 2 ձև՝ **պարզ**, որը կազմվում է բայահիմքով և վերջավորություններով՝ **ի, իր, Օ, ինք, իք, ին** և **ա, ար, ավ, անք, աք, ան** և բաղադրյալ, որը կազմվում է վաղակատար դերբայով ու օժանդակ բայերով:

Նախ վաղակատարի մասին:

Վաղակատար ժամանակ – Վաղակատար ժամանակի բայաձևերը ցույց են տալիս ներկա ժամանակից առաջ կատարված, ավարտված գործողություն, այն կազմվում է **վաղակատար** դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝

Ե խոնարհում		Ա խոնարհում	
գրել	եմ, ես, է ենք, եք, են	կարդացել	եմ, ես, է ենք, եք, են

Վաղակատարով կազմված անցյալի ձևերը սովորաբար ցույց են տալիս այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես չի եղել, ի տարբերություն **անցյալ կատարյալի**, որը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես է եղել, օրինակ, «Գնացքը գնացել է» (խոսողը ականատես չի եղել), բայց «Գնացքը գնաց» ասելիս զգացվում է, որ խոսողը ականատես է եղել:

Բերենք գրական օրինակներ վաղակատար ժամանակով.

Լցվել է արդեն վանքի շրջական,
Մի մայր **գրկել է** մեղմանուշ մանկան (Սարմեն):
Եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ՝
Ծվարած հողում իր բիբլիական.

*Քարից **է քամել** իր հացը ավուր,*
*Քարին **է տվել** ձիրքերը իր բյուր* (Ս. Կապուտիկյան):

*Որտեղ ասես, որ **չեմ եղել**, որտեղից ասես, որ **չեմ գալիս** ես* (Գէ):

*... Պարզապես Դավիթն այստեղ **է կռվել**.*
*Պարզապես «Նարեկն» այստեղ **է գրվել*** (ՊՍ):

Ժխտականը նույնպես կազմվում է **է>ի** *ձևափոխությամբ* (*չի գրել, չի կարդացել*):

Անցյալի վաղակատար – *Այս ժամանակաձևը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվել է մի անցյալ ժամանակակետում, և որի արդյունքը կարող է հարատևած լինել մինչև անցյալ ժամանակակետը: Այն կազմվում է **վաղակատար** դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝*

Ե խոնարհում		Ա խոնարհում	
գրել	էի, էիր, էր էինք, էիք, էին	կարդացել	էի, էիր, էր էինք, էիք, էին

*Ով քաղաքից **էր հեռացել** – նա **թողել էր** մշուշը ծեր,–*
*Մշուշը, որ կյանքի վրա միաշաղախ ամպ **էր դարձել*** (Չարենց):

Ժխտականը կազմվում է չ-ի հավելմամբ՝ անփոփոխ:

Անցյալ կատարյալ ժամանակ – *Անցյալ կատարյալը սահմանական եղանակի միակ **պարզ ժամանակաձևն** է, որը կազմվում է բայի **անցյալ կատարյալի** հիմքով և համապատասխան վերջավորություններով, որոնք լինում են 3 տեսակ՝*

ցոյական (*գրեց, կարդաց+* **ի, իր, օ, ինք, իք, ին**)
ըեական (*խաղացր+* **ի, իր, եց, ինք, իք, ին**)
արմատական (*գտա, գտար, գտավ. գտանք, գտաք, գտան*), *այս վերջավորությունները դրվում են նաև **սոսկածանցավոր** և որոշ **անկանոն** բայերի վրա:*

Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս խոսելուց առաջ, անցյալ ժամանակակետում կատարված, ավարտված գործողություն, որը հաճախ կապվում է գործողությանն ականատես լի-

նելու կամ նրա կատարման իրադրության մեջ լինելու հետ (Մ. Աբեղյան), դրանով էլ տարբերվում է վաղակատար ժամանակից և կոչվում է **ակնատեսի ժամանակ**։

Մի մրահոն աղջիկ **տեսա** Ռիալտոյի կամուրջին...
Աչքս դիպավ աչքի բոցին, Ու գլուխս **կախեցի**.
Ժպտաց ժպտով առեղծվածի՝ Հավերժական կանացի (Ավ. Իս.)։
Դու անհոգ **նայեցիր** իմ վրա,
Ու **անցար** քո խաղով կանացի,
Ես քեզնից դառնացած **հեռացա**,
Ես քեզնից **հեռացա** ու **լացի** (ՎՏ)։

Անցյալ կատարյալի ժխտականը կազմվում է չ ժխտական մասնիկով, որը դրվում է բայի խոնարհված ձևի սկզբից՝
չնայեցի, չնայեցիր, չնայեց...
չտեսա, չտեսար, չտեսավ...

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել անցյալ կատարյալի բայաձևերը, ընդգծել հիմքը մեկ գծով, վերջավորությունները՝ երկու.

Ես առաջին անգամ էի տեսնում եղջերուն ազատ բնության մեջ։ Նա դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ. Կանգնեց անտառի մթության մեջ, թուխ դունչը դրեց գետնին, ապա գլուխը բարձրացրեց, ոլորեց երկար վիզը ու նայեց իմ կողմը...

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում, երբեք չեմ մոռանում։

Ես չփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրացանս... Շարժվեցի թե չէ, նա չտապով ետ թեքեց իր կարապի վիզը ու նայեց աջ ու ձախ, մեկ ուզում էր փախչել, մեկ մտածում էր ու մեկ ինձ էր նայում, կարծես ուզում էր հասկացնել, որ չկրակեմ։ Ես նույնպես չգիտեի անելիքս, բայց չէ՞ որ անմեղ կենդանի է, հետո՝ չի կարելի գեղեցկությունը սպանել։ Երկար իրար էինք նայում. եղջերուն հասկացավ ինձ, գլուխը խոնարհեց ու կամաց-կամաց առաջ գնաց։ Ես նույնպես չարժվեցի. թեքվեցի դեպի ձախ ու մտա մոտակա ծառի տակ. թփերի մեջ թաքնվեցի ու հետևեցի այդ գեղեցիկ կենդանու ընթացքին. հասկացավ, որ չեմ կրակելու և հեռացավ գոհունակությամբ։

Այս դեպքը երբեք չեմ մոռանում և մեղադրում եմ չատ որսորդների, որ կրակում են անմեղ կենդանիների վրա. չէ՞ որ նրանք բնության զարդն են: (Ըստ Վ. Անանյանի):

2. Դուրս գրել նաև սահմանական եղանակի մյուս ժամանակների բայերը՝ գրելով ժամանակներն ու ժամանակաձևերը:

3. Անցյալ կատարյալի տարբեր վերջավորություններով կազմել 3-ական նախադասություն:

Ըղձական եղանակ

Բայի ըղձական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, տենչանք, փափագ՝

Երնեկ, երնեկ, երազ **լինեմ**,
Թռնեմ մոտդ, մայրի՛կ ջան (Ավ. Իս.):
Ախր ես ինչպե՞ս **վեր կենամ, գնամ,**
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ **մնամ** (ՀՍ):

Ըղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ըղձական **ապառնի** (տե՛ս բերված օրինակները), այն ցույց է տալիս խոսողի իղձը, ցանկությունը իր խոսելու պահին, այն կազմվում է անկատարի բայահիմքով և **մ, ս, 0, նք, ք, ն** վերջավորություններով (գնա**մ**, գնա**ս**, գնա**0** և գնա**նք**, գնա**ք**, գնա**ն**):

Ըղձականի ապառնիով հաճախ արտահայտվում է պատվեր, հորդոր, «Ձեռքդ ընկած փողը քոռ ու փուչ չանես» (ՀԹ):

Թե մորդ անգամ **մոռքիցդ հանես,**
Քո մայր լեզուն **չմոռանաս** (ՍԿ):

Թող ինձ **չհիշեն**, թող ինձ **մոռանան** (ՎՏ):

Ըղձական ապառնիով են արտահայտվում նաև գրեթե բոլոր օրհնանքներն ու անեծքները, նաև հայհոյանքները: Օրինակներ՝

Աստված քեզ երկար կյանք **տա**, հող **բռնես**՝ ոսկի **դառնա**:

Ջոր քարին **գնաս**՝ քարը կանաչ **դառնա**, որդի՛:

Յոթ որդով սեղան **նստես**, մեկդ հազար **դառնա** (ժող. օրհնանքներ): Աստված պատիժդ **տա**: Յամաք հացի **կարոտ լինես**: Լավ օր ու արև **չտեսնես**, Ձեռքդ գրպանից **խոռով մնա**:

Ըղձականի **անցյալի ապառնին** ցույց է տալիս չիրականացված գործողություն, իղձ, ցանկություն, տենչանք՝ մի անցյալ ժամանակի համեմատությամբ. այն կազմվում է անկատարի հիմքով և **ի, իր, ր, ինք, իք, ին** վերջավորություններով՝

լինե-ի		լինե-ինք	
լինե-իր		լինե-իք	
լինե-ր		լինե-ին	

***Հրաշք լիներ, կրկնվեր** այն հրաշքը իրական,–*
*Առուն ստվերս **տաներ** ջաղացպանի աղջկան (ՀԱ):*
__Լինեի__ չորան սարերում հեռու,
__Գայիր անցնեիր__ վրանիս մոտով (ՎՏ):

Ըղձական անցյալի լավագույն օրինակներից են Պարույր Սևակի՝ Կոմիտասին նվիրված հետևյալ տողերը.

Բայց ինչո՞ւ գնաց Հայոց Թագուհին:
*__Մնար__ ու **ծիծ տար** իր Սողոմոնին – մեր Կոմիտասին:*
*__Մնար__ ու **հոգար** մեր մինուճարին–*
Իր որդու մասին:
*__Մնար__ ու նրան **մայրություն աներ**,*
Հուսահատության, տրտմության պահին
*Նրա ճակատի **ամպերը վաներ**,*
*Գեթ հայրը **մնար** ... Բայց հայրն էլ գնաց,*
Երբ որդին չկար տասը տարեկան (ՊՍ):

. Պայմանական կամ ենթադրական եղանակ

Բայի պայմանական կամ ենթադրական եղանակը ցույց է տալիս պայմանով, երբեմն էլ ենթադրաբար ավելի շատ նաև հաստատապես կատարվելիք գործողություն, եղելություն, այն արտահայտվում է ըղձական եղանակի բայաձևերին **կ(ը)** եղանակիչի հավելումով: Ըղձականի նման այս եղանակն էլ ունի 2 ժամանակ՝ **ապառնի և անցյալի ապառնի**:

Ապառնի ժամանակ – Պայմանական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից հետո կարելիական, ցանկալի գործողություն. այն կազմվում է ըղձականի ապառնի ժամանակի բայաձևի վրա **կ(ը)** եղանակիչի բայասկզբին հավելելով:

կգրեմ	կգրենք	կկարդամ	կկարդանք
կգրես	կգրեք	կկարդաս	կկարդաք
կգրի	կգրեն	կկարդա	կկարդան

*Այս եղանակի ժխտական ձևերը կազմվում են **կ** եղանակիչը օժանդակ բայի ժխտական ձևերով փոխարինելով՝*

կգնամ – չեմ գնա, չենք գնա
կգնաս – չես գնա, չեք գնա
կգնա – չի գնա, չեն գնա

*Օրինակներ՝ Իմ մահով ոչինչ չի **փոխվի** կյանքում...*

*Մի լույս **կմարի** հինգերորդ հարկում,*
Կմթնեն մի պահ աչքերը քո ջինջ:
*Բայց հավքերն էլի հարավ **կթռչեն**,*
*Մանուկներն էլ **կխաղան** բակում,*
*Կանաչներն էլի ցողով **կթրջվեն**,*
*Տղիկներն էլի **կչնչեն** մարգում:*
***Կվառվի** լույսը հինգերորդ հարկում,*
***Կժպտան** նորից աչքերը քո ջինջ (ՀՍ):*

*Տե՛ս, **կխռովեմ**, **լաց կլինեմ**, ես էլ... **Ձեզ սիրի** քեզ էլ... (ՀԹ):*

Պայմանական ապառնիի երկրորդ դեմքով երբեմն էլ արտահայտվում է խոսողի հանձնարարությունը, պատվերը, հորդորը.

***Կգնաս** քրոջդ **կասես**, որ այդպես չեն վերաբերվի անծանոթի հետ (ՄԳ): Այս գրությունը **կտանես**, **կհանձնես** տնօրենին ու վաղը պատասխանը **կբերես**:*

Նույն ժամանակի հոգնակի երրորդ դեմքով արտահայտվում են նաև ժողովրդական ասույթներ, առածներ, ասացվածքներ.

*Ձուկը ծովում **բազար չեն անի**: Ձուկը գլխից **կբռնեն**: Երկաթը տաք-տաք **կծեծեն**: Բզի գլխին բռունցքով **չեն խփի**: Ուղտին գդալով **չեն ջրի**: Ջուրը չտեսած՝ **չեն բոբիկանա** և այլն:*

Անցյալի ապառնի ժամանակ – *Այս ժամանակը գրեթե ոչ մի բանով չի տարբերվում պայմանականի **ապառնի** ժամանակից, միայն սրանց գործողությունները համեմատվում են **անցյալ** ժամանակի հետ և ցույց են տալիս անցյալ ժամանակում հնարավոր համարվող, ենթադրվող, բայց դեռևս չկատարված գործողություն, այն կազմվում է ըղձականի անցյալի ապառնիից՝ **կ(ը)** եղանակիչով: Դա լավ է երևում հետևյալ նախադասության մեջ՝ «Անտառում որսը **կաներ**, կեսօրվա հացից կեսը **կուտեր**, կեսն էլ **կպահեր**, **տուն կտաներ**» (ՎՓ):*

Կամ մի՞թե կատարվել է Իսահակյանի հետևյալ ցանկությունը՝

— Էյ Մանթաշի նխշուն հավքեր,
Իմ դարդս, որ ձերն **էղներ**,
Ձեր էդ զառ-վառ խաս փետուրներ
Կսևնային քանց գիշեր (Ավ. Իս.):

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն (ՆԶ):

Հարկադրական եղանակ

Բայի հարկադրական եղանակը կազմվում է ըղձական եղանակի բայաձևերից **պիտի** կամ **պետք** է եղանակիչներով. այն ցույց է տալիս կամ խոսելու պահից հետո կամ նրանից առաջ հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն կամ եղելություն, այն ըղձականի նման ունի 2 ժամանակ՝ **ապառնի և անցյալի ապառնի**:

Այս եղանակի ժխտական ձևերը կազմվում են **պիտի** կամ **պետք** է եղանակիչին հավելելով չ ժխտականը (պիտի գնամ – չպիտի գնամ, չպետք է գնամ):

Ապառնի ժամանակ – Ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարումը խոսքի պահից հետո խոսողի կողմից համարվում է անհրաժեշտ, երբեմն էլ պարտադիր. այն կազմվում է ըղձական անցյալի բայաձևերին հավելելով **պիտի** կամ **պետք է** եղանակիչը, այսպես՝

պիտի (պետք է) գրեմ, կարդամ	պիտի (պետք է) գրենք, կարդանք
պիտի (պետք է) գրես, կարդաս	պիտի (պետք է) գրեք, կարդաք
պիտի (պետք է) գրի, կարդա	պիտի (պետք է) գրեն, կարդան

... Ու **պիտի գա** հանուր կյանքի արշալույսը վառ հագած...
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ):

Ես **պիտի դուրս** գամ դեպ հրապարակ՝
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես **պիտի գոչեմ, պիտի բողոքեմ՝**
Խավարի ընդդեմ պատերազմելով (ՄՆ):

Անցյալ ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ խոսելու պահից առաջ անհրաժեշտաբար կամ

Հարկադրաբար կատարելի գործողություն կամ եղելություն. այն կազմվում է ըղձականի անցյալի ապառնիի ձևերից՝ **պիտի** կամ **պետք** է եղանակիչների հավելումով. օրինակներ՝

Ինչքան ծաղիկ **պիտի բուսներ**,
Որ չբուսավ էս հողին (ՀԹ):

Ուրախությանս չափ չկար. ես **պիտի տեսնեի** Հարևան գյուղը, **պիտի բարձրանայի** սարի գագաթը (ԱԲ): Այս անգամ **պիտի բնակվեի** քաղաքի աղմկալի փողոցներից մեկում (Ծ):

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել բայերը և որոշել դրանց եղանակներն ու ժամանակները.

Անձրևն անցնի՝ գյուղից դուրս գամ,
Հանդերն ընկնեմ, թափառեմ,
Աղբյուրներով սքանչանամ, ծաղիկները
փայփայեմ (Հր. Հով.):

Դպրոցն ավարտեցինք: Ամեն մեկս գնաց մի կողմի վրա, բայց իմ հիշողության մեջ անմոռաց կմնա այս դեպքը: Զգիտեմ ինչու ամեն անգամ սրտումս մի այրող ցանկություն է առաջանում. ուզում եմ իմանալ, թե ինչ է մտածում նա իմ մասին, կհիշի՞ արդյոք ինձ, պետք է, որ հիշի, կամ երևի հազիվ հիշի, ժամանակները շատ են անցել, ես էլ փոխվել եմ ու ծերացել, բայց լավ աշակերտը չպետք է մոռացվի. նա անմոռաց կմնա: Ասեմ, որ պատանեկան տարիներիս էլ շատ աշխույժ եմ եղել. սիրվում էի բոլորի կողմից, դիտողություն ստանալիս կկարմրեի ու մի կողմ կկանգնեի. պետք է ուսուցիչը մոտենար, մի երկու լավ խոսք ասեր ու ինձ այդ վիճակից հաներ (ԽԳ):

Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով
Պիտի գովեն քո նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ):

2. Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով,
Ու դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ,
Կընկնեք մուրալու հափրած որկորով՝
Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:
Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու փառ. զեղմունք — միտք ու երազանք,
Նյութի տաճարում արբած պարեցիք՝
Մոռացած անմահ, անհուն տենչանք:

Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր նյութի հանդեպ կգա ոսկու սով.
Եվ մուրացիկի պես փշրանքի համար
Մարավ ու նոթի կանցնեք ծովե ծով (Ավ. Իս.)

Հրամայական եղանակ

Բայի հրամայական եղանակն արտահայտում է խոսողի ***իղձը, ցանկությունը, հրամանը, հորդորը, կոչը, պահանջը, խնդրանքը, արգելանքը:*** *Այս եղանակի բայերով խոսողը դիմում է խոսակցին կամ դիմացիններին՝ կատարելու կամ չկատարելու իր կամային վերաբերմունքը: Քանի որ այս եղանակի բայաձևերով խոսողը առնչվում է* ***խոսակցի*** *հետ, որը կարող է լինել մեկը կամ մի քանիսը, հետևաբար այն ունենում է միայն մեկ՝* ***2-րդ դեմք*** *և* ***եզակի*** *ու* ***հոգնակի*** *թիվ, և քանի որ խոսողի պահանջը, հրամանը, իղձը պետք է կատարվեն խոսելու պահից հետո, ուստի այն ունի միայն մեկ՝* ***ապառնի ժամանակ,*** *թեև այդ պահանջը կարող է լինել անմիջապես խոսքին հաջորդող («Գիրքդ տո՛ւր ինձ»: «Մոտեցի՛ր գրատախտակին»: «Մաճկի՛ր դուռը»):*

Կազմությունը

«Ե» *խոնարհման պարզ բայերի և բազմապատկական (**ստ, ոտ, կոտ, տ**) ու **վ** սեռածանցն ունեցող բայերի հրամայական եղանակի եզակի թիվը կազմված է* ***անկատարի՝ ներկայի*** *հիմքի վրա* ***ի՛ր*** *վերջավորության հավելումով. այսպես՝ գր+**իր**, վազ+**իր**, կոտրատ+**իր**, թռչկոտ+**իր**, խաղաղվ+**իր**, հյուրասիրվ+**իր**:*

Ա *խոնարհման պարզ բայերի հրամայականի եզակի թիվը կազմվում է* ***անկատարի՝ ներկայի*** *հիմքի վրա ավելացնելով* ***ա*** *խոնարհիչը. այսպես՝ կարդ+**ա**, խաղ+**ա**, աղ+**ա**, մն+**ա**, գն+**ա**:*

Ան, են, ն, չ *ածանցներ ունեցող բայերի եզակին կազմվում է* ***անցյալի*** *հիմքի վրա ավելացնելով* ***իր*** *վերջավորությունը. այսպես՝ մոտեց+**իր**, հեռաց+**իր**, մտ+**իր**, ընկ+**իր**, փախ+**իր**, թռ+**իր**:*

Պատճառական բայերի հրամայականի եզակին կազմվում է անցյալի հիմքի վրա ավելացնելով ***ու*** *վերջավորությունը, որտեղ* ***ացն, եցն, ցն*** *պատճառական ածանցների* ***ն****-ն դառնում է* ***ր****. այսպես՝ հեռացր+**ու**, մոտեցր+**ու**, թռցր+**ու**, տեսցր+**ու**:*

*Հոգնակի թվի բոլոր բայերի համար հրամայականն ունի նույն կազմությունը. կազմվում է բայերի անցյալի հիմքի վրա ավելացնելով **եք** վերջավորությունը (վազեց+**եք**, նստեց+**եք**, կանգնեց+**եք**, խմեց+**եք**, բարձրաց+**եք**, մոտեցր+**եք**, փախցր+**եք**, կոտրատեց+**եք**, թողր+**եք**) խոսակցական լեզվում հաճախ **ց**-ն չեն արտասանում՝ խոս+**եք**, նստ+**եք**):*

*Արգելական հրամայականը կազմվում է դրական բայաձևերի վրա ավելացնելով **մի** արգելականը (մի՛ վազիր, մի՛ մոտենա, մի՛ կարդա, մի՛ գրիր, մի՛ փախիր, մի՛ վերցնի, մի՛ փախցնի): Արգելականի հոգնակին կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով **եք**, **աք** (մի՛ գրեք, մի՛ վազեք, մի՛ կարդաք, մի՛ խաղաք, մի՛ հեռանաք և այլն,): Խոսակցական լեզվում այս դեպքում հաճախ ավելացնում են **ց**-ն (մի՛ գրեց-եք, մի՛ խոսեց-եք, մի՛ կարդաց-եք, մի՛ խաղաց-եք, մի՛ վերցր-եք):*

*Հ ի շ ի՛ ր — Սխալ է **մի** արգելականի վրա **ք**-ի հավելումը (**մի՛ք** գրի, **մի՛ք** կարդա, **մի՛ք** մոտենա, **մի՛ք** իջնի, **մի՛ք** գնա, **մի՛ք** թողնի և այլն):*

*Հրամայական բայերի արտասանության համար կարևոր է հնչերանգը, որն արտահայտվում է բայի վերջին վանկի ձայնավորի հատուկ շեշտված արտասանությամբ, իսկ գրավոր խոսքում՝ շեշտի միջոցով, որը արգելականի դեպքում դրվում է **մի**-ի վրա (Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշի՛ր, ինձ այդպես քրոջ պես մի՛ գթա (ՎՏ): Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին (ՎՏ):*

Հարադրավոր բայերի հրամայականի ձևերում շեշտն ստանում է հարադիրը՝ Դո՛ւրս եկեք կրկին շիրմից, խավարից... Վե՛ր կացեք, վեր ամբողջ գիշեր մարդ է գնում ու գալի (ՀԹ):

Այժմ տեսնենք, թե իմաստային ինչ տարատեսակներ կարող են արտահայտել հրամայական եղանակի բայերը. դրանք արտահայտում են՝

***Հրաման** —*

*— Դո՛ւրս իմ տանից, սևերե՛ս, Ետ **չնայես** դեպի մեզ,*
*Ոտ **չդնե՛ս** էլ տունս, Մրոտեցիր անունս (ՀԹ):*

> ***Զարկեցե՛ք** անդուլ, անգութ, անխնա,*
> ***Ջնջեցե՛ք** աշխարհն՝ ապական ու հին*
> *Թող քարը քարի վրա չմնա,*
> *Ողջը **մատնեցե՛ք** հրին ու սրին (ՎՏ):*

Թող'ք, բազեներ, սուրացե'ք տանկեր, դեպի թշնամին (ՆԶ)։

Կարգադրություն –

– Մտի'ր ջուրը և մաքրվի'ր Համիդի տված աղտեղություններից,– կարգադրեց Այվազովսկին չանը (Վազներ)։

Գնա', միշտ գնա', իմ քարավանս ու քայլի'ր մինչև օրերիս վերջը (Ավ. Իս.)։

***Հորդոր – եկե'ք,** քույրեր, սեգ սարերի չքնաղագեղ ոգիներ,*

*   **Եկե'ք** ջահել սիրահարի սերը ողբանք վաղամեռ (ՀԹ)։*

***Քո'ն** եղիր, բալաս, աչքերդ խո'ւփ արա,...*

*Սուրբ Աստվածամայր, բալիկիս **քո'ն տուր** (ՌՊ)։*

*   **Հեռացի'ր, մոռացի'ր**, մի' հիշիր,*

*   Ինձ այդպես, քրոջ պես **մի' գթա** (ՎՏ)։*

Խնդրանք –

Այ վա'րդ, լսի'ր աղաչանքիս, թո'ւյլ տուր թփից քեզ քաղեմ...

Մի' վախենար, նրա կրծքին չես թառամիլ, քնքո'ւշ վարդ (Մատուրյան)։

Վա՜յ, վա՜յ, Մոսի' ջան, ինձ մի' սպանիր...

Ինձ թո'ղ էս անգամ (ՀԹ)։

Պատգամ, խորհուրդ – *Լսի'ր, որդիս, պատգամ որպես*

*   Սիրող քո մոր խոսքը սրտանց (ՍԿ)։*

Եկո'ւր, որդյակ, հայրենի տունդ շինցուր (ԴՎ)։

Ատելու չափ սիրի'ր մարդկանց, բայց լավություն միշտ արա (Ավ. Իս.)։

Խարխուլ մակույկով հանձնվի'ր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին (Ավ. Իս.)։

Կոչ, հրավեր – *Դո'ւրս եկեք կրկին շիրմից, խավարից...*

*   Կյանքով **շնչեցե'ք**, ապրեցեք նորից,*

*   **Լցրե'ք** պոետի հաճույքը վսեմ (ՀԹ)։*

***Արի'** իմ սոխա'կ, **թո'ղ** պարտեզ, մերին,*

*Տաղերով **քո'ն բեր** տղիս աչքերին (ՌՊ)։*

Առաջադրանքներ.

Դուրս գրել հրամայական եղանակի բայերը և որոշել իմաստային տեսակները.

Հեռացի'ր, աշուն, համրորեն լացող...

Գրկի'ր իմ հոգին մարտի ցնծությամբ,

Բորբոքի'ր սիրտս, ազատության երգ,

Շողա՛ մռայլում, ըղձալի՛ եզերք,
Որոտա՛, չաչխի՛ր, փոթորկավե՛տ ամպ (ՎՏ) :
Շառաչե՛ք ուժգին, կաղնիններ հզոր,
Խուլ վրնջացեք, նժույգնե՛ր խիզախ,
Մրրկի նման զարկեցե՛ք չեփոր...
Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ (Ավ. Իս.):
Աշխարհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա (ԵՉ):
Հեռացի՛ր, մոռացի՛ր մի՛ հիշիր, ինձ այդպես,
քրոջ պես մի՛ գթա (ՎՏ):
Ինձ թաղե՛ք, երբ կարմիր վերջալույսն է մարում (ՎՏ):
Ե՛կ, ողողի՛ր սիրտս քո խնդութեամբ պայծառ (ՊՍ):
Արշավե՛ք հողմեր, իմ հոր տան վրա, քանդեք,
ավերեք հիմքերը նրա
Եվ փոշին ցրեք մեծ աշխարհով մեկ (Ավ. Իս.):
Ա՜խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն, կյանքից հեռու սլանամ (ՀՀ):
Օգնի՛ր ինձ, Մարիամ, որ քեզ արժանի լինեմ (ՊՍ):

2. Հրամայական եղանակի տարբեր իմաստներով կազմեք նախադասություններ:

Ընդհանրական առաջադրանք բայերի եղանակների վերաբերյալ

Նշել բայերի եղանակներն ու ժամանակները.

Դու անհոգ նայեցիր ինձ վրա
Ու անցար քո խաղով կանացի,
Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի (ՎՏ):
Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում,
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս հեռուն:
Թե Կարինե Քոթանջյանին տեսնեք Կարսի փողոցներում,—
Ասեք նրան՝ Չարենցն ասավ — Մնա՛ս բարով, մնա՜ս բարով
(Ե. Չարենց):

Է՜հ, ի՞նչ արած, բախտը խռով
Թող աշխարհում մեզ չհիշի,
Միայն ապրենք մենք սիրելով՝
Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի... (ՍԿ):

Երբ քունդ գա, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբույր տամ,
Սրտիդ կպնիմ վառ կարոտով,
Լամ ու խնդամ, մայրի՛կ ջան (Ավ. Իս.)։
Քո պայծառ գահից մեղմորեն իջի՛ր,
Մազերդ փռի՛ր հոգնատանջ կրծքիս,
Անուշ երգերով սիրտս պաճուճի՛ր,
Ցնորք հուշերով ամոքի՛ր հոգիս (ՎՏ)։
Թող Աստված եղածը պահի, և հետո ինչ էլ պատահի,
Ձյուներդ հայերեն են լալու, Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ (Հ. Սահյան)։
Հացառատ մի ողջ աշխարհ սարքեցին փշրանք նշխար,
Սուրբ նշխար՝ չան բերանում,—
Ուզեցին մեկ հայ թողնել եվ այն էլ ... թանգարանում...
— Գարուն ա, ձուն ա արել (Պ. Սևակ)։
Էլի գարուն կգա, կբացվի վարդը (ԵՉ)։
Պիտի փարվեմ հզոր Արարատիդ լանջին,
Պիտի պաշտեմ, պաշտեմ վառ արշալույսը քո (ԴԵ)։
Գնա՛, իմ որդյա՛կ, աշխարհքս անցի՛ր,
Պանծալի անուն Մեծի դու ստացի՛ր (ՌՊ)։

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՑՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*Դիմավոր բայերի փոփոխությունը դեմքով, թվով, եղանակով և ժամանակով կոչվում է **խոնարհում**։*

Բայի քերականական այս կարգերի մասին խոսելիս, համապատասխան տեղերում արդեն օրինակներով ցույց է տրվել շատ բայերի խոնարհման պատկերը։ Այստեղ տալիս ենք դրա ընդհանուր նկարագիրը։

*Բայի խոնարհման բնույթը սերտորեն կապված է նրա կազմության հետ։ Ինչպես ասվել է, բայերը կազմությամբ լինում են պարզ և ածանցավոր, որը երևում է հենց **անորոշ** դերբայից, որն ունի **ել** և **ալ** ածանց-վերջավորությունները, ըստ դրա էլ տարբերակվում է **ե** կամ **առաջին** խոնարհում և **ա** կամ **երկրորդ** խոնարհում։ Խոնարհումը կատարվում է 2 հիմքով **անկատարի** և **անցյալի**։ Խոնարհման տարբերությունները երևան են գալիս հիմնականում **անցյալի** հիմքում և դրանից կազմված բայաձևերում։*

Ե խոնարհման պատկանում են՝

ա) **պարզ** (երգել, վազել), կրավորական (գրվել, սիրվել), բազմապատկական (կոտրատել, նստոտել):

բ) **ն, չ** ածանց ունեցող բայերը (տեսնել, փախչել):

գ) **ցն** պատճառական ածանց ունեցող բայերը (թռցնել, փախցնել):

Ա խոնարհման պատկանում են՝

ա) **պարզ** բայերը (կարդալ, խաղալ):

բ) **ան, են** սոսկածանց ունեցող բայերը (հեռանալ, մոտենալ):

«Ե» խոնարհում

«Ե» խոնարհման պարզ բայերը և **կրավորական** ու **բազմապատկական** ածանցներ ունեցող բայերը խոնարհվում են նույն ձևով: Սրանց **ներկայի** հիմքից են կազմվում բոլոր դերբայները: Հետևաբար **սահմանական** եղանակի 6 վերլուծական ժամանակաձևերը, ինչպես նաև **ըղձական, պայմանական** և **հարկադրական** եղանակների բայաձևերը:

Սրանց անցյալի հիմքը **ց**-ոյական է (գր+**եց**, ջարդվ+**եց**, կոտրատ+**եց**): Անցյալի հիմքից են կազմում սահմանականի անցյալ կատարյալը և հրամայական եղանակի հոգնակին (գրեցեք, ջարդվեցեք, կոտրատեցեք):

Ն և **չ** ածանց ունեցող բայերի անցյալի հիմքը ոչ **ց**-ոյական է, բացի դրանից անցյալի հիմքում այս ածանցները ընկնում են (տեսնել-տեսել եմ, թռչել-թռել եմ):

Անցյալի հիմքից են կազմվում սահմանականի անցյալ կատարյալը (թռա, թռար, թռավ, թռանք, թռաք, թռան), վաղակատարի ներկան և անցյալը (թռել եմ, ես, է... էի, էիր, էր), ինչպես նաև հրամայական եղանակի բայաձևերը (թռիր, թռեք, մտիր, մտեք):

Ն և **չ** ածանց ունեցող բայերի մյուս ձևերը կազմվում են ներկայի հիմքից:

Պատճառական բայերը խոնարհվում են **ե** խոնարհման պարզ բայերի նման, միայն թե սրանց անցյալի հիմքը **ր**-ական է, **ն**-ն փոխվում է **ր**-ի (վախեցնել-վախեցրեց, մոտեցնել-մոտեցրել, մոտեցրեց):

*Անցյալի Հիմքից են կազմվում սահմանականի անցյալ կատարյալը (վախեցրի, վախեցրիր, վախեցրեց (**ինք, իք, ին**), վաղակատարի ներկան ու անցյալը և Հրամայական եղանակի բայերը (վախեցրո՛ւ, վախեցրե՛ք):*

«Ա» խոնարհում

Ա *խոնարհման պարզ բայերը նույնպես կազմվում են ներկայի և անցյալի Հիմքերից: Ներկայի Հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ապառնի, ժխտական և Համակատար դերբայները, ըղձական, պայմանական, Հարկադրական եղանակների բայաձևերը և Հրամայական եղանակի եզակի թիվը:*

Սրանց անցյալի Հիմքը **ց**-*ոյական է (կարդացի, կարդացիր, կարդաց...), դրանցից կազմվում են սահմանականի անցյալ կատարյալը, վաղակատարի ներկա և անցյալ ժամանակաձևերը և Հրամայական եղանակի Հոգնակին՝ կարդացե՛ք, ինչպես նաև վաղակատար, Հարակատար և ենթակայական դերբայները (կարդացել, կարդացած, կարդացող):*

Ա *խոնարհման* **ան** *և* **են** *ածանց ունեցող բայերի (Հեռանալ, մոտենալ,) անցյալի Հիմքը նույնպես* **ց**-*ոյական է, ըստ որում* **ց** *Հիմքակազմիչը փոխարինում է* **են, ան** *ածանցների* **ն**-*ին (Հեռանալ-Հեռա***ց***ա, մոտենալ-մոտե***ց***ա):*

Ներկայի *Հիմքից են կազմվում այս բայերի անորոշ, անկատար, ապառնի, ժխտական, Համակատար դերբայները և ըղձական, պայմանական, ենթադրական եղանակների բայաձևերը՝ Համապատասխան վերջավորությունների Հավելումով:*

Անցյալի *Հիմքից են կազմվում սահմանականի անցյալ կատարյալը (Հեռացա, Հեռացար, Հեռացավ –* **անք, աք, ան***) վաղակատարի ներկա և անցյալ ժամանակաձևերը (Հեռացել – եմ, ես, է, էի, էիր, էր...), ինչպես նաև Հրամայական եղանակի եզակին և Հոգնակին (Հեռացի՛ր, Հեռացե՛ք):*

Ա *խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի վերջավորություններն են,* **ի, իր, 0, ինք, իք, ին** *(կարդացի, կարդացիր, կարդաց, կարդացինք, կարդացիք, կարդացին):*

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ, ԴՐԱՆՑ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնց խոնարհումը շեղվում է վերևում բերված բայերի կանոնավոր խոնարհման ձևերից, թեև դրանց թիվը քիչ է, ընդամենը 22, բայց խոսքում ամենագործածական բայերն են. դրանք կոչվում են **անկանոն** բայեր, որոնք նույնպես լինում են **պարզ** (**գալ, տալ, լալ, ասել, զարկել, բերել, բացել, ուտել**) ընդամենը 8-ն են և **ածանցավոր** (**անել, դնել, տանել, ելնել, տեսնել, առնել, թողնել, բանալ, բառնալ, դառնալ, լինել, լվանալ, կենալ, վեր կենալ**) - 14 բայ:

Նշված բայերի անկանոնությունն ու խոնարհման շեղումները երևան են գալիս հիմնականում **անցյալի** հիմքից կազմված բայաձևերում և **հրամայական** եղանակում:

Քանի որ թե՛ ուսանողները և թե՛ աշակերտները դժվարությամբ են հիշում ու մտապահում նշված անկանոն բայերը, դրանք մտապահելու նպատակով մենք դասդասել ենք դրանք և դրանց հետ կապված համապատասխան սյուժեններ ենք կազմել:

Պարզ անկանոն բայեր

Նախ **պարզ** բայերի մասին. սրանք բաժանել ենք 2 խմբի՝ **գալ, տալ, լալ**, սրանք չունեն **անկատար** դերբայներ, սրանց սահմանականի ներկա և անցյալի անկատար ժամանակաձևերը կազմվում են **համակատար դերբայով** և **օժանդակ բայերի** հարադրությամբ՝

Ներկա		**Անցյալի անկատար**	
գալիս տալիս լալիս	**եմ, ես, է** **ենք, եք, են**	գալիս տալիս լալիս	**էի, էիր, էր** **էինք, էիք, էին**

Սրանցով կազմված սյուժեն կապված է **փողի** հետ. «Ընկերուհիդ **գալիս է** քեզ մոտ, նրանից **փող** ես խնդրում՝ **տալիս է**, բայց հետո էլ՝ **լալիս է**, քանի որ ինքն էլ դրա կարիքն ուներ»:

Գալ բայի անկանոնությունը շատ լավ է երևում **կատարյալի** (անցյալի) հիմքում, որտեղ փոխվում է նրա արմատը՝ **եկ**, որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական

դերբայները (**եկել, եկած, եկող**), սահմանականի անցյալ կատարյալ ժամանակը (**եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան**) և հրամայականը՝ **ե՛կ, եկեք, մի՛ գար, մի գա՛ք** (**մի՛ եկ, մի՛ եկեք**): Սրա հրամայականի համար ավելի տարածված է **արի՛** խոսակցական ձևը (նաև **մի՛ արի**):

Գալ-ի վաղակատարի ձևերն են՝

եկել - եմ, ես, է, ենք, եք, են

եկել - էի, էիր, էր, էինք, էիք, էին:

Տալ բայի անցյալ կատարյալի հիմքում **ա**-ն փոխվում է **վ**-ի, վաղակատար՝ **տվել**, հարակատար՝ **տված**, ենթակայական՝ **տվող**:

Անցյալ կատարյալի հիմքը **ց**-ոյական է (**տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին**), ժողովրդախոսակցական լեզվում ավելի տարածված են՝ **տվի, տվիր, տվեց, տվինք, տվիք, տվին** ձևերը:

Հրամայական եղանակ – տո՛ւր, տվե՛ք, մի՛ տուր, մի՛ տվեք:

Լալ անկանոն բայի անցյալի հիմքն է **լաց**, որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները (լացել, լացած, լացող) **անցյալ կատարյալ** ժամանակը (լացեցի, լացեցիր, լացեց...), գործածվում են նաև **լացի, լացիր, լաց, լացինք, լացիք, լացին** ձևերը:

Հրամայական եղանակ – լա՛ց, լացե՛ք, մի՛ լար, մի՛ լացեք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ – Լալ բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերի փոխարեն հաճախ գործածվում են **լաց լինել** հարադրական ձևերը, ինչպես՝ **լաց եմ եղել, լաց ես եղել, լաց եղա, լաց եղար, լաց եղիր** և այլն:

Ասել բայը նույնպես անկանոն է, որի անկանոնությունը հանդես է գալիս միայն **անցյալ կատարյալ ժամանակում** (**ասացի, ասացիր, ասաց...** և հրամայական եղանակում՝ **ասա՛, ասացե՛ք** (նաև ասեք, մի՛ ասա, մի՛ ասեք):

Նկատելի է, որ **ասել ե** խոնարհման բայը անցյալի հիմքից կազմված ժամանակաձևերում դառնում է **ա** խոնարհման, թեև գործածական են նաև՝ **ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին**, նաև՝ **մի՛ ասա, մի՛ ասեք**, ոչ **ց**-ոյական խոսակցական ձևերը:

Պարզ անկանոն բայերի հաջորդ խմբի մեջ են մտնում **զարկել, բերել, բանալ, ուտել** բայերը: Սրանց համար կազմել ենք հետևյալ

սյուժեն՝ կապված **որսի** հետ. «**Գնացել եք** որսի, **զարկել եք** մի նապաստակ, դրել եք տոպրակի մեջ, **բերել եք** տուն (կամ կրակի մոտ), **բացել եք** տոպրակը և եփել, կերել եք նապաստակը»:

Այս բայերից 2-ը՝ **զարկել, բերել** անցյալում ունեն 2 հիմք՝ **զարկ** և **զարկեց, բեր** և **բերեց**, որոնցով կազմվում է անցյալ կատարյալ ժամանակը (**զարկեցի, զարկեցիր, զարկեց... բերեցի, բերեցիր, բերեց...**), ինչպես նաև՝ **զարկի, զարկիր, զարկեց... բերի, բերիր, բերեց...**:

Զարկել բայի հրամայականը կլինի՝ **զարկի՛ր** (նաև զա՛րկ), զարկեցե՛ք (նաև զարկե՛ք), արգելականը՝ **մի՛ զարկի՛ր** (նաև մի՛ զարկ), **մի՛ զարկեցե՛ք**:

Բերել բայի հրամայականը կլինի՝ **բե՛ր, բերե՛ք, մի՛ բեր, մի՛ բերեք**:

Բանալ բայի անցյալի հիմքն է **բաց**, դերբայներ՝ (**բացել, բացած, բացող**), անցյալ կատարյալը՝ **բացի, բացիր, բացեց, բացինք, բացիք, բացին**, հրամայականը՝ **բա՛ց, բացե՛ք, մի՛ բաց, մի՛ բացեք**:

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ – Այս բայի անցյալի հիմքից կազմված ձևերի փոխարեն հաճախ գործածվում են **բաց անել** հարադրական ձևերը (**բաց արի, բաց արիր, բաց արեց...**, հրամայական՝ **բա՛ց արա, բա՛ց արեք**):

Ուտել բայի հիմքը **գալ** բայի նման փոխվում է. այն դառնում է **կեր**, որից կազմվում են վաղակատար (**կերել**) հարակատար (**կերած**) դերբայները, անցյալ կատարյալ ժամանակը (**կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան**) և հրամայական եղանակը՝ **կե՛ր, կերե՛ք, մի՛ կեր, մի՛ կերեք**:

Սրա **ենթակայական** և **համակատար** դերբայները կազմվում են ներկայի հիմքով (**ուտող** և **ուտելիս**):

Աձանցավոր անկանոն բայեր

Աձանցավոր անկանոն բայերը ընդամենը 14-ն, որոնց ցուցակը բերված է վերևում: Սրանք դասդասվում են ըստ իրենց աձանցների, որոնք մի դեպքում ընկնում են՝ **ելնել, տեսնել, առնել, թողնել**, (**ն>0**), մյուս դեպքում **ն**-ն փոխվում է **ր**-ի (**անել, դնել, տանել**), մի այլ դեպքում **ռն**-ն դառնում է **րձ** (բառնալ, դառնալ) :

Նախ՝ **ելնել, տեսնել, առնել, թողնել** բայերի մասին, որոնց անցյալի հիմքում **ն** աձանցը ընկնում է.

Անորոշ	վաղակատար		անցյալ կատարյալ
ելնել	ելել	եմ, ես, է,	ելա, ելար, ելավ...
տեսնել	տեսել	էի, էիր, էր	տեսա, տեսար, տեսավ...
առնել	առել		առա, առար, առավ...
թողնել	թողել		թողի, թողիր, թողեց...
			նաև՝ թողեցի, թողեցիր, թողեցինք...

Հրամայականը՝

ե՛լ (նաև ելի՛ր), ելե՛ք, մի՛ ելնիր, մի՛ ելնեք,

տե՛ս, տեսե՛ք, մի տեսնի՛ր, մի տեսնեք (նաև մի՛ տեսեք),

ա՛ռ, առե՛ք, մի՛ առ (նաև մի՛ առնեք),

*թո՛ղ, թողե՛ք, մի՛ թող (նաև մի՛ թողնիր), մի՛ **թողեք** (նաև մի՛ թողնեք):*

*Այս բայերի համար սյուժե է **կոշիկ** կամ **հագուստ** առնելը:*

*«Հանրախանութի վերևի հարկում իտալական կոշիկ (հագուստ) են ստացել, **ելնում ես, տեսնում ես, առնում ես,** բայց **մոռանում** ու թողնում ես այնտեղ, դուրս գալուց հետո ասում ես՝ **ելա, տեսա, առա, թողի** (նաև **թողեցի**)»:*

*Այժմ **անել, դնել, տանել** բայերի մասին, որոնց անցյալի հիմքում **ն** ածանցը փոխվում է **ր**-ի, այսպես՝*

Անորոշ	վաղակատար	անցյալ կատարյալ
անել	արել	արեցի, արեցիր, արեց
դնել	դրել	դրեցի, դրեցիր, դրեց
տանել	տարել	տարա, տարար, տարավ

Հրամայականը կլինի՝	արա՛,	արե՛ք
	դի՛ր,	դրե՛ք
	տա՛ր,	տարե՛ք

*Սրանց համար էլ հարմար է **լվացքը** (լվացքը **անել, դնել** զամբյուղի մեջ և **տանել** դուրս՝ փռելու):*

***Բառնալ, դառնալ** բայերի համար էլ հարմար է հիշեցնել ժողովրդական հետևյալ ասացվածքը՝ «**Քիչ բարձիր, շուտ դարձիր**», նկատելի է, որ ներկա (անորոշի) հիմքի **ռն**-ն անցյալի հիմքում դառնում է **րձ**: Հրամայականը լինում է՝ **բարձի՛ր**,*

բարձե՛ք, մի՛ բարձիր (նաև **մի՛ բառնա**). **դարձի՛ր, դարձե՛ք, մի՛ դարձիր** (նաև **մի՛ դառնա, մի՛ դառնաք**):

Լինելը ամենագործածական անկանոն բայերից է, որի անցյալի հիմքը լրիվ փոխվում է, դառնում է **եղ** (**եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան**): Հրամայականը՝ **եղի՛ր, եղե՛ք, մի՛ եղիր, մի՛ եղեք** (նաև **մի՛ լինիր, մի՛ լինեք**):

Լվանալ բայի անկանոնությունը դրսևորվում է անցյալ կատարյալ ժամանակում (**լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին**), հրամայականը՝ **լվա՛, լվացե՛ք, մի՛ լվա** (**մի՛ լվանա**, նաև **մի՛ լվանաք, մի՛ լվացեք**): Դերբայները՝ **լվացել, լվացած, լվացող**:

Կենալ բայի անցյալի հիմքն է **կաց**, որը հիմնականում հանդես է գալիս **վեր կենալ** հարադրությամբ (**վեր կացա, վեր կացար, վեր կացավ, վեր կացանք, վեր կացաք, վեր կացան**): Սրա հրամայականը կլինի՝ **վե՛ր կաց, վե՛ր կացեք, մի՛ վեր կաց, մի՛ վեր կացեք** (նաև **մի՛ վեր կենա, մի՛ վեր կենաք**):

Հիմնականում սրանք են հայերենի անկանոն բայերը:

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Ժամանակակից հայերենում կա ընդամենը 9 բայ, որոնք չունեն խոնարհման բոլոր ձևերը: Դրանք կոչվում են **պակասավոր բայեր**. դրանք են **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ, լվալ, հուսալ, ցանկալ, կենալ**:

Եմ-ը ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները՝ **եմ, ես, է, ենք, եք, են** և **էի, էիր, էր, էինք, էիք, էին**:

Սրանց մյուս ձևերի իմաստն արտահայտելու համար օգտագործվում են **լինել** բայի ձևերը (եղա, եղար, եղավ, եղիր, լինեմ, լինեի...):

Կամ պակասավոր բայը չունի ոչ մի դերբայ. այն ունի միայն սահմանական եղանակի ներկա (**կամ, կաս, կա, կանք, կաք, կան**) և անցյալի անկատար ձևերը (**կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային**), պակաս ձևերի իմաստները լրացվում են **լինել** բայով:

Գիտեմ բայը նույնպես չունի ոչ մի դերբայ, ունի միայն սահմանականի ներկայի (**գիտեմ, գիտես, գիտեի...**) և անցյալի անկատար (**գիտեի, գիտեիր, գիտեր...**) մնացած ձևերի համար գործածվում են **գիտենալ** և **իմանալ** բայերի ձևերը:

Ունեմ և **արժեմ** բայերը նույնպես չունեն դերբայներ, ունեն միայն սահմանականի ներկա և անցյալի անկատար ձևերը (ունեմ, ունես, ունի... արժեմ, արժես, արժի...) սրանց **պակասավոր** ձևերը լրացնում են **ունենալ** և **արժենալ** բայերի տարբեր ձևերը:

Հուսալ և **ցանկալ** բայերն ունեն միայն անորոշ և ժխտական դերբայներ (չեմ) ցանկա, (չեմ) հուսա: Սրանք ունեն միայն ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ձևերը (հասամ, հուսանք, ցանկամ, ցանկանք): Սրանց պակասավոր ձևերը լրացվում են **հույս ունենալ** և **ցանկանալ** բայերի ձևերով:

Լվալ բայն ունի միայն հրամայական եղակի (լվա՛): **Լվամ, լվաս, լվա** ըղձական ձևերը հանձնարարելի չեն: Սրա պակաս ձևերը լրացվում են **լվանալ** կանոնավոր բայի տարբեր ձևերով:

Կենալ բայի միայն հրամայական ձևերն են գործածելի՝ **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացեք**:

Կենալ նշանակում է նաև **ապրել**. սրանից են կազմված **կեցցեմ, կեցցես, կեցցե** և **կեցցենք, կեցցեք, կեցցեն** ձևերը:

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել անկանոն և պակասավոր բայերը, որոշել դրանց կազմությունն ու քերականական կարգերը.

Աչք եմ բացել, ու դու մեր դեմ եղել ես ու կաս, Արարատ.
...Ու խռոված դարձել ես գետ, դարձել Արագ, Արարատ...(ՍԿ):
Արևի պես հավերժական միշտ լինելու ես մեզ հետ...
Չի լինելու երգիդ վերջ, երգելու ես ամեն դարում (ԳՍ):
...Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի,
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների...
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել (ԵՉ):
Հեյ, ուլատե՛ր, հե՛յ գառնատեր, ելեք շուտով, բացեք դռներ.
Ով մինն ուներ-տասն եմ բերել, ով տասն ուներ-քսանն արել,
Շուտով ելեք, եկեք տարեք ձեր գառն ու ուլ զոմերն արեք (ՀԹ):

2. Հոգնած նայում եմ ես ճամփաներին.
Սերմնացանները չդարձան տուն (ԳՍ):
Խոլ-խոլ հսկաներ հնոց աշխարհի
Փախցրին բերին անառիկ Լոռի (ՀԹ):
Ինչքան որ կարաս ձիուդ բարձիր, տար կեր, քեփ արա (ՀԹ): Մի հավք զարկի ես մի օր, Թռավ գնաց վիրավոր (ՀԹ): ...Տարել,

ներել ու սիրել, վատը լավ եմ տեսել ես (ՀԹ)։ Տե՛ս իմ սրտս - արյուն ծով է, էս չարքերը զարկեցին (Ավ. Իս.)։ Տո՛ւր ինձի տեր, ուրախություն անանձնական (Մեծարենց)։ Էժանագին մի՛ եղեք, և այս մի համարեք էժանագին մեծամտություն (ՊՍ)։ Բա՛ց խուրջինը, տո՛ւր դանակը... (Ժող.)։ Հովիվը սարից տուն եկավ, լվաց ոտքերը, կերավ իր համար պահած ճաշը, գիտեր, թե ինչ արժեր օրվա տառապանքը, վեր կացավ տեղից՝ հուսալով, որ անկողինը պատրաստ է, տեսավ՝ ամեն բան կարգին է, առավ ծխամորճն ու դրեց կողքին։ Հաջորդ օրը հունձ ուներ անելու, հույս ուներ, որ քիչ կքառնա, շուտ կդառնա տուն։

ԺՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ի հակադրություն բայերի դրական խոնարհման ժխտական խոնարհումով ժխտվում, բացասվում է գործողությունը կամ եղելությունը։ Ժխտական խոնարհումը կազմվում է չ և **մի** մասնիկների միջոցով (վերջինս միայն հրամայականի դեպքում)։

Չ ժխտականով կազմվում են՝

ա) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը, չ-ն դրվում է խոնարհված բայերի սկզբում՝ անփոփոխ՝

գրեցի, գրեցիր, գրեց...
չգրեցի, չգրեցիր, չգրեց...

բ) **Չ**-ն նույնությամբ դրվում է ըղձական եղանակի բայաձևերի սկզբից՝

գրեմ, գրես, գրի...	գրեի, գրեիր, գրեր...
չգրեմ, չգրես, չգրի...	չգրեի, չգրեիր, չգրեր...

գ) Սահմանական եղանակի 6 վերլուծական ժամանակաձևերում չ-ն դրվում է օժանդակ բայերի սկզբում, և օժանդակ բայերն անցնում են դերբայներից առաջ, ըստ որում՝ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի՝ է-ն, ժխտական խոնարհման ժամանակ փոխվում է **ի**-ի.

ներկա	**վաղակատար ներկա**	**ապառնի**
գրում եմ, ես, է...	գրել եմ, ես, է...	գրելու եմ, ես, է...
չեմ գրում	չեմ գրել	չեմ գրելու
չես գրում	չես գրել	չես գրելու
չի գրում	չի գրել	չի գրելու

Կրկնակի ժխտականների դեպքում չ-ն դրվում է երկու բաղադրիչների վրա՝ չեմ կարող չասել, չես կարող չգնալ, չի կարող չմնալ:

Հիշի՛ր – Բաղադրյալ ստորոգյալի դեպքում չէ-ն չի փոխվում ի - ի՝

Սա լավ գիրք է – սա լավ գիրք չէ: Սա նա է, – սա նա չէ:

դ) **Պայմանական** եղանակի ժխտական ժամանակաձևերը կազմվում են **ժխտական** դերբայով և օժանդակ բայերի հարադրությամբ. սրանք դրվում են **կ** եղանակիչի փոխարեն՝

կգրեմ, կգրես, կգրի – չեմ գրի, չես գրի, չի գրի:

ե) Հարկադրական եղանակի ժխտականները կազմվում են **պիտի (պետք է)** եղանակիչներից առաջ չ-ի հավելումով՝

պիտի գրեմ, գրես, գրի – չպիտի գրեմ, գրես, գրի

պետք է գրեմ ..... չպետք է գրեմ

4) Հրամայականի ժխտականը կազմվում է **մի** արգելականով՝

մի՛ գրիր, մի՛ կարդա – մի՛ գրեք, մի կարդաք:

Դերբայներից **ժխտական** ձևեր ունեն միայն անկախ դերբայները՝

անորոշ – գրել, կարդալ – չգրել, չկարդալ,
հարակատար – գրած, կարդացած – չգրած, չկարդացած,
ենթակայական – գրող, կարդացող – չգրող, չկարդացող,
համակատար – գրելիս, կարդալիս – չգրելիս, չկարդալիս:

Առաջադրանք.

Առանձին սյունակներում գրեցեք բայերի դրական և ժխտական խոնարհումները՝ իրենց քերականական կարգերով.

Եկան Բարիկն ու Ներսիկը:

Վասակը չանթահար խնթեց նրանց ու ասաց.

– Իսկույն ևեթ գնացե՛ք պարսկերենի դասին: Եվ սրանից հետո չհամարձակվեք հայերեն խոսել: Կխոսեք պարսկերեն: Իմացա՞ք:

Տղաները լռեցին:

– Ձեզ հետ չե՞մ,– գոռաց Վասակը:

– Ես հայերենը չեմ թողնի,– ասաց Բարիկը՝ տակից վեր նայելով համառ ու չար:

Նա այդ րոպեին նման էր հորը:

– Ե՛կ այստեղ,– հրամայեց ցած ձայնով Վասակը:

Բաբիկը մոտեցավ:

– Խփի՛ր... ես պարսիկներին չեմ ծառայի:

Վասակը ապտակեց նրան:

– Սպանի՛ր թեկուզ... չեմ ծառայի....

Վասակը մի ապտակ ևս հասցրեց.

– Դու դիմադա՞րձ ես կանգնում ինձ...

– Ջո՛ւր է, պարսիկներին չեմ ծառայի...

Վասակի դեմքն այլայլվեց, աչքերի բիբերը ցայտեցին դուրս, նա վայր գցեց Բաբիկին և սկսեց մոլեգին ծեծել: Տգեղ տեսարան էր:

Չէր միջամտում ոչ ոք: Բաբիկն արյունլվա եղավ, բայց Փառանձեմը չմիջամտեց: Վասակը ավելի կատաղեց, որ Բաբիկը ոչ մի խոսք չասաց և չխնդրեց ներել: (Դ-Դ):

Հարադրական բայերի խոնարհումը

Ըստ կազմության բայական հարադրությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝

ա) որևէ անուն խոսքի մաս + բայ՝ **գլուխ տալ, աչքով անել, աչքից ընկնել, վիզ ծռել, ձեռք քաշել, քար կտրել, երդում ուտել,**

բ) որևէ մակբայ + բայ՝ **վրա վազել, մոտ գալ, դուրս տալ, դուրս գալ, առաջ գնալ, ետ մնալ, տակ զարկել, վերևից նայել...**

գ) բայարմատ + բայ հարադրությամբ՝ **պոկ գալ, կանգ առնել, խույս տալ, կոտր ընկնել, թաք կենալ,**

դ) ձայնարկություն + բայ՝ **ախ քաշել, ախ ու վախ անել, վայ տալ, օֆ չանել, հարայ կանչել, վա՜յ-վա՜յ կանչել,**

ե) երկու բայերից զուգադրված հարադրություններ՝ **գնալ հասնել, վազել գալ, ասել-խոսել, թողնել փախչել, նստել-վեր կենալ...,**

զ) **տալ** բայով բաղադրված պատճառական հարադրություններ՝ **գրել տալ, կառուցել տալ, քանդել տալ, ջնջել տալ, խմել տալ..:**

Գոյականով, մակբայով, բայարմատով, ձայնարկություններով կազմված հարադրությունները խոնարհելիս նշված խոսքի մասերը մնում են անփոփոխ, փոփոխվում, խոնարհվում է միայն **բայական բաղադրիչը՝**

գոյակ. – ձեռք եմ քաշել, ձեռք ես քաշել – ձեռք չի քաշել,

մակբայ – մոտ եմ եկել, մոտ ես եկել – մոտ չի եկել,

բայարմատ – խույս եմ տվել, խույս ես տվել – խույս չի տվել, ձայնարկ. – ախ չեմ քաշել, ախ չի քաշել:

Մի արգելականը նույնպես դրվում է բայ բաղադրիչից առաջ (**ձեռք մի քաշիր, մոտ մի՛ գնա, խույս մի՛ տուր, ախ մի՛ քաշիր**):

Հրամայական եղանակում շեշտվում է ոչ թե բայը, այլ հարադրության առաջին բաղադրիչը (**ձե՛ռք քաշիր, մո՛տ արի, վե՛ր կաց, սո՛ւս մնա**):

Զուգադրական հարադրություններում (երկու բայերի դեպքում) խոնարհվում են երկու բայերն էլ, այսպես՝ **գնում եմ հասնում, ասում են խոսում, վազում է հասնում, բռնում են տանում...**

Կ և պիտի եղանակիչները դրվում են միայն առաջին բաղադրիչի վրա (կ-ն երբեմն դրվում է երկուսի վրա էլ՝ **կգնամ կհասնեմ**), բայց՝ **պիտի գնամ հասնեմ, պիտի բռնեմ տանեմ**:

Չ և մի ժխտականները դրվում են առաջին բաղադրիչների վրա՝ **չեմ գնում հասնում, չի քշում տանում, չթողնեմ գնամ, չնստեմ մնամ, մի՛ վազիր գնա, մի՛ նստիր մնա**:

Հարցեր և առաջադրանքներ «Բայ» թեմայի վերաբերյալ

1. Ի՞նչ է ցույց տալիս **բայ** խոսքի մասը:
2. Ի՞նչ կազմություն ունի բայը, թվարկել բայական ածանցները:
3. Որո՞նք են բայի քերականական կարգերը (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ):
4. Ի՞նչ է բայի սեռը (բերել օրինակներ):
5. Որո՞նք են սահմանական եղանակի ժամանակային ձևերը:
6. Ինչպե՞ս են կազմվում բայի ըղձական, պայմանական, ենթադրական եղանակները:
7. Բնութագրել հրամայական եղանակի կազմությունը:
8. Թվել անկախ դերբայները (օրինակներ):
9. Որո՞նք են կախյալ դերբայները (օրինակներ):
10. Ի՞նչ բան է բայի կերպը:
11. Քանի՞ հիմքով են խոնարհվում բայերը:
12. Համադրական և վերլուծական ժամանակներ, ի՞նչ են դրանք:
13. Ի՞նչ են երկրորդական վերլուծական ժամանակները:

14. Որո՞նք են անկանոն բայերը (տեսակները թվել):
15. Որո՞նք են պակասավոր բայերը:
16. Ինչպե՞ս է կազմվում ժխտական խոնարհումը:

Դուրս գրել բայերը, որոշել նրանց քերականական կարգերը.

Արի՛, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ Հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար Հայոց լեզուն:
Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ Հայոց լեզուն:
Նա առաջին կանչն է եղել դյուցազնական մեր նախահոր,
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար Հայոց լեզուն,
Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ Հայոց լեզուն:
Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կկործնինք, եթե ճամփին չբոցկլտար Հայոց լեզուն:
Քանի ցեղեր ցամաքեցին ինչպես հեղեղն ավազի մեջ.
Բայց լեռնային ծովին հասավ մեսրոպատառ Հայոց լեզուն:
Նրան իր ձեռքն է վերցրել մեր պետությունն աշխարհաշեն
Այդ վեհ ձեռքով է բարձրանում դեպի կատար՝ Հայոց լեզուն:
Այսօր էլ նա ռնության դեմ փայլատակում է բարկացայտ
Հերոսական լեզուների հերոս եղբայր Հայոց լեզուն:
Ուրեմն՝ ե՛կ փառաբանե՛նք, փայլեցնե՛նք թրի նման,
Որ զրնգա արևի տակ հավետ՝ պայծառ Հայոց լեզուն: (ՆԶ):

ՄԱԿԲԱՅ

Գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ ցույց տվող բառերը կոչվում են **մակբայ** (բայի վրա դրվող), այսինքն՝ մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ: Մակբայը **չթեքվող** խոսքի մաս է (չի հոլովվում, չի խոնարհվում, հոդ չի ստանում), բայց դառնում է նախադասության անդամ, այդ հիմնավորումով էլ դասվում է **նյութական իմաստ** ունեցող խոսքի մասերի շարքում:

Մակբայները պատասխանում են **որտե՞ղ, ո՞ւր, ե՞րբ, ինչպե՞ս, որքա՞ն** և նման հարցերին. այն նախադասության մեջ հիմնականում հանդես է գալիս պարագայի շարահյուսական պաշտոնով (**արագ** խոսել, **դանդաղ** քայլել, **երեկոյան** հանդիպել, **առհավետ** բացակայել, **դռնեդուռ** ընկնել, **հեռու** գնալ, **քիչ-քիչ** լցնել, **բազմիցս** դիմել):

Մակբայները կարող են հանդես գալ նաև ստորոգելիական վերադրի շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ մեքենայի ընթացքը **արագ** է: Դպրոցը տանից **հեռու չէ**: Բերածդ **կրկնակի** է: **Վաղուց** է չեմ տեսել նրան:

Ճիշտ է, ածականն էլ է գործողության հատկանիշ ցույց տալիս և պարագայի ու **վերադրի** պաշտոն կատարում (**լավ** երգել, **գեղեցիկ** հագնվել, **խելացի** խոսել, **բարձր** արտասանել, **լավ է, գեղեցիկ է...**, բայց որպես խոսքի մաս, մնում է **ածական**, չի փոխում **իր** խոսքիմասային պատկանելությունը: Այդպես էլ որոշ մակբայներ կարող են դրվել գոյականների վրա և հանդես գալ **որոշչի** շարահյուսական պաշտոնով, ինչպես՝ **դանդաղ** ընթացք, **արագ** քայլ, **մեն-մենակ** մարդ, **հաճախակի** հանդիպում, **հիմնովին** խորտակում և այլն, սակայն ընդգծված բառերը մեր կարծիքով, չեն փոխում իրենց խոսքիմասային պատկանելությունը (ինչպես նկատում են որոշ լեզվաբաններ), այլ մնում են որպես **մակբայներ**:

Նման դեպքերում գործ ենք ունենում խոսքի մասերի **փոխանցումների** հետ:

Մակբայները կարող են դրվել նաև ածականների վրա և ցույց տալ առարկայի որակական՝ հատկանիշի հատկանիշ, ինչպես օրինակ, **արտաքուստ** գեղեցիկ, **չափազանց** մեծամիտ, **հազիվ** նկատելի, **ներքուստ** դժգոհ:

Ասենք նաև, որ սահմանափակ թվով մակբայներ ունեն նաև համեմատության աստիճաններ, դրանցից են՝

արագ – ավելի արագ, ամենաարագ, **դանդաղ** – ավելի դանդաղ, ամենադանդաղ, **ուշ** – ավելի ուշ, ամենաուշ, **շուտ** – ավելի շուտ, ամենաշուտ, **շտապ** – ավելի շտապ, ամենաշտապ, **հապճեպ** – ավելի հապճեպ, ամենահապճեպ և այլն:

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Մակբայներն ըստ կազմության լինում են 4 տեսակ՝ **պարզ, բարդ, ածանցավոր** և **քերականական** ձևերից առաջացած:

ՊԱՐԶ կամ **ԱՐՄԱՏԱԿԱՆ** – **արագ, արդ, նախ, ապա, արդեն, միշտ, դեռ, հիմա, հաճախ, շուտ, ուշ, հետո, հազիվ, մերթ, վեր, վար, շտապ** և այլն:

ԲԱՐԴ – Բարդ մակբայները լինում են **կրկնավոր, կցական** և **հարադրական.**

Կրկնավոր մակբայները կազմվում են ածականների, թվականների, գոյականների, մակբայների կրկնությամբ: Օրինակ, որակական ածականների կրկնությամբ՝ **մեծ-մեծ** խոսել, **ծուռումուռ** նայել, **հպարտ-հպարտ** քայլել, **ուրախ-ուրախ** պատասխանել, **մանր-մանր** կտրատել, **հիվանդ-հիվանդ** ներկայանալ և այլն:

Թվականների կրկնությամբ՝ **մեկ-մեկ** խոսել, **երկու-երկու** նստեցնել, **հինգ-հինգ** ներս թողնել, **տասը-տասը** դասավորել...

Գոյականների կրկնությամբ՝ **բառ-բառ** կարդալ, **տող-տող** ընդգծել, **փողոց-փողոց** ման գալ, «**գդալ-գդալ** հավաքել՝ **չերեփ-չերեփ** բաժանել» (ժող.):

Մակբայների կրկնությամբ՝ **արագ-արագ** քայլել, **շուտ-շուտ** այցելել, **ուշ-ուշ** տեսակցել, **երբեմն-երբեմն** անդրադառնալ:

Սակայն միշտ չէ, որ բառը կրկնվում է նույն՝ ուղիղ ձևով, հաճախ առաջին բաղադրիչը գրաբարյան **բացառական հոլովի** ձևով է հանդես գալիս (**պատեպատ, դռնեդուռ, տնետուն, սարեսար**):

Բարդ մակբայների մի տեսակն էլ **կցական** համադրական

բարդություններն են, ինչպես՝ **մեջտեղ, միանգամից, ամենուր, օրեցօր, տարեցտարի, հետզհետե**: Սրանք կարող են կազմվել նաև **ա** հոդակապով (**միաձայն, միաբերան, որոտաձայն, միահամուռ, սրտատրոփ, կիսաձայն...**):

Բարդ մակբայներից մի քանիսն էլ կազմվում են **առ, ըստ, ընդ, ի** նախդիրներով, որոնք գրվում են թե՛ առանձին և թե՛ միասին (նայած հնչերանգի), դրանցից են՝ **ժամանակ առ ժամանակ, երբեմն առ երբեմն, տող առ տող, գյուղ առ գյուղ, օրըստօրե, ինքնըստինքյան, մեջընդմեջ, գիրկընդխառն, օրնիբուն, փոքրիշատե, վերջիվերջո**:

Ի նախդիրով են կազմվում նաև **սարն ի վեր, պատն ի վեր, գետն ի վեր... առ** նախդիրով են կազմվել հետևյալ մակբայները՝ **առայժմ, առմիշտ, առհավետ, առայսօր, առհասարակ** և այլն... **աբար**-ով են կազմվել **իսկույնաբար, այսօրաբար, վաղնաբար** և այլ մակբայներ:

Որոշ մակբայներ էլ կազմվում են **ու** շաղկապով (**դեմուդեմ, տեղնուտեղը, կրկին ու կրկին, նորից ու նորից...**):

Ու շաղկապով կարող են միավորվել նաև տարբեր բառեր, ինչպես՝ **աջ ու ձախ, դես ու դեն, ետ ու առաջ, վար ու վեր, նստած ու կաց** և այլն:

Մակբայների իմաստներ են արտահայտում նաև տեղի ու ժամանակի հատկանիշ ունեցող մի քանի բառեր, նաև գոյականներ, որոնք գրվում են գծիկով. բերենք մի քանի օրինակներ՝ **ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ, տեղ-տեղ, մեջ-մեջ, դես-դեն, փոքր-ինչ, առավոտից-իրիկուն, լույս-ցերեկով, զենքով-զորքով, հրով-սրով, տնով-տեղով** և այլն:

ԱԾԱՆՑԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ — Մակբայների ավելի մեծ քանակ կազմվում է ածանցների միջոցով. կան բազմաթիվ ածանցներ, որոնք միայն մակբայներ են կազմում և կոչվում են **մակբայակերտ ածանցներ**. դրանք դրվում են գոյականների, ածականների, դերանունների, մակբայների վրա և կազմում են մակբայներ: Դրանցից ամենատարածվածները **բար, պես, որեն** ածանցներն են, որոնցից **բար**-ը և **պես**-ը բառին միանում են **ա** հոդակապով: Նշված 3 ածանցներն էլ հոմանիշներ են և դրվելով նույն կամ տարբեր բառերի վրա հոմանիշ բառեր են կազմում, ինչպես՝ **բնազդ**//աբար//որեն, **բարեկամ**//աբար//որեն, **ազահ**//աբար//որեն, **զազան**//աբար//որեն, **անկախ**//աբար//որեն, **գերա-**

զանց//աբար//որեն//ապես, **վերջնական//աբար//որեն//ապես** և այլն:

Բերենք ածանցավոր մակբայների մի շարք օրինակներ. մակբայների կազմության գործում կենսունակ է **բար** ածանցը, որը ծագում է **բարք** բառի **բար** արմատից և նշանակում է **պես**, **նման**, **իբրև** **ազնվաբար**, **բարեկամաբար**, **ընկերաբար**, **թշնամաբար**, **եղբայրաբար**, **աստիճանաբար**, **անխղճաբար**, **ամոթաբար**, **պատահաբար**, **նենգաբար**, **քաջաբար**, **գոյականաբար**, **ածականաբար**, **մակբայաբար** և այլն:

Որեն ածանցը ծագել է **օրենք** բառից **o>ո** հնչյունափոխությամբ և նշանակում է **ձևով**, **նման**, **կերպով**, **պես**, ինչպես՝ **անկեղծորեն**, **ազնվորեն**, **գիտակցորեն**, **դաժանորեն**, **խիզախորեն**, **մեղմորեն**, **միամտորեն**, **վստահորեն**, **ջերմորեն**, **գիտականորեն** և այլն:

Պես ածանցը ևս շատ կենսունակ է, այն գերազանցապես դրվում է ածականների վրա՝ **մեծապես**, **հատկապես**, **հիմնավորապես**, **գլխավորապես**, **ընդհանրապես**, **վերջնականապես**, **բարոյապես**. **պես**-ը դրվում է նաև գոյականների և հատկապես ժամանակ ցույց տվող բառերի վրա և կազմում է մակբայներ՝ **արմատապես**, **իրապես**, **նյութապես**, **տնտեսապես**, **ֆիզիկապես**, **հոգեպես**, **վճռապես**, **րոպեապես**, **նախապես**:

Ովին(**ովի**) ածանցը **ձևի**, **նմանության** իմաստ ունի՝ **լիովին**, **ամբողջովին**, **գլխովին**, **ազգովին**, **բոլորովին**, **հիմնովին**, **կամովին**, **տնովի**, **յուրովի** և այլն:

Նշված ամենագործոն ածանցներից բացի կան էլի բազմաթիվ մակբայակերտ ածանցներ, որոնք սակավ գործածություն ունեն. նշենք դրանցից մի քանիսը՝ **պատիկ**-**եռապատիկ**, **քառապատիկ**, **կրկնապատիկ**, **տասնապատիկ**, **բազմապատիկ** և այլն:

Ուց – վաղուց, հնուց, շուտուց, առաջուց, մանկուց,

անց – սրտանց, երեսանց, հետևանց, գիշերանց, շապկանց,

ուստ – ներքուստ, արտաքուստ, ի վերուստ, հեռուստ. սրանից էլ **հեռուստացույց** գոյականը,

ակի – կրկնակի, շեշտակի, միակի, թեթևակի, հաճախակի, կողմնակի,

ացի – բերանացի, բառացի, փաստացի, արդարացի,

գին – ջերմագին, ցավագին, սրտագին, լալագին, մոլեգին, հիվանդագին,

վարի – տնավարի, մեծավարի, գողավարի, մարդավարի,

երեն — Հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ — Մակբայների մի զգալի մասն էլ առաջացել է գրաբարի տարբեր հոլովներից, որոնք կոչվում են **քարացած հոլովաձևեր**: Գրաբարի որոշ խոսքի մասերի **բացառական** հոլովաձևի որոշ բառեր այժմ մակբայական կիրառություն են ստացել, այսինքն՝ վերածվել են առանձին խոսքի մասի: Ահա դրանցից մի քանիսը՝ **ներքուստ, արտաքուստ, ի վերուստ, մեկից, նորից, միանգամից, հնուց, վաղուց, ձեռաց, մանկուց, ի սրտե, ի ծնե**:

Գործիական հոլովից են առաջացել՝ **հազիվ, սակավ, բնավ, մասամբ, դիտմամբ, անձամբ, պատահմամբ,** շուտով:

Հայցական հոլովից են առաջացել՝ **ցմահ, ցարդ, ցայժմ, դուրս** (սա **դուռն** բառի հոգնակի հայցականն է):

Ներգոյական հոլովից են առաջացել՝ **հնում, ներկայումս, հետագայում, հիմնականում** մակբայները:

Շատ քիչ մակբայներ են առաջացել նաև գրաբարի **քարացած** խոնարհման ձևերից. դրանցից է, օրինակ, **անցյալ** դերբայից առաջացած **դարձյալ** դերբայը:

Բացի նշվածներից Ս. Աբրահամյանը ներկայացնում է մակբայական իմաստներով գործածվող մի քանի հարադրական բարդություններ, դրանք ինքը կոչում է **նկարագրական մակբայներ**. դրանք են՝ **ամենից առաջ, կիսով չափ, ժամ առաջ, մեծ մասամբ, վերին աստիճանի, ծայր աստիճանի, չափից ավելի, չափից դուրս, հանդիսավոր կերպով, ազատ կերպով, առաջին հայացքից, օր օրի վրա, մինչև որ աստիճանի** և այլն:

(Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց..., Երևան, ԳԱ, 1965, էջ 253–256):

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել մակբայները և որոշել դրանց կազմությունը.

Քաջաբար կռվեցին կոմունարները:

Ես արդեն հեռացել եմ,
Ես արդեն հիմա ծեր եմ (ԵՉ):

Օտարականը շրջում էր փողոց առ փողոց, գյուղեգյուղ, տնետուն...

Գցիրն ընկավ դռնեդուռ (ՀԹ):

Վահա՛ն Տերյան, ինչպես երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո (ԵՉ):
Ու նստոտեցինք իրար դեմ առ դեմ
Սաստկությամբ վառվող կրակի շուրջը (ՀԹ):

Նստեց, կրկին առավ մագաղաթյա թերթը և սկսեց դանդաղ գրել, տառ առ տառ կարդալ գրածը, անվրեպ ուղղել վաղուց չնկատած բացթողումները: Քամին հանդարտորեն ցած էր քշում գունատ տերևները: Արամը ներքուստ չափազանց հուզված էր. նա հիմա նստած է դռան կոճղին, որտեղ հայրն էր նստում միշտ. ներքուստ չափազանց հուզված էր, արտաքուստ՝ խաղաղ: Նրա կողքին գլխահակ հանգիստ նստել էր Մուշեղը ու անընդմեջ, համբերատար իր չիբուխն էր ծխում:

– Սամվե՛լ, Թանկագին Սամվել...,– անդադար բացականչում էր մայրը, կրկին ու կրկին անհագուրդ համբուրում նրան:

Պարտատերը չարունակ ժպտում էր՝ հեգնորեն ուսերը վեր քաշելով: Տարան-չարան անցան զուգված ուղտերը... Ի ծնե նա բարի է եղել, ցմահ այդպես էլ կմնա, երբևէ մարդու վատություն չի արել, բնավ մեկի վատը չի ցանկացել և խստիվ աշխատում է այդպիսին մնալ:

2. Բար, որեն, ակի, ուց, ուստ, ացի, գին, վարի, երեն ***ածանցներով կազմեցեք 3-ական մակբայներ։***

3. ***Նախադասություններ կազմել*** **լիովին, հնդապատիկ, կրկնակի, վաղ մանկուց, ուշ, չեշտակի, ցավագին** ***մակբայներով։***

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Մակբայներն ըստ իմաստի լինում են 5 տեսակ՝ ***տեղի, ժամանակի, ձևի, չափ*** *ու* ***քանակի*** *և* ***ընդհանրական։***

Տեղի մակբայներ

Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը, նախադասության մեջ լինում են ***խոնարհված բայով***

արտահայտված ստորոգյալի կամ դերբայի լրացում և պատասխանում են **ո՞ւր, որտե՞ղ, դեպի ո՞ւր, ո՞րտեղից** և նման հարցերին: Տեղի մակբայներն են՝ **ամենուր, ամենուրեք, այլուր, դեմ ու դեմ, դեմ դիմաց, դեմհանդիման, ընդառաջ, ետ, հեռու, մեջտեղ, դռնեդուռ պատն ի վեր, սարն ի վեր, վերուստ, տեղ-տեղ, տեղից-տեղ, դուրս, ներս, առաջ**:

Օրինակներ՝ Եվ քարավանը Աբու-Լալայի գնում է **առաջ** (Ավ. Իս.): **Ետ** դառ, իգի՛թ, **ետ** դառ, անիրա՛վ (ՀԹ): Օրիորդը ձեռքը դրեց ծոցը. հայացքը հառեց **հեռու** (Շ.): **Ամենուրեք** երում է աշխատանքը, աշխատողներից մի քիչ **հեռու** կանգնած է մեքենան, դրա **դիմաց**՝ դպրոցականները, որոնք **վեր ու վար** են անում, տեղից-տեղ շարժվում և, **ընդառաջ** գնալով դասղեկի հորդորներին, **ամենուր** օգնում են նրանց:

Տեղի մակբայների կիրառություն ունեն գոյականների և **ի վեր, ի վար** բառերի կապակցությունները, որոնք ցույց են տալիս ուղղություն.

... Խնդում, իրար ուսի տալով, Երգը ընգում **սարն ի վեր** (ՀԹ):

Սուրում էին ջրի կատաղի հոսանքին **վեր: Լեռն ի վար** վարգող եղնիկը **աջ ու ձախ** էր նայում (Վ. Ան.): Այստեղ **աջ ու ձախ**-ը նույնպես տեղ է ցույց տալիս:

Ամենուր և **ամենուրեք** մակբայները ցույց են տալիս տեղի ընդհանուր գաղափար և նշանակում են **ամեն տեղ** (**Ամենուր** խոսվում է Ղարաբաղի հարցի կարգավորման մասին): Իսկ **դեմառդեմ, դեմդիմաց, դեմ հանդիման** մակբայները նշում են տեղի այնպիսի հարաբերություն, որոնցից մեկը մյուսին է ուղղված դեմքով, ճակատով («**Դեմդիմաց//դեմ հանդիման** կանգնած են երկու ախոյաններ» (Մուր.): Սրանցում բացի տեղի իմաստից նկատելի է նաև ձևի իմաստը: Կարելի է հարց տալ՝ **ո՞ւր էին** կանգնած և **ինչպե՞ս էին** կանգնած:

Առաջադրանք.

Դուրս գրել տեղի մակբայները և դրանցով կազմել նոր նախադասություններ.

Վայրի գազաններ բներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան (ՀԹ):

Քամին գույնզգույն տերևները դեսուդեն է քշում (ՀՔ): Տղաներից մեկը իջավ ներքև, իսկ նրան կանչում էին ներքևից (ՊՂ): Ուզում եմ շրջել փողոց առ փողոց, մտնել տնետուն ու վերհիշել մանկությունս (ՄԳ): Ոմանք գյուղեգյուղ շրջում էին մի կտոր հացի հոգսով (ՀՔ):

ճանապարհից վերև մեկը ջրում էր մուգ կանաչ առվույտը (ԱԲ): Ամենուր գույներ ու գույներ, ոսկեզօծել են և դաշտ և այգի (Սարմեն): Ճերմակ մեղմություն է փռվում ձորերն ի վար (ՀՍ): Տանջանք, որ ինձ առաջ է տանում, իսկ որոշ մարդկանց՝ ետ (ԳԷ): Դեմ հանդիման հանդիպեցին հին ընկերները և տեղնուտեղը գրկախառնվեցին. նրանք եղել էին երկրից երկիր և կարոտել էին իրար:

Ժամանակի մակբայներ

Հայերենում ամենամեծ թիվը կազմում են ժամանակի մակբայները, որոնք ցույց են տալիս խոնարհված բայով արտահայտված ստորոգյալի կամ դերբայների հետ կապված ժամանակային բազմազան հարաբերություններ և պատասխանում են **ե՞րբ, երբվանի՞ց, մինչև ե՞րբ, ինչքա՞ն ժամանակ** *և նման հարցերի:*

Դրանք են՝ **այժմ, արդեն, այլևս, այսօր, այնուհետև, այսուհետև, առայժմ, առհավետ, ապա, երբեք, ընդմիշտ, ուշ, հիմա, հետո, միշտ, նախ, նախապես, նախօրոք, շուտ, շուտով, վաղը, վաղուց, վերջիվերջո, ամսեամիս, տարեցտարի, օրեցօր, րոպե առ րոպե...**

Ինչպես ասվեց, ժամանակի մակբայները ցույց են տալիս ժամանակային տարբեր հարաբերություններ՝ կապված **ներկա, անցյալ, ապառնի** *և* **հարատևության** *ժամանակների հետ:*

Այսպես՝ խոսելու պահի նկատմամբ **ներկայի** *գաղափար են արտահայտում* **հիմա, այժմ, հիմի, ներկայումս** *մակբայները, անցյալի գաղափար են արտահայտում* **առաջ, վերջերս** *մակբայները,* **ապառնի** *գաղափար՝* **հետո, առաջիկայում, հետագայում** *մակբայները:*

Իմաստային առանձին խումբ են կազմում այն մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման **հարատևության** *գաղափար. դրանք են՝* **հար, հավետ, հավիտյան, միշտ, մշտապես, առհավետ, ընդմիշտ, հուր-հավիտյան:**

Իմաստային հատուկ խումբ են կազմում ժամանակի հետևյալ անունները՝ **այսօր, երեկ, էգուց, վաղը, առավոտյան, երեկոյան, կեսօրին:**

Ժամանակային որոշ մակբայներ էլ արտահայտում են գործողության ընդհատումներով դրսևորվելու գաղափար, ինչպես՝ **երբեմն, մերթ ընդ մերթ, մեկ-մեկ, ժամանակ առ ժամանակ,** *ինչպես նաև՝ հաճախ, հաճախակի:*

Ժամանակի մակբայներից մի քանիսն էլ մասնանշում են

ժամանակի սկզբնակետ (մանկուց, հնուց, վաղուց, առավոտից, ի ծնե, ի բնե) և վերջնակետը (ցմահ, ցարդ, ցգերեզման, ցայսօր), ինչպես նաև ժամանակի անորոշությունը՝ առժամանակ, միաժամանակ, այսուհետև, այնուհետև և այլն:

Օրինակներ ժամանակի մակբայների վերաբերյալ. Նա առաջ լավ դերասան էր, հիմա դարձել է ռեժիսոր (Մամ.): Սկզբում չէր ուզում խմել, վերջում բաժակը վերցրեց և խմեց իմ կենացը (ՄԳ): Էգուց նախիրը կտանես արտ (ՀԹ): Երեկոն երեկ ուրիշ էր, այսօր փոխվել է, վաղը անճանաչելի կդառնա (Մամ.): Եկեք նախապես, առհավետ ու միշտ ընդունենք կյանքի զորեղությունը (ՊՍ): Հավետ լռում է մի տխուր խորհուրդ (ՎՏ): Բուքի կոփնչն է տարածվում մերթ ընդ մերթ (ՀԹ): Թե չէ լինել ի ծնե գերի մերկ մուսայի ու երգերի (ՀԹ): Առայժմ ամեն ինչ բարեհաջող է ընթանում (Մամ.):

Առաջադրանք.

Դուրս գրել ժամանակի մակբայները և դրանցով կազմել նոր նախադասություններ.

Դեռ երեկ անթարթ ինձ էիր նայում, Այսօր հայացքդ մի կողմ ես հառել (Թարգմ.): Ես արդեն հեռացել եմ, ես արդեն հիմա ծեր եմ (ԵՉ): Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ (Հ. Հովհ.): Շատ դարեր առաջ հին Հայաստանում Տորք Անգեղ անվամբ մի մարդ էր կենում (Ղ. Աղ.): Քո կարոտը վաղուց եմ երգել ես (ԵՉ): Ինչո՞ւ է կյանքը հաճախ չար խաղեր խաղում (ՊՍ):

Վաղո՜ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
Ես ե՞րբ եմ եկել, էստեղ քարացել (ՀԹ):

Մի հավք զարկի ես մի օր, թռավ գնաց վիրավոր,
Թռչում է միշտ իմ մտքում՝ թևը արնոտ ու մոլոր (ՀԹ):

Ձևի մակբայներ

Ձևի մակբայները սովորաբար բնորոշվում են գործողության կատարման ձև ցույց տալու հատկանիշով, պատասխանում են ինչպե՞ս, ի՞նչ ձևով հարցերին: Օրինակներ՝ «Դանդաղ քայլելով անցնում էր ծառուղիով»: «Երեխան արագ էր վազում, չէիր կարող բռնել»: Ձևի մակբայները հաճախ ոչ միայն գործողության կատարման արտաքին՝ ձևային հատկանիշ են ցույց տալիս, այլև՝ գործողության կատարման ներքին հատկանիշ, ինչպես՝ «Գիտակցորեն մոտենալ հարցին»,

«**Ագնվորեն** կատարել հանձնարարությունը», «**Բարեկամաբար** վերաբերվել օտար մարդուն»: Այսինքն՝ **ձևի մակբայ** կոչված խոսքի մասի համակարգում ավելի մեծ թիվ են կազմում գործողության **որակական** կողմը բնորոշող մակբայները, դրա համար էլ ճիշտ են որոշ լեզվաբաններ, որ սրանք անվանում են **որակական** մակբայներ (տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ, 1983, էջ 379...):

Ձևի մակբայների թիվը հայերենում բավականին շատ է, որոնց մեծ մասը կազմվում են վերևում նշված ածանցների միջոցով՝ **բար, պես, որեն, ովին, ական, պատիկ, ուց, ակի, վարի, գին...**

Մինչդեռ արմատական ձևի մակբայների թիվը շատ քիչ է՝ **արագ, դանդաղ, հապճեպ, շտապ, կամաց, ակամա, խսկույն, համ-կարծ, միասին:**

Ինչպես ասվել է, ձևի պարագայի չարահյուսական պաշտոն են կատարում նաև որոշ **որակական** ածականներ (**լավ** աշխատել, **վատ** սովորել, **գեղեցիկ** արտահայտվել, **հաջող** կատարել, **շատ** խոսել, **քիչ** ուտել), սակայն նման դեպքերում ածականը մակբայի չի վերածվում, այլ մակբայաբար է գործածվում:

Հատուկ նշենք նաև, որ որոշ գոյականների կրկնությամբ ևս նշվում է գործողության ձև, հատկանիշ՝ «**Շարան-շարան** անցան զուգված ուղտերը...», «Նա այս բառերն արտասանում է **հատ-հատ**», «Դպրոցականները **խումբ-խումբ** մտան թանգարան», «Երեխան կարդում է **տառ-տառ**», «Տող-տող արտագրիր» և այլն:

Այս դեպքում, սակայն կրկնվող գոյականները վեր են ածվում **մակբայների** և ցույց են տալիս գործողության կատարման **ձև** և չարահյուսորեն ձևի պարագայի պաշտոն են կատարում:

Նույնը պետք է ասել նաև, երբ ձևի պարագայի պաշտոն են կատարում նաև **առ** կամ **ի** նախդիրներով կազմվող կրկնություններ, օրինակ, Թափվեք իմ նրգեր **արցունք առ արցունք** (ՎՏ): Թափվում էին մորս արցունքները **կաթիլ առ կաթիլ** (ՄԳ): Եվ կաթիլ է **շիթ առ շիթ** տաք սրտի մեջ ողկույզի (ՎԴ): Ժողովուրդ մի ողջ սրտով վշտառու Ելավ հերթ ի հերթ, Ելավ չար ի չար Իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի Կախարդիչ մոգին հրաժեշտ տալով (ՊՍ):

Ճիշտ է նկատել Մ. Ասատրյանը, որ ժողովրդախոսակցական լեզվում **են** ածանցի միջոցով որոշ բայերից ձևի մակբայներ են կազմվել, ինչպես՝ **չորորալեն** ներս մտավ, **վազելեն** տեղ հասավ,

երգելեն բեմ ելավ, զնգալեն տեղ համավ *և այլն, որոնք փաստորեն գրական լեզվի* ***անորոշ դերբայի*** *գործիական հոլովն են (չորորալով, վազելով, երգելով, զնգալով)։*

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել ձևի մակբայները և դրանցով կազմել նոր նախադասություններ.

Դանդաղ ճեմում էր ծովափին երգի արքան իմաստուն (ՆԶ)։ Իմ հայրը իրավամբ ամբողջ երեսուն տարի անընդհատ պատերազմեց Շապուհի զորքերի հետ և ամեն անգամ քաջաբար ջարդեց նրան, բայց պատերազմեց ազնվորեն (Րաֆֆի)։

Երկինքն ամպած, տխուր ու սև լաց էր լինում միալար.

Հեռու-հեռու լեռան ետև խաղում փայլակն անդադար (ՀԹ)։

Վարդանը փութկոտ, զգուշությամբ բռնեց նրա դողդոջուն ձեռքը և ջերմորեն համբուրեց Բնականաբար նրանց մտքերը գնում էին դեպի արյաց արքան, որից միշտ չարիք էր գալիս։ Ձինվորները զույգ-զույգ, խմբերով կամ միևնակ զգուշորեն սլանում էին տեղից տեղ... Դարպասը բացվեց լայնորեն (ԴԴ)։

Նա շտապ հագավ շորերը և արագությամբ դուրս եկավ տնից Գյուղը հետզհետե կենդանացավ, կամաց-կամաց ուշքի եկավ... Այստեղ պետք է առանձնապես ուժեղացնել ղեկավարությունը... նա պատրաստ էր համերաշխորեն աշխատել գյուղի նոր ղեկավարության հետ։ Նա մեքենաբար նայեց այն կապոցին, որը զոռով էին դրել սեղանի վրա Մանր ու հատ-հատ նա բառ առ բառ կարդաց գրությունը (ՆԶ)։

2. Նույն հատվածներում ցույց տալ գործողությունների արտաքին և ներքին հատկանիշները ցույց տվող մակբայները, որոշել նրանց կազմությունը։

Չափ ու քանակի մակբայներ

Մակբայների այս տեսակը ցույց է տալիս գործողության սաստկություն, տարածման աստիճանը, սահմանը։ Սրանք նախադասության մեջ լինում են բայի լրացում և պատասխանում են ***ինչքա՞ն, որքա՞ն, որչա՞փ, ի՞նչ*** *աստիճանի հարցերին։*

Չափ ու քանակի մակբայներն են՝ ***ավելի, ավելի ևս, ամենևին, ամբողջովին, առավել, առավելապես, բազմիցս, բոլորովին, զրե-***

թե, գերազանցապես, դարձյալ, եռակի, երիցս, ընդամենը, լովին, կրկին, կիսով չափ, կրկնակի, հազիվ, հաճախ, համարյա, մասամբ, մոտավորապես, նորից, չափազանց, սակավ, փոքրիշատե, քիչ-քիչ և այլն:

Նկատելի է, որ չափ ու քանակի մակբայները լինում են արմատական, կցական կամ կրկնավոր և ածանցավոր: Ըստ որում ածանցավորները հիմնականում կազմվում են **ակի, պատիկ, իցս, պես** և այլ ածանցներով:

Չափի մակբայները ըստ գործողության իմաստի դրսևորման յուրահատկության լինում են մի քանի տեսակ.

1. **Մասի** և **ամբողջի** հարաբերությամբ գործողության հատկանիշի չափը ցույց տվող մակբայներ. դրանցից են՝ **մասամբ, մասնակիորեն, փոքր-ինչ, փոքրիշատե, թեթևակի, առավելապես, գերազանցապես, հիմնականում, ամբողջովին, լիովին, բոլորովին, խսպառ** և այլն:

Օրինակ՝ «Ես **լիովին** համաձայն եմ քո կարծիքին, դու **ամբողջովին** տրվել ես այդ գործին» նախադասության մեջ ընդգծված մակբայները մատնանշում են գործողության ամբողջականությունը, իսկ «Ես **մասամբ** եմ ընդունում քո կարծիքը, որովհետև դու **հիմնականում**, **փոքրիշատե** ծանոթ ես իրադրությանը» նախադասության մեջ ընդգծված մակբայները մատնանշում են ոչ ամբողջական գործողությունը:

2. Չափի մակբայներից մի քանիսն էլ ցույց են տալիս **հատկանիշի իմաստի սաստկացումը**, դրանցից են՝ **ավելի, էլ ավելի, առավել, չափազանց, սաստիկ, վերին աստիճանի** և ուրիշներ. օրինակ՝ **Ավելի** շատ խոսում ես, քան գործ անում: **Վերին** աստիճանի մտահոգված էր ընկերոջ գործերով: Ինձ **սաստիկ** տանջում է ընկերոջդ **առավել** համոզված լինելու վարկածը:

3. Որոշ մակբայներ էլ ցույց են տալիս **հատկանիշի չափի կրկնվելը՝ Նորից** չեն սիրում, սիրում են **կրկին** (ՊՍ): **Վերստին** անդրադարձանք նույն հարցին և **կրկին** համաձայնության չեկանք:

4. Կան մակբայներ էլ, որոնք ցույց են տալիս գործողության դրսևորման **մոտավոր աստիճանը**, օրինակ՝ **Գրեթե** հասել էինք նախատեսված վայրը, **մոտավորապես** մի քանի քայլ էր մնացել, երբ ծանոթ ձայներ լսեցինք. մեր ընկերներն էին, **համարյա** հասնում էին մեզ:

5. **Գործողության չափի** իմաստ են արտահայտում նաև **քանիցս, բազմիցս, բազմակի,** հաճախ, **հաճախակի** մակբայները՝ «**Բազմիցս** քեզ ասել եմ և **հաճախակի** կրկնում եմ, որ քեզանից մեծերի նկատմամբ հարգալից լինես», իսկ **երիցս, եռակի, քառակի** մակբայները չափի իմաստի թվային քանակ են արտահայտում, որոնք ավելի շատ բարձր ոճերին են հատուկ, օրինակ՝ «**Երիցս** նզովյալ լինես»: «**Քառակի** պատարագ մատուցվեց Վազգեն Վեհափառի պատվին» («Էջմիածին»):

Ընդհանրական մակբայներ

Կան ոչ մեծ թվով մակբայներ, որոնք ըստ կիրառության տարբեր իմաստներ են արտահայտում, կամ էլ հենց տվյալ կիրառության մեջ համատեղում են տարբեր իմաստներ. այդ մակբայներն են՝ **առաջ, ետ, մեկ-մեկ, մերթ-մերթ, մերթ ընդ մերթ, ստեպ-ստեպ, անընդհատ, անդադար, դեմ առ դեմ, դեմ դիմաց** և այլն:

Առաջ մակբայը գործածվում է թե՛ ժամանակի և թե՛ տեղի իմաստներով: Օրինակներ՝ **Առաջ** աղբյուրը ծաղիկների մեջ չէր երևում (ՄԲ): Մենք կամաց-կամաց **առաջ** էինք գնում: Առաջին նախադասության մեջ **առաջ**-ը ժամանակ է մատնանշում, երկրորդում՝ **տեղ**:

Մեկ-մեկ մակբայը 3 իմաստ է արտահայտում՝

ա) **չափի** իմաստ՝ **մեկ-մեկ** տեղադրիր, **մեկ-մեկ** հաշվեցեք,

բ) **ձևի** իմաստ՝ **մեկ-մեկ** խոսեցեք և ոչ թե խմբով: **Մեկ-մեկ** նստեցեք,

գ) **ժամանակի** իմաստ՝ **մեկ-մեկ** մոռանում եմ, **մեկ-մեկ** էլ՝ հիշում:

Նույնը կարելի ասել **չուտ-չուտ** մակբայի մասին՝

ա) **ժամանակի** իմաստ՝ **Չուտ-չուտ** արի մեր տուն: **Չուտ-չուտ** կեր ճաշդ՝ չսառի,

բ) **ձևի** իմաստ՝ **Չուտ-չուտ** խմբավորի՛ր: **Չուտ-չուտ** քայլիր,

գ) **չափի** իմաստ՝ **Չուտ-չուտ** հաշվի՛ր, մի՛ հապաղիր:

Հաճախ նույն մակբայը միևնույն նախադասության մեջ էլ է համատեղում պարագայական տարբեր հատկանիշներ. այսպես՝ **անընդհատ** մակբայը, ինչ խոսք, ժամանակի իմաստ ունի, բայց նույն նախադասության մեջ նրան կարելի է վերագրել նաև **ձևի** իմաստ, օրինակ՝ «**Անընդհատ** անձրևում է»: «Ձեզ մոտ եղանակը

ինչպե՞ս է՝ ***աներդհատ*** *անձրևում է»: Կարելի է նաև հարցնել՝ «Ձեզ մոտ ե՞րբ է անձրևում՝* ***աներդհատ*** *անձրևում է». կամ* ***մերթ ընդ մերթ*** *մակբայի որոշ կիրառության դեպքում կարելի է հարց տալ* ***ե՞րբ*** *և* ***ինչպե՞ս:*** *Օրինակ՝* ***«Մերթ ընդ մերթ*** *այս ու այն կողմից լսվում են ինչ-որ խշշոցներ»:*

Նույնը կարելի է ասել նաև ***մեկ-մեկ*** *մակբայի մասին, որ բացի այն բանից, որ տարբեր նախադասություններում է տարբեր իմաստներ արտահայտում, հաճախ նույն նախադասության մեջ էլ կարելի է նկատել նրա տարբեր իմաստները՝ «Հայրս* ***մեկ-մեկ*** *է խոսում» (կա և՛ ձև, և՛ ժամանակ):*

Ինչ խոսք, ճիշտ են նշում լեզվաբանները, որ ***ընդհանրական մակբայների*** *սահմանազատումը երբեմն այնքան էլ հեշտ չէ:*

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել մակբայները, որոշել դրանց տեսակը և կազմությունը.

... Իսկ մանկան երգը թափ առավ գնաց.
Քարեքար ընկավ, պատեպատ խփվեց
Եվ հետո՝ կրկին պոկվեց ու գնաց
Եվ մի պահ հետո հանկարծ ցած թափվեց:
... Մերթ բողոքում է ու մերթ գանգատ անում,
Մերթ դառնում այնպես վսեմ ու բարի...:
Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
Թե ինքը որտե՞ղ է և ի՞նչ է անում...
Ասես քնի մեջ նա դանդաղ ժպտաց,
Հետո ժպիտը սկսեց հալվել
Ու հետզհետե անհետ վերացավ.
Մինչդեռ աչքերի թափն ավելացավ:
...Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց՝
... Որդյա՛կ իմ, ո՛րբ իմ...
Ու ձայնը մարեց (Պարույր Սևակ):

... Անտառը ողողվեց ամբողջապես, ճանապարհի հետքը կորավ բոլորովին: Ես քայլ առ քայլ հետևում էի առաջնորդիս, մենք չարունակ իջնում էինք ներքև, իսկ անտառը համարյա մթնել էր, միայն թուխ ամպերի մեջ չուտ-չուտ փայլատակող կայծակն էր, որ ընդհանուր լույս էր սփռում: ... Ապա քամին քիչ-քիչ դադարեց, փայլակն սկսեց չողալ մերթ ընդ մերթ, և որոտը լսվում էր երկնքում ավելի խուլ: Շուտով հասանք մի հեղեղատի: Անձրևն արդեն հետզհետե դադարեց, տեղ-տեղ երևաց կապույտ երկինքը: Արևի ճառագայթները, ամպերի արանքից չեչտակի թափանցելով, ոսկեզօծեցին լվացված լեռներն ու սարերը (ըստ Մուրացանի):

2. Բերված տեքստերից առանձնացնել ընդհանրական մակբայները և դրանցով նոր նախադասություններ կազմել:

ԿԱՊ

*Հայերենի տասը խոսքի մասերի համակարգում կապերը դասվում են **չթեքվող** խոսքի մասերի շարքում՝ հակադրվելով նյութական իմաստ ունեցող՝ **թեքվող** խոսքի մասերին, որոնք արտահայտում են օբյեկտիվ աշխարհն իր առարկաներով ու երևույթներով, դրանց հատկանիշներով ու գործողություններով, իսկ կապերն արտահայտում են **քերականական** իմաստ, այսինքն՝ դրվելով որևէ բառի վրա՝ այն կապում են ստորոգյալի հետ և այդ բառի հետ դառնում նախադասության մեկ անդամ, հիմնականում պարագաներ, նաև այլ անդամներ:*

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
***Դեպի** դարերը նորից՝ **դեպի** փառվող ապագան (ԵՉ):*

*Այստեղ **դեպի** կապը **դարերը** և **ապագան** գոյականները կապել է **գնում եմ** ստորոգյալի հետ և դրանց հետ դարձել է նախադասության մեկ անդամ՝ բայական անդամի լրացում՝ **տեղի պարագա**:*

***Սև օրերի համար** պաշար էին բռնում,*
***Կտուրների վրա** երկինք էին փռում (ՀՍ):*
*... **Աստղերի հետ** նստել-նիստուկաց եմ արել (ՀՍ):*

*Համո Սահյանի այս տողերում էլ **համար** կապը **սև օրեր** բառակապակցությունը կապել է **պաշար բռնել** բայի հետ և ձևավորել է **նպատակի** պարագա, հաջորդ նախադասության մեջ **վրա** կապը **կտուրներ** գոյականն է կապել **փռել** բայի հետ և նրա հետ դարձել է **տեղի պարագա**: Վերջին նախադասության մեջ **հետ** կապը ձևավորել է բանաստեղծի և աստղերի միասնությունը և դարձել է **միասնության պարագա**:*

*Սակայն պետք է նշել, որ կապերի դերը միայն պարագայական հարաբերություններ ցույց տալը չէ. կան նաև կապեր, որոնք ստորոգյալի հետ կապում են նաև խնդիրներ, ինչպես «**Ընկերոջս մասին** դեռ շատ բան չեմ պատմել»: Այստեղ **մասին** կապը*

ձևավորել է **վերաբերության խնդիր**: «**Մեր դեմ** խաղ չկա,– ասում են որոշ ընդդիմադիրներ», այստեղ էլ **դեմ** կապը ընդդիմության խնդիր է ձևավորել:

Կապերը ձևավորում են նաև **որոշչային** հարաբերություններ (**Իմ ուսուցչի նման** ուսուցիչ չկա, **Վարդի պես** մի աղջիկ սկսեց երգել), ինչպես նաև **մասնական** բացահայտիչը կապում են բացահայտյալի հետ (Սոնան՝ **որպես կուրսի ավագ**, իրեն արդարացնում է: Վարդանյանը՝ **իբրև տնօրեն**, դեռևս հասունացած չէր):

Կապերը համարժեք են նաև **հոլովաձևերի** և առանձին դեպքերում կարող են փոխարինվել հոլովներով: Նույն նախադասությունը կարելի է կազմել թե՛ կապով և թե՛ համապատասխան հոլովաձևով. օրինակներ՝ Կատուն նստած է **բազմոցի վրա//բազմոցին**: Նա **ընկերներով//ընկերների հետ** եկավ համերգի: Որսորդ Ավին պատմում էր իր **որսի մասին//որսից**: Այդ մասին գրված է **գրքում//գրքի մեջ**: Ուսանողը նկատողություն ստացավ **դեկանից//դեկանի կողմից**:

Սակայն բոլոր դեպքերում չէ, որ կապերը համարժեք են լինում հոլովներին: Օրինակ «**Առանց գրքի** չկա գիտություն», «Մայրը բարկացավ **երեխայի վրա**»: **Ինձանից բացի** բոլորը մասնակցեցին հանրահավաքին: **Գրասեղանի մոտ** կանգնել էր երեխան ու դողում էր **ուռի պես** և այլն:

Բերված նախադասություններում **առանց, վրա, բացի, մոտ, պես** կապերը հնարավոր չէ հոլովաձևերով արտահայտել:

Անկախ նրանից, թե կապը որևէ բառի հետ խնդիրներ, թե պարագաներ է ձևավորում, այդ **կապվող բառը** կոչվում է **կապային խնդիր**, որի պաշտոնը թելադրում է **բայը**, որը կոչվում է **խնդրառու բառ**: Այսպես՝ «Ասֆալտապատ ճանապարհը տանում է **դեպի Խորվիրապ**», «Սկսեցի **մտածել** Գրիգոր Լուսավորչի մասին»: Առաջին նախադասության մեջ **տանում** է բայի պահանջով ձևավորվել է **տեղի պարագա՝ դեպի Խորվիրապ**, որտեղ **Խորվիրապը** կոչվում է **կապային խնդիր** (թեև այն **դեպի** կապի հետ տեղի պարագա է), իսկ մյուս նախադասության մեջ **մտածել** բայի պահանջով ձևավորվել է **վերաբերության խնդիր՝** Գրիգոր Լուսավորչի մասին, որտեղ **Գրիգոր Լուսավորիչն** է կապային խնդիր:

Հասկանալի է, որ կապերը կախված են բայերի իմաստներից

(խնդրառու բառից) և այդ կախվածությունը կարող է լինել **ուժեղ** կամ **թույլ**. օրինակ՝ **մասին** կապը ուժեղ խնդրառություն է պահանջում՝ **խոսել մի բանի մասին, խոսել** բայը անպայման **մասին** կապն է պահանջում: **Բարկանալ** բայը պահանջում է **վրա** կապը (բարկանալ երեխայի վրա), **կռվել** բայը պահանջում է **դեմ** կապը (կռվել թշնամու դեմ): Ուրեմն, սրանք բայերի և կապերի ուժեղ **խնդրառություններ** են, մինչդեռ **նստել** բայը կարող է մի քանի **կապերի** հետ առնչվել (նստել աթոռի **վրա**, նստել սեղանի **մոտ**, նստել սեղանից **հեռու**, նստել պատի **տակ**, նստել ինձանից **առաջ**, **հետո** և այլն), այստեղ նույն խնդրառու բառը՝ **բայը**, առնչվել է **վրա, մոտ, հեռու, տակ, առաջ, հետո** կապերի հետ, ուրեմն գործ ունենք **թույլ** խնդրառության հետ:

Ասենք նաև, որ կապերի դեր կարող են կատարել նաև որոշ բառեր, որոնք ունեն և՛ նյութական և՛ հարաբերական նշանակություն: Այս մասին՝ քիչ հետո:

ԿԱՊԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ կազմության կապերը լինում են 3 տեսակ՝

Պարզ կամ **արմատական**՝ **ի, առ, ըստ, հետ, պես, մոտ, տակ, վրա, վեր, դեմ, զատ, չափ, քով** և այլն:

Քերականական ձևերից առաջացած. Կապերի ու կապական բառերի մեծ մասն առաջացել է գոյականների տարբեր հոլովներից՝ հիմնականում գրաբարյան հոլովաձևերից.

ա) **տրական** հոլովից (**մասին, օգտին, հաշվին, պատվին, պահին, միջոցին, հասցեին**...)

բ) **բացառական** հոլովից (**երեսից, ձեռքից, կողմից**...)

գ) **գործիական** հոլովից (**առթիվ, շնորհիվ, պատճառով, նպատակով, նկատմամբ, վերաբերմամբ, ուղղությամբ, բացառությամբ, կապակցությամբ**...)

դ) **ներգոյական** հոլովից՝ **ընթացքում, գործում** (աղետը կանխելու **գործում**...):

Կապերի մի մասն էլ առաջացել է **բայերի թեքման** ձևերից (**նայած, չնայած, սկսած, հաշված, չհաշված, վերաբերյալ, ներառյալ, բացառյալ**...):

Նախդրավոր կազմությամբ կապերը կազմվել են նախդրի ու որևէ բառի հարաբերությամբ. դրանցից են՝ **հանուն** (ի անուն),

Հանձին, Հանձինս, Հօգուտ (**ի օգուտ, դեպ + ի, բաց + ի, առ + անց, առ + ընթեր, ընդ+դեմ, նախ + քան...**)։

Ի նախդիրը որոշ կապերում գրվում է առանձին՝ **ի փառս, ի Հեճուկս, ի վեր, ի վար, ի տրիտուր, ի Հաշիվ, ի պատիվ, ի դեմս**։

Ի նախդրով որոշ կապերի իմաստը արտաՀայտվում է Համապատասխան բառի տրական Հոլովով, ինչպես՝ **ի Հաշիվ>Հաշվին, ի պատիվ>պատվին, Հօգուտ>օգտին** և այլն։

ԿԱՊԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ

Կապերն առաջացել են նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից՝ ուղիղ կամ թեք ձևերով։

Գոյականների ուղիղ ձևերից՝ **Համար, Հանդերձ, չափ, տակ, տեղ, ժամանակ.** թեք ձևերից՝ **դիմաց, մասին, միջոցին, օգտին, պաՀին, սիրուն, Հասցեին, կողմից, երեսից, ձեռքից, առթիվ, շնորՀիվ, կապակցությամբ, նկատմամբ, պատճառով, վերաբերմամբ, դեպքում, ընթացքում, ի դեմս, ի Հեճուկս, Հանձինս, Հանուն** և այլն։

Ածականներից՝ անկախ, առընթեր, զուգընթաց, Համապատասխան, Հավասար, նման, մոտիկ և այլն։

Դերբայներից՝ նայած, չնայած, նայելով, անցած, սկսած, վերաբերյալ։

Մակբայներից՝ առաջ, դեմ, Հեռու, մեջ, մոտ, ներքև, վերև, վեր վար և այլն։

Ըստ այն բանի, թե այլ խոսքի մասերից կապերի վերածված կամ կապի դեր կատարող բառերը ինչքանով են պաՀել իրենց նախկին խոսքիմասային իմաստը, կապերը բաժանվում են 3 խմբի (Մ. Ասատրյանն իրավացիորեն դրանք բաժանում է երկու խմբի՝ **իսկական կապեր և անիսկական կապեր**՝ վերջինիս մեջ ներառելով նաև կապական բառերը (տե՛ս նշվ. աշխ., էջ 399-400)։

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ – Սրանք այն բառերն են, որոնք զրկվել են նյութական իմաստից և Հանդես են գալիս միայն որպես կապեր, դրանք են՝ **ի, ըստ, առ, մասին, բացի, դեպի, Համար, Հանդերձ, օրոք, շնորՀիվ, առթիվ, նկատմամբ, վերաբերմամբ, վերաբերյալ, փոխանակ, մինչև, նախքան, ներքո, միջև, Հետ, ընդդեմ, Հանդեպ, պես, Հանձին, իբրև, որպես, զերդ** (**ինչպես, որպես**), **ի դեմս, ի վար, ի վեր, ի փառս, ի Հեճուկս, ի Հաշիվ, Հիման վրա** և այլն։

Սրանք հոդ չեն ստանում և չեն հոլովվում, միայն հարաբերական իմաստով են գործածվում։

ԱՆԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ – *Սրանք այն բառերն են, որոնք հանդես են գալիս կապի դերով և չեն զրկվել այն խոսքի մասի իմաստից, որից անցել են կապերին. դրանց խոսքիմաստային իմաստը երկփեղկված է, դրանք են՝* ***մոտ, վրա, տակ, մեջ, շուրջ, դեմ, դիմաց, առջև, համաձայն, հակառակ, չափ, տեղ, նման, զատ, առաջ, հետո, միջոցին։***

Բնականաբար սրանց մեծ մասը կարող է հոլովվել և հոդ ստանալ:

Բերենք երկու օրինակ՝ ***Մոտ*** *ապագայում շատ բան է փոխվելու (ածական): Երեխան հեռացավ* ***սեղանի*** *մոտից (անիսկական կապ):*

Կապական բառերը *գոյականներ, ածականներ, մակբայներ կամ դերբայներ են, որոնք նախադասության մեջ հանդես են գալիս իրենց խոսքիմաստային իմաստներով ու իրենց քերականական կարգերով, մի այլ նախադասության մեջ կորցնում են իրենց նյութական իմաստը և հարաբերություն են արտահայտում: Այսպես, օրինակ «****Ժամանակը*** *իր վախճանին կհասնի, և արևը մի բուռ մոխիր կդառնա» (Ավ. Իս.) նախադասության մեջ* ***ժամանակը գոյական*** *է, իսկ «Ձմեռ* ***ժամանակ*** *պետք է տաք հագնվել» այստեղ նույն* ***ժամանակ*** *բառը* ***կապի*** *դեր է կատարել: Այդպես էլ՝* ***հեռու*** *բառը՝ «****Հեռու*** *անտառում մի մարդ էր ապրում», այստեղ* ***հեռուն*** *ածական է, իսկ «Նա գնաց* ***գյուղից հեռու****» (այստեղ կապական բառ է): Կամ՝ «Անընդհատ* ***դուրս*** *եմ նայում» և «****Լուսամուտից դուրս*** *եմ նայում». առաջինում տեղի* ***մակբայ*** *է, երկրորդում՝* ***կապական բառ,*** *որը կարող է և հոլովվել (դրսից ներս մտա, դրսում ցուրտ է և այլն):*

Կապական բառերն են՝ ***ժամանակ, վերև, ներքև, ներս, դուրս, հեռու, մոտիկ, ձեռքով, գծով, անունով, պատճառով, անունից, կողմից, հավասար, համապատասխան, ընթացքում, սկզբում, նպատակով, հետևանքով, համաձայն, կից, զուգընթաց*** *և այլն:*

Ճիշտ է, կապերը բաժանվում են նշված 3 խմբերի, բայց դրանք խիստ սահմանազատված չեն:

ԿԱՊԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ շարադասության կապերը լինում են 3 տեսակ՝ ***նախադրություններ, ետադրություններ և երկդրություններ:***

Նախադրություններ — Սրանք կապվող բառերից (կապի խնդիրներից) առաջ դրվող կապերն են, որոնք ետադրությունների համեմատ սակավաթիվ են:

Հայերենի նախադրություններն են՝ **առ, առանց, դեպի, դերդ, ըստ, ի, ի դեմս, իբրև, ինչպես, որպես, հանձին, հանուն, հօգուտ, մինչ, մինչև, նախքան, չնայած, քան, քանց**։ Օրինակներ՝ **Առ** այսօր հարցը մնացել է անհետևանք: **Առանց** բավարար գիտելիքների մարդ կյանքում չատ է խեղճանում: «**Դեպի** արևն էին գնում ամպրոպները խելագարված» (ԵՉ): «Ու երազներ էր տեսնում **մինչև** լուսաբաց» (ՀՍ): «**Ըստ** ընդունված սովորույթի՝ դեռ կսարքեն անմեղ դավեր» (ՊՍ): «**Իբրև** մի հրաշալի երազ փոված էր անտառը» (ՄԳ): Մին ոռնում է **դերդ** գազան (ՀԹ): «**Հանձինս** Գ. Ջահուկյանի և էդ. Աղայանի՝ հայ լեզվաբանությունը չատ առաջ գնաց» (Մամ.): «**Հանձին** Աճառյանի՝ հայ լեզվաբանությունը ճանաչելի դարձավ աշխարհում»:

Ինչպես երևում է բերված օրինակներից, եթե կապվող բառը լրացում ունի, կապը դրվում է լրացումից առաջ (Գնում էինք դեպի ձյունագագաթ **Արագածը**։ Հարցը լուծվեց **հօգուտ** արդար պահանջի):

Ետադրություններ — Հայերենի կապերի մեծ մասը ետադրություն է, այսինքն՝ դրվում է կապվող բառից հետո. դրանք են՝ **առաջ, առթիվ, առջև, դեմ, դիմաց, կողմից, համար, հետ, հետո, մասին, հետևանքով, մեջ, միջով, միջոցով, մոտ, ներքո, ներքև, նկատմամբ, նման, պես, վերաբերյալ, վրա, տակ, տեղ** և այլն: Օրինակներ՝ «Ձեր տան առաջ խնկի ծառ, Գյուղում ջան» (ժող.): «Քո աչքերի **դեմ** իմ աչքերը կույր» (ՎՏ): «Հողմեր, ինչո՞ւ եք այդպես չարանում Աղոթարանի լճերի **վրա**» (ՀՍ): «Հայրենիքի **համար**, այս աշխարհ **համար** արժե կռվել ու մեռնել» (ԳՍ): «Աստղերի **հետ** նստել, նիստուկաց եմ արել» (ՀՍ): «Եվ ոտքի տակ է պարելով տալիս նա հիչատակներն իմ սև անցյալի» (Գ. էմին):

Երկդրություններ — Սահմանափակ թվով կապեր էլ կան, որոնք կարող են դրվել կապվող բառերից և՛ առաջ, և՛ հետո. դրանք են՝ **անկախ, բացի, ընդդեմ, հակառակ, համաձայն, հանդեպ, հեռու, չնորհիվ, համապատասխան**...

Օրինակներ՝ **Բացի** Արամից (Արամից **բացի**) բոլորը կարդացել են «Վարդանանքը»: **Անկախ** ձեր հարաբերություններից (ձեր հարաբերություններից **անկախ**) այս գործը պետք է որակով

կատարվի: **Հակառակ** մեր ցանկությանը (մեր ցանկությանը **Հակառակ**) բոլորիս բաժանորդագրեցին: **Համաձայն** կառավարության որոշման (կառավարության որոշման **Համաձայն**) դպրոցներում մտցվեց «Հայ եկեղեցու պատմություն» առարկան: **ՇնորՀիվ** նոր տնօրենի (նոր տնօրենի **շնորՀիվ**) կարգավորվեց դպրոցի ջեռուցման Համակարգը: **Հետու** ծնողներից (ծնողներից **Հետու**) նա միշտ Հոգում էր նրանց մասին: **Հանդեպ** ընկերների (ընկերների **Հանդեպ**) միշտ բարեխիղճ եմ եղել:

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել կապերը, որոշել նրանց տեսակն ու շարադասությունը.

Մի անգամ՝ գիշերվա մի ուշ ժամի, ՄաՀարին դանդաղ քայլերով Հասավ Կառավարական շենքի դիմաց ու ձեռքը բարձրացնելով դեպի երկինք, բացականչեց. «Արվեստի Հրաշագործություն է»: Հետո լռեց ու լուռ կանգնած մնաց շենքի առջև, ապա ասաց. «Սրանից բացի Թամանյանը ուրիշ շենքեր էլ է նախագծել, Համաձայն որի, նման այլ շենքեր էլ սարքվեցին»: Հինգ-տասը րոպեի չափ կանգնելուց Հետո շարժվեցինք և Հանդարտ քայլելով անցանք Աբովյան փողոցի կեսը: Ճանապարհն անցանք լուռ՝ ամեն մեկս իր մտորումներով տարված: ՄաՀարին լուռ կռացավ ու ականջիս կամաց շշնջաց. «Գիշեր ժամանակ մեկ-մեկ գալիս կանգնում եմ Հրապարակում՝ այս շենքի մոտ ու Հիանում: Մի գիշեր էլ՝ ուշ ժամի, ինձ կամաց մոտեցավ մի միլիցիոներ և կասկածն աչքերի մեջ մեղմորեն Հարցրեց, թե ինչու եմ մեն-մենակ կանգնած այստեղ: Փոխանակ պատասխանելու ես մեղմ Հարցրի նրան, թե ի՞նչ կփոխվեր, եթե մենակ չլինեի, ասենք՝ երկուսով կամ երեքով: Այդ պաՀին միլիցիոները շփոթվեց, ու նրա կասկածն ավելի խորացավ. նա ինձ ընկերաբար առաջարկեց իր Հետ գնալ քաղմաս՝ պարզելու իմ ով լինելը: Այդ միջոցին խոնարՀաբար ասացի, որ ես Գուրգենի ՄաՀարին եմ: Նա անկախ դրանից, կրկին նույն առաջարկությունն արեց՝ ասելով, որ Հեչտությամբ իրեն չեմ խաբի, որ ինքը որոշ տեղեկություններ ունի ՄաՀարու մասին, որ իրենց ուսուցչուՀին վաղուց է ասել, որ ՄաՀարին մաՀացել է դարեր առաջ՝ Բաղդատում: Եվ մենք միասին գնացինք քաղմաս: Այստեղի ավելի բարձր պաշտոնյան, ուշադիր լսելով ինձ, անվերապաՀորեն Հավատաց ինձ և ասաց, որ իր Հոր գրքերի մեջ

կա նաև իմ «Մրգահասը», որը կարդացել է երկու անգամ»: Նա հետո ասել է որ ներողություն է խնդրում պատահած թյուրիմացության համար, բայց և միաժամանակ ուրախ է այդ թյուրիմացության շնորհիվ ծանոթանալու հենց իր՝ Գուրգեն Մահարու հետ (ըստ Ռուբեն Զարյանի պատմածի):

2. Առանձնացնել երկդրությունն կապերը և դրանցով կազմել նոր նախադասություններ:

ԿԱՊԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Ըստ իրենց արտահայտած հարաբերությունների՝ կապերը բազմազան են՝ դրանց մի մասը **տարածական** իմաստ է արտահայտում, մյուսը՝ **ժամանակային**: Կապերի որոշ տեսակներ էլ **վերաբերական** իմաստներ են արտահայտում, մյուսները՝ **պատճառ, հիմունք, նպատակ, ձև, սահմանափակում** և այլն:

Ըստ այդմ էլ կապերը լինում են՝

ՏԵՂԻ (տարածական) — Տեղի կապերն արտահայտում են տարածական տարբեր հարաբերություններ. տեղի կապերն են՝ **մեջ, վրա, տակ, մոտ, քով, ներքո, միջև, հանդեպ, դիմաց, շուրջ, դեպի, ի վեր, ի վար, առաջ, առջև...**

Օրինակներ՝ «**Դեպի** վե՛ր, սարն ի վեր, քաջասիրտ զինվոր» (Հ. Հովհ.): «Քարի **մոտ** է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների **տակ**» (ԱԲ): Դռան առաջ կանգնած է ավտոմեքենան: Մի թմբի **վրա**, մեծ քարի **շուրջ** նստած պախրաները որոճում էին (Վ. Անանյան): Մասիսների **դիմաց** հառնել է Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը: Դերզոր անապատը տարածված է Տիգրիսի և Եփրատի **միջև**:

ԺԱՄԱՆԱԿԱՑԻՆ — Այս կապերը ցույց են տալիս խոսելու պահին (**ժամանակ, միջոցին, օրոք, օրով**), **նրանից առաջ** (**առաջ, նախքան, մինչև** (**մինչ...**) և նրանից հետո (**անց, սկսած, հետո, օրից, ի վեր...**) տեղի ունեցած գործողություն:

Ժամանակի հարաբերության իմաստ ունեն հետևյալ կապերը՝ **նախքան, մինչև, անց, օրոք, օրով, հետո, նախքան, մինչև, միջոցին, պահին, առաջ, առ ժամանակ, անցած, ընթացքում:**

Օրինակներ՝ Այդ **միջոցին** հեռվից բազեի նման սլանալով՝ գալիս էր Արծվին (ԴԴ): Կարեն Դեմիրճյանի **օրոք** ծաղկեց Հայաստանը (Մամ.): Դասի **ժամանակ** չի կարելի խոսել: Մինչև

գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում (ԱԲ)։ Դրանից **առաջ** եղել է աշխարհում մի հին, մի հաչտ ժողովուրդ (ՍԿ)։ Այստեղ **առաջը** հանդես է եկել որպես կապ, բայց «**Առաջ** ես աշխատում էի դպրոցում» այստեղ նույն բառը ժամանակի մակբայ է։ **Նախ** ես կկարդամ այս գիրքը, **հետո՝** դու։ **Սկսած** մանկության օրից երգահան Կոմիտասը օր ու արև չտեսավ։

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ – Այս կապերը ցույց են տալիս գործողություն, եղելություն, երբ խոսքը վերաբերում է մեկին կամ մի բանի. դրանք են՝ **մասին, վերաբերյալ, վերաբերմամբ, նկատմամբ, կապակցությամբ, առիթով, հանդեպ, գծով, ուղղությամբ** և այլն։

Օրինակներ՝ «Հնձանում խոսում էին Արծվիի՝ սերը գողանալու **մասին**» (ԴԴ)։ Փոքրերի **նկատմամբ** պետք է ուշադիր լինել։ Գիրքը հրատարակելու **առթիվ** շնորհանդես կազմակերպվեց։ Ուսուցիչների **նկատմամբ** պետք է սիրալիր լինել։ Նոր լույս տեսած գրքի **վերաբերյալ** մի քանի հոդվածներ գրվեցին։ Աղջիկս բժշկության **գծով** մեծ սեր ուներ. այդ **ուղղությամբ** էլ գնաց (Ծողիկ)։

ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒ ԶԻՋՄԱՆ ԿԱՊԵՐ – Դրանք են՝ **առանց, բացի, զատ, բացառությամբ, փոխարեն, հանդերձ, տեղ, չնայած, հակառակ, բացառությամբ**... Օրինակներ՝ **Առանց** ծնողների դժվար էր նրա համար, **բացի** եղբորից ուրիշ հարազատներ չուներ, նրանց **փոխարեն** ապավինում էր ընկերներին (ՊՂ)։ Սխալներով **հանդերձ** շարադրությունը շատ հետաքրքիր է՝ **բացառությամբ** վերջին դրվագի, որտեղ գրքի **փոխարեն** խոսվում է կողմնակի երևույթների մասին։ **Չնայած** համաձայն չեմ քո տեսակետին, բայց հանդուրժում եմ։

ՀԻՄՈՒՆՔԻ ԿԱՊԵՐ – Քիչ են, դրանք են՝ **ըստ, համաձայն, շնորհիվ, նայած, հիման վրա, կապակցությամբ**։ Օրինակներ՝ **Համաձայն** կանոնադրության, պետք է բանակում ծառայած լինես։ **Ըստ** օրենքի՝ նման աշխատանք տրվում է միայն տեղի գրանցում ունեցողներին։ Գործի ընդունեցին հրամանի **հիման վրա**։ Մարդ կարող է հաջողության հասնել միայն աշխատասիրության **շնորհիվ**։ **Շնորհիվ** բարձր առաջադիմության՝ նա ընդունվեց մագիստրատուրա։

ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ – **Հակառակ, չնայած, չնայելով** (Չնայած տեղի բնակիչ չէր, բայց գործի ընդունեցին։ **Հակառակ** բացասական կարծիքի՝ դիպլոմայինը պաշտպանեց)։

ՊԱՏՃԱՌԻ ԿԱՊԵՐ – Շատ քիչ են՝ **պատճառով, երեսից, ձեռքից**։

Օրինակներ՝ Ուսումս կիսատ թողեցի նյութապես անապահով լինելու **պատճառով** (ՊՂ): Ինչ փորձանք որ բնությանը գալիս է՝ որսագողերի **երեսից** է. էլ որս չմնաց, դադարգյուն եղան նրանց **ձեռքից** (ՎԱ):՝

ՆՊԱՏԱԿԻ – ***Համուն, համար, նպատակով, հօգուտ, ի***... Օրինակ՝ «Հաց աշխատելու **համար** կյանքը ինձ գցեց Բաքու» (Տիրվ.): «Ուսումս շարունակելու **նպատակով** ընդունվեցի Լոմոնոսովի համալսարան» (ՊՂ): **Հանուն** հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո Հունան Ավետիսյանը կուրծքը դեմ տվեց թշնամու գնդացրին, նա զոհվեց **ի** պաշտպանություն հայրենիքի:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ – ***Ըստ, համաձայն, համապատասխան, համեմատ, հավասար***: Օրինակներ՝ **Ըստ** նախնական պայմանավորվածության՝ ամռանը գնալու ենք հանգստանալու: Հիմնականում աշխատանքները վերակառուցվեցին նոր առաջադրանքներին **համապատասխան**: «**Համաձայն** կառավարության որոշման՝ վերաբացվելու են օտարալեզու դպրոցներ» (Մամ.): Դպրոցականները դաշտում աշխատում էին մեծերին **հավասար**:

ԲԱՑԱՌԱՑՏԱՆ – ***Իբրև, որպես, ինչպես***: Օրինակներ՝ **Որպես** փորձառու ուսուցիչ՝ նա միշտ օգնում էր սկսնակներին: «**Իբրև** դպրոցի տնօրեն՝ Համբարձում Գրիգորյանը հաճախ է դասալսումներ կատարում հատկապես երիտասարդ ու անփորձ ուսուցիչների մոտ» (Ղարիբ Հայրապետյան):

ՁԵՎԻ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ – ***Պես, նման, ինչպես, որպես***... Օրինակներ՝ «Զեփյուռի **պես** սահելով, գարնան **պես** բուրելով վազում է մի գեղուհի» (Ավ. Իս.): Սլանում է եղնիկի **նման**: Լուսինեն երգում էր **որպես** սոխակ: **Ինչպես** մի հեղեղ վեր կենար հանկարծ երկնքի մթնած ամպերից իջներ: **Ինչպես** փոթորիկ սաստիկ սրընթաց, գյուղից սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ):

ՉԱՓԻ – ***Չափ, ավելի, ավելի քան, մինչև, պակաս***... Օրինակներ՝ Դպրոցականներն էլ աշխատում էին համարյա մեծերի **չափ**: Լևոնն աշխատում էր ու կարդում **ավելի քան** մեծերը: Ոտքով հասավ **մինչև** գյուղի ծայրը: Ինչ խոսք, Արամը **պակաս** աշխատասեր չէ:

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ – ***Հետ, հանդերձ, համընթաց, զուգընթաց***... Օրինակներ՝ Խնդրում ենք ընտանյոք **հանդերձ** ներկա լինել մեր ուրախությանը: Այգում շրջեք երեխաների **հետ**. դա շատ օգտակար է: Մայրս սովորեց և բարձրագույն կրթություն

ստացավ աշխատանքին զուգընթաց:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ — ***Դեմ, ընդդեմ, դեմհանդիման, ի հեճուկս...*** *Օրինակներ՝ Իմ հայրը մեղանչեց* ***իմ դեմ****, սակայն չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ (Ավ. Իս.):* ***Ի հեճուկս*** *ձեզ, մենք կանք ու պետք է լինենք (Գ. Էմին): Տրտնջալով ծերության* ***ընդդեմ****՝ քթքթում էր յուր ծառի տակին (ՀԹ): Գնում էին թշնամու* ***դեմ-հանդիման****:*

ՇԱՀԻ ԿԱՄ ՕԳՈՒՏԻ *(Մ. Աբեղյան)* — ***Հօգուտ, օգտին, համար, պատվին...*** *Օրինակներ՝ Բոլորս էլ աշխատում ենք* ***հօգուտ*** *մեր երկրի: Միջոցառումը կազմակերպվել էր Կոմիտասի ծննդյան 130-ամյակի* ***առթիվ****: Բաժակ բարձրացրին գործի հաջողության* ***համար****: Ցուցահանդես կազմակերպվեց Հակոբ Կոջոյանի* ***պատվին*** *(Մամ.) կամ* ***ի պատիվ*** *Հակոբ Կոջոյանի:*

Հիշի՛ր — *Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում պետք է գործածել ոչ թե* ***ի օգուտ****, այլ՝* ***հօգուտ****, ոչ թե* ***ի շնորհիվ****, այլ՝* ***շնորհիվ****:*

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ — ***Գծով, ուղղությամբ, գործում, մեջ***: *Օրինակներ՝ Քաղաքը բարեկարգելու* ***ուղղությամբ*** *բավականին աշխատանքներ են կատարվում: Երեխան առաջ գնաց սպորտի* ***գծով*** *և առաջավոր է հատկապես շախմատի* ***մեջ****: Նա էլ զբաղվեց արվեստի* ***գծով*** *և մեծ հաջողություն ունեցավ այդ* ***գործում****:*

ԴԻՄԱՌՆՈՒԹՅԱՆ — ***Հանձին, հանձինս, ի դեմս***:

Հիշի՛ր — *Այս 3 կապերը պետք է գործածել* ***միայն անձերի*** *դեպքում, ըստ որում* ***հանձին****-ը եզակի թվի կապի խնդրի հետ (Հանձին Կոմիտասի մենք ունենք ազգանվեր երգահան), իսկ* ***հանձինս****՝ հոգնակի թվի հետ (****Հանձինս*** *Արամ Խաչատրյանի, Արմեն Տիգրանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի մեր դասական երաժշտությունը բարձունքի հասավ):*

Ի դեմս *կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի կապի խնդիրների հետ (****ի դեմս*** *Ա. Խաչատրյանի և* ***ի դեմս*** *մեր դասական երաժիշտների...) :*

Կողմից *կապը ներգործության իմաստով է գործածվում՝ Շենքը կառուցվել է շինարարների* ***կողմից****: Կարգադրությունը իջեցվել է կառավարության* ***կողմից****:*

Դեպքում *կապը պայմանի իմաստով է գործածվում. օրինակ՝ միայն խոստումդ կատարելու* ***դեպքում*** *կընկերակցեմ քեզ: Ուսումնական տարին գերազանցներով փակելու* ***դեպքում*** *քեզ*

հետո Սանկտ Պետերբուրգ կոանեմ (ՊՂ)։

Հատուկ ընդգծենք, որ հայերենի կապերի մի զգալի մասը բազմիմաստ է. նույն կապը տարբեր կիրառություններում տարբեր հարաբերություններ է արտահայտում. օրինակ՝ **մինչև** կապն արտահայտում է թե՛ տեղի (Գնացի **մինչև** գրադարան), և թե՛ ժամանակի իմաստ (Սպասեցի **մինչև** երեկո)։

Նույնը կարելի է ասել **մոտ** կապի վերաբերյալ (Սպասում էի շատրվանի **մոտ**, և Սպասեցի **մոտ** մեկ ժամ)։

Կամ **պես**, **նման** կապերը հիմնականում **ձև** են ցույց տալիս՝ երգում է սոխակի **պես** (**նման**), բայց որոշիչների իմաստ էլ ունեն՝ եղնիկի **պես** (**նման**) աղջիկ է։

ԿԱՊԵՐԻ ՀՈԼՈՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ (ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ)

Կապերի հոլովառություն կամ խնդրառություն ասելով պետք է հասկանալ, թե որ կապը ինչ հոլովաձևով դրված խնդիր լրացում է պահանջում. օրինակ՝ **բացի** կապի թելադրանքով նրա լրացումը պետք է անպայման **բացառական** հոլովով դրվի (գրքերից բացի//բացի գրքերից մոտս ոչինչ չկա)։ **Հանդերձ** կապը **գործիական** հոլովով է խնդիր լրացում պահանջում (Թերություններով **հանդերձ** աշխատանքս դրական գնահատվեց)։ **Մասին** կապի խնդիրը պետք է դրվի **սեռական** հոլովով գործածված բառի վրա՝ Հրաչյա Աճառյանի **մասին** շատերն են գրել։ Նա այդ գրքի **մասին** լավ էր խոսում։

Այժմ տեսնենք, թե որ կապերը որ հոլովներով են խնդիր լրացումներ պահանջում։ Ժամանակակից հայերենի կապերի ճնշող մեծամասնությունը **սեռական** հոլովով է խնդիր լրացումներ պահանջում և նրանց հետ արտահայտում է **տրական** հոլովի իմաստ ու միասին ցույց են տալիս չարահյուսական հարաբերություններ (տեղ, ժամանակ, պատճառ, նպատակ և այլն)։ Այդ կապերը հիմնականում ետադրություններ են, կան նաև նախադրություններ և երկդրություններ. դրանք են՝ **առթիվ**, **առջև**, **դիմաց**, **ժամանակ**, **մինչև**, **մասին**, **համար**, **ներքո**, **նման**, **նկատմամբ**, **շնորհիվ**, **շուրջ(ը)**, **պատճառով**, **վերաբերմամբ**, **վերաբերյալ**, **տեղ**, **փոխարեն**, **քով**, **մոտ**, **վրա**, **պես**, **չափ**, **հետ** և այլն։ Բավարարվենք մի քանի օրինակներով՝ Տոնի **առթիվ** քաղաքը զարդարել են։ Մեր տան **առաջ** այգի կա։ Հոր **շնորհիվ** մեծ պաշտոնի տիրացավ։

հիվանդության **պատճառով** բացակայել է դասերից: Գրքի **վերաբերյալ** հոդվածներ գրվեցին: Տան **տեղ** մի դրեք: Ընկերոջդ **մասին** լավ արտահայտվիր: Արևի **վրա** էլ բծեր կան և այլն:

Մեջ կապը նույնպես **սեռական** հոլովով է խնդիր պահանջում և իր լրացման հետ **ներգոյական** հոլովի իմաստ է արտահայտում (Արտի **մեջ** (արտում) լորիկ թռավ: Այս գետի **մեջ** (գետում) շատ ձուկ կա): **Գրքում** (գրքի մեջ) վրիպակներ կան:

Հիշի՛ր – Մոտ, վրա, պես, հետ, համար, նման, հօգուտ, հանձին, հանուն, ի դեմս կապերի հետ գործածվելիս առաջին և երկրորդ դեմքի **անձնական** դերանունները դրվում են **տրական** հոլովով՝

Սակայն **մասին, փոխարեն, տակ, դեմ, դիմաց, մեջ, պատճառով,**

մոտ, վրա, հետ, պես, համար հօգուտ, հանձին, հանուն, ի դեմս	ինձ, մեզ քեզ, ձեզ

վերաբերյալ, շնորհիվ կապերի հետ գործածվելիս առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները դրվում են **սեռական** հոլովով (**իմ, քո, մեր, ձեր**): **Շնորհիվ** երկդրությունը պահանջում է նաև **տրական** հոլով (շնորհիվ **քեզ**):

Նախադրություններից սեռական հոլովով խնդիր են պահանջում հետևյալ կապերը՝ **առանց** (**Առանց աշխատանքի** մնացին շատերը): **Ըստ** (Ապրում են **ըստ պահանջի**): **Հանձին** (**Հանձին Գեղամի** լավ ընկեր ունեմ): **Հանուն** (**Հանուն ընկերոջ** կարելի է ամեն ինչ անել): **Հօգուտ** (Այդ գործը կատարեց **հօգուտ իրենց գյուղի**):

Տրական հոլովի հետ են գործածվում **զուգընթաց** (Աշխատանքին **զուգընթաց** սովորում էր), **ընդառաջ** (Գործին **ընդառաջ** գնաց), **հակառակ** (**Հակառակ** պահանջին՝ չներկայացավ), **կից** (Տանը կից այգի կա), **չնայած** (**Չնայած** հորդառատ անձրևին՝ գործի գնացի):

Հիշի՛ր – Հիմունքի, հակառակ հիմունքի և բացառման կապերն իրենց կապի խնդիրների հետ տրոհվում են (տե՛ս բերված օրինակները):

Հայցական հոլովի հետ գործածվում են՝ **առ, դեպի, մինչև, ի վեր, ի վար, իբրև, որպես, անց, նախքան, չհաշված** կապերը: Օրինակներ՝ **Առ** մեկը սեպտեմբերի արձակուրդներ են: Գնում ենք **դեպի** գալիք դարերը: **Մինչև** առավոտ կավարտեմ այս գիրքը: Ներկայացավ մեկ ամիս **անց**: **Նախքան** արձակուրդները ավարտիր աշխատանքդ: Աշխատում է **որպես** (**իբրև**) տնօրեն: **Չհաշված** թերությունները՝ աշխատանքդ հաջողված է:

Բացառական հոլովի հետ են գործածվում հետևյալ կապերը՝ **առաջ** (Քննության կմտնես ինձանից **առաջ**): **Բացի** (Իմ տանից **բացի** ոչ մի տեղ չեմ հանգստանում): **Դուրս** (Այս կիրակի կգնանք քաղաքից **դուրս**): **Հեռու** (Ծնողներից հեռու է ապրում): **Վերև** (Նա ապրում է մեզանից **վերև**): **Ներքև** (Տանից **ներքև** առու է հոսում): **Անկախ** (Իմ ցանկությունից **անկախ** ներկայացա): **Հետո** (Քեզանից **հետո** կմտնեմ քննության): **Սկսած** (Երեկվանից **սկսած** աշխատում եմ ու չեմ ավարտում):

Գործիական հոլովի հետ են գործածվում՝ **հանդերձ** (Ընկերներով **հանդերձ** չկարողացանք գործն ավարտել): **Միասին** (Բարեկամներով **միասին** կառուցեցինք ամառանոցը): **Մեկտեղ** (Բոլորով **մեկտեղ** պետք է աշխատեն):

Ներգոյական հոլովը կապերի հետ չի գործածվում:

Որոշ կապեր հավասարապես գործածվում են տարբեր հոլովների **հետ, դրանք են՝ առաջ հետո, իբրև, որպես, ի վեր** և այլն: Օրինակ՝ **Դռան առաջ** կսպասեմ քեզ (սեռական): **Մի շաբաթ առաջ** եմ ավարտել գործս (հայցական): **Գնալուց առաջ** կհանդիպեմ քեզ (բացառական):

Նույնը **հետո** կապը՝ Կվերադառնամ **մի ամիս հետո** (հայցական): **Մեկ ամսից** հետո կտեսնվենք (բացառական):

Առաջադրանք.

Արտագրել, փակագծերում դրված բառերը՝ գործածելով պահանջվող հոլովներով.

Տատիկս (ըստ երևույթ) լուրջ վիրավորված էր, և այդ (քույր) երեսից եղավ: Մենք ամեն կերպ փորձում էինք հաշտվել (նա) հետ: Բացի սովորական (ծառայություններ), մենք՝ թոռնիկներս, աշխատում էինք կատարել (նա) բոլոր պահանջները, բայց (դա) հանդերձ չէինք կարողանում տատիկին հաշտեցնել (մենք) հետ: Մենք՝ տան (անդամներ) միասին տատիկի (ծնունդ) առթիվ և ի

պատիվ (նա) հանդեսներ էինք կազմակերպում, հավաքվում էինք նրա (շուրջ). նա կամաց-կամաց հաշտվում էր (մենք) հետ, բայց (այդ) մասին դեռ լռում էր: (Քույր) համար ավելի կարևոր էր (տատիկ) համար հոգ տանել:

Կրկնողական առաջադրանքներ։

1. *Արտագրել կապերն իրենց խնդիրների հետ, որոշել կապի տեսակը և կապվող բառի հոլովները.*

Դպրոցը գյուղի ծայրին էր՝ բլրակի վրա: Մեր դասարանը մի ընդարձակ սենյակ էր՝ դռանը մոտիկ, դիմացի պատից կախված էր գրատախտակը: Անսվաղ պատերի վրա ոչ մի զարդ չկար: Պատուհանին ապակու տեղ խմորով փակցրել էին յուղած թուղթ:

Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր, դեպի բլրակը բարձրանալիս, ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցս փշրվեց, և մինչև տարվա վերջը մնացի առանց ժամացույցի: Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, իսկ թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք:

Երկու շաբաթ հետո քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում, շատերի տունը գիտեի, ոմանց ծնողներին ճանաչում էի: Ժիր երեխաներ էին՝ բոց աչքերով, և որքան արագ ընտելացանք իրար: Օրապահի զանգին ես իջնում էի տուն սանդուղքով, բլրակի գլխին չհասած, տեսնում էի դպրոցի առաջ խմբված երեխաներին: Խմբով էլ ներս էինք մտնում և զանգից առաջ նախապատրաստվում դասերին: Դասերից հետո հաճախ էինք զրուցում տարբեր հարցերի վերաբերյալ. շատ էինք խոսում նշանավոր մարդկանց մասին: (Ըստ Ակսել Բակունցի):

2. *Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից դուրս գրել բոլոր կապերն ու կապական բառերը և ասել դրանց բոլոր հատկանիշները։*

3. Հանձին և հանձինս կապերով կազմել նախադասություններ։ Սրանք դրվում են միայն անձերի դեպքում (առաջինը՝ եզակի թվի, երկրորդը՝ հոգնակի)։

ՇԱՂԿԱՊ

Շաղկապը նյութական իմաստից զուրկ՝ չթեքվող խոսքի մաս է. այն արտահայտում է քերականական հարաբերություններ, այսինքն՝ իրար հետ է շաղկապում նախադասության անդամներ և առանձին նախադասություններ:

Ո՜, գարնան ամի՛ս, ապրելո՛ւ ապրիլ,
*Դու, **որ** բերում ես ծաղիկներ **ու** կյանք,*
Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից (Ս. Կապուտիկյան):

*Այստեղ **ու** շաղկապը շաղկապել է **ծաղիկներ** և **կյանք** նախադասության համադաս անդամները՝ ուղիղ խնդիրները, իսկ **որ** շաղկապը շաղկապել է բացահայտիչ ստորադաս նախադասությունը՝ գլխավոր նախադասության հետ.*

Դու՝ ծաղիկներ ու կյանք բերողդ,
Ինչո՞ւ դարձար մահվան տարելից:

*Հետևաբար շաղկապներն ըստ իրենց արտահայտած հարաբերության լինում են երկու տեսակ՝ **համադասական** և **ստորադասական**:*

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

*Շաղկապներն ըստ կազմության լինում են՝ **պարզ, քերականական ձևերից առաջացած, ածանցավոր** և **բարդ**:*

ՊԱՐԶ — *Այն շաղկապներն են, որոնք կազմված են մեկ արմատից՝ **և, ու, որ, բայց, այլ, կամ, ապա, էլ, իսկ, թե, քան**: Այժմ պարզ են դիտվում՝ **եթե, թեկուզ, թեպետ, միայն, սակայն, ուրեմն, քանի, եւ** շաղկապները:*

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ձևերից առաջացած — *Սրանք շատ քիչ են՝ **որովհետև, ըստ որում, այնուամենայնիվ, համենայն դեպս, չնայած, նայած, ասես, կարծես** և այլն:*

ԱԾԱՆՑԱՎՈՐ — *Նույնպես շատ քիչ են՝ **այլապես, հետևապես, հետևաբար**:*

ԲԱՐԴ – *Լինում են* **կցական** *և* **հարադրական**.

Կցական բարդությունները *տարբեր բառերի միասնությամբ գրվող շաղկապներն են՝* ***այսինչ, այնինչ, այնուամենայնիվ, այնուհանդերձ, մինչդեռ, որովհետև, մինչև, նաև, թեև, որպեսզի, քանզի։*** *Հասկանալի է սրանց կազմությունը՝* ***այսինչ = այս + ինչ, թեև = թե + և։ Այնուամենայնիվ*** *շաղկապը կազմված է* ***այն*** *և* ***ամենայն*** *բառերի գործիական հոլովաձևից։*

Բարդ շաղկապների մյուս տեսակը ***բաղադրյալ*** *կամ* ***հարադրական*** *շաղկապներն են, որոնք կազմված են առանձին բառերի հարադրությամբ, որոնցում մեծ դեր են կատարում* **թե, և, որ** *շաղկապները, որոնցով կազմվում են՝* ***կամ թե, միայն թե, քան թե, ասես թե, կարծես թե, քանի որ, հենց որ, մինչև որ, թե որ, այնպես որ, մանավանդ որ, չնայած որ, այնքան որ*** *շաղկապները։*

Բարդ շաղկապների մյուս տեսակն էլ ***զուգադրական*** *շաղկապներն են՝* **թեպետ... բայց** (***Թեպետ*** *խոստացել էի,* ***բայց*** *չեկա*), **թեպետև ... սակայն** (***Թեպետև*** *շատ աշխատեցինք,* ***սակայն*** *գործը գլուխ չեկավ*), **չնայած ... սակայն** (***Չնայած*** *մեր սրտով չէր,* ***սակայն*** *չհրաժարվեցինք*), **թեպետ ... բայց և այնպես** (***Թեպետ*** *չէի կարող գնալ հրավերքին,* ***բայց և այնպես,*** *թեթև խոստացա*), **եթե ... ապա** (***Եթե*** *ցանկանաս,* ***ապա*** *դժվարությունը կհաղթահարես*), **եթե ... ուրեմն** (***Եթե*** *խոստացել ես,* ***ուրեմն*** *խոստումդ կատարիր*), **քանի որ... ուրեմն** (***Քանի որ*** *չինարարական աշխատանքներ են կատարվում,* ***ուրեմն*** *երթուղին փոխվել է*), **քանի որ ... ուստի** (***Քանի որ*** *վատ ես զգում,* ***ուստի*** *պետք է գնաս առողջարան*)։

Որ *շաղկապը, միանալով ուրիշ բառերի կամ շաղկապների, կազմում է, այսպես կոչված* **թարմատար** *շաղկապներ՝* ***այնպես որ, երբ որ, թե որ, հենց որ, քանի որ, մանավանդ որ, չնայած որ, մինչև որ, այնքան որ։***

Օրինակներ՝ **Երբ որ** *բացվեն դռներն հուսո ...* ***Ցանկամ*** *տեսնել զիմ Կիլիկիա (Նահապետ Ռուսինյան)։*

Հենց որ *ծագեց շողքն արևի, անտես, անհետ չքացան (ՀԹ)։*

Շատ էի ցանկանում ֆիլմը նայել. **մանավանդ որ** *եղբայրս էլ է խաղում։ Դրանք սրբություններ են,* **այնպես որ** *պետք է աչքի լույսի պես պահպանել։*

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ — *Համադասական շաղկապները շաղկապում են նախադասության համադաս անդամներ («Սարեր ու ձորեր իրար երեսի նայում են, ժպտում ամպի մշուշով» (ՎՄ), համադաս նախադասություններ («Երգում է Սարոն, ու չի կարենում աղջիկը հանգիստ նստի վրանում» (ՀԹ):*

Համադասական շաղկապները շաղկապում են նաև ամբողջական խոսքեր, պարբերություններ:

Համադասական շաղկապներն են՝ ***և, ու, եւս, նաև, էլ, այլ, այլև, իսկ, բայց, կամ, սակայն, այնինչ, այլապես, ապա,*** *ինչպես նաև հետևյալ բաղադրյալ շաղկապները՝* ***բայց և այնպես, բայց և, նույնպես և, ինչպես նաև, այն էլ, այնպես էլ, այն է, և կամ, կամ էլ, կամ թե, թե չէ, կամ թե չէ, ապա թե ոչ*** *և այլն:*

*Համադասական են կրկնադիր (****և՛ ... և՛, թե ... թե, ոչ ... ոչ, էլ ... էլ, կամ ... կամ****) և* **զուգադիր** *շաղկապները (****ոչ միայն ... այլև, ոչ թե ... այլ, թեև ... բայց, չնայած ... բայց, ոչ միայն ... այլ նաև****) և այլն:*

Համադասական շաղկապներն ունեն իմաստային տարբեր հատկանիշներ. դրանց մի մասն ունի ***միավորիչ*** *հատկանիշ, մյուսը՝* ***տրոհական****, երրորդը՝* ***ներհակական****: Օրինակ՝ այս բանը շատ լավ նկատելի է Չարենցի հետևյալ տողերում՝*

Կա Մեծարենց, կա Տերյան, ***և*** *բազում ուրիշ պոետներ կան, .*
Բայց *Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:*

Առաջին տողում կա երեք համադասական նախադասություն, որոնցից երրորդը առաջին երկուսի հետ կապակցվել է ***և*** *միավորիչ շաղկապով, իսկ երկրորդ տողը նույնպես համադասական նախադասություն է, սակայն վերևի նախադասությունների հետ կապակցվել է* **բայց ներհակական** *համադասական շաղկապով, որով Չարենցը Թումանյանին հակադրել է Մեծարենցին, Տերյանին և բազում ուրիշ պոետներին:*

Այսպիսով, համադասական շաղկապները բաժանվում են 3 իմաստային խմբերի՝

1. **Միավորիչ շաղկապներ** — ***և, ու, էլ, եւս, նաև, այլև, նույնպես և, ինչպես նաև, ոչ միայն ... այլև, ոչ միայն ... այլ նաև, ոչ ... ոչ, թե ... թե:***

Այս շաղկապները կարելի է երկու ենթախմբի բաժանել՝ **բուն միավորիչ և հավելում արտահայտող:**

Բուն միավորիչ շաղկապներն են՝ **և, ու, թե** (վերջինս համադասական իմաստ արտահայտելու դեպքում): Այս շաղկապները կարող են շաղկապել թե՛ բառեր և թե՛ համադասական նախադասություններ: Միավորիչ շաղկապներն իմաստային ընդհանրությամբ հանդերձ ունեն նաև տարբերություններ:

Ու շաղկապը գործածվում է ավելի սերտ հարաբերություններ արտահայտելու, ինչպես նաև ավելի փոքր միավորներ՝ բառեր կապելու համար, օրինակ՝

Հավք **ու** հովեր եկան կչտիս
Անձեն դիպան **ու** անցան (Ավ. Իս.):

Մինչդեռ **և**-ը կապում է մեծ ծավալի լեզվական միավորներ՝ բառակապակցություններ ու նախադասություններ: Դա շատ լավ է երևում հատկապես նույն կառույցի մեջ՝

Իմ մոր սուրբ խոսքը — ծաղրի նշավակ,
Իմ հայրենիքը — սիրտս **ու** հոգիս —
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ,
Դու չես ըմբռնի անդունդը վշտիս... (Ավ. Իս.):

Նկատելի է, որ **ու**-ին ավելի հատուկ է նախադասության անդամներ կապելը, իսկ **և**-ին՝ նախադասություններ կապելը: Միաժամանակ ասենք, որ նշվածը պարտադիր երևույթ չէ. հաճախ լինում է նաև հակառակը. դա նկատելի է թեկուզ նույն հեղինակի մոտ: Ինչ խոսք, չափածոյում դա հաճախ կատարվում է նաև հանգավորման պատճառով:

Միայն սիրո լարը մնաց Սրտիս անհուն խորքերում,
Ու վառ սիրո երգը չողաց Կյանքիս ամեն ծալքերում (Ավ. Իս.):
... Ապրեց փառքի **և** վայելքի մեջ... Եվ որովհետև չուներ կին **և** երեխաներ... (Ավ. Իս.):

Թե միավորիչ շաղկապը մեծ մասամբ թվարկման իմաստ է արտահայտում.

Հրապարակում էին հավաքվել ծեր **թե** ջահել, կին, **թե** երեխա... Շաբաթօրյակին մասնակցում էին բոլորը՝ **թե՛** ուսուցիչները և **թե՛** աշակերտները:

Էլ և **թե** շաղկապներով ևս հարադրություններ են կազմվում

*(**ուր էլ, երբ էլ, ինչքան էլ**...).*

***Ուր էլ** լինեմ – չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր...*
***Ինչքան էլ** սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր (ԵՉ):*

***Թե**-ով կազմվածների օրինակներ՝ **իբր թե** դու էլ բան ասացիր... Այնպես ես խոսում, **կարծես թե** ներկա ես եղել դեպքերին: Հարցը այնպես ես ներկայացնում, **իբրև թե** մասնագետ ես:*

*Միավորիչ շաղկապների մյուս ենթատեսակն է **Հավելում** արտահայտող խումբը՝ **նաև, և, էլ, այլև, ինչպես և, ինչպես նաև, նույնպես, ոչ միայն ... այլև, ինչպես ... այնպես էլ**: Այս շաղկապներն արտահայտում են տվյալ առարկային կամ հատկանիշին այլ առարկա կամ հատկանիշ հավելելու իմաստ:*

*Ուսանողների հետ ես **էլ** գնացի թանգարան: Սոնա, դու **էլ** պետք է դիպլոմային աշխատանք գրես: Մեծությանը վիճակված են **նաև** մեծ փորձություններ (թարգմ.): Ուսուցիչը **ոչ միայն** ուսուցանող է, **այլև** դաստիարակ:*

Առաջին և երկրորդ նախադասություններում հավելում կա անձերի վերաբերյալ, իսկ երրորդում և չորրորդում՝ հատկանիշների:

*2. **Ներհակական** – Այս իմաստի շաղկապներն են՝ **իսկ, բայց, սակայն, այլ, մինչդեռ, միայն, այնինչ, ապա, բայց և այնպես, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, այլ ոչ թե, եթե ... ապա, ոչ թե ... այլ և այլն**:*

Այս շաղկապները շաղկապում են ինչպես նախադասություններ, այնպես էլ նախադասության անդամներ: Սրանք նույնպես ունեն իրենց ենթատեսակները, որոնք արտահայտում են՝

*ա) **Ժխտում** – Դա **ոչ թե** հարց է, **այլ** հարցաքննություն:*

Ես ներում եմ քեզ. ներում եմ էլի,
*Քանզի խեղճ ես դու և **ոչ թե** չար (ԵՉ):*

***Ոչ թե** ես եմ ուշացել, **այլ** դու ես շտապել:*

*բ) **Հակասում** – Արդեն վաղուց լուսացել է, **բայց** աչքերս չեն բացվում (ՄԳ):*

Ես քո լույսն էի, քո լուսաբացը,
***Բայց** ո՞վ էր, ի՞նչ էր քո որոնածը (ՀՍ):*

*Քեզանից չէի սպասում, **սակայն** լավ գործ ես կատարել (Մամ.):*

*գ) **Զիջման իմաստ** – Աշխատանքումդ սխալներ կան, **այնուա-***

մենայնիվ *դրական եմ գնահատում: Լավ չես պարապել,* ***բայց և այնպես*** *դրական եմ նշանակում:*

3. **Տրոհական շաղկապներ** *են՝* ***կամ, կամ թե չէ, թե, կամ թե և այլն:***

Ամռանը պետք է գնալ առողջարան ***կամ*** *ամառանոց: Այցի գնալիս պետք է ծաղիկ տանել* ***կամ*** *նվեր: Երկընտրանք կար տղայի առաջ. գործի անցնելուց առաջ* ***կամ*** *գյուղ պետք է գնար,* ***կամ թե չէ*** *հանգրվաներ ընկերոջ մոտ:*

Թե *շաղկապը տրոհական իմաստով գործածվում է հատկապես հարցական նախադասություններում՝ Չգիտեմ՝ ամռանը գյո՞ւղ պետք է գնամ,* ***թե՞*** *լրացուցիչ աշխատանքով զբաղվեմ:* ***Կգա՞ս*** *ինձ հետ,* ***թե՞*** *մենակ գնամ:*

Նշենք նաև, որ ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական որոշ շաղկապներ ***բազմիմաստ*** *են և մտնում են տարբեր իմաստային խմբերի մեջ, նույնիսկ որոշ դեպքերում դժվար է լինում դրանց տեսակները որոշելը (այս մասին կխոսվի վերջում):*

Առաջադրանք.

Դուրս գրել համադասական շաղկապները, որոշել դրանց կազմությունն ու իմաստային տեսակները.

Տարիներ անցան, և ես նորից հանդիպեցի նրան: Ծաղկել են կրկին անտառ ու այգի: Գործի մասին խոսել սիրում է, բայց գործ անել չի սիրում: Ե՛վ արևը, և՛ լուսինը և՛ աստղերը, և՛ երկիրը գտնվում են անընդհատ շարժման մեջ: Նա կարգապահ է ամենուրեք՝ թե՛ տանը, թե՛ դպրոցում և թե՛ փողոցում: Թեև արեցինք ամեն ինչ, բայց չկարողացանք մեղմել նրա բարկությունը: Մահ կամ ազատություն — ուրիշ ելք չկա: Նա էլ դավաճանեց մեր գաղափարներին: Խեղճ տղային լքեցին բոլորը, նաև իր մոտիկ ընկերները: Նույնիսկ քարափի հաստարուն կաղնին գլուխ է ծռում փոթորկի առաջ, իսկ փոթորիկն անսանձելի է: Մինչև տուն հասավ, ոտից գլուխ թրջվեց ու մուկ դարձավ: Թեև երկար ժամանակ է, որ ծանոթացել էին, բայց իրարից դեռ քաշվում էին: Նրան լքեցին բոլորը, թեև ինքն անմեղ էր: Դու կամ գյուղ կգնաս աշխատելու կամ աշխատանքդ կփոխես: Թերություններ կան աշխատանքում, բայց, այնուամենայնիվ, դրական եմ գնահատում: Թույլ ես, ուրեմն մեղավոր ես:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ – *Ստորադասական շաղկապները, ի տարբերություն համադասականների, հանդես են գալիս բարդ ստորադասական նախադասությունների համակարգում և ստորադաս (երկրորդական) նախադասությունը շաղկապում են գերադաս (գլխավոր) նախադասության հետ: Այդ շաղկապներն են՝* ***որ, թե, եթե, որովհետև, որպեսզի, թեև, թեկուզ, թեպետ, քան, մինչ, մինչև, թեկուզ, չնայած,*** *ինչպես նաև հետևյալ հարադիրները՝* ***թե որ, թեկուզ և, քան թե, մինչև որ, չնայած որ, նայած թե, հենց որ, չէ որ, քանի որ, քանի դեռ, ինչ է թե*** *և այլն:*

Ստորադասական շաղկապներն ըստ իմաստի լինում են՝ ***մեկնական, ժամանակի, պատճառային, պայմանի, նպատակի, զիջման, համեմատության, մակաբերման, բացահայտման:***

Մեկնական *շաղկապներն են՝* **որ, թե**: *Սրանց հիմնական կիրառությունն այն է, որ մեկնական լրացման դեր կատարող* **երկրորդական** *նախադասությունը կապում են գերադաս նախադասության բայ-ստորոգյալին: Օրինակներ՝ Իմացել եմ,* **որ** *արջը ականջ է դնում (ՀԹ): Կբացատրեմ,* **թե** *ինչու այդպես վարվեցի նրա հետ: Իսկ դու կասե՞ս,* **թե** *ինչպես դուրս եկար այդ ծանր վիճակից:*

Հավքը բռնեմ թռիչքի մեջ, Տամ եղբորս, **որ** *տանի տուն,*
Իսկ ես խաղամ ջրերի հետ, **Որ** *չարչարվեմ մինչ իրիկուն (ՀՍ):*

Պայմանի *շաղկապները պայմանի պարագա ստորադաս նախադասությունները կապում են գլխավորի հետ: Դրանք են՝* ***թե, եթե, որ, թե որ, միայն թե, եթե միայն***: *Օրինակներ՝*

Թե *ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր (ԵՉ):*
Թե *տիրես մեծ շահ, դու նրա սրտին,*
Թաթուլն էլ անզոր կընկնի ոտքիդ տակ (ՀԹ):
Եթե *բախտն ու վայելքները քեզ ժպտան...*
Սակայն դարձիր, վերադարձիր դու կրկին (ՎՏ):

Եթե *սեր չկա, ինչի համար պիտի չարչարվեմ չար աշխարհում (ՎՏ):* **Եթե** *ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա ամենից շատ որտեղ կարելի է տեսնել հրաշքներ, ես կպատասխանեմ՝ Հայաստանում (Ռուքուել Քենթ): Կկատարեմ պահանջդ,* **միայն թե** *ժամանակ տուր: Գործը համարիր ավարտված,* **եթե միայն** *համաձայն ես իմ պայմաններին:*

Նպատակի *շաղկապները երկուսն են՝* **որպեսզի** *և* **որ**, *որոնք*

նպատակի պարզգա երկրորդական նախադասությունները կապում են գլխավորին՝

> «Եկա, **որ** այստեղ, ձեզ համար այսօր
> Հրեղեն խոսքեր կռեմ ու խնդրում» (ՎՏ)։

«Աղա ջան, նս էլ բերել եմ, **որ** բան սովորի» (ՀԹ)։
«**Որպեսզի** կայուն ազգ լինենք, դրա համար պետք է միաձուլվենք» (Մամ.)։

> «**Որպեսզի** հասնես բարձունքներին անհաս,
> Պետք է թռչելու թևեր ունենաս» (ՀՇ)։

Պատճառի և հիմունքի շաղկապներն են՝ **որովհետև, քանի որ, որ, չէ՞ որ, մանավանդ որ, նամանավանդ որ** (նաև՝ գրաբարյան **քանզի** շաղկապը)։ Այս շաղկապներով պարզաբանվում է գերադաս նախադասության բայ-ստորոգյալի գործողության պատճառը, երբեմն էլ՝ հիմնավորումը։

Թեև դասագրքերում այս երկու տեսակները բերվում են միասին, բայց ինչպես իրավացիորեն նշում է Ս. Աբրահամյանը, **որովհետև** շաղկապին ավելի չատ պատճառի իմաստն է հատուկ, իսկ **քանի որ, մանավանդ որ** շաղկապներին՝ հիմունքի իմաստը։ Դա լավ երևում է հետևյալ օրինակներում. «Երեխան դպրոց չէր եկել, **որովհետև** հիվանդ էր», «Ժամանակը ծանր էր անցնում, **որովհետև** քաղցած էինք» (ՎԱ)։ – Ակնհայտ է պատճառի իմաստը, մինչդեռ «Համալսարանն ավարտելուց հետո համաձայնեցի գյուղում աշխատել, **քանի որ** այնտեղ են ապրում իմ ծնողները»։ «Տարիներ հետո նորից հանդիպեցինք, քանի որ համակրում էինք իրար» (ՊՂ)։– Ակնհայտ է հիմունքը։

Գրաբարում, արևմտահայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենի բարձր ոճերում գործածվում է նաև **քանզի** ստորադասական շաղկապը՝

> Քեզ արևը պիտի լինի հաղթանակի չքանչան,
> **Քանզի** կուրծքդ մի նրկինք է՝
> Քո մեծ սրտովն իմաստության (ՀՇ)։

*«Հայերը ասիացի չեն համարած իրենք զիրենք, այլ եվրոպացի, **քանզի** լեզուն հնդեվրոպական ճիւղին կը պատկանի, և ազգաբանօրէն կենթադրուի, որ կը պատկանի արիական ցեղին...»: (**Հենրի Մորգենթաու** — ամերիկացի դիվանագետ):*

Զիջման (հակառակ) հիմունքի — ***թեև, թեկուզ, թերևս, թեպետ, թեպետև, չնայած, չնայած որ, փոխանակ***: Այս շաղկապներն արտահայտում են զիջական իմաստ. այնպիսի ստորադաս նախադասություն են կապում գերադասին, որի բովանդակությունից չի բխում գերադասով արտահայտված գործողությունը, իրողությունը. օրինակներ՝ *«Մայրս **թեպետ** նահապետական կին էր, բայց դեմ չէր նորաձևություններին» (ՊԴ): «**Թեկուզ** խոստացել էի, բայց չկարողացա ուզածդ գիրքը ճարել»: «**Թեև** ժամանակ չունենք, բայց հանդեսին չներկայանալ չենք կարող»: **Չնայած** անձամբ չէի տեսել նրան, բայց միշտ լսել ու կարդացել էի նրա մասին (Մուր.): «**Փոխանակ** դասերդ սովորես, ամբողջ ժամանակ համակարգիչով ես զբաղված»:*

Ձևի և նմանության շաղկապներն են՝ ***ինչպես, ինչպես որ, ասես, կարծես, կարծես թե*** (*ժողովրդական՝ **ոնց, ոնց որ, ասես թե***):

*«Զրացահայտված գաղտնիքը ինձ պարզապես հիպնոզացնում է, **ինչպես** վիշապ օձը՝ լեռնային ուլիկին» (Մեժելայտիս): «Այնպես էր սավառնում, **ասես** թռչուն լիներ»: «Մռնչաց, **ինչպես որ** (**ոնց որ**) առյուծն է մռնչում»: «Այնպես ես խոսում, **ոնց որ** փիլիսոփա լինես»: «Քեզ այնպես ես պահում, **կարծես թե** մեր տերն ես» (ՊԴ):*

> ***Ինչպես** մի հեղեղ վեր կենար հանկարծ*
> *Երկնքի մթնած ամպերից իջներ.*
> ***Ինչպես** փոթորիկ՝ սաստիկ սրընթաց*
> *Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ):*

Այս տիպի կառույցները նաև **համեմատության** իմաստներ ունեն, որովհետև գործողության **ձևը** և **նմանությունը** նաև համեմատություն է մեկ ուրիշ ձևի կամ նմանության հետ: Դա երևում է հենց բերված նախադասություններում՝ «Այնպես է սավառնում, ասես թռչուն լինի» բնականաբար կա թե՛ ձև և թե՛ նմանություն (թռչունի նման է սավառնում):

Մակաբերական — ***ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես, այնպես որ*** և այլն:

Այս շաղկապները համարվում են նաև **հետևանքի** *շաղկապներ, որովհետև արտահայտում են եզրակացություն, որի համար իբրև հիմունք ծառայում է նախորդ նախադասությամբ արտահայտված միտքը: Սրանք մեծ մասամբ հատուկ են* **գիտական** *ոճերին՝ ինչպես՝ «Բոլոր ձկները շնչում են խռիկներով,* **իչխանը** *ձուկ է,* **ուստի** *իշխանը շնչում է խռիկներով»: «Մետաղները տաքանալիս ընդարձակվում են, պղինձը մետաղ է, ուրեմն այն տաքանալիս նույնպես ընդարձակվում է»:*

Ժամանակային *շաղկապներն են՝* **մինչ, մինչև, հենց, նախքան, քանի դեռ, որ, քանի, մինչև որ, երբ որ, հենց որ, թե չէ:** *Սրանք ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները կապում են գլխավորի հետ՝ ցույց տալով* **տարաժամանակյա** *և* **համաժամանակյա** *գործողություններ. օրինակներ՝ «***Քանի** *ողջ եմ, էստեղ կաշխատեմ, կապրեմ» (Ավ. Իս.): «Այնքան խոսեցինք,* **մինչև** *լույսը բացվեց» (ՄԳ): «***Հենց որ** *իմացավ էլ Մհեր չկա, Վեր կացավ կռվով Սասունի վրա» (ՀԹ): Սողոմոնը 12 տարեկան էր,* **որ** *դուրս եկավ հայրենի տանից (ՊՍ): «Դպրոց կգաս* **նախքան** *դասերն սկսվելը»:*

Կանչում էին հրաչալի հնչյուններով դյութական,
Ու **հենց** *չողաց ցոլքն արևի, անտես, անհետ չքացան (ՀԹ):*
... **Երբ որ** *ծիծառն իր բույն դառնա,*
Երբ որ *ծառերն հագնին տերև,*
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա (Ն. Ռուսինյան):

Հ ի չ ի ՛ ր *– Շատ դասագրքերում* **երբ** *բառը նչվում է որպես ստորադասական շաղկապ, մինչդեռ այն ոչ թե շաղկապ է, այլ հարցահարաբերական դերանուն, որովհետև, ինչպես ասել ենք «Դերանունների» բաժնում,* **երբ-ը** *հոլովվում է՝ պատկանելով* **վա** *հոլովման:*

Բացահայտման *ստորադասական շաղկապները երկուսն են՝* **այսինքն, այն է.** *սրանք կապակցում են այնպիսի նախադասություններ, որոնցից երկրորդը առաջինի բացահայտումն է: Օրինակ՝ «Կգաս մեր ժամադրավայրը՝ այսինքն հանրային գրադարան»: «Հրաժարվիր քո ամենամեծ թերությունից,* **այն** *է՝ քո ծուլությունը»:*

Ինչպես ասվեց վերևում, և ինչպես երևում է բերված օրինակներում, որոշ շաղկապներ **բազմիմաստ** *են, այսինքն՝ արտահայ-*

տում են իմաստային տարբեր հարաբերություններ՝ ***տարածական, ժամանակային, տրոհման, հավելման, պայմանի, հիմունքի*** *և այլն: Դա ցույց տանք թեկուզ* ***որ*** *շաղկապի* ***բազմիմաստությամբ,*** ***որը*** *շաղկապում է բազմաբնույթ երկրորդական նախադասություններ. ահա դրանցից մի քանիսը՝*

Եկել է, ***որ*** *սովորի (****նպատակային****): Ասաց,* ***որ*** *զբաղված է. չի կարող գալ (****պատճառի****): Տասներկու տարեկան էր,* ***որ*** *դուրս եկավ հայրական տանից (****ժամանակ****): Կխաղամ ջրերի հետ,* ***որ*** *չարչարվեմ մինչ իրիկուն (****մեկնական****): Գիտեմ,* ***որ*** *Արմենի տղան ես. (****ուղիղ խնդրի*** *իմաստ): Հայտնի դարձավ,* ***որ*** *կառավարությունը նոր որոշում է ընդունել (****ենթակա****): Մի նեղանա,* ***որ*** *քեզ լավ չի հասկանում (****ներգործող խնդիր****): Սպասում եմ անհամբեր,* ***որ*** *մեկը իմ փակ դռները կբանա — ՎՏ (****հանգման****): Տնօրենը դժգոհ էր,* ***որ*** *վերևներից իրեն չեն օգնում (****անջատման****): Լառ-Մարգարը ոչ՛ ոքի չասաց,* ***որ*** *արցունքներ երևացին աչքերում — ԱԲ (****վերաբերության****) և այլն:*

Բերենք նաև այնպիսի օրինակներ, որտեղ նույն շաղկապը կարող է լինել թե՛ ***համադասական*** *և թե՛* ***ստորադասական.***

Մինչ-ը *հիմնականում* ***ստորադասական*** *շաղկապ է, ունի* ***ժամանակային*** *իմաստ և սովորաբար առաջադաս է լինում. օրինակ՝ «****Մինչ*** *դու կգայիր, ես գործն ավարտեցի» (քո գալուց առաջ), նույն շաղկապը կապակցում է նաև* ***համադասական*** *նախադասություններ՝ արտահայտելով* ***հակադրական*** *հարաբերություն, այս դեպքում դրվում է երկրորդ համադասականից առաջ. օրինակ՝ «Մայրը խրատում էր որդուն,* ***մինչ*** *նա արդեն քնել էր»: «Անընդհատ ինձ ես նախատում,* ***մինչ*** *դու էլ ոչինչ չես արել»:*

Թե չէ *շաղկապը հիմնականում* ***համադասական*** *է. օրինակ՝ «Ես հիվանդացել էի,* ***թե չէ*** *ինչո՞ւ դասի չէի եկել»: Նույն շաղկապը կապակցում է նաև* ***ժամանակի*** *ու* ***պայմանի*** *պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ. օրինակներ՝ «Արմենը ուսումն ավարտեց* ***թե չէ,*** *անմիջապես մեկնեց գյուղում աշխատելու» (****երբ*** *մեկնեց՝ ուսումն ավարտելուց հետո):*

Պայմանի պարագա ստորադասի դեպքում ***թե չէ****-ն հանդես է գալիս երկրորդական նախադասության սկզբում. օրինակ՝ «Կուրսայինիդ վրա երկար կաշխատես,* ***թե չէ*** *«Գերազանց» չես ստանա»:*

Այսինքն *շաղկապը հիմնականում* ***համադասական*** *է՝ «Գյում-*

րին, այսինքն՝ ծննդավայրս, երկրաշարժից հետո դեռ չի բարեկարգվել»: «Խոստումդ չկատարեցիր, **այսինքն**՝ ստախոս դուրս եկար»:

Այսինքն շաղկապը նաև **ստորադասական** է և համանիշ է **ուրեմն, հետևաբար, հետևապես** հետևանքի շաղկապներին, այսպես՝ «Ամբողջ ամռանը ոչինչ չես արել, **այսինքն**՝ պարապ թափառել ես, ուրեմն գործերդ հաջող չեն գնա»:

Եվ այսպես, կարելի է բազմիմաստ շաղկապների ուրիշ օրինակներ էլ բերել:

Առաջադրանքներ.

1. Գտնել ստորադասական շաղկապները և որոշել դրանց իմաստային տեսակները.

Եղբայրս եկել էր, որ մեզ օգներ չինարարությունը շուտ ավարտելու համար: Նա գիտե, որ առանց իր օգնության շատ ենք դժվարանում, որովհետև դրանից շատ բան չենք հասկանում: Եթե գործը շուտ ավարտենք, պետք է հողամասն էլ մշակենք, քանի որ դեմը գարուն է, ինչքան շուտ ավարտենք, այնքան լավ: Իսկ որպեսզի շուտ ավարտենք, պետք է լավ աշխատենք, չնայած շատ ենք հոգնում: Լավ գիտենք, թե ինչ է ամառանոցը, որի համար աշխատում ու հոգնածություն չենք զգում: Իսկ երբ հոգնում ենք, իջնում ենք գետը լողանալու, որը մեզանից հեռու չէ:

Էշին ավետիս տվին, թե ցնծա և ուրախ եղիր և մեծ ընծա պարգևիր, որովհետև քեզ թոռ ծնվեց: Եվ էշն ասաց. «Վայ ինձ, բարեկամնե՛ր, եթե հարյուր թոռ էլ ծնվի, չեն թեթևացնի ծանրությունն իմ մեջքի բեռան, քանզի կրողը ես եմ, ես էլ լավ գիտեմ, որ դրանից ինձ օգուտ չկա» (Վ. Այգեկցի):

2. Առանձին սյունակներում արտագրել համադասական և ստորադասական շաղկապները՝ գրելով դրանց իմաստային տեսակները.

Մրոցը, իհարկե, գյուղխորհուրդ ունի, խորհուրդն էլ՝ նախագահ: Բայց և ոչ մի զեկուցում չի ասի այն, ինչ կտեսնենք, եթե ապրենք Մրոցում ու տեսնենք, որ ոչ մի փոփոխություն չի կրել, որովհետև հոգատար տեր չունի: Մրոցը թեև խրճիթ-ընթերցարան ունի, բայց դրանից ի՞նչ օգուտ, որ թեկուզ այստեղ լրագրեր քիչ են լինում, որովհետև գյուղում գրաճանաչ քիչ կա (ԱԲ):

Ես քաշվում ու երկյուղում էի որևէ կարծիք հայտնել կամ իմ

խոսքն ասել, որովհետև ոչ Եղիա Մարգարեի կառեթն էի տեսել, ոչ էլ մանավանդ երբևս ունեի հորեղբորս հետ զրուցելու, քանի որ նրա կամքին հակառակ էի մասնակցում այդ ճանապարհորդությանը: Բայց չատ չանցած, ինքն սկսեց ինձ հետ զրուցել, թե ինչու եմ անհավատ մնացել (Աղավնի):

Ու եթե չենք սիրում մենք իրարու,
Ինչո՞ւ են աստղերն այսքան անթիվ...
Եթե չենք սիրում մենք իրարու (ՍԿ):

Մայրս չկա, որ երգի...
Բայց ես տեսնում եմ ձեռքի ստվերը նրա...
...Ա՜խ, տեսնես ի՞նչ է անում,
Ով որ չունի աշխարհում
Հայրենական տուն (ՀՍ):

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ (ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ)

Վերաբերականները նախորդ խոսքի մասերից տարբերվում են նրանով, որ ոչ **նյութական** իմաստ ունեն, ոչ էլ **քերականական**. սրանք վերաբերմունք արտահայտող բառեր են, բայց տարբերվում են վերաբերմունք արտահայտող մյուս խոսքի մասից՝ **ձայնարկություններից**:

Վերաբերականները խոսողի **մտածական**, **դատողական** վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, դեպքի, անձի կամ առարկայի նկատմամբ, մինչդեռ **ձայնարկությունները** խոսողի **զգացական** վերաբերմունքն են արտահայտում (**հիացմունք, զարմանք, ափսոսանք, դժգոհություն, հանդիմանություն, բացականչություն** և այլն):

Ասենք նաև, որ վերաբերականները դարեր շարունակ դիտվել են որպես **մակբայներ**. դրանք, որպես հատուկ բառախումբ, մակբայներից տարբերակել են նախ՝ Մ. Աբեղյանը, ապա՝ Ս. Աբրահամյանը, Ռ. Իշխանյանը, Ա. Քյուրքչյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը և ժամանակակից բոլոր լեզվաբանները:

Ասվեց, որ վերաբերականները նյութական իմաստից զուրկ, չթեքվող խոսքի մաս են, արտահայտում են խոսողի **դատողական, մտածական** վերաբերմունքը, որով եղանակավորում կամ երանգավորում են նախադասությունը կամ նրա որևէ անդամը: Դա լավ է երևում հետևյալ նախադասություններում.

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՛ս իգիթ քու յարին,
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՛ս էդ ծով աչքերին... (ՀԹ):

Ախ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտել եմ, մայրի՛կ ջան,
Երնե՛կ, երնե՛կ, նրաղ լինիմ,
Թռնիմ մոտդ, մայրի՛կ ջան (Ավ. Իս.):

Մի՞թե վերջին պոետն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի...
Արդյոք բոցե վարդերն են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրուն (ՎՏ):

Առաջին քառատողում Թումանյանն իր ափսոսանքն է արտահայտում, այսինքն՝ գնահատողական խոսք է ասում Անուշի վերաբերյալ, երկրորդ քառատողում Իսահակյանն իր բաղձանքն է արտահայտում մորը տեսնելու վերաբերյալ, իսկ երրորդ օրինակում Տերյանի երկբայական, ենթադրական հարցումն է արտահայտված իր և իր երկրի վերաբերյալ:

Վերաբերականներն *ըստ կազմության լինում են՝* **պարզ** (այո, ոչ, իբր, անգամ, հենց, թող, թե, հապա, իսկ, մի, դե...), **ածանցավոր** (անշուշտ, անտարակույս, անպատճառ, իսկապես, հատկապես, հավանաբար, հավանորեն...), **քերականական ձևերից առաջացած** (կարծեմ, կարծես, գուցե, ասես, խնդրեմ, երևի, չլինի, իհարկե, արդարև, հարկավ, իրավ, այնուամենայնիվ, իրոք *և այլն*):

Բարդ *վերաբերականներ, սրանք լինում են կցական* (թերևս, միգուցե, մինչև, նույնիսկ, ահավասիկ, մի՞թե) *և* ***հարադրական:***

Հարադրական բարդություններում լայն կիրառություն ունի **թե** *բառն իր* **թեական** *իմաստով* (կարծես թե, հազիվ թե, դժվար թե, երանի թե, իբր թե, ինչպես թե, իբրև թե, ինչ է թե *և այլն*):

Հարադրական բարդություններ են՝ ***մինչև անգամ, մինչև իսկ, ինչ խոսք, ինչո՞ւ չէ, ինչպե՞ս չէ*** *և այլն:*

Կան նաև բառակապակցություններով արտահայտված վերաբերականներ՝ ***ինչ էլ լինի, ինչ էլ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ուր մնաց թե, ով գիտե, ով իմանա, առանց այլևայլության, ըստ երևույթին*** *և այլն:*

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արդի հայերենում գործածվող հինգ տասնյակից ավելի վերաբերականներն ունեն իրենց հատուկ իմաստները (ըստ իրար իմաստով մոտ խմբերի), սակայն այդ չի նշանակում, թե դրանցում էլ բազմիմաստություն չկա. կա անշուշտ:

Ըստ իմաստի վերաբերականները լինում են՝

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ***(իհարկե, իսկապես, արդարև, անշուշտ, անկասկած, իրավ, իրոք, անպայման, անտարակույս, բնականաբար, իհարկե, ինչ խոսք, ինչու չէ, այո, անխոս*** *և այլն):*

*Օրինակներ՝ **Ինչ խոսք**, որ Նաիրին ու Ուրարատուն հազարամյակների պատմություն ունեն: Այս փաստերն, **անշուշտ**, հաստատում են բոլոր պատմաբանները: **Արդարև** Կոմիտասը հայ երգը տարածեց Եվրոպայում. **ինչո՞ւ չէ**, նա ապացուցեց նաև, որ հայ ժողովուրդն ունի իր սեփական երգն ու երաժշտությունը: **Անկասկած** Բայրոնը հայ ժողովրդի մեծագույն բարեկամն է. նա **այո**, Մխիթարյանների մոտ սովորեց մաքուր հայերեն: Հայերի ամենանշանավոր ու տաղանդավոր ճարտարապետը **իհարկե** Ալեքսանդր Թամանյանն է, **իրավամբ** նա մեր տասներկուերորդ մայրաքաղաքի հիմնադիրն է: Վեհափառ Վազգեն Ա-ն **իսկապես** մեծ շինարար էր, **բնականաբար**, նրա անունը պետք է գրանցվեր Ազգային հերոսների շարքում:*

***Այո** բառը, ինչպես նաև հաստատման իմաստ արտահայտող շատ վերաբերականներ (**իհարկե, անշուշտ**), երկխոսություններում կարող են հանդես գալ նաև որպես հաստատական նախադասություններ՝ իբրև պատասխան.*

— Վերջերս դիտեցի՞ք «Սպարտակ» բալետը:
*— **Այո՛**: Դիտեցի:*
— Հավանեցի՞ք:
*— **Իհա՛րկե**: Դա Արամ Խաչատրյանի գլուխգործոցն է:*
— Կցանկանայիք լսել նաև Խաչատրյանի «Գայանեն»:
*— **Անշուշտ**: «Գայանեն» զուտ ազգային օպերա է, լսողը մեծ բավականություն կստանա:*

ԵՐԿԲԱՅԱԿԱՆ *վերաբերականները ենթադրություն, կասկած կամ թերահավատ հարցում են արտահայտում գործողության կամ առարկայի հավանական լինելու վերաբերյալ: Այդ վերաբերականներն են՝ **ասես, գուցե, թե, արդյոք, դժվար թե, երևի (թե), իբրև (թե), ըստ երևույթին, թերևս, կարծեմ (թե), կարծես (թե), հազիվ թե, կարող է պատահել, հավանաբար, հնարավոր է, գուցե, միգուցե, մի՞թե, չլինի (թե)**: Օրինակներ՝*

> ***Մի՞թե** դու չէիր, հայրենի՛ք իմ հեզ,*
> *Որ տայգաներից, մթին յուրդերից*
> *Հորդացող-եկող նլուզակների*
> *Բյուր նիզակ ու տեգ*
> *Սրտիդ մեջ մխված՝ ընկել էիր խեղճ*
> *Քառուղու վրա բախվող ազգերի... (Ավ. Իս.):*

Գուցե կպատասխանեք հարցերիս: **Թերևս** վաղը ընկերդ էլ կգա, ու երկուսով **երևի միգուցե** ճիշտ կպատմեք եղելությունը (Մամ.):

Հնչում է միշտ խոր ու պայծառ, Ե՛վ խոցում է և՛ այրում,

Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ, **Թե՞** վերքերն իմ հրահրուն (ՎՏ): Ես Ձեզ **կարծես** տեսել եմ մի տեղ, Կարծեմ Մեծ թատրոնում մենք միասին «Աիդա» ենք լսել: — **Հավանաբար, Հնարավոր** է, **Հազիվ թե** սխալվեք, որովհետև այդ թատրոնում ես հաճախ եմ եղել:

ՑՈՒՑԱԿԱՆ վերաբերականները երկուսն են՝ **ահա, ահավասիկ**:

Ահա և Արարատը մեր՝ մեր երկրի խորհրդանիշը: **Ահավասիկ** և կապուտաչյա Սևանը, **ահավասիկ** և նրա թերակղզու դարավոր եկեղեցին՝ Սբ. Աստվածածինը՝ իններորդ դարից:

ՍԱՍՏԿԱԿԱՆ վերաբերականները ընդգծում, չեշտում են նախադասության որևէ անդամի ավելի կարևոր լինելը: Դրանք են՝ **նույնիսկ, անգամ, այն էլ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ և իսկ, մանավանդ, նամանավանդ** և այլն:

Օրինակներ. **Նույնիսկ** մեր սեփական հողերն են մեզանից խլել, **անգամ** մեր հին մայրաքաղաքները, **մինչև իսկ** Անին ու Վանը: Տիգրանը **մինչև անգամ** որդուն չխնայեց, **այն էլ** պատերազմական թունդ տարիներին: Թշնամին այնքան է լկտիացել, որ **մինչև իսկ** Շուշին է իրենը համարում:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ իմաստ արտահայտող վերաբերականներն են՝ **գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն, թեկուզ, սոսկ**:

Դրվելով նախադասության որևէ անդամի վրա, այն առանձնացնում են որպես միակը, եզակին՝

Դու **լոկ** Չարենց ես, **միայն** Չարենց (ԵՉ):

Գեթ վերջին խոսքս լսիր՝ մի՛ ապրիր մենակ, **թեկուզ** դրախտում (ՄԳ): **Միայն** մի բան էր նրան անհանգստացնում՝ **գոնե** կյանքի վերջին տարիներին տեսներ երկիրն իր հին (ՍԳ):

ԿԱՄԱՅԻՆ վերաբերականներն արտահայտում են խոսողի կամքը գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ. դրանք են՝ **թող, դե, ապա, արի**...

> **Թող** որոտա իմ գլխին փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
> **Թող** դավ դնե թշնամին (ՄՆ):

Ապա մի սպասի՛ր, ես հետո քո ճաշը կեփեմ (ՊՂ):

Դե արի ու հավատա այդ ստախոսին: **Դե** դու էլ լռիր:

ՋԻՋՄԱՆ (*ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, ինչ էլ լինի, թեկուզ, այնուամենայնիվ, այնուհանդերձ, ի միջի այլոց*):

Ինչ էլ լինի, նա պիտի ստեղծի հայկական գրերը (Սարմեն):

Ինչևիցե այդ հարցը պետք է լուծվի. *ի միջի այլոց* շատերն են չարչարվել, բայց գործը գլուխ չեն բերել (Մամ.): *Ինչևէ*, համաձայնեց, *այնուամենայնիվ*՝ չանտեսելով դժվարությունները: Ճիշտ է, հանձնարարությունը խիստ պատասխանատու է, *համենայն դեպս* կմտածեմ այդ մասին:

ԲԱՂՁԱՆՔԻ վերաբերականներն արտահայտում են խոսողի բաղձանքը, ցանկությունը որևէ գործողության, երևույթի վերաբերյալ. դրանք են՝ *երանի, երնեկ, երանի թե, երնեկ թե, ուր է, ուր է թե*...

> ...*Երնեկ* ունենամ հազար ու մի կյանք,
> Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ (Ավ. Իս.):

Երանի՜ թե մի օր հանկարծ Քանաքեռից իջնեիր
Եվ քո սիրած Նորքում կանգնած՝ Երևանին նայեիր (Սարմեն):

ԺԽՏՄԱՆ վերաբերականներն են՝ *ոչ, չէ, բնավ, ամենևին:*

Չէ, չի լռել մեծ Շոթայի երգի ձենը կաթոգին (ՀԹ):

Ոչ-ը *այո* հաստատական վերաբերականի հականիշն է, որը գործածվում է թե՛ նախադասության հետ և թե՛ իբրև պատասխանական բառ, ստանալով նախադաս արժեք: Բերենք նախադասության հետ գործածման օրինակ.

– *Ո՛չ*, Ղարաբաղի հարցում ոչ մի զիջում չպետք է լինի:

Որպես նախադասության օրինակ.

– Դուք երբևէ եղե՞լ եք Ղարաբաղում:

– *Ոչ*: Չեմ եղել, բայց շատ բան գիտեմ Ղարաբաղի մասին:

– Չէի՞ք կամենա, որ հարցը բանակցային լուծում ստանա:

– *Բնավ, ամենևին*, որովհետև Ղարաբաղը մեր պատմական Արցախն է:

Վերաբերականների հնչերանգն ու կետադրությունը

Վերաբերականներն իրենց հնչերանգով մեծ մասամբ առանձնանում են մյուս բառերից. դրանք հաճախ ունկնդրի ուշադրությունը գրավելու նպատակով արտասանական դադարով ու

հնչերանգով տրոհվում են, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, դիտարկենք հետևյալ օրինակները. «Վիկտոր Համբարձումյանը, **իհարկե**, արժանի է նման մեծարանքի. **Հիրավի**, աշխարհն է նրան ճանաչում: **Ինչ խոսք**, նրա արձանի տեղադրումը անհրաժեշտություն էր: **Անկասկած**, նա օժտված ու ընդունակ գիտնական էր. **Հիրավի**, նա ճանաչում բերեց իր ժողովրդին: **Այո՛**, նա շատ մեծ մարդ էր:

Շատ դեպքերում էլ վերաբերականները արտասանական դադարով տարբերվում են, բայց չեն տրոհվում. օրինակներ

... Ընկնում են գետին, ելնում միասին,
Դժվար է **իբրև** հաղթել մեկ մեկի (ՀԹ):

Արածանու ափերին **երնեկ** օջախս վառվեր,
Նորից թնդար «Փապուռին», Նորից հնչեր «Հորովել» (ՍԳ):

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց քեզ (ՀՍ):

Արդյոք հիշո՞ւմ ես, անտառ էր, առու...
Արդյոք հիշո՞ւմ ես, հեռո՜ւ էր, հեռո՜ւ (ՎՏ):

Թող չուրջս փռվի անանց լռություն,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան (ՎՏ):

Գեթ վերջին խոսքս մի մերժիր, **գոնե** մխիթարանքի խոսքեր ասա (ՄԳ):

Առաջադրանքներ.

1. Դուրս գրել վերաբերականները և որոշել դրանց իմաստները.

Անտարակույս, նրա արարքներն անպատիժ չեն մնալու: «Եթե մինչև անգամ մեջքս ծալված լինի, եթե մինչև անգամ ոտքս վառված լինի... միևնույնն է, կգամ» (ՀՍ): «Թո՛ղ հողը թեթև լինի քեզ վրա» (ՀՍ): Վերջին պահին հիշե՞ց արդյոք իր հարազատներին: Բարեբախտաբար ծնողներն այդ մասին տեղյակ չէին: Մենք էլ, բնականաբար, ոչինչ չգիտեինք: Գեթ վերջին խոսքս մի՛ մերժիր: Գոնե մխիթարանքի մի խոսք ասեիր: Երևի չի կարողացել նրա հետ ընդհանուր լեզու գտնել: Ըստ երևույթին, նրանք նոր ուղիներ են որոնում: Ի միջի այլոց, իրար հետ ուրախ օրեր ենք անցկացրել ծովափին, իհարկե, նաև ուրախ ժամանցներ: Նա իսկապես եղել է իմ լավ բարեկամը: Նա իրավամբ վստահելի մարդ է: Լոկ

տանջանք ու տառապանք ճաշակեց կյանքում: Նա, համենայն դեպս, ազնիվ մարդ է և չի դավաճանի իր ընկերներին: Հիրավի, նա տաղանդավոր մարդ էր: Մի՞թե վերջին պոետն եմ ես...: Ցավոք, նա ոչ մի լավ օր չտեսավ: Ցավոք, պիտի ասեմ, որ ամեն ինչ ապարդյուն անցավ: Թող չուրջդ փռվի անանց լռություն: Արդյո՞ք հիշում ես, անտառ էր, առու... Հեքիաթի պես էր, երազի նման: Արդարև, կորուստը նրա համար շատ մեծ էր: Անտարակույս, նա ձգտելու է հաշտության, և մենք, անշուշտ, կհաշտվենք:

2. Վերաբերականների յուրաքանչյուր տեսակով գրել երկուական նախադասություն:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ձայնարկությունները նյութական իմաստից զուրկ, չթեքվող զգացական, կամային վերաբերմունք, կոչ կամ նմանաձայնություն արտահայտող բառերն են:

Ձայնարկությունների ամենակարևոր առանձնահատկությունը նրանց յուրահատուկ՝ բացականչական առոգանությունն է, որը գրավոր խոսքում արտահայտվում է բացականչական նշանով կամ չեշտով.

***Վո՜ւյ**, վո՜ւյ, Անուշ, վո՜ւյ, վո՜ւյ, քուրիկ,*
***Վո՜ւյ** քու սերին, քու յարին... (ՀԹ):*

***Էյ** հին ծանոթներ, **էյ**, կանաչ սարեր,*
Ահա ձեզ տեսա ու միտս ընկան... (ՀԹ):

*— **Ախ**, սիրտս, նանի, չգիտեմ ընչի,*
Մին լաց է լինում սևակնած, տխուր... (ՀԹ):

*Սակավահնչյունությունը ձայնարկությունների ձևային հատկանիշներից մեկն է. դրանց մի մասը կազմված է մեկ ձայնավորից (**ա՜, է՜, ի՜, ո՜ւ, ը՜, օ՜**):*

***Ա՜**, զարմանում եմ ես՝ ճանաչելով նրան (ԵՉ): **Ի՜**, դու էլ բան ասացիր...*

***Է՜**, ուզում ես, գնա, քո գործն է (ՄԳ): **Ո՜ւ**, այս ո՞ւր հասանք:*

***Օ՜**, ո՞ր բախտից, այ սևերես,*
Ահա չարեմ, հիշիր ու տես (ՀԹ):

*Կազմված են նաև մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից (**ա՜յ, է՜յ, ա՜հ, օ՜հ, ա՜խ, ո՜հ, լո՜, օ՜խ, վա՜, յա՜, հա՜, տո՜, ծո՜, փո՜ւ...** և այլն):*

***Ա՜խ**, իմ բախտը կանչում է ինձ (ՀԹ): **Ա՜խ**, իմ ճամփեն մոլոր գնաց (Ավ. Իս.):*

***Ո՜հ**, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,*
*Սևաբա՛խտ քուրիկ նազելի Անուշ (ՀԹ): **Էյ**, հին ծանոթներ, **էյ** կանաչ սարեր... (ՀԹ): **Լո՜, լո՜, լո՜-լո՜** մեր էն սարեր, Ծաղկոտ սարեր Տարոնի... (ՀԹ): **Էյ** Մանթաշի երազ հովիտ, Դու զմրուխտե օրորոց (Ավ. Իս.):*

*Ավելի շատ են երկու բաղաձայնից և մեկ ձայնավորից կազմված ձայնարկությունները (**վա՛յ, վա՛խ, վո՛ւշ, վո՛ւյ, հա՛յ, հո՛ւյ, հե՛յ, ջա՛ն, պա՛հ, փո՛ւհ, օհո՛...**):*

***Վա՛յ, վա՛յ,** Մոսի՛ ջան, ինձ մի՛ ըսպանիր (ՀԹ):*

***Հե՛յ** ճամփանե՛ր, ճամփանե՛ր, Անդարձ ու հին ճամփաներ... (ՀԹ): **Վա՛յ,** մայրիկ ջան, տես բակն ու դուռը լի ինչքան սպիտակ թիթեռ է գալի (ՀԹ):*

*Ձայնարկությունները լինում են նաև հարադրավոր բարդությունների բաղադրիչներ՝ **ախ քաշել, ախ ու վախ անել, ջան ասել, հեյ վախ, հեյ ջան,** որոնց մի մասը գրվում է միության գծիկով՝ **հա՛յ-հա՛յ, հե՛յ-հե՛յ, հա՛յ-հո՛ւյ, վա՛յ-վո՛ւյ, տա՛շի-տա՛շի, ճըզ-վըզ, հափ-հափ.***

***Հե՛յ ջան** հայրենիք, ինչքան սիրուն ես... (Ավ. Իս.):*

***Հե՛յ վախ,** կոտրան իմ թևերս, ընկա գիրկդ, Ալագյազ (Ավ. Իս.):*

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

*Ըստ իրենց իմաստային բնույթի ձայնարկություններն ունեն բազմազան դրսևորումներ, որոնք համախմբվում են 3 տեսակների մեջ՝ **զգացական, կամային և բնաձայնական:***

ԶԳԱՑԱԿԱՆ *– Սրանք ամենամեծ խումբն են կազմում և արտահայտում են խոսողի ամենատարբեր զգացմունքները՝ **ուրախություն, ցավ, զարմանք, զղջում, վախ, ափսոսանք, արհամարհանք, դժգոհություն, զզվանք, անտարբերություն** և այլն:*

*Այս ձայնարկությունների մի զգալի մասը **բազմիմաստ** է, արտահայտում է ամենաբազմազան զգացական վերաբերմունքներ, օրինակ, **ա՛խ** ձայնարկության համար Մ. Ասատրյանը բերում է 7 իմաստ, **վա՛յ**-ի համար Ս. Աբրահամյանը բերում է 6 իմաստ, իսկ Ստ. Մալխասյանցն իր բառարանում բերում է **վա՛յ** ձայնարկության 14 տեսակ:*

Եվ այսպես, զգացական ձայնարկություններն ունեն իմաստային հետևյալ տարատեսակները.

*ա) **ուրախության և հաճելիության – ա՛, ա՛խ, ջա՛ն, օխա՛յ, վա՛յ, ո՛ւյ, ճհ, ճյ... հե՛յ ջան:***

*Օրինակներ, **Ա՛խ,** ինչ լավ էին անցնում ջահելության օրերը: **Ա՛,** հրաշալի բան է: **Ջա՛ն,** նորից իմ հայրենիքում եմ: **Վա՛յ,** էս ինչ լավ բան ես արել: **Օխա՛յ,** ապրեք, նրեխանե՛ր ջան, լավ հանգստացա:*

*Ոյ, ինչ լավիկն է: **Էյ**, ջան Հայրենիք, ինչքան սիրուն ես... (Ավ. Իս.):*

բ) **Զարմանք – օհո՜, ճ, բա՜, պա՜հ, պա՜հ-պա՜հ, վա՜, վա՜յ, վա՜հ...**

***Վա՜հ**, էս մարդիկ ինչ վաղ են քնում (ՀԹ): **Վա՜յ**, մայրի՛կ ջան, տե՛ս, ինչ հրաշք է... **Օհո՜**, այսքան բանջար որտեղի՞ց ես քաղել: **Ո՜**, սա հրաշք է: **Պա՜հ-պա՜հ**, այստեղ դարմանալու ոչինչ չկա: **Վա՜**, երբ եկար, որ ես չնկատեցի: **Վա՜հ**, նման բան չէինք տեսել: **Վա՜հ**, էսքան էլ չար լինի մարդ (ՀԹ):*

գ) **Ցավ, վիշտ, վախ – վա՜յ, վի՜, վո՜ւյ, վա՜շ, վի՜շ, ա՜խ, ամա՜ն, հայ-հարա՜յ...**

***Վա՜յ**, հարա՜յ, փախե՛ք, մեծեր, երեխեք... (ՀԹ): **Ա՜խ**, սիրտս... **Ամա՜ն** հասեք... **Վո՜ւյ**, վո՜ւյ, Սարո՛, վուշ, վուշ, իզիթ (ՀԹ): Ինձ ինչ, **ավա՜ղ**, բլբուլներր Բինգյոլի (Ավ. Իս.): **Ա՜խ**, իմ ճամփես մոլոր գնաց, Անտակ ծովին դեմ առա, **Վա՜խ**, իմ սերս անցավ, գնաց ետ կանչելու ճար չկա (Ավ. Իս.):*

դ) **Ափսոսանք – ա՜խ, վա՜խ, վա՜յ, ավա՜ղ, հեյ գիդի՜, հե՜յ վա՜խ, վա՜շ...**

***Հե՜յ գիդի**, մեր էրգիր շյաքար էր, մնաց չան բերան (ՍԳ): **Վա՜յ**, խեղճ տղա՛ս, էս ինչ օրն ես ընկել: – **Վա՜խ-վա՜խ**, իմ անմեղ ոչխար,– մղկտաց Հասոն... (ՎՓ): **Հե՜յ վախ**, կոտրան իմ թևերս, ընկա գիրկդ, Ալագյազ (Ավ. Իս.): **Ա՜խ**, մեր սիրտը լիքը դարդ, ցավ, օր ու արև չտեսանք, **Վա՜խ**, մեր կյանքը սևով անցավ, Աշխարհից բան չիմացանք (Ավ. Իս.):*

ե) **Տհաճություն, զզվանք – փո՜ւ, ֆո՜ւ, թո՜ւհ, փո՜ւհ, վա՜հ ...**

***Թո՜ւհ** ձեր նամուսին... **Ֆո՜ւ**, անտաշ, վայրենի... **Ի՜**, չան երես ունի... **Փո՜ւհ**, ինչ զզվելի տիպն է:*

զ) **Հանդիմանություն, կշտամբանք – ա՜յ, վա՜յ, վա՜հ, վա՜յ-վա՜յ, ա՜յ-ա՜յ, է՜խ, ո՜ֆ:**

*Ցուրտը տարա՞վ, **վա՜հ**, տնաշեն... (ՀԹ): **Ա՜յ** տղա, քեզ չե՞մ ասել դրա հետ այլևս մի խաղա: **Վա՜յ-վա՜յ**, ի՞նչ հանդուգն երեխաներ են: **Ո՜ֆ**, էլ չեմ դիմանում էս դաժան պայմաններին: **Ա՜յ**, դու կկո՛ւ, հիմա՛ր կկու, քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:*

Զգացական ձայնարկությունները արտահայտում են նաև **խրախուսանք** *(**Հե՜յ**, ձեզ մատաղ, բանվոր տղեք),* **պարծանք** *(**Հա՜յ հո՜ւյ**, քեզանից վախեցող չկա),* **սպառնալիք** *(Խելոք մնա, կծեծեմ, **հա՜**),* **վախ, երկյուղ** *(**Վա՜յ**, հարա՜յ, փախեք: **Ամա՜ն**, հողեմ գլուխը չահի) (ՀԹ):*

2. **ԿՈՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** — *Կոչական ձայնարկությունները դիմացինի ուշադրությունը գրավելու միջոց են. սրանցով խոսողը դիմում է խոսակցին կամ երրորդ անձի ու առարկայի նրան մի բան հաղորդելու, մի գործողության մղելու նպատակով: Սրանք մեծ մասամբ գործածվում են կոչական բառերի ու հրամայական բայաձևերի հետ: Դրանք են՝* ***ջան, ով, դեհ, ա՛խ, ա՛, ա՛յ, էյ, հե՛յ, հա՛յ, հարա՛յ, էհե՛յ, տո՛, ծո՛, աղա՛ արա՛*** *(վերջին չորսը՝ բարբառային):*

Հե՛յ, պարոններ, *ականջ արեք թափառական աշուղին (ՀԹ):* ***Էյ,*** *հսկեցե՛ք, ի՞նչ եք քնում, քաջ զինվորներ Թաթուլի (ՀԹ): Հե՛յ ուլատեր,* ***հե՛յ*** *գառնատեր, ելե՛ք, շուտով բացեք դռներ (ՀԹ):* ***Էյ,*** *դու ջահել, հպարտ հասակ, Թռար ոսկի ամպի պես (Ավ. Իս.):* ***Հե՛յ,*** *ո՞ւր ես Դավիթ, հայոց պահապան (ՀԹ):* ***Հե՛յ ջան, հե՛յ ջան,*** *լանջե՛ր մարջան (Վ. Աղասյան):* ***Ա՛խ,*** *իմ մայր թանկագին, ետ կգամ ես կրկին (ԳՍ):* ***Ա՛խ,*** *Անուշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում (ՀԹ):* ***Ո՛վ,*** *բարեգութ, քեզ եմ խնդրել (ՀԹ): Նա մնաց անտուն, մնաց բնավեր. —* ***Տո՛*** *լաճ տնավեր (ՊՍ):*

Բարբառային օրինակներ՝ ***Աղա՛,*** *էդ եզները խոտը թափում են (ՆԶ):* ***Քա՛,*** *ես ի՞նչ իմանամ (ՆԶ):* ***Արա՛,*** *որ ասում են, լսիր (ԲԽ):* ***Տո՛,*** *խոմ խելքդ հացի հետ չես կերել (ԲԽ):*

*Կոչական ձայնարկություններով են արտահայտվում նաև կենդանիներին ու թռչուններին կանչելու կամ վանելու ձայները՝ ինչպես՝ «****Փի՛շտ, փի՛շտ,*** *վեր թռանք մենք» (ՀԹ): —* ***Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ,***— *կանչում էր մայրս հավերին (ԲԽ): —* ***Բիժո՛, բիժո՛,***— *երեխան շոյում էր գառնուկին: —* ***Քշա՛, քշա՛,***— *քշում էր հավերին:*

3. **ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** — *Ձայնարկությունների մի տեսակն էլ բնաձայնությունները կամ նմանաձայնություններն են, որոնցով խոսողը, գրողը վերարտադրում է կենդանիների, առարկաների, բնության երևույթների արձակած ձայները: Օրինակներ՝*

Կեռասենու ճյուղքերին երկու թռչուն գարնանային
Կխոսեին անուշիկ, ու մեկն ասաց այն մեկին.
— ***Ծի՛վ, ծի՛վ,*** *սիրուն, սիրուն, սիրունիկ...*
— ***Ծիվ, ծիվ,*** *խոսեց մյուսը.*
Սակայն ես քեզ չեմ ճանչնար, միայն ձայնդ ծանոթ է (Ավ. Իս.):
Կռունկները շարա՛ն-շարա՛ն
*«****Կռո՛ւ, կռո՛ւ****» կանչին ու եկան (Ավ. Իս.):*

Համփ-համփ, համփ-համփ, *ահա այսպես հաչում եմ ես (ՀԹ):* ***Ղամ, ղամ, ղամ, ղամ,*** *— պատասխանեց ագռավն ու թռավ (ՀԹ):* ***Բը՜զ, բը՜զ, բըզբզան,*** *բզեզն եկավ տըզտըզան (Խնկոյան): Բակատեղից լսում եմ կացնի հեռավոր ձայնը՝* ***Թըխկ-թըխկ*** *(Անանյան): Ծըրը՜խկ, հանկարծ դուռը բացվեց, թուրք կանանցով տունը լցվեց (ՀԹ):* ***— Վը՜չ-վը՜չ,*** *— հեռվից լսվում է գնտի ձայնը:*

Ձայնարկության նշանակությամբ են գործածվում նաև ***կեցցես, ողջույն, ուռա, ափսոս, երանի*** *և նման մի քանի բառեր:*

Առաջադրանք.

Դուրս գրել ձայնարկությունները, որոշել դրանց իմաստային տեսակները.

Վո՜ւշ, վո՜ւշ, Անուշ, վա՜շ, վո՜ւշ, քուրիկ, վո՜ւշ քու սերին, քու յարին (ՀԹ): Վա՜հ, էս մարդիկ ինչ վա՞ղ են քնում (ՀԹ): Վա՜յ, վա՜յ, Մոսի ջան, ինձ մի սպանիր (ՀԹ): Էյ, հին ծանոթներ, էյ, կանաչ սարեր (ՀԹ): Ո՜հ ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ, սևասիրտ քուրիկ, նազելի Անուշ (ՀԹ): Հե՜յ, գառնատեր, հե՜յ ուլատեր, ելեք, շուտով բացեք դռներ (ՀԹ): Տո՜, Զենով Օհան, տո՜ մահի տարած, էս խենթը բերիր, սարքիր գառնարած (ՀԹ): Զրրըխկ, հա թրրըխկ նորից շինեցին (ՀԹ): Ուխա՜յ, ուխայ, սիրուն հովիվ, քունդ անուշ (Ղ. Աղ.): Հե՜յ, ձեզ մատաղ, բանվոր տղերք, մե՛կ էլ, մե՛կ էլ մի զարկ տվեք (ՀՀ):

Աքաղաղը կանչում է՝ ծուղրուղո՜ւ, ղո՜ւ, ղո՜ւ, ղո՜ւ (Ղ. Աղ.):

— Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ, քամին է, քամին, տես անզգամին (ՀԹ):

Ծիտը ծառին ծլվլում է՝ — ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ,
Բազեն գլխին պտտվում է՝ — վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ (Ղ. Աղ.):

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չտեսանք,
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք (Ավ. Իս.):

Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ «Ձևաբանության» վերաբերյալ.

1. Ի՞նչ սկզբունքներով են դասակարգվում խոսքի մասերը:

2. Հայերենում քանի՞ խոսքի մաս կա, դրանցից քանի՞սն են նյութական իմաստներ ունեցողները և ինչո՞ւ, քանի՞սը՝ ձևական,

նյութական իմաստից զուրկ (թվարկել՝ բերելով օրինակներ):

3. Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից որո՞նք են ստանում քերականական կարգեր, որոնք՝ ոչ:

4. Ի՞նչ տարբերություն կա քերականական ու վերաբերմունքային խոսքի մասերի միջև. Թվարկեցեք դրանցից մի քանիսը:

Առաջադրանք 1. *Խմբավորել նյութական, քերականական և վերաբերմունքային խոսքի մասերը՝ դիմացները գրելով տեսակները.*

Ուսանող, աշակերտ, գեղեցիկ, երբ, որ, աստղ, խավար, եթե, պայծառ, հերոսաբար, խելացի, դեպի, գիշեր, պարզկա, այսօր, միշտ, առաջ, ցերեկ, ուսուցիչ, հինգ, քսանհինգ, առանց, բացի, ութերորդ, քառորդ, քաղցր, քույր, եղբայր, ինձ, ինչ-որ, քանի՞, լիովին, տաքուկ, երգել, խաղացին, արագ, հստակ, ջինջ, նա, ծով, պատասխանել, մենք, հիացմունք, վրա, թանաքաման, դուք, տակ, արագ, դուռ, երկփեղկ, մասին, Սասուն, գետակ, Արագած, առաջադրել, լիովին, տասներեք, դար, բայց, կամ, սիգապանծ, Հայրենիք, հայրենասեր, սիրով, երբեք, իհարկե, այո, այստեղ, կանգնել, մինչև, բոլորովին, ու, իններորդ, և, կամ թեկուզ, այնուամենայնիվ, միրգ, ուտել, կարծեմ, հավանաբար, ընկեր, ընկերաբար, ընկերանալ, քաջ, քաջություն, քաջաբար, աղվես, աղվեսավարի, աղվեսաբար, ջուր, գարեջուր, խմել,

Առաջադրանք 2. *Բերված տեքստից դուրս գրել խոսքի մասերը և որոշել տեսակները.*

Իսկապես, երեխայի դաստիարակությունն սկսվում է նրա ծննդյան օրից: Սնվելը, քնելը, խաղալը, հանգստանալը այնպիսի գործոններ են, որ եթե երեխայի ամենավաղ հասակից չեն կազմակերպում, հետագայում դժվար է լինում այդ մասին մտածել: Երեխան գնում է դեպի կյանք, դիմացն անասելի դժվարություններ կան մինչև քսան-քսանհինգ տարեկան դառնալը:

Բայց և այնպես, ոչ մեկի համար նորույթ չի լինի, եթե ասենք, որ երեխան մեծանա առողջ, առանց հոգսերի: Առողջության բնորոշիչը ինքնըստինքյան հասկանալի է՝ ֆիզիկական ու հոգեկան ուժերի ներդաշնակությունն է:

Սակայն միայն ուժիմով չի վերջանում ամեն ինչ: Ինչ խոսք, երեխային օդի և ջրի պես անհրաժեշտ են ծնողական սերն ու

քնքշանքը, առանց՝ դրանց, Աստված մեռասցե, երեխայի համար կյանքը ծանր կլինի:

Հազար ու տասնյակ հազար անգամ սխալ են նրանք, որ երեխային դեռ մանկուց թողնում են բախտի քմահաճույքին:

Ժողովրդական առածը շատ ճիշտ է ասում. «Պտուղը ծառից հեռու չի ընկնում»: (Ըստ Ղարիբ Հայրապետյանի):

Առաջադրանք 3.

Սյունակներում դուրս գրել միայն չթեքվող խոսքի մասերը, գրել տեսակները:

Մեր դեմ-դիմաց մի թեք բարձունք էր: Հազիվհազ էինք առաջ շարժվում, փոքր-ինչ հանգստանում ու դարձյալ դեպի վեր էինք գնում: Հանկարծ փայլատակեց երկինքը, ուժգնորեն որոտացին ամպերը:

– Վա՜հ, այս ի՞նչ կատարվեց,– տրտնջացին շատերը:

Բայց դա երկար չտևեց. տեղ-տեղ երևաց կապույտ երկինքը, և կամաց-կամաց անձրևը դադարեց, իսկ մենք շարունակեցինք դանդաղ առաջ գնալ:

– Ջա՜ն, եղանակը փոխվեց... Օֆ, ինչ լավ զովացանք, ինչ խոսք, սա էլ էր բնության խաղը,– ասաց մեր ընկերներից մեկն ու դեպի վեր նայեց:

– Եթե կողմնացույցը չբերեի, երևի մոլորվեինք, որովհետև անծանոթ տեղ ենք ընկել, թեև դրսում չէինք մնա, քանի որ տեղանքն ինձ ծանոթ է,– հպարտությամբ ասաց մեր գլխգովան ընկերը, որը, իսկապես, մինչև տեղ հասնելը գլուխներս տարավ իր շատախոսությամբ: Երեկոյան վերադարձանք:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ար. Ավ. – *Արիգ Ավագյան*
ԱԲ – *Ակսել Բակունց*
ԱԾ – *Ալեքսանդր Ծատուրյան*
Ավ. Իս. – *Ավետիք Իսահակյան*
ԳԷ – *Գևորգ Էմին*
ԳՍ – *Գեղամ Սարյան*
ԳՄ – *Գուրգեն Մահարի*
ԴԴ – *Դերենիկ Դեմիրճյան*
ԴՎ – *Դանիել Վարուժան*
ԵՉ – *Եղիշե Չարենց*
ԹՀ – *Թաթուլ Հուրյան*
ԽԲ – *Խաչիկ Բադիկյան*
ԽԳ – *Խաժակ Գյուլնազարյան*
ԽԴ – *Խաչիկ Դաշտենց*
ժող. – *ժողովրդական*
ՀԹ – *Հովհաննես Թումանյան*
ՀՇ – *Հովհաննես Շիրազ*
Հ. Հովհ. – *Հովհաննես Հովհաննիսյան*
ՀՀ – *Հակոբ Հակոբյան*
ՀՍ – *Համո Սահյան*
ՀԺՊ – *Հայ ժող. պատմություն*
ՂԱ – *Ղազարոս Աղայան*
Մամ. – *մամուլ*
ՄԳ – *Մուշեղ Գալշոյան*
ՄՆ – *Միքայել Նալբանդյան*
Մուր. – *Մուրացան*
ՆԶ – *Նաիրի Զարյան*
Ն-Դ – *Նար-Դոս*
Շիրվ. – *Շիրվանզադե*
ՊԽ – *Պատվական Խաչատրյան*
ՊՍ – *Պարույր Սևակ*
ՊՂ – *Պատվական Ղուկասյան*
ՊԴ – *Պետրոս Դուրյան*
ՌՊ – *Ռափայել Պատկանյան*
ՍԳ – *Սասուն Գրիգորյան*
ՍԶ – *Ստեփան Զորյան*
ՍԽ – *Սերո Խանզադյան*
ՍԿ – *Սիլվա Կապուտիկյան*
ՎԴ – *Վահագն Դավթյան*
ՎՊ – *Վարդգես Պետրոսյան*
ՎՏ – *Վահան Տերյան*
ՎՄ – *Վահան Միրաքյան*
ՎԱ – *Վախթանգ Անանյան*
ՎԲ – *Վիկտոր Բալայան*
ՎՓ – *Վրթանես Փափազյան*
Րաֆ – *Րաֆֆի*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***Ձևաբանություն առարկան* 3**

Քերականական իմաստ և ձև 4

Քերականական կարգեր 5

Լրացուցիչ բաշխման հարաբերություն 6

Քերականական համանունություն 7

Բառի ձևաբանական վերլուծություն 9

Հիմք և վերջավորություն 11

***Խոսքի մասերի դասակարգումը և համակարգը* 15**

Խոսքի մասերի փոխանցում 19

Փոխանունություն 21

ԳՈՅԱԿԱՆ 27

***Գոյականի թվի քերականական կարգը* 33**

***Գոյականի հոլովի քերականական կարգը* 39**

Ուղղական հոլով 42

Սեռական հոլով 43

Տրական հոլով 44

Հայցական հոլով 46

Բացառական հոլով 49

Գործիական հոլով 50

Ներգոյական հոլով 52

***Գոյականի հոլովման տիպերը* 54**

Արտաքին թեքման հոլովումներ 56

Ներքին թեքման հոլովումներ 59

Այլաձև հոլովումներ 60

***Գոյականների կազմությունը* 63**

ԱԾԱԿԱՆ 71

Ածականների տեսակներն ըստ իմաստի 72
Որակական ածականներ 72
Հարաբերական ածականներ 76
Հարաբերական ածականների փոխանցումը որակականների 77
Ածականների կազմությունը 79

ԹՎԱԿԱՆ 85

Թվականների տեսակները և կազմությունը 86
Քանակական թվականներ 86
(բացարձակ, բաշխական, կոտորակային)
Դասական թվականներ 90

ԴԵՐԱՆՈՒՆ 93

Դերանունների տեսակները 94
Անձնական դերանուններ 94
Ցուցական դերանուններ 100
Փոխադարձ դերանուններ 105
Որոշյալ դերանուններ 106
Անորոշ դերանուններ 109
Հարցահարաբերական դերանուններ 111
Ժխտական դերանուններ 117
Դերանվանական հոլովը 119

ԲԱՅ 125

Բայի կազմությունը 127
Բայահիմքեր 132
Բայի սեռի քերականական կարգը 135
Ներգործական սեռ 136
Կրավորական սեռ 138
Չեզոք սեռ 140

Կրկնասեռ բայեր 142
Բայի արտահայտության ձևերը 144
ԴԵՐԲԱՅՆԵՐ 144

Անկախ դերբայներ 145
Անորոշ դերբայ 145
Հարակատար դերբայ 148
Ենթակայական դերբայ 151
Համակատար դերբայ 153
Կախյալ (ձևակազմիչ) դերբայներ 155
Անկատար դերբայ 155
Ապառնի դերբայ 156
Վաղակատար դերբայ 159
Ժխտական դերբայ 161
Բայի դեմքի, թվի և ժամանակի քերականական կարգերը 163
Բայի կերպի քերականական կարգը 170
Բայի եղանակի քերականական կարգը 172
Սահմանական եղանակ 172
Ըղձական եղանակ 179
Պայմանական (ենթադրական) եղանակ 180
Հարկադրական եղանակ 182
Հրամայական եղանակ 184
Խոնարհման հարացույցի ընդհանուր բնութագիրը 188
Անկանոն բայեր, դրանց խոնարհումը 191
Պակասավոր բայեր 195
Ժխտական խոնարհում 197
Հարադրական բայերի խոնարհումը 199

ՄԱԿԲԱՅ 202

Մակբայների կազմությունը 203
Մակբայների տեսակներն ըստ իմաստի 207

Կ Ա Պ 217

Կապերի կազմությունը ... 219
Կապերի տեսակներն ըստ կազմավորման ... 220
Կապերի շարադասությունը ... 221
Կապերի տեսակներն ըստ իմաստի ... 224
Կապերի հոլովառությունը (խնդրառությունը) ... 228

ՇԱՂԿԱՊ ... 232

Շաղկապների կազմությունը ... 232
Շաղկապների տեսակները ... 234
Համադասական շաղկապներ ... 234
Ստորադասական շաղկապներ ... 238

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ (եղանակավորող բառեր) ... 245

Վերաբերականների իմաստային տեսակները ... 246
Վերաբերականների հնչերանգն ու կետադրություն ... 249

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ... 252

Ձայնարկությունների տեսակները ... 253

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 259

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Համակարգչային շարվածքը
և ձևավորումը՝ Ս. Գասպարյանի

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52